

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
АРМЯНСКО-РОССИЙСКИЙ МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ "МХИТАР ГОШ"  
"MKHITAR GOSH" ARMENIAN-RUSSIAN INTERNATIONAL UNIVERSITY

## «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
(*իրավագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն*)

## “МХИТАР ГОШ”

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ  
(*правоведение, педагогика, экономика*)

## “MKHITAR GOSH”

SCIENTIFIC-METHODICAL REVIEW  
(*jurisprudence, pedagogics, economics*)

4-6 (33)  
2012

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ИЗДАЕТСЯ ПО РЕКОМЕНДАЦИИ УЧЕНОГО СОВЕТА АРМЯНСКО-РОССИЙСКОГО МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА "МХИТАР ГОШ"

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**

**Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

**Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Հայկ ԴԵՐՉՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ռուդիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Հասմիկ ԴԵՐՉՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Բենիամին ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Իրինա ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Սերգեյ ԱՐԱԶԱՆՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Սերգեյ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների դոկտոր

**Էմմա ՆԱՍԻԼՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Գառնիկ ՍԱՖԱՐՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

*Սրբագրիչ  
Գոռ ՍԱՐԳՍՅԱՆ*

*Համակարգչային ձևավորող  
Արմենուհի ՄՈՍԻՆՅԱՆ*

**ГЛАВНЫЙ РЕДАКТОР**

**Вачик БРУТЯН**

Кандидат педагогических наук, доцент Ректор Армянско-Российского международного университета "Мхитар Гош"

**ОТВЕТСТВЕННЫЙ РЕДАКТОР**

**Левон САРКИСЯН**

**НАУЧНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Գաիկ ԴԵՐՉՅԱՆ**

Доктор юридических наук, профессор

**Рудик ГЕВОРКЯН**

Кандидат юридических наук, доцент

**АСМИК ԴԵՐՉՅԱՆ**

Кандидат педагогических наук, доцент

**Бениамин ЕГИАЗАРЯН**

Доктор экономических наук, профессор

**Ирина ОБАКИМЯН**

Доктор экономических наук, профессор

**Сергей АГАДЖАНИЯН**

Кандидат филологических наук, доцент

**Сергей МАНУКЯН**

Доктор педагогических наук

**Эмма НАСИЛЯН**

Кандидат экономических наук, доцент

**Գաիկ ԲԵՏՐՈՍՅԱՆ**

Доктор педагогических наук, доцент

**Гарник САФАРЯН**

Доктор юридических наук, профессор

*Корректор  
Гор САРКИСЯН*

*Компьютерный дизайнер  
Арменуи МОСИНЯН*

Հանդեսում տպագրված բոլոր հոդվածները գրախոսված են և երաշխավորված խմբագրական խորհրդի անդամների կողմից

ՀԱՆԴԵՍԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՎԱՅԱԿԱՆ 01Մ 000219

Լույս է տեսնում տարեկան 4 անգամ Հրատարակության 9-րդ տարի

Все статьи, опубликованные в журнале, рецензированы и рекомендованы к публикации членом редакционного совета

ЖУРНАЛ ЗАРЕГИСТРИРОВАН В МИНИСТЕРСТВЕ ЮСТИЦИИ РА СВИДЕТЕЛЬСТВО О РЕГИСТРАЦИИ 01Մ 000219

Издается 4 раза в год 9-ой год издания

**ՀՈՒՇԱԳԻՐ ՉԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ**

«ՄԻՆԻՑԱՐ ԳՈՇ» հանդեսի խմբագրությունը գիտական հոդվածներն ընդունում է, եթե դրանք՝

- ա) պարունակում են սպառնալից տեղեկություններ հեղինակների մասին.
- բ) ունեն 300 dpi խտությամբ էլեկտրոնային կամ 7x8 չափսի հեղինակի լուսանկար.
- գ) ունեն հայերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ.
- դ) ունեն հղում-ծանոթագրություններ և (կամ) օգտագործված գրականության ցանկ.
- ե) կից ունեն մասնագետի գրախոսություն:

Հոդվածներն ընդունվում են պնակիտով (diskette) կամ էլ. փոստով:

**ПАМЯТКА АВТОРАМ**

Редакция журнала "МХИТАР ГОШ" принимает научные статьи, если они:

- а) содержат исчерпывающие сведения об авторах;
- б) имеют фото автора в формате 300 dpi или размером 7x8 см;
- в) имеют резюме на армянском и английском языках;
- г) имеют ссылки-сноски и (или) список использованной литературы;
- д) приложена рецензия специалиста.

Статьи принимаются на дискете или по электронной почте.

# ԳԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՇՏԿՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ\*

## Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր



Երեխայի կյանքում դպրոցը (ընտանիքի և հասակակիցների խմբի հետ համատեղ) կարևոր տեղ է զբաղեցնում: Սովորողն իր ժամանակի մեծ մասն անցկացնում է դպրոցի պատերի ներսում, որտեղ ուսումնական

գործընթացի ժամանակ նա ճանաչում է աշխարհը, սովորում է կարդալ և գրել, ուսումնասիրում է բնության և հասարակության օրենքներն ու երևույթները, յուրացնում է մարդկային համակեցության կանոններն ու նորմերը: Ուսումնական գործունեությունը դպրոցական տարիներին մնում է գործունեության գլխավոր ձև երեխաների և դեռահասների բացարձակ մեծամասնության համար:

Այդուհանդերձ, ինչպես վիճակագրությունն է ցույց տալիս, և ինչպես վկայում են ուսումնասիրությունները, դպրոցն աստիճանաբար կորցնում է իր հասարակական դիրքերը, նվազում է նրա սոցիալական դերը և խորհրդատու նշանակությունը երեխայի անձի զարգացման ու ձևավորման, մանկավարժական տեսակետից բարձրորդի և դժվար դաստիարակվող դեռահասների վրա դաստիարակչական ազդեցության գործում [5]:

Շեղվող վարքագծով սովորողների մեծ մասը ուսման հանդեպ անտարբեր են, դպրոցականների մի ստվար զանգված դպրոցի հանդեպ բարեհաճ վերաբերմունք չունի, իսկ մի մասն էլ ուսման նկատմամբ բացասաբար է տրամադրված: Շեղվող վարքագծով դեռահասների շրջանում ուսումնական գործունեության նկատմամբ այդպիսի վերաբերմունքի բազմազանության մեջ առավել կարևորներից մեկն էլ դպրոցական ծրագիրը յուրացնելու տեմպերից նրանց պարբերաբար ետ մնալն է, գիտելիքների բացթողումը: Այստեղից էլ՝ ուսման նկատմամբ հետաքրքրության նվազումը,

ուսումնական-ճանաչողական գործունեության շարժառիթների թուլացումը, ուսումնական գործընթացում ուսուցիչների և համադասարանցիների հետ հակասությունների սրումը [13]:

Ուսման մեջ ետ մնալը բնորոշվում է որպես սովորողների ամբողջական, համալիր հանրագումարային անպատրաստվածություն, որն ստեղծվում է ուսումնական գործընթացի քիչ թե շատ ավարտում մի հատվածի վերջում: Ետ մնացող աշակերտին ներքաշելով ուսուցման մեջ, վերացնելով նրա վատ առաջադիմությունը՝ մենք լուծում ենք ոչ միայն ուսումնական, այլ նաև կանխող-շտկողական խնդիր, փոխում ենք մանկավարժական առումով բարձրորդի դեռահասի կարգավիճակն ու հոգեբանական ինքնազգացողությունը:

Բնորոշելով ուսման մեջ ետ մնացող դպրոցականներին՝ հետազոտողները նշում են, որ նրանք աչքի են ընկնում դասերի ժամանակ վարքագծի անտարբերությամբ, հազվադեպ են դիմում ուսուցչին հարցերով, հազվադեպ են ձեռք բարձրացնում պատասխանելու համար, հանձնարարությունները չեն կատարում առանց ուսուցչի պահանջի, հաճախ են շեղվում: Ուսման մեջ ետ մնալը նրանց զրկում է ճանաչման բերկրանքից, նրանք ծանձրանում են, բավարարվածություն չեն զգում ուսուցումից, նրանց համար ծանր է պարապելը, տհաճությամբ են դպրոց հաճախում: Ճանաչողական պլանում այդպիսի աշակերտներին բնորոշ է՝ 1. բացթողումների առկայությունը փաստացի գիտելիքներում և տվյալ առարկայի համար յուրահատուկ հմտություններում, որոնք թույլ չեն տալիս բնութագրել ուսումնասիրվող հասկացությունների, օրենքների, տեսությունների էական տարրերը, ինչպես նաև անհրաժեշտ գործնական հմտությունների բացակայությունը, 2. բացթողումների առկայությունը ուսումնական ճանաչողական գործունեության հմտություններում, որոնք աշակերտի աշխատանքի տեմպն այնքան են նվազեցնում, որ նա չի կարողանում հատկացված ժամանակում տիրապետել գիտե-

\* Ներկայացվել է 18.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

լիքների, ուսումնական ունակությունների և հմտությունների անհրաժեշտ ծավալին, 3. անձնական հատկանիշների զարգացման և դաստիարակության ոչ բավարար մակարդակը, ինչը թույլ չի տալիս աշակերտին՝ դրսևորել ինքնուրույնություն, հաստատականություն, կազմակերպվածություն, ինքնակարգավորում և այլ հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են բարեհաջող ուսման համար [14]:

Շեղվող վարքագծով դեռահասների ետ մնալու՝ վառ արտահայտված բնորոշիչներից են՝ սովորական ուսումնական առաջադրանքները կատարելիս սխալների թվի ավելացումը, նրանց վրա ծախսված ժամանակը, դպրոցական-հիգիենիկ նորմերի բարձրացումը, ուսումնական առարկաների հանդեպ հետաքրքրության նվազումը և սովորել չցանկանալը, միջանձնային հարաբերություններում (աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող) ոչ բարեհաջող վիճակը:

Ետ մնացող դեռահասների մոտ կարելի է առանձնացնել աշակերտի և ուսուցչի կոնֆլիկտային հարաբերությունների, դպրոց հաճախել չցանկանալու, ուսումնական գործունեության հանդեպ բացասական վերաբերմունքի և ճանաչողական հետաքրքրության ցածր մակարդակի պատճառների երկու խումբ: Առաջին խումբը՝ ներքին բնույթի պատճառներն են, որոնք կապված են հենց իր՝ դպրոցականի առանձնահատկությունների հետ, ինչպես նաև գիտելիքների պաշարի պակասը, անհրաժեշտ ունակությունների ձևավորված չլինելը, սեփական հնարավորությունների հանդեպ հավատի կորուստը, համադասարանցիների և ուսուցիչների հետ փոխհարաբերություններում հոգեբանական անհարմարությունը: Պատճառների երկրորդ խումբը կապված է ընդհանուր դիդակտիկ և մեթոդական բնույթի անբավարարության, ուսուցչի անձնական առանձնահատկությունների հետ, դա աշակերտների անհատական առանձնահատկությունների ոչ բավարար հաշվառումն է, ետ մնացողների հետ հարաբերությունների կազմակերպման ոչ ճիշտ ձևն ու ոճը, վարժողական առաջադրանքների ճնշող բնույթը, դպրոցականների մոտ ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը միտված՝ նպատակաուղղված աշխատանքի բավակայությունը, սեփական աշխատանքի արդյունավետության հանդեպ հավատի բացակայությունը:

Ուսումնական գործունեության մեջ շեղվող վարքագծով դեռահասների մանկավարժական շտկման ելակետ է հանդիսանում նրանց ճանաչողական հնարավորությունների, ուսումնական գործունեության շարժառիթների ամբողջության, հուզա-կամային ուղրտի իրավիճակի խոր վերլուծում-բնորոշումը:

Դեռահասների առաջադիմության ախտորո-

շիչ հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս առանձնացնել նրանց մտավոր զարգացման մակարդակի և ուսման հանդեպ վերաբերմունքի փոխկապակցվածության տարբերակների մի շարք:

1. մտավոր զարգացման լավ մակարդակին համապատասխանում է ուսումնական գործունեության հանդեպ գիտակցված ակտիվ վերաբերմունքը, ինչը հատուկ է լավ և գերազանց առաջադիմությամբ սովորողներին,

2. լավ մտավոր զարգացումը զուգակցվում է գիտելիքների հանդեպ բացասական կամ անտարբեր վերաբերմունքով, որի դեպքում թույլ առաջադիմությունը երեխայի հուզա-կամային ուղրտում առկա թերությունների արդյունք է. այստեղ շտկողական աշխատանքը պիտի նպատակաուղղված լինի ճանաչողական ակտիվության զարգացմանը, ուսման հանդեպ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը,

3. մտավոր զարգացման (բայց ոչ մտավոր հետամնացության) նկատելի թերությունների դեպքում աշակերտներն ակտիվորեն ձգտում են գիտելիքների տիրապետման, պատասխանատու կերպով են վերաբերվում իրենց ուսումնական պարտականություններին. այստեղ գլխավոր ուշադրությունը պետք է հատկացվի դեռահասի ուսումնական գործունեության կազմակերպմանը, նրան ինքնուրույն ձևեր սովորեցնելուն,

4. մտավոր զարգացման տարբեր թերությունների վրա էլ ձևավորվում է ուսման հանդեպ անպատասխանատու վերաբերմունքը, հետևաբար անհրաժեշտ է անհատական-տարբերակիչ բնույթի հատուկ միջոցների համալիր ամբողջություն [14]:

Դեռահասների ուսումնական գործունեության շարժառիթային ուղրտի ախտորոշման արդյունքները թույլ են տալիս տեսնել դեռահասի ուսումնական գործունեության բնույթի և նրա արդյունքների հանդեպ վերաբերմունքի փոխադարձ կապը:

1. Բացասական վերաբերմունքն ընդգրկում է և՛ ամբողջ ուսուցումը, և՛ առանձին առարկաները, և՛ առարկաների առանձին կողմերը:

2. Սովորողները դրական վերաբերմունք ունեն ուսուցման հանդեպ ընդհանրապես, բայց չեն հաղթահարում մեկ-երկու առարկայի ուսուցում, ինչը ձևավորում է բացասական վերաբերմունք այդ առարկաների նկատմամբ:

3. Զարգացած է ուսուցման անհրաժեշտության ըմբռնումը, չկա բացասական վերաբերմունք ուսումնական առարկաների նկատմամբ, բայց նկատելի է առարկաների առանձին կողմերի, գործունեության առանձին տեսակների հանդեպ բացասական վերաբերմունք:

Դեռվելով ախտորոշման արդյունքների վրա՝

կառուցում են դեռահասների հետ ձևավորող-շտկողական աշխատանքը:

Գիտելիքների բացթողումների վերացումը իրականացվում է ինչպես դասերի, այնպես էլ արտադասարանային գործունեության ժամանակ: Այն կարող է դրսևորվել հաղթահարելի անհատական առաջադրանքներ տալու միջոցով, լրացուցիչ նյութ ընտրելով, ուսումնական առաջադրանքները կոնկրետացնելով, աշխատանքի եղանակներ ցույց տալով, որոնք կկանխեն տվյալները, առաջադրանքների օրինակների համատեղ կատարմամբ ուսումնական գործունեության մեջ հնարավոր դժվարությունների և դրանց հաղթահարման ուղիների մասին նախազգուշացմամբ: Բացի այդ, գիտելիքների բացթողումների վերացումը կարող է ավելի տարբերակված լինել, ունենալ անմիջական և միջնորդավորված օգնության բնույթ: Օպերատիվ օգնությունն ուղղված է ցածր առաջադիմության պատճառների վերացմանը, ուսուցման պայմանների ընդհանուր բարելավմանը: Անմիջական օգնությունը կրում է միաժամանակյա, տեղային բնույթ, կոչված է օպերատիվ կերպով վերացնելու ուսումնաճանաչողական գործունեության թերությունները: Տարբերակված անմիջական շտկողական օգնությունը մանկավարժի կողմից կառուցվում է՝ կախված ուսումնական իրավիճակից: Եթե աշակերտը դժվարանում է պատասխանել ուսուցչի պատմածի կամ դասագրքի տեքստի հետ կապված հարցերին, եթե նա չի կարողանում առանձնացնել գլխավոր տեսական դրույթները, որոշել մյուս սովորողների կողմից նյութի շարադրման ճշտությունն ու հարցերին տրված նրանց ճշգրիտ պատասխանները, սխալ է վերարտադրում բանաձևը, հասկացությունների սահմանումը, օրենքի ձևակերպումը, չի կարողանում բացատրել կամ վերարտադրել իրեն տրված գծապատկերը, այդ դեպքերում օգտակար է կրկնել բացատրությունը առավելագույն մանրամասն ձևով, իսկ հետո հարցերը տալ գլխավոր մասին՝ առանձնացնելով մանրամասները [1]:

Իսկ եթե դժվարությունները դրսևորվում են կանոններն ու բանաձևերը հասկանալու կամ հիշելու դեպքում, դրանք ծանոթ իրավիճակներում կիրառել չկարողանալով, օրինակների ձևով չկիրառելով, նպատակահարմար է սովորողների հետ կատարել միատեսակ առաջադրանքներ՝ մշտապես վերադառնալով այդ կանոնների կամ բանաձևերի տեքստերին և համապատասխան վարժանքից, նախապատրաստումից հետո խնդրել նրանց՝ վերարտադրել բանաձևը կամ սահմանումը: Խորհուրդ է տրվում նաև մեկ անգամ էլ քննարկել ու վերլուծել դասի ժամանակ օգտագործվող աղյուսակներն ու սխեմաները՝ անհասկանալի տեղերը բացատրելով:

Ուսումնասիրվող նյութի ստեղծագործական կիրառման թերացում նկատելիս (անծանոթ խնդիրներ լուծելիս օրենքների և բանաձևերի կիրառում, լուծման պլանի կազմում, պլանի գնահատում և այլն) ավելի լավ է սովորողների հետ լուծել այնպիսի խնդիրներ, որոնցում օգտագործվում է ուսումնասիրվող օրենքը կամ հասկացությունը, բացահայտելով մտքի հնարավոր ընթացքը, այլընտրանքային լուծումները:

Կարելի է մանկավարժորեն բարձրորդի դեռահասների գիտելիքների շտկման համար շատ ուժ և եռանդ վատնել, բայց այդ խնդրի լուծման մեջ քիչ բանի հասնել: Դրա համար էլ դեռահասների ուսումնական-ճանաչողական գործունեության շտկման հաջորդ փուլը հանդիսանում է նրանց հոգեբանական-մանկավարժական նախապատրաստումը ուսումնական գործունեությանը, ուսումնական-ճանաչողական գործընթացի շարժառիթների ամբողջությունը [3]:

Ճանաչողական հետաքրքրությունն էական փոփոխություններ է առաջացնում դեռահասների մտավոր գործունեության բնույթի մեջ: Այդ պատճառով էլ առանց դեռահասներին հոգեբանորեն նախապատրաստելու գիտելիքների ձեռք բերմանը և մտավոր գործողություններ կատարելուն, առանց նախատեսվող աշխատանքի հեռանկարի ցուցադրման, առանց համոզելու, որ գիտելիքներն ու ունակությունները կարևոր նշանակություն ունեն, դժվար է հուսալ, թե սովորողները ակտիվ վերաբերմունք կդրսևորեն ուսումնական նյութը յուրացնելու գործում:

Իսկ ինչի՞ց է ձևավորվում ուսումնական գործունեության շարժառիթների ամբողջությունը, ի՞նչն է առաջացնում սովորողների մոտ ճանաչողական հետաքրքրություն և պահպանում այն:

Առաջինը, որ անհրաժեշտ է անել, մասնագետների կարծիքով, այն է, որ պետք է ստեղծել գիտելիքներ ստանալու ցանկության իրավիճակներ՝ նոր ուսումնական նյութն ընկալելու փուլում: Դրանք կարող են լինել գիտելիքներն ընկալելու համար հուզականորեն բարենպաստ իրավիճակներ, ուսումնասիրվող նյութի գործնական ճանաչողական նշանակության բացահայտման հետ կապված իրավիճակներ, որոնք նպաստում են գիտակցել սեփական գիտելիքների և ունակությունների անբավարար լինելը, և նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը:

Ուսումնական գործունեության շարժառիթների ամբողջության հզորացման գործում կարևոր դեր են խաղում ուսումնական գործունեության հուզական ֆոնը, առաջարկվող նյութի հետաքրքրաշարժ, զարմանալի լինելը: Ուսումնական նյութի յուրացման առավել բարդ դեպքերում դա կարող է լինել նոր գիտելիքներ ձեռք բերելու համար նպատակաուղղված ուշադրության իրավիճակում:

մտավոր որոշակի լարում ստեղծելու միջոցով, որպեսզի յուրացվի ուսումնական ծրագիրը:

Շտկողական-ճանաչողական գործընթացի հուզական-ազդեցիկ կողմն ուժեղացնելու համար անհրաժեշտ է գործարկել այդ գործընթացի ևս մեկ ուղղություն՝ սովորողների կողմից ճանաչողական ունակությունների տիրապետումը: Գանաչողական ունակությունների ձևավորման ընթացքում գիտնականներն առանձնացնում են երկու ճանապարհ: Առաջինը՝ հատուկ ցուցումների, կանոնների և այլ կարգադրությունների կազմումն է, որոնք հենվում են մտավոր գործողությունների վրա: Գանաչողական ունակությունների ձևավորման անուղղակի ճանապարհը դրսևորվում է ուսումնական նյութի բովանդակության հատուկ ընտրությամբ:

Գանաչողական ունակությունների ձևավորման ժամանակ անհրաժեշտ է նախառաջ բացատրել այդ ունակությունների նշանակությունը, դրանց դերը գիտելիքների ձեռք բերման գործում (գրքի, տեղեկատու գրականության հետ աշխատելու կարողություն և այլն):

Շեղվող վարքագծով մյուս թույլ առաջադիմությամբ և ետ մնացող դպրոցականների համար ուսումնական ունակությունների ձևավորման գործընթացում ոչ պակաս կարևոր է յուրաքանչյուր հմտության մշակման պարբերականությունն ու հետևողականությունը, այսինքն՝ չի կարելի անցնել նոր գործողության՝ չյուրացնելով նախկին գործողությունը (նյութի ընդհանրացում, պարբերականացում) [7]:

Ուսումնաճանաչողական ունակությունների ձևավորման և զարգացման գործում մեծ դեր է խաղում ունակությունների մշակման ալգորիթմացումը, այսինքն՝ ճշգրիտ ընդունված հրահանգները՝ տարրական գործողությունները որոշակի հերթականությամբ կատարելու վերաբերյալ, որպեսզի լուծվի գործունեության որոշակի տիպի պատկանող ցանկացած առաջադրանք: Զարգացման և վարքագծի շեղումներ ունեցող երեխաների համար գործողությունների հրահանգավորումը կարգավորում, կարգապահության է ենթարկում նրանց միտքը, ընտելացնում է դատողությունների հետևողական ընթացքին, սովորեցնում է հետևություններ ու եզրակացություններ կատարել, ճիշտ եզրահանգումների գալ:

Այսպիսով, ուսումնաշտկողական գործունեությունը ուսումնադաստիարակչական գործընթացում իրենից ներկայացնում է հուզական, օպերատիվ և բովանդակային բնույթի միասնական գործընթաց, որ հնարավորություն է տալիս շտկել ուսումնաճանաչողական գործունեության ոչ միայն արտաքին կողմը, որն ի հայտ է գալիս ուսումնական առաջադրանքները կատարելիս, այլ նաև ներքին կողմը, որն արտահայտվում է ուսումնա-

կան առարկայի նկատմամբ սովորողների վերաբերմունքի մեջ ընդհանրապես և դպրոցի վերաբերմամբ՝ մասնավորապես [10]:

Հասարակական օգտակար և աշխատանքային գործունեությունը դրական վերաբերմունք է ձևավորում աշխատանքի հանդեպ՝ որպես բարձրագույն արժեքի, նրանց մեջ աշխատասիրություն և բարոյական արժեքներ է սերմանում, նպաստում է նախաձեռնողականությանն ու նպատակաուղղվածությանը, պարտքի ու պատասխանատվության զգացումի խորացմանը [8]:

Բայց եթե դպրոցականների աշխատանքային դաստիարակության խնդիրներն իրականացնելիս մենք հենվում ենք ընդհանուր մանկավարժական օրինաչափությունների ու սկզբունքների վրա, հաշվի ենք առնում դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ապա շտկողական-մանկավարժական աշխատանքում մանկավարժորեն բարձիթողի լինելու, դեռահասի վարքագծում շեղման բնույթի մակարդակն ու աստիճանը հաշվի առնելու հետ մեկտեղ չպետք է մոռանանք տվյալ տեսակի մատչելիության և անչափահասների համար հաղթահարելիության մասին, այդ աշխատանքի հասարակական նշանակության և դեռահասի անձնական հետաքրքրությունների համադրման, աշխատանքային գործունեության անհատական ու կոլեկտիվ ձևերի, դպրոցի ուսումնադաստիարակչական ուղղվածության խնդիրների հետ համապատասխանության մասին:

Գեղարվեստական-գեղագիտական գործունեությունն ուղղված է անձի կարողությունների զարգացմանը՝ արվեստում և իրականության մեջ գեղեցիկի լիարժեք ընկալման և ճիշտ ըմբռնելու համար, գեղարվեստական պատկերացումների, հայացքների ու համոզումների մշակմանը, աշակերտների մեջ ձգտում և ունակություն դաստիարակելուն, որպեսզի կյանքում ներդնեն գեղեցիկի տարրերը, պայքարեն այլանդակի ու ստորի դեմ:

Բարոյական-իրավական գործունեությանը մասնակցելը ձևավորում է բարոյական նորմերի ու կանոնների վերաբերյալ գիտելիքների, մարդու հանդեպ բարոյագիտական պահանջների համակարգ, զարգացնում է մյուս մարդկանց, սեփական անձի և աշխատանքի բնության, բարոյական նորմերի, համամարդկային արժեքների հանդեպ վերաբերմունք, ձևավորում է երեխայի վարքագծի մշակույթի հիմքերը:

Այս ամենի հետ մեկտեղ արտադասարանային դաստիարակչական գործունեությունն ինքնին չի լուծում դեռահասների վարքագծում շեղումների կանխման, երեխայի անձի զարգացման թերությունների հաղթահարման հիմնահարցերը: Որ-

պեսզի այն ձեռք բերի անհրաժեշտ շտկողական-զարգացնող ներուժ, պարունակի փոխհատուցող և վերականգնող լիցք, դաստիարակչական աշխատանքը պետք է համապատասխան ձևով կազմակերպված լինի և մանկավարժորեն գործիքավորված, ապահովված ընդհանուր մանկավարժական և հատուկ մեթոդներով, հնարքներով ու միջոցներով [14]:

Ժամանակակից հոգեբանամանկավարժական գիտությունը և շտկողական պրակտիկան տիրապետում են շեղվող վարքագծով դեռահասի անձի վրա ներազդելու, նրա զարգացման ու վարքագծի շեղումները հաղթահարելու ուղիների և միջոցների բավականին տարողունակ զինանոցի:

Միաժամանակ, օգտագործելով մանկավարժական ներգործության այս կամ այն հնարքները, մեթոդները, անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձի շտկման մեթոդներն ազդում են գիտակցության, զգացմունքների, վարքագծի, ամբողջությամբ անձի զարգացման վրա:

Հետևաբար դժվար դաստիարակելիությունը հաղթահարելու մեթոդներն առանց մեկը մյուսի հետ փոխհամագործակցության կարող են հանդես գալ որպես վարքագծի շտկման միջոց, մինչդեռ դրանց համալիր կիրառումը այդ մեթոդները դարձնում են դպրոցականների անձնային համակարգի վերակառուցման միջոց: Գործելով մեկը մյուսի հետ փոխկապակցված, ապահովելով գիտակցության և վարքագծի համաձայնեցված վերակառուցում, դաստիարակելով դրական հատկանիշներ և հաղթահարելով բացասական հատկանիշները՝ մանկավարժական մեթոդները կորդինացնում են բազմատեսակ տարերային և կազմակերպված ազդեցությունները դեռահասի անձի վրա, կարգավորում են դեռահասների վերաբերմունքը սեփական անձի և այլոց նկատմամբ [3]:

Քանի որ գործունեությունը հանդիսանում է անձի ձևավորման առաջատար միջոց, հե-

տևաբար շտկման մեթոդներ նպատակահարմար է համարել գործունեության կազմակերպման և իմաստավորման այն միջոցները, որոնք դեպի լավ են փոխում աշակերտի բնավորության գծերը և նպաստում են դժվար դաստիարակելիության ու մանկավարժական բարձիթողիության ուղղմանն ու շտկմանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Актуальные вопросы формирования интересов в обучении: Учеб. пособие / Под ред. Г. И. Щукиной. М., 1984.
2. **Алемаскин М. А.**, Воспитательная работа с подростками. М., 1979.
3. **Алмазов Б. К., Грищенко Л. А.**, Психология отклоняющегося поведения и задачи педагогической реабилитации трудновоспитуемых учащихся. Свердловск, 1987.
4. **Ананьев Б. Г.** Человек как предмет познания: Избр. псих. тр.: В 2 т. М., 1980. Т. 1.
5. **Гонеев А. Д. и Др.**, Основы коррекционной педагогики. М., 2002.
6. **Захаров А. И.**, Как предупредить отклонения в поведении ребенка. М., 1986.
7. **Зюбин Л. М.**, Учебно-воспитательная работа с трудными учащимися. М., 1982.
8. **Кашенко В. П.**, Педагогическая коррекция: исправление недостатков характера у детей и подростков. 2-е изд. М., 1994.
9. **Кочетов А. И., Верцинская Н. Н.**, Работа с трудными детьми. М., 1986.
10. **Наманзон Э. Ш.**, Трудный школьник и педагогический коллектив. М., 1984.
11. **Потанин Г. М., Косенко В. Г.**, Психолого-коррекционная работа с подростками. Белгород, 1995.
12. **Степанов В. Т.**, Психология трудных школьников. М., 1997.
13. **Фельдштейн Д. И.**, Проблемы возрастной и педагогической психологии. М., 1995.
14. **Цетлин В. С.**, Предупреждение неуспеваемости учащихся. М., 1989.

#### READJUSTING TEENAGERS DEFLECTING BEHAVIOR IN THE PROCESS OF EDUCATION

**VACHIK BRUTYAN**

Candidate of pedagogical sciences, docent

Rector of Armenian-Russian International University "Mkhitar Gosh"

#### Summary

In the article the author represents the reasons of straggling pupils with deflecting behavior: their characteristic fetures, as well as learning – cognitive readjusting stages of such teenagers.

# ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\*

## Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ  
Նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կրթության որակի գնահատման փորձագետ



Վերջին տասնամյակում, կապված մանկավարժական կրթության բարեփոխումների հետ, մանկավարժական մասնագիտությունների գծով կրթական գործունեություն իրականացնող բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում լայն կիրառություն է ստացել թղթապանակի տեխնոլոգիան, որպես ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգման ձև: Սակայն, հրապարակում չկա ստուգման այդ ձևի էությունը բացահայտող նորմատիվ կամ մեթոդական որևէ փաստաթուղթ: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել թղթապանակի տեխնոլոգիայի էությունը, գործառնությունները, թղթապանակի տեսակները, դրանց կառուցվածքը, արդյունավետ կիրառության պայմանները, գնահատման ձևերն ու մեթոդները:

Ուսումնամեթոդական սույն հոդվածը հասցեագրված է մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդողներին: Միաժամանակ, այն կարող է ծառայել որպես ուսումնական նյութ մագիստրոսի կրթական ծրագրի մանկավարժական մասնագիտությունների ուսանողների համար:

Հանգուցային բառեր՝ ուսուցման նպատակ, տեխնոլոգիա, թղթապանակ, աշխատանքային նյութ, ուսումնական նվաճում, գնահատման չափանիշ, ուսումնական բնութագիր, մասնագիտական աճ:

Թղթապանակը որպես աշխատանքի տեխնոլոգիա ի սկզբանե սկսել է կիրառվել տնտեսագիտության և արվեստի բնագավառներում: Տնտեսագիտության մեջ թղթապանակ են անվանել


գույքի նկատմամբ սեփականատիրական իրավունքը հավաստող փաստաթղթային սկզբնաղբյուրների հավաքածուն, արվեստում՝ այն միջոցների հավաքածուն, որտեղ հավաքված է արվեստագետի աշխատանքների նվաճումները: Կրթության բնագավառում թղթապանակը սկսել են կիրառել Կանադայում, իսկ նախորդ դարի 80-ական թվականներից ԱՄՆ-ում՝ համալսարանների և քոլեջների դասավանդողների կազմի համալրման նպատակով: Հետագայում արդյունավետության շնորհիվ թղթապանակը ստացավ լայն կիրառություն: Այժմ այն շատ երկրներում դասավանդողների կողմից հաջողությամբ կիրառվում է որպես ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և մասնագիտական աճի գնահատման տեխնոլոգիա [1]:

Կրթության ոլորտում դասավանդողների կողմից թղթապանակը կիրառվում է՝

- որպես մասնագետի կայացման տեսլականի և մասնագիտության զարգացման ուղղության որոշման նպատակով,
- սեփական աշխատանքի, մասնագիտական աճի ու պրոֆեսիոնալիզմի մշտադիտարկման և հետադարձ կապի նպատակով,
- իրենց հնարավորությունները և աշխատանքային հաջողություններն ու առաջընթացը աշխատանքի ընդունվելիս և ուսանողական լսարանին ներկայանալու ժամանակ [9],
- ուսանողների հետաքրքրությունների ոլորտների և տարբեր առարկաներից առաջընթացի, հաջողությունների, որպես մասնագետի կայացման գործընթացի գնահատման, ուսումնական արդյունքների արժևորման նպատակով,
- մասնագետ-կադրերի ընտրության ժամանակ:

Թղթապանակի բուն բովանդակության բացահայտման նպատակով բերենք ամերիկյան հետազոտողների մի քանի սահմանումներ:

\* Ներկայացվել է 15.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:



Վերոնշյալ բոլոր սահմանումները ուսումնական գործունեության նպատակի առումով գրեթե համարժեք են և բացահատ կամ անբացահայտ պարունակում են թղթապանակի հիմնական գործառույթները՝

- **դիագնոստիկ**՝ սևեռակում է ուսանողների ջանքերը, ձգտումները, մասնագիտական առաջընթացն ու հաջողությունները, աճն ու փոփոխությունները որոշակի ժամանակահատվածում,

- **նպատակադրման**՝ հետապնդում է ուսումնական և մասնագետների կայացման նպատակներ,

- **մոտիվացնող**՝ խրախուսում է ուսումնական մասնագիտական գործընթացի մասնակիցներին՝ ուսանողներին, դասավանդողներին, ինչպես նաև ծնողներին [2],

- **բովանդակային**՝ բացահայտում է ուսումնական մասնագիտական գործընթացում իրականացվող աշխատանքների բովանդակությունը,

- **գարգացնող**՝ ապահովում է ուսուցման գործընթացի անընդհատությունը, մասնագետների կայացման գործընթացի որակը, դասավանդող կազմի մասնագիտական աճի հետագիծը,

- **վարկանիշային**՝ ցույց է տալիս ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ինչպես նաև մասնագիտական կոմպետենտությունների ձևավորվածության մակարդակը:

Թղթապանակի վերոնշյալ բոլոր սահմանումները համարժեք լինելով հանդերձ էապես տարբերվում են՝ կախված տեսակից: Դրանք ըստ տեսակների կարելի է բաժանել 2 խմբի՝

1. նվաճումների և ձեռքբերումների թղթապանակ, որոնց ստեղծման նպատակը արդյունքների ներկայացնելն է,

2. գործընթացների թղթապանակ, որոնք ուղղված են աշխատանքների արդյունքների սևեռակմանն ու դրանց վերլուծությանը [4]:

**Թղթապանակի տեսակները ըստ ստեղծման նպատակի**

Թղթապանակի տեսակը	Թղթապանակը ստեղծելու նպատակը
Փաստաթղթերի թղթապանակ	Ստեղծել աշխատանքի համար անհրաժեշտ փաստաթղթերի, նորմատիվ ակտերի հավաքածու
Ցուցադրական, շնորհանդեսային թղթապանակ	Ցուցադրել անձնական գործունեության նախապես առանձնացված բաժինների գործընթացները և ձեռքբերումները
Գնահատման թղթապանակ	Սեփական գործունեության ինքնագնահատում և գնահատում այլոց կողմից
Աշխատանքային թղթապանակ	Սեփական գործունեության բազմազանության և մակարդակի ցուցադրում
Գործընթացի թղթապանակ	Դրված նպատակների իրականացման ուղղությամբ աշխատանքային գործընթացի և դինամիկայի ցուցադրում
Հիմնախնդրային, թեմատիկ թղթապանակ	Դրված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքային գործընթացի, դրա դինամիկայի և արդյունքների ցուցադրում

Թղթապանակի բովանդակությունը կախված է նրա ստեղծման նպատակից և տեսակից: Թղթապանակի մեջ ներառվող նյութերի հստակ ցուցակ գոյություն չունի: Սակայն, նպատակահարմար է ընդգրկել այնպիսի փաստաթղթեր, որոնց օգնությամբ ավելի դյուրին է իրականացնել դիագնոստիկ գործունեություն, բացահայտել նպատակի իրականացված լինելու աստիճանը, բացթողումներն ու թերությունները, արժևորել ու գնահատել կատարված աշխատանքները, կանխատեսել ու նախագծել հետագա անելիքները: Թղթապանակի տեխնոլոգիայից օգտվող յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում իր աշխատանքների և նվաճումների ցուցադրման եղանակները [5]: Եթե թղթապանակը ստեղծվում է բոլոր ուսանողների կողմից, ապա դասավանդողը ուսանողների հետ միասին պետք է որոշեն թղթապանակի մեջ մտնող նյութ-

րի ցուցակը, որոնք անհրաժեշտ են գնահատման ներկայացնելու համար: Նման պարագայում խրախուսվում է նյութերի ցուցակը ընդլայնող ցանկացած նախաձեռնություն: Բոլոր նյութերը խորհուրդ է տրվում ներկայացնել չորս բաժիններով:

**Թղթապանակի բաժինները**

Բաժնի անվանումը	Բաժնի նպատակը	Բաժնի բովանդակությունը	Լիտատիվի նկարագրումներ
Բնութագրում	Ինքնանկարագրում և թղթապանակում արտահայտվածության նկարագրում, նպատակադրում		
Բաշխիչ նյութեր	Նյութեր, որոնք ուսանողներն օգտագործում են աշխատանքի ժամանակ		
Աշխատանքային նյութեր	Ուսանողների սեփական խմբավորված աշխատանքները դրված նպատակներին համապատասխան		
Նվաճումներ	Դրված նպատակներին և խնդիրներին համապատասխան ուսանողների ձեռքբերումների ցուցադրում առաջադրանքների միջոցով		

Ներկայացված աղյուսակը կարելի է լրացնել՝ ճշգրտելով թղթապանակի նպատակը:

Եթե դասավանդողը պատրաստվում է օգտագործել թղթապանակի տեխնոլոգիան ուսումնական առարկայից նյութերի որոնման, կուտակման և վերլուծության նպատակով, ապա պետք է նկատի ունենա, որ թղթապանակը ստեղծվում է հենց սովորողների կողմից իրենց առաջընթացը գնահատելու համար, դասավանդողը ուսանողներին լրկ օժանդակում է կազմակերպել գործընթացը և գնահատել ձեռքբերումները [3]: Հետևաբար, ուսանողների մոտիվացիան թղթապանակի ստեղծման սկզբում պետք է լինի բավականաչափ բարձր: Թղթապանակների ստեղծման մոտիվացիան ուժեղացնելու համար և՛ դասավանդողը, և՛ ուսանողները պետք է գործընթացին ցուցաբերեն ստեղծագործական մոտեցում [8]: Այդ նպատակով՝

1. դասավանդողը պետք է ճիշտ գնահատի ուսանողների կողմից թղթապանակի ստեղծման կարևորությունը ուսանողների զարգացման հար-

ցում (այլ ոչ այն դիտի լոկ որպես նոր տեխնոլոգիայի ներդրում),

2. հատուկ կազմակերպված դասի ժամանակ դասավանդողը ներկայացնում է աշխատանքային գործընթացն ու ներկայացվող պահանջները, ինչպես նաև մանրամասն քննարկում իրենց զարգացման և այդ գործընթացում դասավանդվող առարկայի նշանակության մասին հարցերը,

3. շատ կարևոր է առարկայի առաջին դասին ավանդվող առարկայի բովանդակությունը և առաջիկա կիսամյակի ընթացքում անելիքները ներկայացնելը: Միայն առարկայի բովանդակությունը, ատեստավորման ձևերն ու ժամկետները հստակ իմանալու պարագայում ուսանողները կարող են ըստ էության ճիշտ կատարել աղյուսակի «Բնութագրում» տողի ձևակերպումը: Ուսումնական բովանդակության, ատեստավորման ձևերի ու ժամկետների, հիմնական և լրացուցիչ գրականության սխեմատիկ արտացոլումը նպատակների իրականացման ընթացքը դարձնում է տեսանելի: Թղթապանակ ստեղծելու ժամանակ ուսանողների նպատակադրումը պետք է վերահսկվի, որպեսզի այն լինի հստակ և արդարացված՝ իր արդյունավետությամբ: Միայն այս պայմաններում ուսանողը կարող է որոշել նպատակների իրականացված լինելու մակարդակը: Անհրաժեշտության դեպքում նպատակը կարելի է տրոհել առավել մասնավոր խնդիրների:

4. Յուրաքանչյուր ուսանող ինքը կարող է ընտրել իր բնութագիրը ստեղծելու ձևը: Ինքնուրույն ընտրության հնարավորությունը հետադարձ կապը դարձնում է առավել խորը, բարձրացնում է ստեղծագործական մակարդակը:

5. «Բաշխիչ նյութեր» բաժնում ներառվում են այն նյութերը, որոնք ուսանողները օգտագործում են տվյալ առարկայի համար՝ դասագիրք, լրացուցիչ գրականության ցանկ, տեղեկատվության այլ աղբյուրներ, այլ ուսանողների աշխատանքների մուշներ: Բաժինը ծանրաբեռնելու կարիք չկա, սակայն դասավանդողը պետք է նրանց սովորեցնի ինչպես որոնել տեղեկություն, ինչպես դրանք խմբավորել, դասակարգել, համառոտագրել, ներկայացնել:

6. «Աշխատանքային նյութեր» բաժնում ներառվում են հենց ուսանողների կողմից կատարվող պարտադիր և լրացուցիչ աշխատանքները, որոնք ուսանողների կողմից վերլուծվում և գնահատվում են: Այսպիսի բաժին ստեղծելու ժամանակ անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացվող գնահատման կանոններին: Եթե ուսանողները կատարել են կուլեկտիվ աշխատանք, օրինակ՝ նախագիծ, ապա յուրաքանչյուրը հակիրճ պետք է ներկայացնի մասնաբաժինը:

7. Սովորաբար, «Նվաճումներ» բաժնի կազ-

մուսը լինում է առավել դժվար, քանի որ հաճախ դասավանդողները չեն տիրապետում ուսանողների նվաճումների գնահատելու գնահատման տարաբնույթ մեթոդներին: Ստուգման ներկայացվող աշխատանքներից զատ, բաժնում պետք է ընդգրկել պատվոգրերը, զովասանագրերը, շնորհակալագրերը, սերտիֆիկատները և այլն: Բաժնում կարելի է կիրառել նաև փոխադարձ գնահատման մեթոդը, օգտագործել ուսանողների, համակուրսեցիների, ուսուցիչների, ծնողների կողմից տրվող բնութագրերը և ուսանողների նվաճումների այլ վկայություններ:

Աշխատանքի արդյունքների ամփոփման նպատակով թղթապանակը գնահատվում է դասավանդողի ու ուսանողների կողմից համատեղ: Թղթապանակի գնահատման գործընթացում ուսանողների մոտ ինքնագնահատման և հետադարձ կապի ապահովման հնարավորությունների զարգացման, ինչպես նաև ժամանակի խնայողության նպատակով յուրաքանչյուր ուսանողը պետք է նախապատրաստական աշխատանքներ կատարի: Այդ ընթացքում ուսանողը ևս մեկ անգամ դիտարկում է առաջադրված նպատակներն ու խնդիրները, ընտրում տվյալ ուղղությամբ աշխատանքի արդյունքների և իր նվաճումների մասին նյութերը: Ուսանողները նյութերը կարող են ներկայացնել համապատասխան հերթակայությամբ: Ամենարդյունավետ եղանակը, թերևս, աշխատանքային նյութերի հիման վրա նպատակներին համապատասխան ձեռքբերումների գրավոր վերլուծությունն է:

Թղթապանակի գնահատումը կատարվում է՝

- դասավանդողի և ուսանողների անհատական շփումների, ղեկավարվող ինքնուրույն աշխատանքների կամ ստեղծագործական աշխատանքների ժամանակ:

- ուսանողների կողմից փոքր խմբերում: ումբը լսում, քննարկում, վերլուծում և գնահատում է յուրաքանչյուր ուսանողի ներկայացումը: Դասավանդողը պարապմունքի ժամանակ անցնում է խմբից խումբ, նայում բոլորի աշխատանքները: Գնահատականը ամրակայվում է թղթապանակում:

- կատարված աշխատանքների և ձեռքբերումների մասին թղթապանակների ընդհանուր ներկայացումների ժամանակ: Ընդհանուր ներկայացումները նպատակահարմար է կազմակերպել հատկապես երբ թղթապանակը կազմվում է ճանաչողական նպատակով: Այսիսի դեպքերում ուսանողներից յուրաքանչյուրին տրամադրվում է 2-3 րոպե ելույթի համար և նույնքան ժամանակ հարց ու պատասխանի համար: Ելույթի ժամանակ հստակ նշվում է նպատակները, դրանց իրականացնելու ձևերն ու նվաճումները: Նախապես

կազմավորված հանձնաժողովը գնահատում է թղթապանակի բովանդակությունը, ելույթներն ու հարցերի պատասխանները՝ նախապես որոշված չափանիշներով:

Թղթապանակի գնահատման համար կիրառվում են հետևյալ կանոնները՝

- թղթապանակի գնահատման չափանիշները ուսանողներին ներկայացվում է մինչ աշխատանքի սկսելը,

- մինչ թղթապանակի վրա աշխատանքի սկսելը ուսանողները նախապես պետք է իմանան նյութերի տեսակներն ու դրանց բովանդակությունը,

- թղթապանակը ճիշտ է գնահատել հաշվի առնելով կատարած աշխատանքի ճանաչողական, վերարտադրողական, կիրառական և ստեղծագործական մակարդակները, այնուհետև համապատասխանեցնել գնահատման չափանիշներին,

- թղթապանակի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել ուսանողների մասնագիտական աճի տեսլի (թղթապանակում արտահայտված),

- գնահատականի օբյեկտիվության ապահովման համար անհրաժեշտ է թղթապանակը բաժանել մասերի՝ ըստ աշխատանքի տեսակների, յուրաքանչյուր մասի համար՝ ըստ աշխատանքի բարդության և ծավալի որոշել միավորների թիվը: Թղթապանակներում ներառվում են՝

- **Պարտադիր փաստաթղթեր**՝ խմբային նախագծային հանձնարարությունների արդյունքներում անհատական ներդրման կամ անհատական նախագծերի արդյունքները, լուծված մանկավարժական խնդիրները և իրավիճակները, ռեֆերատները, ստեղծագործական աշխատանքները, մշակումները, ուսումնասիրված գրականության բովանդակային համառոտագրերը,

- **Որոշողական փաստաթղթեր**՝ աշխատանքներ նախագծի իրականացման, մանկավարժական խնդրի և իրավիճակների լուծման, ռեֆերատների, ստեղծագործական աշխատանքների համար գրական սկզբնաղբյուրների, հետազոտությունների արդյունքների, տեղեկության որոնման, համակարգման և դրված նպատակների իրականացման ուղղության վերաբերյալ,

- **Իրավիճակային փաստաթղթեր**՝ ուսումնասիրվող նյութերի, լաբորատոր աշխատանքների, փորձարարական աշխատանքների, կիրառական մանկավարժական խնդիրների և իրավիճակների լուծման վերաբերյալ իրավիճակային արդյունքներ, հավելվածներ, հանձնարարությունների շրջանակներում ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ընթացքում արձանագրված ուշագրավ միջադեպեր և իրադարձություններ,

• **Նկարագրական փաստաթղթեր**՝ օգտագործված գրականության և սկզբնաղբույրների ցանկեր, պատմական իրադարձությունների նկարագրություններ, հետազոտական աշխատանքի, մանկավարժական փորձի, գործնական աշխատանքի և իրավիճակների նկարագրություններ, օրագրի վարում, ռեֆերատներ, համառոտագրեր,

• **Արտաքին փաստաթղթեր**՝ թղթապանակի համար դասավանդողի, ինքնուրույն աշխատանքների կազմակերպիչների, խոհրդատուների, համակուրսեցիների արձագանքներ, գնահատականներ, ստեղծագործական աշխատանքների գնահատման թերթեր, ուսանողների պատվոգրեր, գովասանագրեր, շնորհակալագրեր, ուսանողական գիտական ընկերությունների նստաշրջաններում կարդացված զեկուցումներ ու դրանց գնահատականներ, մանկավարժական գիտական հետազոտական աշխատանքների ու գիտափորձերին մասնակցության արդյունքներ և այլն:

Ուսանողների մասնագիտական աճի տեմպը բացահայտելու համար պետք է գնահատել թղթապանակը՝ ըստ կատարված աշխատանքի որակական մակարդակների [4]: Նպատակահարմար է առանձնացնել գնահատման ամենաբարձր, բարձր, միջին, ցածր մակարդակները և գնահատման նախատեսված միավորները բաշխել ըստ մակարդակների:

• **Ամենաբարձր մակարդակ**: Թղթապանակը բնութագրվում է բոլոր տեսակի նյութերի առկայությամբ, արտացոլման բազմակողմանիությամբ և գնահատման չափորոշիչներին համապատասխանության բարձր մակարդակով: Թղթապանակի բովանդակությունը վկայում է ուսանողների ջանքերի, ակնհայտ առաջընթացի և ինքնագնահատման բարձր մակարդակի, ստեղծագործաբար մոտեցման մասին: Թղթապանակի բովանդակության և ձևավորման մեջ վառ արտահայտվում է ստեղծագործական մոտեցումները:

• **Բարձր մակարդակ**: Թղթապանակում ներկայացված են բոլոր պարտադիր նյութերը պատշաճ մակարդակով, սակայն կարող են բացակայել որոշ տարրեր: Օրինակ՝ կարող է ձևավորումը չլինել ինքնատիպ, նյութերի բովանդակության մեջ ոչ բավարար չափով արտահայտված լինել ստեղծագործական մոտեցումը:

• **Միջին մակարդակ**: Թղթապանակում ամբողջովին ներկայացված են առարկայական չափանիշներին համապատասխան բոլոր պարտադիր նյութերը, որով կարելի է գնահատել մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակը: Սակայն, կարող են բացակայել որոշ փաստաթղթեր կամ թղթապանակի ձևավորման ստեղծագործական մոտեցումը:

• **Ցածր մակարդակ**: Այս մակարդակին համապատասխանում են այն թղթապանակները, որոնց բովանդակությամբ դժվար է պատկերացում կազմել աշխատանքի ընթացքի և ուսանողների ուսումնական նվաճումների մասին: Որպես կանոն, նրանում ներկայացվում են մասնակի տեղեկություններ աշխատանքի տարբեր հատվածներից, թերի և անավարտ աշխատանքներ են: Այդպիսի թղթապանակների օգնությամբ հնարավոր չէ դատել ուսումնական գործընթացի մակարդակի և ուսանողի մասնագիտական աճի մասին [7]:

Թղթապանակի գնահատականը գրանցվում է գնահատման հատուկ թերթիկի վրա: Խորհուրդ է տրվում իրականացնել որակական գնահատում, աշխատանքի արժևորում:

**Թղթապանակի գնահատման թերթիկի նմուշ**

Դրական կողմերը	Դիտողություններ
Թերությունները, բացթողումները	Առաջարկություններ
Ընդհանուր գնահատականը	

Թղթապանակը կարող է լայն կիրառություն գտնել նաև դասավանդողի կողմից սեփական մասնագիտական զարգացման գործընթացի վերլուծության և գնահատման համար [6]: Կախված նպատակից՝ թղթապանակի բաժինները կարելի է լրացնել այլ նյութերով: Նպատակ կարող է լինել, օրինակ՝ մեթոդական նյութերի հավաքածուն մշակելը, ատեստավորման կամ մրցութային նախապատրաստվելը, մասնագիտական առաջընթացի ապահովումը և առաջխաղացումը: Անշուշտ, գործընթացը չի ենթադրում բոլոր հարցադրումներին լիարժեք և սպառնիչ պատասխաններ, սակայն այն հեղինակին հնարավորության է ընձեռում բացահայտել բացթողումներն ու թերությունները՝ կատարելով դիագնոստիկ գործառույթ: Արդյունքում՝ դասավանդողը գնահատում է սեփական մասնագիտական զարգացման գործընթացը օբյեկտիվ, մշտապես ունենալով շտկման հնարավորություն:

Այսպիսով, թղթապանակը մասնագիտական ուսումնական հաստատություններում կարող է կիրառվել ինչպես ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և մասնագիտական աճի գնահատման, այնպես էլ որպես դասավանդողի կողմից սեփական մասնագիտական զարգացման գործընթացի վերլուծության և գնահատման տեխնոլոգիա:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Պետրոսյան Յ. Գ.** Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., 2012, 563 էջ:

2. Պետրոսյան Հ. Հ. Մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաներ, Ե., «ԱՆ-Ջոն», 2010, 520 էջ:
3. Петросян Г. А. Технологичность образовательного процесса в профессиональных учебных заведениях, Научные новости Грузии, Международный научный журнал, утаиси N3(7), 2010, с. 57-61.
4. Голуб Г. Б., Чуракова О. В. Портфолио в системе педагогической диагностики // Школьные технологии. 2005, N1, с. 181-195.
5. Девисилов В. А. Портфолио и метод проектов как педагогическая технология мотивации и личностно ориентированного обучения в высшей школе // Высшее образование сегодня. 2009, N2, с. 29-34.
6. Зеленко Н. В., Могилевская А. Г. Портфолио будущего педагога // Стандарты и мониторинг в образовании. 2009. N1, с. 61-63.
7. Кныш И. А., Пастухова И. П. Портфель индивидуальных достижений как контрольно-оценочное педагогическое средство // Среднее профессиональное образование. 2008. N1. с. 69-73.
8. Могилевкин Е. Портфолио карьерного продвижения как современная технология планирования и развития карьеры выпускников вузов. Журнал «Управление персоналом», N5, 2006, ООО, «Агентство кадровых решений», <http://www.UHR.ru>
9. Новикова Т. Г., Пинская М. А., Прутченков А. С., Федотова Е. Е. Использование портфолио учащегося в предпрофильной подготовке и профильном обучении. Методическое пособие. М., 2008, 114 с.

---

#### USE OF TECHNOLOGY "PORTFOLIO" IN THE HIGHER PEDAGOGICAL EDUCATIONAL INSTITUTIONS

**H. HAYK PETROSYAN**

Doktor in Pedagogical Sciences, Docent  
 Armenian State Pedagogical University After Kh. Abovyan,  
 The Head of the Centre of Contribution of Innovative Technologies and Quality Assessment

#### Summary

During last decades, in connection with pedagogical education reform in the professional higher educational institutions conducting educational activity on pedagogical profession, have started to use widely technology "portfolio", as a way of intermediate examination of students. But since then there are not any standard or methodical document opening essence of the form of check of this kind. The purpose of given article is revealing of essence, functions, kinds and technology structure "portfolio" and conditions of their effective application, forms and estimation methods.

Given methodical article is addressed to the lecturers of professional educational institutions. Simultaneously it can serve as a teaching material for students pedagogical professions of master's program.

**Keywords:** the training purpose, technology "portfolio", a working material, educational achievements, criteria of an estimation, an educational characteristics, professional growth.



циальной деятельности, подвержено контролю общества. Прежде всего оно подчиняется общепринятым нормам литературного языка – орфоэпическим, акцентологическим, лексическим, фразеологическим, словообразовательным, морфологическим, синтаксическим. Б. Г. Головин справедливо подчеркивал, что “правильность речи – это главное ее коммуникативное качество” [3, 307].

Культура речевого поведения обусловлена целесообразным выбором и организацией языковых средств, которые в определенной ситуации общения при соблюдении лингвистических и этических норм позволяют эффективно решать коммуникативные задачи.

К сожалению, до последнего времени объектом внимания педагогики была лишь дидактическая речь. Справедливости ради следует отметить, что в преподавании иностранных языков и связи с актуализацией коммуникативного метода стала весьма ощутимой тенденция использовать речевое поведение учителя в учебно-воспитательных целях [4].

Известно, что успешность учебно-воспитательного воздействия зависит не только от того, насколько педагог владеет предметом разговора и методическими тонкостями его организации, но и от того, насколько ему удается находить общий и язык и установить контакт с учащимися. Эффективность профессиональной деятельности учителя как предметника и воспитателя обусловлена умением вести “**взаимный разговор**”, организовывать “**общительную речь**” [5, 85].

Нереализованный коммуникативный потенциал речевого поведения оборачивается ослаблением непосредственного воспитательного влияния личности учителя на личность учащегося. В этой связи возникает необходимость выделения специфических функций коммуникативно-ориентированной речи педагога.

Под функцией языка понимают его назначение. Традиционно дифференцируют такие функции устной речи, как координирующая, возбудительная и информационная. В педагогическом общении они реализуются на дидактическом и воспитательном уровнях. Своим словом учитель организует и координирует предметную деятельность, сообщает необходимую информацию, воздействуя на рациональную, эмоциональную и волевую сферы учащихся.

Изучение теории и практики педагогического общения позволяет выделить следующие функции речевого поведения учителя: самопрезентационную, мотивационную и психоте-

рапевтическую. Рассмотрим их сущность.

### 1. Самопрезентационная функция

Личность педагога – объект пристального внимания детей буквально с первых моментов общения. От **эффекта** “первого впечатления” зависит дальнейшее развитие взаимоотношений и результативность совместной работы. Готовясь к встрече с детьми, опытные учителя продумывают экспрессивные тонкости своего поведения, начиная с внешнего самоформирования, приветствия и заканчивая прощанием. “Воспитанник воспринимает вашу душу и мысли, – писал А.С. Макаренко, – не потому, что знает, что у вас в душе происходит, а потому что видит вас, слушает вас” [6, 179]. Он настойчиво советовал обращать внимание на “решающие пустяки”: как стоять, как сидеть, как подняться из-за стола, как улыбнуться, как посмотреть на воспитанников.

Фонетические особенности, лексический объем, грамматический и интонационный строй речи, жесты, мимика, пантомимика учителя открывают детям его личностную сущность – уровень интеллекта и образованности, общей культуры и воспитанности, своеобразия темперамента и характера.

Привлекательность педагога является эмоциональным регулятором межличностных отношений, обеспечивая их устойчивость, глубину, доверительность. Так, по данным исследований, проведенным Н. П. Ворониным, благоприятное впечатление от учителя у учащихся зависит от того, насколько уверенны его движения, позы, мимика, жесты, от четкости речи, оправданности ее громкости, ритма, от спокойного взгляда, широты спектра эмоциональных проявлений и т.д. [7].

Состояние удовлетворенности учащихся служит важным показателем уровня педагогического общения. Преобладание положительных эмоций на уроках укрепляет представление об учителе как привлекательном человеке. Следовательно, профессионализм педагога проявляется в способности вызвать к себе стабильное расположение и симпатию детей.

### 2. Мотивационная функция

С отказом педагогики от жесткого управления учебно-воспитательным процессом проблема мотивации приобретает все большее значение. “Мотив, – подчеркивает Ш. А. Амонашвили, – не просто возбудитель деятельности, но и регулятор ее интенсивности” [8, 35].

Проблема мотивации является сложнейшей, поскольку в качестве побудителей и стимуляторов учебной деятельности выступает

многообразии внешних и внутренних факторов: качество преподавания, эрудиция учителя, обаяние его личности, природные способности и склонности учащегося, его ценностные ориентиры и др. Тем не менее слову учителя дано создавать на занятиях благоприятный нравственно-психологический климат, вызывать живой интерес к совместной деятельности, включать в нее каждого ребенка, обеспечить необходимую синхронность действий, способствовать переживанию эмоционального подъема.

Особой мотивационной значимостью обладает комментирование отметки. Опытные педагоги не относятся к ее выставлению как самоценной акции, осознавая ее императивный смысл [8, 23]. Психологическое значение любой оценки, включая отметку, состоит в стимулировании определенной деятельности или поступков учащихся.

**Оценочные суждения** учителя могут быть положительными, констатирующими успехи, достижения, сильные стороны, и негативными, критическими, отмечающими недостатки, слабые стороны. Поощрительный комментарий призван вселить уверенность учащихся в своих способностях, утвердиться в правильности совершенных учебных действий или поступков. Назначение негативного комментария, сосредоточенного на ошибках, просчетах, заключается в активизации сил учащихся на преодолении недостатков. Оптимальными являются оценочные суждения, в которых поощрительность сочетается с объективным критическим анализом, без которого затруднительно формирование необходимых учебных и поведенческих эталонов и осложняются самообразование и самовоспитание учащихся.

### 3. Психотерапевтическая функция

Одним из первых, кто обратил внимание на психотерапевтическую функцию речевого поведения учителя, был В. Н. Мясищев. Он подчеркивал огромные возможности слова в формировании отношений ребенка к жизни, к людям, к себе, разрешении болезнетворных противоречий и конфликтов [9, 161].

До сих пор в отечественной литературе нет четкого определения целей психотерапевтического процесса. Само понятие психотерапии, как правило, связывают с лечебным воздействием в патологических случаях, требующих вмешательства специалиста-медика. Психотерапия трактуется узко, как система лечебных мер, направленных на исцеление психических больных или находящихся в пограничных состояниях.

Как широкое понятие психотерапия харак-

теризуется общей **гуманистической направленностью**. Необходимость овладения ее азами для каждого учителя становится все более очевидной, поскольку она помогает выявлению и реализации личностных потенций ребенка, гармонизации отношений с собой и миром.

Жизнь каждого ребенка **отличается эмоциональной напряженностью**, которая в неблагоприятных стрессогенных ситуациях может оборачиваться **психологическими срывами**.

Умеренный **стресс** (от англ. stress – давление, напряжение) активизирует волевою сферу, выполняя роль психического толчка, побуждающего личность к активности, выявлению творческого потенциала, самосовершенствованию.

Для душевного здоровья серьезную опасность представляет **дистресс**, определяемый Г. Селье как "вредоносный стресс". Если стресс может вызвать не только приятные, но и неприятные чувства, то дистресс всегда неприятен [10, 29].

Школьные дистрессы вызывают дидактогении, проявляющиеся в утрате побуждения к занятиям, стремлении уклониться от них, страх учения.

**Слово учителя** способно играть роль **стрессора**, активизирующего духовные силы ребенка, и ранящего дистрессора. Причем последствия могут быть не только немедленными, но и долговременными. По отношению к учителю как **дистрессору** это оборачивается ненавистью, недоверием, жаждой мести, в лучшем случае равнодушием учащихся. Дистресс вызывает ухудшение самочувствия, состояние тревожности, фрустрацию (чувство крушения), потерю веры в себя, стимулирует заниженный уровень притязаний, эффект сужения сознания, уход в себя, отчужденность, провоцирует агрессию, жестокость, стремление к конфронтации.

Психотерапевтическая функция педагога проявляется в **предупреждении дистресса**. Правомерен совет психоневрологов – в общении с детьми руководствоваться деонтологическим принципом **"не навреди"**. "Каждое действие и каждое слово человека (менее строго – почти каждое), – справедливо отмечает Н. В. Жутикова, – в различной степени способствуют либо добру, либо злу, приносят либо пользу, либо вред. Даже бездействие и бездеятельность имеют свой знак" [11, 75].

Следует учитывать, что присутствие сверстников выступает для каждого ребенка **дополнительным раздражителем**, источником острых переживаний, ибо связано с утвержде-

нием личного достоинства и престижа в их среде. В диалоге, реализуемом в обстановке публичности, предпочтительна **тактика акцентирования внимания на достоинствах**, а не на недостатках. Такая тенденция целесообразна при оценке и учебной, и внеучебной деятельности и поведения. Только так формируется **позитивная самооценка**, культивируются положительные личностные качества.

Особо травмирующей является **пессимистическая оценка** возможностей детей, которая выражается в укоряющих, порицающих, наказующих интонациях и нередко в грубой, оскорбительной форме.

Гармонизирующее влияние на душевное состояние учащихся оказывает общение с учителем, именуемое **“хорошим разговором”**. Это словосочетание означает такие диалоги, которые имеют “положительный стимулирующий эффект, оставляют приятное воспоминание и сами надолго остаются предметом разговоров” [12, 3].

**Вредоносными** оказываются **“пустые разговоры”**, построенные на угрозах, бестактности и оскорблениях.

**Психотерапевтическим эффектом** обладает **не ролевой, а личностный уровень** общения, человечность педагога. Именно тогда у ребенка возникает чувство защищенности, осознание своей самоценности, побуждающие к личностному самораскрытию и самоутверждению.

Последовательница своего отца известный психотерапевт Н. Роджерс отмечает: “Если создать безопасный, доверительный климат, в котором личность чувствует себя

свободно настолько, что начинает исследовать свой внутренний психический мир, то в этом случае сам человек выбирает наиболее оптимальное направление своего развития как личности” [13, 32].

Лечебная сила учительского слова связана с тем, что оно способно успокоить, воодушевить, активизировать творческие возможности личности, формировать оптимистическое мироощущение.

#### ЛИТЕРАТУРА

1. **Зимняя И. А.** Психология обучения неродному языку (на материале русского языка как иностранного). М., 1989.
2. **Артемьев В. А.** Психология обучения иностранным языкам. М., 1969.
3. **Головин Б. Г.** Основы культуры речи. М., 1988.
4. **Пассов Е. И.** Коммуникативный метод обучения иностранному говорению. М., 1985.
5. **Даль В. И.** Толковый словарь живого великорусского языка. Т. 1. М., 1978.
6. **Макаренко А. С.**, Собр. соч.: В 5 т. Т. 5. М., 1971.
7. **Воронин Н. П.**, Особенности общения в условиях первого контакта учителя с классом // Особенности познания и общения в процессе обучения: Межвуз. темат. сб. Ярославль, 1989.
8. **Амонашвили Ш. А.**, Обучение. Оценка. Отметка. М., 1980.
9. **Мясищев В. Н.**, Личность и неврозы. Л., 1960.
10. **Селье Г.**, Стресс без дистресса. М., 1982.
11. **Жутикова Н. В.**, Учителю о практике психологической помощи. М., 1988.
12. **Богин Г.** О хороших разговорах // Теория и практика разговорной речи лингвистического описания: Межвуз. сб. науч. тр. Горький, 1990.
13. **Роджерс Н.**, Творчество как усиление себя // Социальная работа. М., 1992.

ՌԻՍՈՒՅԶԻ ԽՈՍՔԱՅԻՆ ՊԱՅՎԱԾՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

**ՌԻՏԱ ՄՈՒՄԻՆՅԱՆ**

Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է ուսուցչի խոսքի կարևորագույն դերը աշակերտների հետ միջանձնային փոխհարաբերություններում, ինչպես նաև քննարկվում են ուսուցչի խոսքային պահվածքի գործառույթները:

CULTURE OF TEACHER'S SPEECH BEHAVIOUR

**RITA MUSINYAN**

Teacher of Russian language and literature at high school # 18 in Vanadzor

Summary

In the article it is presented the importance of teacher's role with pupils in interpersonal relations, as well it is discussed the functions of teacher's speech behaviour.

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ\*

### Կարինե ՊԱՊԻԿՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու

և Արժույթի անվան ՀԳՄՀ մանկավարժության ամբիոնի դասախոս



Դպրոցն արտա-  
ցուցում է հասարակության բո-  
լոր հակասությունները, որոնցից ամենա-  
արդիականն ու ամե-  
նավտանգավորը հո-  
գևոր ճգնաժամն է:  
Այն, ինչը մենք անվա-  
նում ենք հոգևոր  
կյանք՝ ներաշխարհի

հարստություն, գտնվում է գեղագիտական համա-  
կարգի առարկաների ոլորտում. դրանք առավե-  
լագույնս բացահայտում են մարդու և նրան շրջա-  
պատող աշխարհի գեղեցկությունն ու ներդաշնա-  
կությունը, զարգացնում են ճաշակը: Գեղագիտա-  
կան դաստիարակությունն անձի մտավոր և հո-  
գևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն  
ուղղված շարունակական գործընթաց է, որն իր-  
կանացվում է արվեստի տարբեր տեսակներին  
հաղորդակցվելու և ինքնուրույն գեղարվեստա-  
կան գործունեություն ծավալելու միջոցով:

Կրթության բովանդակությունը նպատակա-  
ուղղված է սովորողների համակողմանի ու ներ-  
դաշնակ զարգացմանը, նրանց պատշաճ վարքի  
ու վարվելակերպի ձևավորմանը [1, էջ 81]: Համա-  
կողմանի և ներդաշնակ զարգացման իդեալը  
անձնավորության զարգացման առաջին աստի-  
ճանն է: Համակողմանի և ներդաշնակ զարգա-  
ցում նշանակում է մտավոր, ֆիզիկական, աշխա-  
տանքային, բարոյական և գեղագիտական դաս-  
տիարակության միասնություն: Գործունեության  
բոլոր ձևերը պետք է համաձայնեցված լինեն ի-  
րար հետ, այլապես երեխայի համար փակուղի  
կատեղծեն: Դաստիարակության յուրաքանչյուր  
բաղադրատարր պետք է կարևոր դեր կատարի  
մյուս բաղադրատարրերի զարգացման համար:  
Միայն այս դեպքում կարելի է խոսել համակողմա-

նի և ներդաշնակ զարգացման մասին: Այդ զար-  
գացումը սերտորեն կապված է մարդու անհատա-  
կանության և ստեղծագործական ուժերի լիակա-  
տար զարգացման հետ: Գեղագիտական դաս-  
տիարակությունն աճող սերնդի բազմակողմանի  
զարգացման կարևոր մասն է կազմում: «Լինելով  
մարդուն ընդհանուր դաստիարակության, որպես  
նրա աշխարհին վերաբերող ընդհանուր մտուշի  
նպատակաուղղված ձևավորման համակարգի  
անբախտելի բաղկացուցիչ մասը՝ հանդիսանում է  
նրա վերջին, «ընդհանրացնող» և եզրափակիչ  
բաղադրամասը, որն ամբողջ համակարգին տա-  
լիս է ավարտվածություն և միևնույն ժամանակ  
սնուցում նրան մարդկային հատկության բովան-  
դակային էությանը» [2, էջ 3]:

Գեղագիտական դաստիարակությունն ուղղ-  
ված է մարդու մեջ կյանքի նկատմամբ ստեղծա-  
գործ վերաբերմունք արթնացնելու, ազգային և  
համամարդկային հոգևոր արժեքների նկատմամբ  
հարգանք ձևավորելու, իդեալներ, բարոյական  
կողմնորոշիչներ ստեղծելու խնդրին: Սակայն այս  
ձևակերպումն ուղղակի հայտարարագիր կմնա և  
չի իրագործվի, եթե գեղարվեստական համակար-  
գի առարկաները, արվեստը դպրոցում իրենց վա-  
յել ու արժանվույն տեղը չզբաղեցնեն: Գեղարվես-  
տական կրթության մասսայական պրակտիկան  
միտված է արվեստի մասնակի գիտելիքներ կամ  
արհեստավորական որոշիմտություններ սովոր-  
եցնելուն: Գաղտնիք չէ, որ այդ դասերին սովորողները  
հիմնականում գործնական աշխատանք-  
ներ են կատարում՝ ապահովելով ուսուցման  
միայն գործնական կողմը: Իհարկե, կան մանկա-  
վարժներ, որոնք ջանում են ամբողջացնել ուսու-  
ցումը՝ հաղորդելով նաև տեսական գիտելիքներ:  
Փաստորեն անձի ձևավորման ամենակարևոր և  
պատասխանատու փուլում արվեստի բարերար  
ազդեցությունը կտրուկ նվազում է, և այդ բացը  
պետք է լրացնել:

\* Ներկայացվել է 14.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

Գեղագիտական դաստիարակության խնդիրը ստեղծագործող, գեղագետ և զարգացած անհատի ձևավորումն է: Հենց այս խնդրի լուծումն էլ որոշում է գեղագիտական դաստիարակության անփոխարինելիությունը՝ որպես դաստիարակչական գործունեության հատուկ տեսակ: Գեղագիտական դաստիարակության պակասը նկատելի է ամենուր՝ կյանքում, մարդկային փոխհարաբերություններում, նաև դպրոցում: Երեխայի մեջ գեղագիտական զգացմունքների ձևավորումը և զարգացումը պետք է սկսել մանկուց, դեռևս նախադպրոցական տարիքից: Այս իմաստով հանրակրթական դպրոցի բոլոր օղակներում ևս անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել արվեստի առարկաներին. դրանք կրթում են երեխայի միտքը, հսկայական հնարավորություններ ունեն ձևավորելու և զարգացնելու երեխայի զգացմունքները, հույզերը, հոգևոր աշխարհը:

Գեղարվեստական կրթությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացմունքների, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը: Դպրոցականների գեղարվեստական գործունեությունը նպաստում է աշակերտների աշխարհայացքի, բարոյական և գեղագիտական գիտակցության ձևավորմանը՝ իրականության նկատմամբ դրսևորելով գեղագիտական զգացմունքներ: Փաստորեն, արդյունքում զարգանում են երեխաների ունակությունները, իմացական հետաքրքրությունները [3, էջ 18]:

«Գեղագիտական դաստիարակություն» հասկացությունը շատ ավելի տարողունակ ու ընդգրկուն է «գեղարվեստական կրթություն» հասկացությունից, չնայած երբեմն դրանք զբաղեցնում են համանշանակ տեղ: Այդ երկու հասկացությունները չեն համընկնում: Գեղարվեստական կրթությունը գեղագիտական դաստիարակության հիմնական բաղադրատարրն է, միջուկը: Գեղագիտական դաստիարակությունը, բացի արվեստից, գեղարվեստական կրթությունից, ընդգրկում և ներառում է «ըստ գեղեցիկի օրենքների» ստեղծագործական աշխատանքի բոլոր տեսակները: Արվեստը, որպես աշխարհընկալման հատուկ ձև, գեղագիտական և գեղարվեստական հիմքն է, հենարանը: Իրենց հերթին էլ, արվեստն ու գեղարվեստական կրթությունը կազմում են գեղագիտական դաստիարակության միջուկը: Գեղագիտական դաստիարակության նպատակը ոչ միայն արվեստի որևէ տեսակին ծանոթացնելն է, այլև կյանքի նկատմամբ ոչ անտարբեր վերաբերմունք ձևավորելը, երեխային ընդհանուր մշակութային տուրքեր տրամադրելը: Այն, ինչ ստեղծվել է բարձր

ճաշակով, գեղեցիկի կանոններով, հաճելի և հասկանալի է բոլորին: Արվեստի հետ շփումը հարստացնում է մարդուն: Գեղեցիկը, ներդաշնակը տեսնելու պահանջը վերածվում է այն ստեղծելու ցանկության:

«Գեղագիտական դաստիարակություն» եզրույթը մի կողմից սերտորեն կապված է արվեստի և գեղարվեստական կրթության հետ, մյուս կողմից՝ այն ավելի ընդհանուր, լայն հասկացություն է, որը կոչված է մարդու մեջ արթնացնելու կյանքի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունք:

Գեղագիտական դաստիարակության ընթացքում անգնահատելի է բնության դերը: Չէ՞ որ բնության պատկերները թարմ են ու բնական: Բնությունը գեղեցկության իսկական աղբյուր է: Կ. Դ. Ուշինսկին ասում էր. «Երիտասարդ մարդու հոգու վրա ունեցած բնության ազդեցության ուժի հետ մանկավարժն անգամ չի կարող մրցել» [3, էջ 372]:

Բնությունը ներգործում է ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների վրա՝ ազնվացնելով նրանց զգացմունքներն ու կերտելով նրանց հոգու կերպարը: Այն նաև զարգացնում է երեխաների գեղագիտական զգացմունքները, երևակայությունը, ուշադրությունը, դիտունակությունը և այլն: Ուրեմն, յուրաքանչյուր ուսուցչի խնդիրը պետք է լինի բացահայտել և օգտագործել երեխաներին բնությունից ընձեռված բոլոր հնարավորությունները, ինչի համար կարելի է կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում, հաճախակի զբոսանքներ, այսպիսով երեխաներն ավելի մոտ են գտնվում բնությանը: Շատ արդյունավետ է, երբ երեխաները էքսկուրսիաներից, զբոսանքներից հետո իրենց հույզերը, զգացմունքները, մտորումները, հարցերը հանձնում են թղթին, այնուհետև ուսուցչի հետ միասին քննարկում, վերլուծում են դրանք:

Այնուամենայնիվ, որքան էլ որ կարևոր են երեխաների անմիջական շփումը գեղեցիկի հետ, դա դեռևս բավական չէ: Գեղագիտական ապրումները միշտ կապված են բարոյագիտական դրսևորումների հետ: Բարոյականի և գեղագիտականի միասնությունը հասարակության լիարժեք անդամի անհատականության ձևավորման կարևորագույն առանձնահատկությունն է [2, էջ 8]:

Այսպիսով, բավականին համառոտ ձևով կարելի է ձևակերպել, որ գեղագիտական դաստիարակության տակ հասկացվում է իրականության մեջ և արվեստում գեղեցիկն ընկալելու, հասկանալու, գնահատելու և ստեղծելու ընդունակությունների դաստիարակում: Իսկ երեխաների գեղագիտական դաստիարակությունը, համոզմունքների և ճաշակի զարգացումը նպատակա-

ուղղված և համակարգված մոտեցման պահանջ ունի, ինչպես երեխայի զարգացման մյուս բնագավառները (մտավոր, հոգևոր, ֆիզիկական, աշխատանքային): Չնայած երեխան տարերայնորեն ընտանիքում, շրջապատում ընդօրինակում է մեծերին, տեսնում բնության գեղեցկությունը, լսում բնության ձայները, շրջապատում հնչող երաժշտությունը, մասնակցում գեղարվեստական խմբակների պարապմունքներին, որոնք նույնպես ձևավորում և զարգացնում են, սակայն գեղագիտական լիարժեք դաստիարակություն, զարգացում ստանում է դպրոցում, բուհում՝ արվեստների հետ շփվելով, դրանք «լեզվին» տիրապետելու միջոցով, գեղեցիկը ձևի ու բովանդակության միասնության մեջ ընկալելու շնորհիվ: Ահա թե ինչու մեր երեխաների հոգու և շարժումային գործունե-

ության դաստիարակության համար անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել արվեստի առարկաներին: Եվ ինչու չէ, կարելի է նաև ավելացնել գեղարվեստական համակարգի առարկաների դասաժամերը, ինչպես աշխարհի առաջադեմ շատ երկրներում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ուսանողի ուղեցույց, ՀՀ Օրենքը կրթության մասին, Երևան, ԿԱԻ, 2007, էջ 81:
2. Ներսիսյան Լ. Ս., Դպրոցականների գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության համակարգի տեսական հիմնավորումը, Գեղարվեստական միտք, Երևան, 2002, էջ 3-12:
3. Հայ արվեստի միջազգային երկրորդ սիմպոզիում, IV գիրք, ՀՀ ԳԱ, Երևան, 1981:

---

## ARTISTIC EDUCATION AS A COMPONENT OF CULTURAL EDUCATION

**KARINE PAPIKYAN**

PHD in pedagogical sciences

### Summary

The goal of Public Education is the harmonic and comprehensive education of students and Cultural Education is the important part of it. Artistic Education is the main component of Cultural Education. Art and artistic education are the most important part of Cultural Education.

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԳՊՐՈՑՈՒՄ\*

### Նարինե ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վանաձորի N8 դպրոցի ուսուցչուհի



Ազգային դպրոցի գլխավոր գործառույթն աշակերտի՝ որպես ազատ, ինքնակազմավորվող անձի զարգացման ապահովումն է՝ ազգային մշակույթից մինչև համաշխարհային մշակույթի իմացությունը:

Գեղարվեստական կրթության նպատակը շրջապատող աշխարհի նկատմամբ զեղազիտական վերաբերմունքի, զեղեցիկը նկատելու, ընկալելու ու գնահատելու, զեղազիտական զգացումների ձևավորումն է: Եթե սովորողն անընդհատ շփվում է զեղեցիկ իրերի հետ, նրա մեջ ցանկություն է առաջանում ստեղծել նույնպիսի զեղեցիկ իրեր՝ ստեղծված զեղեցկության օրենքներով: Գեղարվեստական կրթության հիմքում ընկած է մանկավարժի և երեխայի համատեղ գործունեությունը, որն ուղղված է գեղարվեստական արժեքներն ընկալելուն, առարկայական միջավայրի նկատմամբ գիտակցական վերաբերմունք ձևավորելուն և ստեղծագործական ունակություններ զարգացնելուն: Այդ գործունեության հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե ինչ չափով են հաշվի առնվում սովորողի անհատական առանձնահատկությունները, պահանջմունքներն ու հետաքրքրությունները, ընդհանուր զարգացման մակարդակը:

Երեխան միշտ արձագանքում է բնության մեջ, շրջապատող առարկայական աշխարհում գոյություն ունեցող զեղեցիկին, բարուն, լավին: Ընդ որում, մեծ նշանակություն ունեն նաև երեխաների անձնական փորձը, նրանց մղումները, ձգտումները, ապրումները [4, էջ 23]:

Գեղարվեստական կրթությունը դպրոցականների զեղազիտական դաստիարակության առա-

ջին աստիճանն է. վերջինս կարելի է իրականացնել դպրոցում, ինչպես նաև արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների ընթացքում: Կարևոր նշանակություն կարող են ունենալ արվեստին վերաբերող գրքերի ընթերցումը, արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, երաժշտության ունկնդրումը, վեպերի, վիպակների, պատմվածքների, պոեմների, բանաստեղծությունների ընթերցումը, ներկայացումների, կինոնկարների դիտումները, դասական երաժշտության հաճախակի ունկնդրումը: Սակայն այս ամենը դեռևս բավարար չէ գեղարվեստական կրթության համար: Աշակերտները լսողի, դիտողի, ունկնդրողի դերում համղես գալուց բացի, պետք է համղես գան ստեղծագործողի, արարողի, կերտողի, կատարողի դերում: Այս ամենը, ինչպես նաև երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով, փորձառու ուսուցիչը կազմակերպում է երգի, պարի, թատերական, ձեռարվեստի, նկարչության և այլ խմբակներ: Երեխաների զեղարվեստական կրթության կարևոր ուղիներից են բացատրությունը, վերլուծությունը, զեղազիտական խնդիրների լուծումը, վարժությունները, բանավեճը և այլն [2, էջ 4]:

Գեղարվեստական կրթության միջոցները բազմազան են. դրանք կախված են մի շարք գործոններից՝ զեղազիտական տեղեկատվության ծավալից ու որակից, գործունեության կազմակերպման ձևերից, երեխայի տարիքից և այլն: Այստեղ պետք է նշել նաև մանկավարժի պատրաստվածության մակարդակի, նրա մանկավարժական վարպետության դերը:

Գեղարվեստական միջոցների համակարգի մեջ են մտնում «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ» նորմատիվ փաստաթղթով սահմանված ուսումնական բոլոր բնագավառները (նախանշելով հետևյալ բաղադրիչները՝ գիտելիք, հմտություն, արժեքներ, նկատի ունենալով

\* Ներկայացվել է 14.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

գիտենալ, կարողանալ, լինել համակարգը), խաղը, ուսումնական աշխատանքը, ինքնագործունեությունը, գեղարվեստական գրականությունը, բնությունը, թատերական արվեստը և այլն, որոնցից յուրաքանչյուրը մեծ դեր է խաղում երեխաների գեղագիտական մշակույթի զարգացման համար [1, էջ 34]:

Իմացության առաջին փուլն ընկալումն է: Իմացության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև մտածողությունը: Այն, ինչ երևույթի, առարկայի մեջ տեսնում է մտածող մարդը, չի կարող տեսնել չմտածողը, անգետը: Այստեղից էլ հետևում է, որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է երեխաների մեջ զարգացնի իմացությունը, ակտիվացնի հատկապես մտածողությունը: Առանց այս ամենի իրագործման անհնար է ձևավորել դպրոցականների գեղագիտական մտածողությունը [5, էջ 23]:

Կախված նրանից, թե երեխաներն ինչպես են գեղարվեստական տեղեկատվություն ստանում (արվեստի ստեղծագործությանը ծանոթանում են անմիջականորեն՝ լսելով երաժշտական պիեսը, երգը, հեքիաթը, դիտելով նկարը, կամ ուսուցչի միջոցով, որը պատմում է, բացատրում, հարցեր է տալիս), գեղարվեստական միջոցները կարելի է բաժանել երկու խմբի՝ դիտողական և խոսքային: Դրանց ներկայացվում են որոշակի պահանջներ, օրինակ՝ գրական, երաժշտական կատարումները պետք է լինեն արտահայտիչ, հուզիչ, խոսքային մեթոդները ևս պետք է պատկերավոր լինեն, որպեսզի երեխաները ոչ միայն «նկարեն» հեքիաթի, երգի բովանդակությունը, հասկանան առաջադրանքի իմաստը, այլև կերպարների տրամադրությամբ ապրեն, զգան գեղարվեստական միջոցների արտահայտչականությունը:

Գեղարվեստական կրթության մեթոդների ընտրությունը մեծապես կախված է նաև երեխաների տարիքից: Փոքրիկներին գեղեցիկի, լավի, բարու մասին գաղափար տալիս նպատակահարմար է նրանց ուշադրությունը հրավիրել այն բանին, թե որքան լավ է, երբ սենյակը մաքուր է, հավաք, կոկիկ, կարելի է վերլուծել նաև հեքիաթների հերոսների բարի արարքներն ու բացահայտել դրանց հետևանքները: Ավելի ուշ երեխաների առջև դրվող խնդիրները փոքր-ինչ բարդացվում են, օրինակ՝ մեծահասակների օգնությամբ ակտիվորեն «վերափոխել» շրջակա աշխարհը: Այսինքն, նրանք բացի դիտումից ու արժևորումից, պետք է կարողանան նաև ձևավորել խաղերի անկյունը, շինվածքներ պատրաստել և այլն: Այս ամենի միջոցով երեխաները գործնականորեն կիրառում են դիտունակություն ձևավորելու, ինքնուրույն գործելու, իրենց քայլերը պլանավորելու, սեփական մտահղացումն իրականացնելու և շատ այլ մե-

թոդներ: Երեխաների աճի, զարգացման, տարիքային պահանջմունքներով ու ձգտումներով պայմանավորված՝ բարդանում են նաև գեղարվեստական դաստիարակության մեթոդները [4, էջ 22]:

Գեղարվեստական կրթության մեթոդները դժվար է ճշգրտորեն դասակարգել, քանի որ դրանց բաղադրիչները միշտ սերտ փոխներգործության մեջ են գտնվում միմյանց հետ: Օրինակ, երեխաների հետ դիտելով որևէ կտավ կամ արվեստի ստեղծագործություն՝ ուսուցիչն օգտագործում է դիտման մեթոդը, իսկ եթե դիտումը ուղեկցվում է բացատրություններով, մեկնաբանություններով, հարցեր են ուղղվում երեխաներին, ապա այդ դեպքում օգտագործվում է նաև խոսքային մեթոդը:

Մանկավարժագիտությունն ու պրակտիկան մշակել են մի շարք մեթոդներ, որոնք նպաստում են երեխաների գեղագիտական զգացմունքների, վերաբերմունքի, գնահատանքի, գործնական կարողությունների ձևավորմանը: Դրանցից են՝

- համոզման մեթոդը,
- խնդրահարույց իրավիճակների մեթոդը, որը մղում է ստեղծագործական և գործնական քայլերի,

- կարեկցանքի, լավի, գեղեցիկի նկատմամբ դրականորեն, իսկ շրջապատում հանդիպող տհաճ երևույթների նկատմամբ բացասականորեն արծազանքելու մեթոդը [3, էջ 21]:

Գեղարվեստական կրթության մեթոդների ընտրությունն ուսուցման մեջ կախված է նրանից, թե ինչպիսի որակներ, ինչպիսի ունակություններ է ցանկանում զարգացնել երեխայի մեջ ուսուցիչը: Մի դեպքում անհրաժեշտ է զարգացնել նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը, որոնք անհրաժեշտ են ցանկացած գործողություն կատարելիս, մյուս դեպքում՝ երաժշտական, կերպարվեստային՝ գործունեության հետ կապված հատուկ ունակություններ: Ներկայումս լայնորեն կիրառվում են երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը զարգացնող մեթոդներ: Օրինակ՝ ուսուցիչը կարող է տեքստից ինչ-որ հատված, իսկ երեխաները պետք է հորինեն ավարտը կամ ուղղակի շարունակեն միտքը: Մյուս դեպքում՝ ստեղծագործությունը վերարտադրելիս պետք է պատմեն որպես մասնակից, հեղինակ կամ ուղղակի դիտորդ: Նմանատիպ վարժությունները զարգացնում են երեխաների ստեղծագործական միտքը, երևակայությունը, պատկերացումները [3, էջ 29]:

Երեխաների գեղարվեստական կրթության մեջ մեծ նշանակություն ունի նրանց կատարած ինքնուրույն աշխատանքը: Ուսուցիչը պետք է պայմաններ ստեղծի, որ երեխաներն ինքնուրույն

արտահայտվեն ստեղծագործության բովանդակության, նրա բնույթի, արտահայտչամիջոցների վերաբերյալ, գնահատեն թե իր, թե խմբի մյուս անդամների կատարած աշխատանքները, անցկացնեն զանազան համադրություններ և համեմատություններ: Եթե երեխաները տրված աշխատանքը կատարում են ինքնուրույն, առանց ուսուցչի օգնության, օրինակ՝ երգում են առանց դաշնամուրի նվագակցության, նկարում են սեփական մտահղացումներով, ապա ուսուցիչը կարող է նաև երեխաներին որոշ բաներ հուշել, և այդ ժամանակ երեխան կկարողանա տեսնել իր թերություններն ու շտկել դրանք:

Մեթոդներն ու ձևերն ընտրելիս մեծ ուշադրություն պետք է դարձնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին, հաշվի առնել թե՛ կոլեկտիվի, թե՛ յուրաքանչյուր երեխայի հնարավորությունները: Երեխաների մոտ վաղ են դրսևորվում երգելու, պարելու, նկարելու, ծեփակերտելու ունակությունները: Ուսումնասիրելով նրանց հակումները՝ պետք է մշակել այնպիսի մեթոդներ, որ հաշվի առնվեն տարբեր առաջադրանքների կատարման դժվարությունները [3, էջ 31]:

Առաջին դասարանի երեխաների հետ աշխատելիս հիմնականում կիրառվում են խաղային մեթոդներ: Երբ ուսուցիչը գեղարվեստական նյութը ներկայացնելիս խաղային իրավիճակ է ստեղծում, երեխաներն ավելի լավ են հասկանում մատուցվող նյութը:

Գեղարվեստական կրթության մեթոդները, միջոցները հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին՝ երեխաներին օգնել նկատելու շրջապատող աշխարհի երևույթների, առարկաների, գործընթացների գեղեցկությունները, զարգացնել գեղագիտական ընդունակությունները, ձևավորել և զարգացնել գեղեցիկի զգացողություն: Այս առիթով Դ. Բ. Կաբալակին ասում է. «Գեղեցիկը բարություն է ծնում» [5, էջ 42]: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջումնքի զարգացմանը: Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղարվեստական կրթության հիմնական պայմանն ու միջոցն է:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, մաս 1-ին, Երևան, 2004:
2. Ներսիսյան Լ. Ս., Գեղարվեստական կրթությունը գեղագիտական դաստիարակության սոցիալական հիմք, Գեղարվեստական միտք, Երևան, 2005:
3. Немецкий Б. П., Учить и учиться искусству, "Искусство в школе", N 3-4, 1992.
4. Немецкий Б. П., Роль искусств в системе общего образования: Чему и зачем мы учим, М., "Начальная школа", 2000.
5. Нерсисян А. С., Изобразительное искусство в системе художественного образования и эстетического воспитания школьников, /докт. дис./, М., 1992.

THE GOAL OF ARTISTIC EDUCATION, MEANS AND METHODS IN SECONDARY SCHOOL

**NARINE KHACHATRYAN**

Summary

The article describes Artistic Education as the first degree of Cultural Education, which has the aim to shape cultural feelings and the ability to notice the beautiful, to understand and evaluate. The means and methods of Cultural Education are analyzed, which allow creating beautiful things and living in a pretty and courteous environment.

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԳԱՍԱԽՈՍԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ\*

## Գայանե ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Խ . Աբովյանի անվան ԳՊՄԳ ընդհանուր մանկավարժության ամբիոնի դասախոս



Կրթության համակարգի ձևափոխությունները ենթադրում են մի շարք միջոցառումների իրականացում, որը կատարվում է որոշակի մեխանիզմների մշակման և իրականացման ճանապարհով:

Այսօր այդ գործընթացը հիմնականում կողմնորոշված է կրթության բովանդակության բարեփոխումների, ուսումնամեթոդական ապահովության փոփոխության և տարբեր կրթական հաստատությունների կառուցվածքային մոդելների ձևափոխությանը: Ավելի խորը բարեփոխումները շրջափում են նաև ամբողջ համակարգի գործառնությունները, որն անխուսափելիորեն բերում է դրա առանձին տարրերի փոխադարձ կապերի փոփոխության, ինչպես նաև նոր կառույցների ծագման: Համակարգի ամբողջականությունն ու գործառնական արդյունավետությունն այդպիսի իրավիճակներում կարող է պահպանվել միայն որոշակի պայմանների դեպքում:

• Հատուկ մեխանիզմների մշակում, որոնք կենսականորեն հնարավոր կդարձնեն անցումային փուլերում անընդհատ կրթության ապահովումը և համակարգի անխափան գործունեությունը՝ հնարավորինս չեզոքացնելով անհավասարակշռությունն ու ձևափոխությունների ազդեցությունները:

• Հատուկ մեխանիզմների մշակում, որոնք կապահովեն ազգային կրթական համակարգի փոխազդեցությունը այլ երկրների կրթական համակարգերի հետ՝ պահպանելով միջազգային կրթական զարգացման ավանդույթները:

• Ազգային կրթական համակարգի կառավարման նոր մոդելի մշակում, որը կհամաձայնեցվի

փոփոխված կրթական համակարգի բնույթին:

• Կրթական մակրոկառավարման բովանդակության մշակում, որը կհամաձայնեցվի բարեփոխումների նպատակներին և խնդիրներին [1]:

Խորհրդային շրջանում բուհական համակարգը ձևավորվել և զարգացել է հասարակական պատմական տվյալ շրջափուլի ազդեցության ներքո: Ակնհայտ է, որ մակերեսային, միակողմանի վերլուծությունները, չափազանցությունը կամ անտեսումը այդ շրջանի տնտեսության, մշակույթի և կրթության փոխկապվածության առումով, բարդացնում են բարձրագույն կրթության զարգացման և բարեփոխման գործընթացի կազմակերպումն ու կառավարումը: Դեռևս բարձրագույն դպրոցում, ժամանակակից բարեփոխումներին զուգընթաց, շարունակվում է խորհրդային դպրոցի ազդեցությունը: Համակարգային խնդիրների շարքում կարևորում ենք դասախոսի մասնագիտական զարգացման, նրա գործիմացության վերլուծությունն ու գնահատումը: Ժամանակակից դպրոցում անհարժեշտ են նոր ոճի և մոդելի դասավանդողներ, որոնց անկասկած պետք է պատրաստեն որոշակի մշակութային նկարագիր և գործիմացության բաղադրիչների տիրապետող դասախոսներ: Սակայն անցումը նոր մոդելի առաջադրում է նոր դժվարություններ: Հողվածի շրջանակներում կփորձենք համեմատական և քննադատական վերլուծությամբ բացահայտել նախկին փորձի ազդեցության գործոնները արդի բարձրագույն կրթության համակարգի և դասախոսի մասնագիտական զարգացման վրա:

1917 թ. բարձրագույն դպրոցի զարգացումը ընթացել է մի քանի փուլերով. առաջինն ընդգրկում է 1917-1941 թթ., երկրորդը՝ 1941-1961 թթ., երրորդը՝ 1961-1992 թթ.: Ինչպես խորհրդային նախկին հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում կրթության զարգացման նոր շրջան է ընկալվում հետխորհրդային ժամանակահատվածը: Այդ շրջանը սկսվում է 1999 թ.-ից, երբ

\* Ներկայացվել է 02.04.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

ընդունվեց «Կրթության մասին» ՀՀ առաջին օրենքը:

Բարձրագույն դպրոցի զարգացման հետևողական և անընդմեջ շրջանը (1917-1941 թթ.) բարդ և հակասական էր: Նոր հասարակարգի պայմաններում, բարձրագույն կրթական հաստատությունների տարատեսակների ստեղծման գործընթացում խորհրդային երկրներն ունեին որակավորված գիտամանկավարժական կադրերի և բավարար ուսումնամեթոդական բազայի խիստ կարիք: Իհարկե, այդ շրջանում երիտասարդներին հնարավորություն էր տրվում բարձրագույն կրթություն ստանալ, սակայն նրանց նշանակալի մասը պատրաստ չէր բուհերում կրթվելու՝ ընդհանուր ցածր կրթական պատրաստվածության պատճառով: Նոր կյանքի ձգտումներին ու խանդավառությամբ խոչընդոտում էր երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, որը պայմանավորված էր քաղաքացիական պատերազմով և նոր տնտեսակարգի անցումով:

Նոր գաղափարներով ու սկզբունքներով կառուցվող հասարակարգի և այդ ժամանակափուլին հատուկ հակասությունները յուրովի ազդեցություն ունեցան նաև բարձրագույն դպրոցի փաստաթղթերի ձևավորման վրա: Այսպես, Նարկոմպրոս հանձնաժողովի կողմից պատրաստվեց «Վիճակը Ռուսաստանի համալսարաններում» նախագիծը (14 մայիս, 1918 թ.)՝ Մ. Ն. Պոկրովսկու իրական ժողովրդավարությունն ապահովող սկզբունքների հետ միասին (կրթության հասանելիությունն աշխատողներին, անվճար կրթություն) առաջ բերեց մի կարևոր հակասություն՝ արգելվեց բուհերի ինքնավարությունը: Խորհրդային իշխանության գոյության առաջին իսկ օրերից իշխանությունը հետաքրքրություն է դրսևորում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ և ձգտում է դրանք որքան հնարավոր է արագ հարմարեցնել կյանքի նոր պահանջներին: Հենց այս նպատակով իշխանության մարմիններին իրավունք տրվեց մտնել բուհական կառավարման բոլոր ոլորտներ, արգելք դնել ցանկացած որոշման վրա, որը կհակասի բարձրագույն դպրոցի մասին խորհրդային բարձրագույն մարմնի որոշումներին:

Կրթության համակարգի կառավարման ոլորտում պատմականորեն ձևավորվել են 2 մոդելներ: Որոշումներ ընդունելու իրավասությունների հարցում անկախության սահմաններից կախված կառավարումը լինում է կենտրոնացված և ապակենտրոնացված [1]:

Կենտրոնացված մոդելը ենթադրում է որոշումների ընդունման հարցում իշխանական իրա-

վասությունների կենտրոնացում՝ կառավարման բարձր մակարդակի վրա:

Այդպիսի մոդելը բնորոշ է Իտալիային, Հունաստանին, Պորտուգալիային, Լյուքսեմբուրգին, Ֆրանսիային և նախկին ԽՍՀՄ-ին:

Ապակենտրոնացված մոդելը ենթադրում է որոշ որոշումների ընդունման պատասխանատվության փոխանցում, այդ պատասխանատվությունը կրելու իրավունք՝ կառավարման ավելի ցածր օղակների վրա:

Այս մոդելի ակտիվ առաջընթաց է նկատվում 20-րդ դարի վերջին քսանամյակում: Այս առումով կարելի է առանձնացնել ապակենտրոնացման 6 մոտեցումներ, որոնք դիտարկվում են այդ մոդելը որդեգրած եվրոմիության անդամ երկրների մոտ:

Դրանք են.

- սոցիալական գործընկերների միջև իշխանության տարակենտրոնացումը
- իշխանության տարածաշրջանային փոխանցումը
- տարածաշրջանային ապակենտրոնացումը
- շուկայականացումը (маркетингизация):

Ապակենտրոնացված կառավարման տարածաշրջանային մոդելը բնորոշ է Ավստրիային, Գերմանիային, Բելգիային: Դանիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում, Իռլանդիայում իրականացվում է տեղական կրթական համակարգի կառավարում: Ինստիտուցիոն ինքնակառավարումը բնորոշ է Նիդեռլանդներին և Մեծ Բրիտանիային:

Խորհրդային շրջանում բարձրագույն կրթական հաստատությունների 3 տարվա աշխատանքային փորձը պայմանավորեց նոր փաստաթղթի ստեղծման անհրաժեշտությունը, որը կարգավորեց բարձրագույն դպրոցի գործունեությունը: Այդպիսի փաստաթուղթ դարձավ «Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին դրույթը» (2 սեպտեմբեր 1921 թ.), որը ստացավ օրենքի ուժ և փաստացի դարձավ բարձրագույն դպրոցի առաջին խորհրդային կանոնադրությունը: Դրանք առաջ են քաշում բարձրագույն դպրոցի դասավանդողների մասնագիտական գործունեության զարգացման նոր ձևերի մշակման անհրաժեշտությունը: Այսպես, «Ռուսաստանի համալսարանների մասին դրույթում» առաջարկվում էր բուհերում ստեղծել դասավանդողների ազատ ասոցիացիա՝ գիտական, ուսումնական և լուսավորական: Գիտական ասոցիացիա մտնող դասավանդողների խնդիրը կայանում էր գիտականության ուժեղացման, բուհերի՝ որպես գիտական կենտրոնների, հեղինակության բարձրացման մեջ: Ովքեր դառնում էին ուսումնական ասոցիացիայի անդամ, պետք է կազմակերպեին ուսումնադաստիարակչական գործընթացը,

իսկ լուսավորական ասոցիացիայի անդամների խնդիրն էր պահպանել բուհերի կապը հասարակության հետ, տարածել գիտական հայաքքները, քարոզել արտադրման առաջընթաց միջոցները: Մի կողմից այդպիսի ասոցիացիաների անվիճելի վարկանիշը հանդիսանում էր այն, որ նրանք արտացոլում էին բուհի դասավանդողի մասնագիտական գործունեությունը: Մյուս կողմից, գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության սահմանագծումն արհեստական էր: «Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին դրույթում» առաջարկվում էր բուհերում ստեղծել առարկայական հանձնաժողովներ, որոնք կմիավորեին հարակից առարկաների դասավանդողներին: Շնորհիվ դրա ստեղծվեցին դասավանդողների մասնագիտական զարգացման բարձրացման իրական հեռանկարներ, քանի որ առարկայական հանձնաժողովները ունեին փորձի փոխանակման, մեթոդական աշխատանքների հիմնավոր ներդրման, ուսանողների հետ հաղորդակցման լայն դաշտի մեծ հնարավորություններ: Ցավոք, իրենց մեծաքանակության, բարդկառավարման հետևանքով առարկայական հանձնաժողովները նոր թափ չհաղորդեցին գիտամանկավարժական գործունեության զարգացմանը: Կարելի է ասել, որ առարկայական հանձնաժողովները նախատիպ դարձան հումանիտար, հոգեբանամանկավարժական և այլ առարկաների ամբիոնների ստեղծման համար, որոնց գործունեության ուղղություններից մեկը դասավանդողի մասնագիտական զարգացման և վարպետության բարձրացումն էր: Խորհրդային իշխանության առաջին տարիներին կարևոր դարձավ մանկավարժական կադրերի խնդիրը, քանի որ հին դասախոսակազմի մի մասը հրաժարվեց աշխատել բուհերում՝ չընդունելով նոր հասարակարգը, մի մասն էլ գաղթեց արտասահման: Դրա հետ կապված մշակվեց միջոցների շարք, որն ուղղված էր երիտասարդ գիտնականների և մանկավարժների նոր սերնդի պատրաստմանը: Ստեղծվեցին «պրոֆեսորական թոշակառուների» ինստիտուտ, հետազոտական կուրսեր, ուսանող-առաջավորների ինստիտուտ: «Պրոֆեսորական թոշակառուների» ինստիտուտը հիմնականում նախատեսում էր բարձրացնել դասավանդողների գիտական և մասնագիտական որակավորումները, և միայն ժամանակի անցման մասն էր հատկացվում մանկավարժական պրակտիկային, իսկ մանկավարժության տեսական պատրաստվածություն չէր նախատեսվում ընդհանրապես: Տեխնիկական բուհերում բացվում են «հատուկ հետազոտական կուրսեր», որտեղ եռամյա ուսուցման էին ընդգրկվում տեխնիկական օժտվածությամբ երի-

տասարդները: Նշված ձևերը չվերացրեցին գիտական-մանկավարժական կադրերի պատրաստման արդիականությունը, որը առաջնային խնդիրների շարքում էր: 1925 թ. ստեղծվեց գիտական կադրերի պատրաստման հատուկ հանձնաժողով, որի առաջին առաջարկներից էր հանդիսանում երկրում ասպիրանտուրայի ինստիտուտի ձևավորումը: Ասպիրանտուրայի ինստիտուտի գլխավոր խնդիր էր, պատրաստել գիտական աշխատողներ, որոնք ազատորեն կստիպատեին հետազոտության գիտական մեթոդներին և ընդունակ կլինեին անցկացնել դասավանդման աշխատանք ինքնուրույն հանձնարարություններով, այսինքն՝ որպես դոցենտներ, իսկ հետո՝ որպես պրոֆեսորներ: Ասպիրանտուրան հիմնականում կողմնորոշված էր դեպի գիտնական-հետազոտողների պատրաստումը, այլ ոչ թե գիտնական-մանկավարժների: Եվ հենց ապագա դասավանդողների գործունեության այս կողմի նկատմամբ անուշադրությունը քննադատվում էր որպես լուրջ թերություն: Այդ պատճառով ակտիվորեն մշակվում և ներդրվում է ասպիրանտուրայում մանկավարժական ուսուցման ուժեղացման գաղափարը: Պրոֆեսորական կազմի կարծիքը արտահայտում էր Պ. Վալեսկալին՝ գրելով այն մասին, որ ինժեները, գյուղատնտեսը, քիմիկոսը պետք է մասնագետներ լինեն ոչ միայն իրենց ոլորտում, այլ նաև լինեն մանկավարժներ: Գիտամանկավարժական կադրերի պատրաստման կազմակերպչական ուղղությունները բացահայտող հիմնական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրում դասավանդող կազմի ձևավորումը ճանաչվում է որպես բարձրագույն կրթության նոր համակարգի զարգացման կարևոր պայման: Դասավանդողի անձի ձևավորումը, նրա մանկավարժական մշակույթի զարգացումը իրականացվում էր նրա մասնագիտական գործունեության վերափոխման գործընթացում, ինչը կապվում էր բարձրագույն դպրոցում կրթության բովանդակության, ուսուցման ձևերի և մեթոդների արդիականացման հետ: Մեթոդաբանական կողմնորոշիչների փոփոխումը դասավանդողներից պահանջեց հիանալի աշխատանք կուտակված տեսական, մանկավարժական բազայի վերափոխման և վերազնահատման համար, որը կհամապատասխաներ նոր գաղափարախոսական դիրքորոշումների հետ: Գիտամանկավարժական գրականությանը և բուհական դասախոսություններին ներկայացվեցին նոր պահանջներ, ընդգծվեց ուսումնական գործընթացի պարզեցվածության բացառման անհրաժեշտությունը: Դասավանդողներից պահանջվում էր մեծ վարպետություն և գործնական պարապմունքների անց-

կացում «նախագծերի մեթոդի» և «ցիկլավորման մեթոդի», տեխնոլոգիական և խմբային-լաբորատոր աշխատանքների կիրառմամբ: «Բարձրագույն դպրոցներում և տեխնիկումներում օրակարգի և ուսումնական ծրագրերի մասին» կանոնադրության ընդունումից հետո (19 սեպտեմբեր 1932 թ.) դասավանդողի մասնագիտական զարգացման ձևավորման խնդիրները սկսեցին կենտրոնանալ դասավանդման մեթոդիկայի և տեխնոլոգիայի հարցերի շուրջ:

ԽՍՀՄ կրթության համակարգի կենտրոնական կառավարման մոդելը համապատասխանեցված էր պետության մեջ իշխող տոտալիտար համակարգի պայմաններին անձի դաստիարակության անհրաժեշտությանը: Ակնհայտ է, որ այդ դեպքում ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության բացակայությունը փոխարացվում էր վարքի մշակված հատկանիշներով և մտածողության իդեալականացված ձևերով: Այս հանգամանքը պատճառ է դառնում համակարգի միօրինակության, իսկ առարկաները կրում էին գաղափարական բնույթ, որոնց նպատակն է նույնպես որոշակի տիպի անհատականության ձևավորումը: Դրանից բխում է նաև դասագրքերի, մեթոդների և միջոցառումների միօրինակությունը: Այս մոդելները սահմանափակում են դասավանդողի ազատ ստեղծագործական գործունեության իրավունքը:

Որոշ առումներով կարելի է ասել, որ համակարգը բավական արդյունավետ էր՝ իր հնարավորությունների սահմաններում, այդ թվում կարելի է մշել կրթության համընդհանրության ձեռքբերումը, որն էլ հնարավոր դարձրեց որոշակի ինտելեկտուալ և մշակութային կրթվածության մակարդակի սերնդի ձևավորումը:

Սակայն այն ուներ մի շատ կարևոր թերություն. ճկուն չէր, անկարող էր դինամիկալ դժվարություններին և զարգանալ՝ արդյունաբերության և տնտեսության զարգացման արագ փոփոխություններին և կառուցվածքային բարեփոխումներին համաքայլ:

Այս մոդելի դեպքում անհնարին էր ուսանողների տեղաշարժը մի համակարգից մյուսը, դասախոսական և պրոֆեսորական կազմի դասավանդումը արտերկրներում, որը ակադեմիական ազատության հռչակման կարևոր պայմանն է: Այս դեպքում ամբողջությամբ բացակայում է միջազգային կառավարման գաղափարը, որը առաջին հերթին պայմանավորված է կրթական համակարգի շրջափակվածությամբ:

Ապակենտրոնացված կրթության համակարգի կառավարման մոդելի անցումը ԽՍՀՄ փլուզման բնականոն հետևանքներից էր այն երկրների հա-

մար, որոնք որդեգրեցին անկախացման և եվրոմիության ինտեգրման քաղաքականությունը: Անցումային փուլում այդ երկրներում տեղի ունեցող քաղաքական բարեփոխումները կենտրոնացրին և մեկնարկեցին մինչ այդ կուտակված գիտատեսական պոտենցիալը, որն արագ անցավ նոր համակարգի մշակման գործին:

Ի հայտ եկան նոր տիպի կրթական հաստատություններ, ուսումնական ծրագրեր, դասագրքեր, կրթական մեթոդներ և տեխնոլոգիաներ:

Մոտ երկու տասնամյակի ընթացքում դրանց բոլոր տարրերը ձևավորվեցին՝ ժողովրդավարացման, ապակենտրոնացման և կրթության նկատմամբ հասարակական վերահսկողության մթնոլորտի հաստատմանը զուգընթաց:

Սակայն դեռևս ապակենտրոնացված կառավարման նոր մոդելը չի անցել իր լիարժեք գործունեությանը: Առկա բազմաթիվ թերացումները կենտրոնական կրթական համակարգը պարզապես ձևափոխեցին դրա քիչ բարելավված տարատեսակի, որն էլ պատճառ է դառնում մեկ այլ տիպի ճգնաժամի:

Մասնավորապես, դա տեղի է ունենում կառավարման ժողովրդավարական մշակույթի թերացումների, բյուրոկրատական ապարատի ակտիվ կենսագործունեության, վերահսկողության պետական մարմինների մասնագիտական որակների չտիրապետման և այլ հրատապ կարևոր լուծում պահանջող խնդիրների պատճառով: Անհրաժեշտություն կա մշակելու կառավարման նոր մոդելի տրամաբանությունը:

Վերլուծելով այս գործընթացը՝ ձևափոխությունների փուլում, հարկ է մշել, որ կրթության ճգնաժամային պատճառներից է նոր ձևերի և բովանդակության կտրուկ անհամապատասխանությունը մակրոկառավարման ձևավորված համակարգի հետ: Համակարգի զարգացմանը խոչընդոտում են կազմակերպվածության, մեխանիզմների և գործընթացների անհամապատասխանեցվածությունը, քանի որ կառավարման և դասավանդման ոլորտում դեռևս պահպանվում են իրենց մտածողության ձևերը, որոնք բախվում են ժամանակի նոր պահանջներին: Այս խնդիրների շարքում խիստ կարևորվում է բուհում դասավանդողի նոր որակական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը:

ԽՍՀՄ հետհեղափոխական տարիներին բարձրագույն դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները որոշող նորմատիվ փաստաթղթերի մշակման գործում զգալի ներդրում ունեցան Ա. Վ. Լուսաչարսկին, Ա. Պ. Պինկևիչը և այլք: Ա. Վ. Լուսաչարսկին [2] բազմիցս անդրադարձել է բարձրագույն դպրոցի խնդիրներին մշելով, որ այն

ավելի բարդ օբյեկտ է, քան միջին դպրոցը, այդ պատճառով պահանջում է ավելի խոր ու անընդհատ ուշադրություն: Դրա հետ կապված նա անհրաժեշտ էր համարում բարձրագույն դպրոցում բարեփոխումների իրականացումը, որը ենթադրում էր ուսումնադաստիարակչական գործընթացի վերակազմավորում, բուհերի կառավարման մեջ փոփոխությունների կատարում, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում: Առանձնացնելով բարձրագույն կրթության մշակութակազմավորիչ գործառույթը՝ Ա. Վ. Լունաչարսկին շեշտադրում էր բուհի դասավանդողի ստեղծագործական մոտեցման դերը, մասնագիտական և մեթոդաբանական պատրաստվածությունը: Մանկավարժական ներուժի զարգացման գործոններից մեկը նա համարում էր բուհ ընդունվելիս նրանց վերադաստիարակումը երիտասարդ աշխատողների աշխատանքային ֆակուլտետներում: Նրա կարծիքով այդ ուսանողները կստիպեն առանձին պրոֆեսորների սկզբում վերանայել իրենց մոտեցումները, ապա նրանց հետ աշխատանքը կազդի ուսումնական պլանի, ծրագրի և ամբողջ համալսարանի դասավանդման մեթոդների վրա: Ա. Վ. Լունաչարսկին բացարձակ պարտադիր էր համարում ուսանողների ազդեցությունը դասավանդողների մանկավարժական վարպետության զարգացման վրա, մանկավարժական կադրերի վերադաստիարակության մեխանիզմը նրա կողմից նկարագրվում էր բավական պարզեցված: Ամեն դեպքում այդպիսի տեսանկյունն արտացոլում էր բուհերի կոնկրետ իրավիճակը: Օբյեկտիվորեն գնահատելով կրթության համակարգի վիճակը՝ նա հատուկ ուշադրություն էր դարձնում դասավանդողի մանկավարժական ինքնակրթությանն ու ինքնադաստիարակությանը՝ դիտելով այն որպես «երկար չուսումնասիրված կարևորություն»:

Բարձրագույն դպրոցի մանկավարժության զարգացման և բարձրագույն կրթության համակարգի կայացման մեջ էական ներդրում ունի Ա. Պ. Պինկևիչը: Նա առանձնացրել է բուհում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման յուրահատկությունը, սահմանել է դասավանդողների դերը՝ նշելով, որ նրանք գործ ունեն մարդկանց հետ, որոնք ուզում են և պետք է աշխատեն ստեղծագործաբար և ինքնուրույն: Չնայած բուհում մանկավարժական գործընթացի ամբողջականության ճանաչմանը, որը նրա կողմից հասկացվում էր որպես կրթական և դաստիարակչական կողմերի փոխկապվածություն, Ա. Պ. Պինկևիչն ամեն դեպքում հատուկ ուշադրություն էր հատկացնում մեթոդական վարպետության կատարելագործմանը, որը կազմավորում է դասա-

վանդողի ուսումնական մշակույթը: Պինկևիչը գրում է. «Ուսուցման վարպետության բնագավառում մենք ժառանգել ենք համեմատաբար շատ քիչ դրական նյութ և ոչ քիչ նախապաշարմունքներ այն մասին, որ լավ մանկավարժին ոչ մի մեթոդ անհրաժեշտ չէ, իսկ վատին այսպես, թե այնպես, չես սովորեցնի: Այս դատողությունների տակ է թաքնվում մտքերի ծուլությունը, մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման հարցերի մասին մտածելու ցանկության բացակայությունը, գործի չիմացությունը, հաճախ նաև մեծ ատելությունը սեփական գործի նկատմամբ» [3]: Ա. Պ. Պինկևիչի խոսքերը արդիական են նաև այսօր:

1932 թ. և 1936 թ. բարձրագույն դպրոցի մասին ընդունված փաստաթղթերում ներկայացված են մտքեր ուսուցման մեթոդների այնպիսի համակարգի ստեղծման մասին, որը կապահովեր ուսանողների անհատական և ինքնուրույն աշխատանքը: «Բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքի և բարձրագույն դպրոցի ղեկավարման մասին» կանոնադրությունում (23 հունիս 1936 թ.) նշվում էր, որ ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ հիմնական ուշադրությունը պետք է ուղղված լինի ուսանողների ինքնուրույն աշխատանքին և նրանց համապատասխան խորհրդատվություն տրամադրմանը: Այսպիսով, որպես բուհի դասավանդողի մասնագիտական գործունեության մանկավարժական արժեքներ են հանդես գալիս ուսանողների ինքնուրույն գործունեության կազմակերպումը և դրա ղեկավարումը, դասավանդման նոր ձևերի և մեթոդների կիրառումը:

Այսօր ևս կարևորվում են այս հատկանիշները, հատկապես կրեդիտային համակարգի ներդրման գործընթացում, որտեղ դասավանդողի նման որակների դրսևորումը համեմատվում է կառավարչական գործառույթների հետ:

Վ. Պ. Լիշևսկին ուսումնասիրել է Ա. Պ. Մինսկովի մանկավարժական գործունեության վարպետությունը [4, 5]: Նա ընդգծել է գիտնականի այն գաղափարը, որ կարևոր է դասավանդողի՝ որպես գիտնականի, փիլիսոփայի, դերասանի, դաստիարակի, մարդու կարողություններն ու դիրքորոշումները: Ըստ Ա. Պ. Մինսկովի՝ միայն անհատական բնութագրումների այսպիսի կազմի շնորհիվ բուհի դասավանդողը կարող է արդյունավետ իրականացնել ուսումնական և դաստիարակչական գործունեության միասնությունը [4]:

Իր մեթոդական առաջարկներում Ա. Պ. Մինսկովը ուշադրություն է դարձնում դասախոսության բովանդակությանը, նրա հուզականությանը և դրա հետ մեկտեղ ընդգծում նյութի մատուցման

հատուկ ձևի կարևորությունը [5]: Այսպիսով, նա հիմքեր է ստեղծում դասավանդողի մեթոդաբանական, դաստիարակչական, հետազոտական և ընդհանուր մշակութային արժեքների կայացման համար: Նա կարևորում է նաև դասավանդողի ինքնակատարելագործման պահանջունքը՝ որպես մանկավարժի մշակույթի կայացման անքակտելի մաս: Ա. Պ. Մինսկովի համոզմամբ՝ միայն դասավանդողը, ով առանձնանում է բարձր մեթոդաբանական, տեղեկատվական և հետազոտական մշակույթով, ընդունակ է կառուցել ուսումնադաստիարակչական գործընթացը, որը կնպաստի ուսանողների ստեղծագործական ակտիվությանը, նրանց մտածողության ինքնուրույնության զարգացմանը: Նա նշում էր, որ ուսանողների ինքնուրույն ստեղծագործական մտածողության ուսուցման մեթոդիկան ներառում է՝

- ուսուցման ամբողջ կուրսի ընթացքում նրանց իմացության տեսության հիմնական տարրերի հաղորդումը՝ նպատակ ունենալով ձևավորել նրանց մտածողության հետազոտական եղանակը,

- գիտության, տեսության, օրենքների հիմնական կատեգորիաների պատմական կայացման ընթացքին ծանոթացումը՝ նպատակ ունենալով փոխանցել մշակույթը սերնդեսերունդ և ստեղծել նոր մշակույթ,

- հռչակավոր գիտնականների աշխատանքի մեթոդների և կյանքի մասին տեղեկությունների հաղորդումը՝ նպատակ ունենալով ձևավորել ապագա գիտնականների ստեղծագործական անհատականությունը [5]:

Այսօր վերոնշյալ որակներին ավելանում են նաև կառավարչական կազմակերպչական, մոտիվացիոն, վերահսկող և պլանավորող կարողություններն ու դիրքորոշումները [6]: Դրանք հնարավորություն են տալիս դասավանդողին առավել արդյունավետ մեթոդներ ու տեխնոլոգիաներ ընտրել դասավանդման գործընթացը կազմակերպելիս և ուսանողի մասնագիտական ուսուցման ու դաստիարակության գործընթացը բխեցնել ժամանակակից սոցիալ-տնտեսական ու սովորողների անհատական զարգացման պահանջներից, կազմակերպել նաև սովորողների սոցիալականացման գործընթացը:

Այսօր խորհրդային առաջատար ինստիտուտների հիմքի վրա դեռևս գործում են մասնագիտական մանկավարժական որակավորման բարձրացման ինստիտուտներ և ֆակուլտետներ, ստեղծվում մանկավարժական և հոգեբանական ամբիոններ, իրականացվում ատենախոսական հետազոտություններ: Կուտակված փորձը և գիտական ներուժը թույլ տվեցին անցնել հայեցա-

կարգերի մշակմանը, որոնք ուղղված էին դասավանդողի, նրա մասնագիտական զարգացմանն ներկայացվող պահանջների և ուղիների մասին գիտելիքների միջև հակասությունների լուծմանը: Այդ հայեցակարգերի նպատակն է բացահայտել ուսումնասիրվող երևույթի էությունը, հիմնավորել մշակութաբանական մոտեցումը, ձևավորել մասնագիտական զարգացման մոդելը:

Վերջին տարիներին նկատվում է մասնագիտական զարգացման ուսումնասիրությունների ակտիվացում: Տարբեր կարծիքներում ընդհանրական սկզբունքներ են՝ մասնագիտական զարգացման փոխկապվածությունը, մանկավարժական գործունեության սուբյեկտի հումանիստական ուղղվածությունը, ստեղծագործական մանկավարժական մտածողությունը, նորարարական գործունեության նկատմամբ ընդունակությունը, մանկավարժի սոցիալական պատասխանատվության մակարդակն ուսումնասիրելու ձգտումը: Մանկավարժական գործունեության գիտական ֆոնդը և պրակտիկ փորձը թույլ են տալիս մասնագիտական զարգացումը դիտարկել անհատական, մասնագիտական-խմբային և հասարակական-մանկավարժական մակարդակներում և մշակել ժամանակակից մանկավարժի մշակույթի ձևավորման արդյունավետության բարձրացման նոր մոտեցումներ:

Դասախոսի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումը, ուսուցման արդյունավետ մեթոդներ ընտրելու, կազմակերպելու, գործընթացը գնահատելու, ռեֆլեքսիվ հմտությունների, ուսանողների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ կրթական պահանջների համապատասխան դասընթացի պլանավորման և կազմակերպման կարողության ձևավորումը, գնահատման ժամանակակից հայեցակարգերի համապատասխան գնահատման կարողությունների ձևավորումը ժամանակակից դասավանդողի մասնագիտական զարգացման անհրաժեշտ և կարևոր պայման է:

Այսպիսով, հիմք ընդունելով խորհրդային շրջանի դրական ձեռքբերումները՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել, համակարգել ժամանակակից դասավանդողի մասնագիտական զարգացման անհրաժեշտ մասնագիտական կրթության ծրագրեր, դասընթացներ, գործիմացության ստուգման, գնահատման նոր մեխանիզմներ: Այս կապակցությամբ ՀՊՄՀ-ում ստեղծվել է բուհ-ի որակի ապահովման վարչություն, որը Ֆինլանդիայի Օուլու-ի համալսարանի հետ կազմել է համագործակցության նոր ծրագիր, որի նպատակն է.

1. օգնել և խրախուսել վերանայելու և զար-

զացնելու դասավանդողներին կրթության զարգացման փարսիսությունը՝ ինքնաճանաչողությանը խթանող պրակտիկ և ռեֆլեկտիվ գործողությունների միջոցով,

2. հնարավորություններ ստեղծել դասավանդման փորձի, մեթոդների, նյութերի և զարգացման քննարկման և փոխանակման,

3. դասավանդողներին ապահովել մասնագիտական ինքնազարգացման ռազմավարական ծրագրերով և հմտություններով,

4. բարձրացնել մասնագիտական ինքնավստահությունը,

5. նպաստել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և շարունակական կրթության հնարավորություններից օգտվելու հմտությունների զարգացմանը:

Այս կապակցությամբ վերանայվում և բարելավվում են մանկավարժական կրթության մասնագիտական դասընթացների ծրագրերը՝ նոր մեթոդներով աշխատելու, լսարանային, գործնական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և շարունակական մասնագիտական

կրթության ապահովման նկատառումներով: Ինչպես նաև, առաջ է քաշվում միջազգային համագործակցության համար անհրաժեշտ մասնագիտական որակների զարգացման խնդիրը, որի համար ուսումնական պլաններում ընդգրկվում են համապատասխան դասընթացներ, այնպիսին, ինչպիսիք են՝ օտար լեզվով մասնագիտական հաղորդակցումը, ՏՀՏ-ը մասնագիտության մեջ, համեմատական մանկավարժությունը և այլն:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. <http://imp.rudn.ru>. <http://www.acadio.ru/>
2. <http://window.edu.ru/>
3. Пинкевич А. П., Педагогика Высшей школы //Высшая технологическая школа.-1934, N1, с. 40.
4. Лишевский В. П., Педагогическое мастерство ученого: О преподавательской деятельности проф. А. П. Минакова, М.,1975, с. 26-27.
5. Лишевский В. П., Педагогическое мастерство ученого: О преподавательской деятельности проф. А.П.Минакова. М.,1975, с 26-27.
6. Դասընթացի մշակում և կառավարում, Ուսումնամեթոդական ուղեցույց, Եր., 2010, էջ 13:

THE HISTORICAL-COMPARATIVE ANALYSIS OF MODERN LECTURER'S PROFESSIONAL DEVELOPMENT

**G. KIRAKOSYAN**

Summary

During the twenty years significant changes occurred both in the sphere of managing educationan system and with this also in the characteristics of the professional-teaching culture of the high school. With the view point of comparative education a big interest shows the analyses of former soviet period centralized educational and modern decentral- ized models, also the impact of these factors in forming professional- teaching culture of lecturers.

## ԱՎԱԳ ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՏՈՒ- ԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ ՆՐԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (Գիտատեսական հիմնավորում)\*

### Նարինե ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

**Ատենախոսության թեման՝** Ավագ դպրոցականներին սոցիալական դերին նախապատրաստելու անհրաժեշտության և սոցիալական ուղղվածության ձևավորման առանձնահատկությունները

**Գիտական ղեկավար՝** Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



թյուն ընտրելու հարցում:

Կյանքում յուրաքանչյուրն իր համար առավել պատասխանատու և դժվարին խնդիրներից մեկի՝ մասնագիտության ընտրությունը, կատարում է հիմնականում դպրոցական կյանքի վերջին տարիներին՝ ավագ դպրոցում: Նա մասնագիտություն է ընտրում իր նախասիրությանը, իր ընդունակությունների և ձգտումների համեմատ՝ իր ապագան կերտելու, անկախ ու ազատ պետականության կառուցման մեծ գործին ակտիվորեն մասնակցելու համար, այսինքն՝ մի աշխատանք, առանց որի չկա երջանկություն:

Մասնագիտության ընտրությունը բախտորոշ նշանակություն ունի: Ծիշտ է ասված, որ կյանքում իր տեղը գտնելը մեծ երջանկություն է, իսկ իր տեղը գտնելու կարևոր պայմաններից մեկը մասնագիտության ճիշտ ընտրությունն է, այլ կերպ ասած՝ սոցիալական դերում հաստատվելը:

Իսկ դա կարելի է անել մասնագիտական կողմնորոշման գծով միջոցառումների համակարգի իրականացման միջոցով: Մասնագիտության

ընտրությունը, բացի անձնական նշանակությունից, ունի նաև հասարակական նշանակություն, քանի որ մարդու անձնականն ու հասարակականը սերտորեն կապված են իրար հետ և կազմում են նրա սոցիալական ուղղվածության ձևավորման հիմքը:

Մասնագիտության ճիշտ ընտրության պայմաններից մեկը անհրաժեշտ գիտելիքների առկայությունն է ժողովրդական տնտեսության կողմից կադրերին ներկայացվող պահանջների տեսակետից: Այս կարևոր պայմանի իրագործումը սերտորեն կապված է ժողովրդական տնտեսության ժամանակակից վիճակի և նրա զարգացման հեռանկարների մասին գիտելիքների ունենալու հետ: Այդպիսի գիտելիքներ տալիս են հանրակրթական դպրոցում ավանդվող առարկաները՝ հասարակագիտությունը, պատմությունը, աշխարհագրությունը, ինչպես նաև դպրոցում իրականացվող միջոցառումները, զեկուցումները, հավաքույթները և այլն:

Ավագ դպրոցական տարիքում աշակերտները պետք է լավ ճանաչեն իրենց, իմանան իրենց ընդունակությունները, կարողությունները, ունակությունները, հմտությունները, խառնվածքը: Այս տարիքում դա արդեն միայն ցանկություն չէ, այլև պահանջ, որ առաջանում է մասնագիտություն ընտրելիս: Այդ պահանջը նրանց ստիպում է քննության առնել իրենց կարողությունները: Դժվարությունը ոչ միայն այն է, որ նրանց այս կամ այն ընդունակությունը ցայտուն չի դրսևորվում, այլ այն, որ նրանք լիակատար պատկերացում չունեն այդ մասին: Ապագա մասնագիտության ընտրու-

\* Ներկայացվել է 18.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

թյան ընթացքում հաճախ ընդունակությունների հարցը ոչ միայն չի գտնվում առաջին պլանի վրա, այլև շատ անորոշ է գիտակցվում: Նրանք դիմում են ծնողների, ուսուցիչների, ընկերների օգնությանը, նրանցից խորհուրդ հարցնում: Այդ խորհուրդների մեջ, իհարկե, ընդունակության հարցը մեծ մասամբ մնում է երկրորդ պլանի վրա: Բայց լավ կլիներ, եթե ավագ դպրոցականը որոշակի գաղափար ունենար իր ընդունակությունների մասին: Դա նրան հնարավորություն կտար ավելի ակտիվորեն բացահայտելու և զարգացնելու այն: Նույնը պետք է ասել նաև ծնողների մասին: Պետք է ընդգծել, որ ուսուցիչների մեծ մասը ևս, որոշ գաղափար ունենալով աշակերտների ընդունակությունների մասին, անհրաժեշտ ուշադրություն չի նվիրում այդ հարցին:

Սրանք են այն հիմնական պատճառները, որոնք աշակերտների մի մասին հարկադրում են ոչ միայն երկար ժամանակ տատանվել, այլև երբեմն պատահական, ինչպես պարզվում է հետագայում, սխալ որոշում ընդունել իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Մասնագիտական կողմնորոշման գործում կարևոր դեր է խաղում պրոֆեսիոգրամը: Նրա բաղկացուցիչ մասերից մեկը սոցիալական կողմն է: Կատարված հետազոտությունները (Գ. Գ. Բաժուտին, Ի. Ն. Իվակին) ցույց են տալիս, որ պրոֆեսիոգրամի սոցիալական կողմն ընդգրկում է պրոֆեսիայի սոցիալական ծագումը, նրա հեղինակությունը, այդ հեղինակության կանխատեսումը՝ գիտական ենթադրությունը՝ վարկածը:

Մասնագիտության սոցիալական կողմի հետ սերտորեն կապված է նրա տնտեսական կողմը՝ այն դերը, որ խաղում է տվյալ մասնագիտությունը սոցիալ-տնտեսական կյանքում, ինչպես նաև պատմական կողմը՝ այդ դերի պատմական առումով:

Մասնագիտական մտադրության ի հայտ բերման մեթոդները տարբեր են: Ամենից առաջ դա գրույցի մեթոդն է՝ անհատական կամ կոլեկտիվ: Երկրորդ մեթոդը անկետա լրացնելն է՝ բանավոր հարցի գրավոր պատասխանները, ինչպես նաև մասնագիտական մտադրության գրավոր աշխատանքները՝ շարադրությունները: Այս բոլոր դեպքերում մասնագիտական մտադրությանը վերաբերող հարցը կարելի է դնել ուղղակի և անուղղակի:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այն աշակերտները, որոնք հաստատ որոշել են ինչ դառնալ, մասնագիտական կողմնորոշման հարցն արդեն լուծել են: Բայց դա ճիշտ չէ: Հաստատուն մտադրություն ունենալը դեռևս չի խոսում մասնագիտության ճիշտ ընտրության մասին: Կարևորն այն է, որ այդ մտադրությունը համընկնի պրոֆեսիոնալ պիտանիության հետ, հիմնվի տվյալ մասնագիտության բնագավառի խոր գիտե-

լիքների վրա: Հակառակ դեպքում նույնիսկ հաստատ մտադրությունը դատարկ երազանքից այն կողմ չի անցնի:

Կան աշակերտներ (և այդպիսիների թիվը քիչ չէ), որոնք իրենց մասնագիտական մտադրության մասին ոչինչ չեն խոսում: Նրանք մեծ մասամբ ինքնամոփոփ են, չեն սիրում իրենց մտադրության մասին խոսել ուրիշների, նույնիսկ ամենամտերիմների հետ: Նրանց չի կարելի դասել մտադրություն չունեցողների շարքը, քանի որ նրանց մեծ մասի մոտ դա կա, և որը երբեմն նույնիսկ երկար տարիներ նա փայփայում է:

Մասնագիտական մտադրությունն իր մեջ ունի ռոմանտիկա, ինչը շատ բնական է: Սխալ կլինի խորտակել այդ ռոմանտիկան: Ճիշտ կլինի այն, որ կյանքի ռեալ պահանջների մեջ պահպանվի ռոմանտիկական տարրը և որքան շատ, այնքան լավ: Ընդ որում, մասնագիտության ընտրության գործում տարիքի հետ պատանեկան ռոմանտիկան իր տեղը զիջում է ռեալությանը: Չի կարելի այն խորտակել արհեստականորեն: Եթե յոթերորդ դասարանցին մտադրվել է դառնալ տիեզերագնաց, նրան չի կարելի ներշնչել, թե դա անիրագործելի բան է, թե նա ճիշտ կանի, եթե հրաժարվի դրանից: Ընդհակառակը, նրան պետք է օգնել ճիշտ պատկերացում կազմելու տիեզերագնացին ներկայացվող պահանջների մասին: Երբ նա ճիշտ պատկերացում կազմի և ձգտի հասնել դրան, ապա բացառված չէ, որ նա դրան կհասնի: Իսկ եթե, այնուամենայնիվ, նա փոխի իր որոշումը, նրան պետք է օգնել ընտրելու նոր, համապատասխան մասնագիտություն: Այլապես, առանց մասնագիտության մասին ճիշտ գաղափար տալու, առանց նրան ներկայացվող պահանջները պարզաբանելու, սխալ է վերջնական դատողություններ անել մասնագիտական մտադրության, նրա ունեցած սոցիալական արժեքի մասին:

Հազիվ թե գտնվի մեկը, որը մանկության տարիներին «ինչ դառնալու» մտադրությունը մի քանի անգամ փոխած չլինի: Երեխային ոգևորող ամեն մի մասնագիտություն կարող է նրա մեջ մտադրության շարժառիթ դառնալ: Բայց տարիներ հետո երեխան ավելի լավ և ավելի խորն է ճանաչում աշխարհը: Նա այլևս չի մասնակցում խաղերին, որտեղ նա հանդես էր գալիս իրեն ոգևորող հերոսի դերում: Տարիքն արդեն այլ պահանջ է առաջադրում, ապագա մասնագիտության վերաբերյալ նրա ունեցած մտադրությունն անցնում է նոր՝ խաղից դեպի իրականություն փուլը: Ոմանց մոտ այդ հարցում «ստեղծագործական դադար» է լինում, ոմանց մոտ էլ ապագա մասնագիտության վերաբերյալ մտադրությունը, իբրև ակտիվ գործընթաց, շարունակում է մնալ:

Ինչպես հայտնի է, դրդապատճառը մարդու պահանջմունքների հետևանքն է և պայմանավորում է այդ պահանջմունքների բավարարման

խթանումը: Որո՞նք են մասնագիտության ընտրության դրդապատճառները, ինչպե՞ս են դրանք առաջանում, և որպես սովորողի մեջ սոցիալական կողմնորոշման ձևավորման գործոն՝ փոփոխվում: Մասնագիտության ընտրության դրդապատճառները երևան են գալիս դեռ միջին, նույնիսկ կրտսեր դպրոցական տարիքում՝ այս կամ այն գործը կատարելու մտադրության ձևով:

Եթե հետևենք այդ հարցի դիմամիկային, ապա կհանդիպենք առաջին հայացքից շատ տարօրինակ մի երևույթի: Երբ մենք կրտսեր դպրոցական տարիքի երեխային հարցնում ենք՝ «Երբ մեծանաս, ի՞նչ պետք է դառնաս», նա համարյա առանց տատանվելու և արագորեն պատասխանում է, թե ինչ պետք է դառնա: Տարիքի ավելանալու հետ միասին պատկերը փոխվում է. «Ի՞նչ ես ուզում դառնալ» հարցին երբեմն անմիջապես պատասխան չի տալիս, կամ տատանվում է. կամ ուղղակի ասում է՝ «Չգիտեմ», «Դեռ չեմ որոշել»:

Ինչո՞վ բացատրել այս երևույթը:

Մասնագիտության ընտրության գործում հատուկ նշանակություն ունի տվյալ անհատի խառնվածքը, որն արտահայտում է նրա հոգեկան գործունեության դիմամիկ կողմը, այսինքն՝ այդ գործունեության դրսևորման ուժը, շարժունությունն ու հավասարակշռությունը:

Արագաշարժությունը, դանդաղաշարժությունը, զգացմունքների ուժեղ կամ թույլ արտաքին արտահայտությունը, հանգիստ կամ բռնկվող դրսևորումները, մի զգացմունքից մյուսին անցնելու արագությունը և նման մի շարք այլ դրսևորումներ բնութագրում են խառնվածքը:

Խառնվածքի դրսևորումների մեծ մասը վերաբերում է զգացմունքների: Սակայն այդ չի նշանակում, որ այն վերաբերում է միայն զգացմունքների դիմամիկային: Խառնվածքն արտահայտում է նաև հոգեկան մյուս գործընթացների դիմամիկան, ինչպիսիք են կամքը, ըմբռնումները, հիշողությունը, երևակայությունը և այլն:

Այսպիսով, խառնվածքի՝ իբրև հոգեկանի դրսևորման դիմամիկ արտահայտություն, կարևոր դեր է խաղում ավագ դպրոցականի հոգեկան կյանքում՝ բնորոշելով նրա անհատական առանձնահատկությունների հիմնական կողմերից մեկը:

Մասնագիտական կողմնորոշման տեսակետից այս հարցը առանձնահատուկ կարևորություն ունի այն իմաստով, որ նյարդային համակարգի հիմնական հատկությունների նշանակությունը մասնագիտական կողմնորոշման գործում նոր նշանակություն է ստանում: «Թույլ» և «իներտ» տիպերը որոշ մասնագիտությունների համար հանձնարարելի չեն, իսկ որոշների համար՝ առավելություն են: Խոսքն այն մասին է, որ թույլ տիպերը առավելություն ունեն այն մասնագիտություններում, որոնց հիմնական պահանջը պայմա-

նական կապերի և դրանց համակարգերի մեծ հաստատունությունն է:

Բնավորության դրսևորումն ընդգրկում է կյանքի տարբեր կողմերը: Բնավորության դրսևորումների դասակարգման մի շարք համակարգեր գոյություն ունեն: Դրանցից ամենից ավելի շատ կիրառվում է Ս. Լ. Վիգոտսկու դասակարգումը, որն ունի հետևյալ հիմնական խմբերը:

1. Անձնավորության հոգեկան կերտվածքն արտահայտող գծեր՝ ազնվություն, սկզբունքայնություն, հետևողականություն, ակտիվություն, կարգապահություն և այլն:

2. Աշխատանքի և իր գործի նկատմամբ վերաբերմունքն արտահայտող գծեր՝ աշխատասիրություն, բարեխղճություն, մախածեռնողականություն և այլն:

3. Մարդկանց նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտող գծեր՝ շփվող բնավորություն, անկեղծություն, սրտաբացություն, զգայուն ընկերական վերաբերմունք, քաղաքավարություն և այլն:

4. Մարդու՝ իր նկատմամբ վերաբերմունքն արտահայտող գծեր՝ արժանապատվության զգացում, համեստություն, ամոթխածություն, ինքնասիրություն և այլն (6, 32):

Մասնագիտական գրականության մեջ բնավորության և մասնագիտական կողմնորոշման հարցերը համեմատաբար քիչ են ուսումնասիրված: Դրա պատճառներից մեկն այն է, որ բնավորության հիմնախնդիրը դեռևս քիչ է ուսումնասիրվում, մյուսը՝ մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրն է, որը, շատ երկար ընդմիջումից հետո, միայն վերջերս է սկսել գրավել մասնագետների ուշադրությունը:

Բնավորությունը տվյալ անձի հիմնական հոգեկան հատկությունների ամբողջությունն է, որոնց միջոցով նա դրսևորում է իր հոգեկան կերտվածքը, վերաբերմունքը գործունեության, մարդկանց և սեփական անձի նկատմամբ: Լինելով մարդու անհատական առանձնահատկությունների հիմնական արտահայտությունը՝ բնավորությունը, անձը բնութագրող մյուս կարևոր դրսևորումների (ընդունակություններ, խառնվածք) հետ միասին, մարդ-անհատին բնորոշ հոգեկան առանձնահատկությունն է:

Այսպիսով, բնավորության գծերի այն խումբը, որն արտահայտում է մարդու վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ, կարևոր է բոլոր մասնագիտությունների, թե՛ մասնագիտության ընտրության, թե՛ ադապտացիայի և թե՛ աշխատանքային գործունեության համար:

Մասնագիտական կողմնորոշման, մասնավորապես մի շարք մասնագիտությունների ընտրության գործում կարևոր նշանակություն ունի բնավորության գծերի այն խումբը, որն արտահայտում է մարդու վերաբերմունքը շրջապատի նկատմամբ (սրտաբացությունը, մարդամոտու-

թյունը, զգայունությունը, անկեղծությունը, ընկերականությունը, քաղաքավարությունը և այլն):

Բնավորության հիշյալ գծերը կարևոր են գործունեության հատկապես այն բնագավառներում, որոնք ամենօրյա շփման մեջ են մարդկանց հետ: Այդպիսին են սպասարկման ոլորտի մասնագիտությունները: Այստեղ շատ կարևոր է քաղաքավարությունը, տակտը, զգայուն վերաբերմունքը, մարդկանց հետ շփման մեջ մտնելը և բնավորության այս խմբի մեջ մտնող մյուս գծերը:

Այս կամ այն մասնագիտությունն ընտրելիս պետք է հաշվի առնել այն պահանջները, որ տվյալ մասնագիտությունը ներկայացնում է մարդու բնավորությանը: Եթե տվյալ անձնավորության մեջ այդ պահանջները բավարարող բնավորության գիծը վատ է զարգացած, ապա այդ չի նշանակում, թե նրան հանձնարարելի չէ տվյալ մասնագիտությունը: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է ձևավորել, դաստիարակել, զարգացնել այդ գիծը: Իսկ այդ բանին կարելի է հասնել միայն որոշակի ժամանակի ընթացքում: Սա ևս մի ապացույց է, որ մասնագիտական կողմնորոշման սաղմները պետք է դրվեն արդեն միջին դպրոցական տարիքում, իսկ դրա առանձին տարրերի վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դեռևս տարրական դասարաններին:

Մասնագիտության ընտրությունը մասնագիտական կողմնորոշման բաղկացուցիչ և ավագ դպրոցականի սոցիալական կողմնորոշման ձևավորման ու սոցիալական դերում հաստատվելու կարևոր մասն է: Քննելով դպրոցականի մասնագիտության ընտրության հարցը անհատի գիտականորեն հիմնավորված ուսուցման և գործունեության տեսակետից՝ Ս. Ա. Վալախինովիչը գտնում է, որ պետք է կատարել.

- ընտրությունը ըստ բժշկական, հոգեբանական և բնախոսական ցուցանիշների,
- ընտրությունը ըստ սոցիալական չափանիշների:
- ընտրությունը ըստ ֆիզիկական պատրաստականության աստիճանի (7, 180):

Հանրակրթական դպրոցը մասնագիտական կողմնորոշման աշխատանքի կենտրոնն է: Այստեղ ոչ միայն իրագործվում են կողմնորոշման հիմնական խնդիրները, այլև համակարգում է ընտանիքի, արտադրական ձեռնարկությունների, բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և տեխնիկական ուսումնական հաստատությունների, վարժարանների և քոլեջների հետ համատեղ կատարվող աշխատանքը: Այդ խնդիրների իրագործումը դպրոցի ամբողջ մանկավարժական կոլեկտիվից պահանջում է համակարգված և ամենօրյա աշխատանք մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ՝ վերջինս դիտելով որպես աշակերտների հասարակական դաստիարակության

կարևոր խնդիրներից մեկը:

Ըստ ակադեմիկոս Վ. Խվոստովի՝ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ հանրակրթական դպրոցի առաջ դրված հիմնական խնդիրներն են.

- դպրոցը պետք է ունենա մասնագիտությունների գծով ապագա մասնագետին ներկայացվող պահանջները, իր սաներին բնութագրող հետաքրքրություններն ու հակումները:
- դպրոցը պետք է մշակի մասնագիտական կողմնորոշման հարցերի ճիշտ լուծման համակարգ, սովորողների հետաքրքրությունները և հակումները ձևավորի այնպես, որ նրանք իրենց ապագայի հարցերը լուծելիս չէլեն միայն իրենց նեղ, եսասիրական շահերից, այլ՝ մեր հասարակության պահանջներից և հնարավորություններից (2, 58):

Առավոտյան պատուհանին նայելով՝ դուք որոշում եք խնդիր այն մասին, թե այդ օրը ինչ հագուստ է ավելի հարմար կրելը: Նայելով ժամացույցին՝ դուք լուծում եք մի այլ խնդիր այն մասին, թե կհասցնեք դպրոցից առաջ մի քանի րոպեով այցելել ընկերոջը: Սրանք շատ սովորական, հասարակ թվացող, բայց, այնուամենայնիվ, խնդիրներ են: Այստեղ ինչ-որ բան հայտնի է, «տրված է», ինչ-որ բան պետք է անել, «որոշել»: Եթե սխալ եղավ, հոգ չէ, կկատարվեն անմիջապես:

Բայց նույնը չէ խնդիրը աշակերտի կյանքի ուղու մասին: Դա խնդիր է անձնավորության մասնագիտական կողմնորոշման, սոցիալական կողմնորոշման ձևավորման և նրա սոցիալական դերի հաստատման առումով: Նույնիսկ ամենահմուտ մանկավարժը, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների փորձառու ղեկավարը չի համարձակվում հաստատել, որ այդ խնդիրը հնարավոր է ընդհանրապես հաջողությամբ լուծել: Ինչպես ռազմաճակատում, այստեղ որոշումը մոտավոր է և զերծ չէ համարձակությունից: Ինչպես ռազմաճակատում, այստեղ պետք է գործել ոչ այնքան համառորեն, որքան խելացի և ճկուն՝ հաշվի առնելով օբյեկտիվ իրավիճակը: Դրա համար էլ ճիշտ է գործում ոչ թե նա, ով չի «սխալվում», այլ նա, ով ժամանակին հաշվի է առնում սխալները և կես ճանապարհին կամ նրա սկզբում ուղղում է դրանք:

Մասնագիտությունը ընտրելով՝ մենք պետք է մեզ պատկերացնենք ապագա սոցիալական դերում, որևէ մասնագետի տեղը: Բայց ամեն մի այլ փորձ և ուրիշի դեր, ինչպես օտար հագուստ, կարող է սազել և չսազել: Դրա համար անհրաժեշտ է ընտրել իր «ձեռագիրը», մասնագիտացման իր ուղին: Դա մասնագիտական կողմնորոշման, հետևաբար և հաջողության ամենաճիշտ ու կարճ ուղին է:

Աշխատանքի տարիների մեր փորձից հանգել

ենք այն եզրակացության, որ մասնագիտական կողմնորոշման տեսակի և գործնական քայլերի միջև կամ դեռևս որոշակի հակասություններ: Այսպես՝ մեծ թվով երիտասարդների մոտ մասնագիտական ճիշտ ընտրություն կատարելը և առաջացած դժգոհությունը փոխվում է սոցիալական դժգոհության, որը կարող է բացասական հետք թողնել նրա անձնավորության հասարակական կողմնորոշման և անձնային ուղղվածության ձևավորման վրա:

Այստեղից է մասնագիտական կողմնորոշումը դառնում գիտական, գործնական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիր, որի արդիականությունն ու լուծման հրատապությունը դառնում է հրամայական հատկապես արդի պայմաններում: Ուստի այդ հիմնահարցը պետք է լուծվի անկախություն կերտող հանրապետության առջև դրված տեսական խնդիրներից կախված և որքան շուտ ու ճիշտ, այնքան լավ:

Այդ իմաստով ուսուցիչը պետք է ամեն ինչ անի, լավ իմանա ամեն մի սովորողի անհատական առանձնահատկությունները, նրա նախադրյալները, ընդունակությունները, հետաքրքրությունները, նախասիրությունները, հիշողության առանձնահատկությունները, խոսքը, մտածողությունը, բնավորության գծերը: Սրանք անհրաժեշտ են, որպեսզի ուսուցիչը օգնի դպրոցականին՝ իրեն ճանաչելու: Վերջինս էլ խիստ անհրաժեշտ է, որովհետև մասնագիտական կողմնորոշման վերջին խոսքը պատկանում է իրեն՝ ավագ դպրոցականին:

Մասնագիտական ինքնուրույն, խոր, գիտակցված ընտրությունը դպրոցականի ինքնորոշումն է կյանքում, նրա ապագայի ճիշտ պլանավորումը:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մասնագիտական կողմնորոշման պիտանելիության հիմնական ցուցանիշները ըստ կարգի ու կարևորության հանդիսանում են՝ ա) հետաքրքրությունը ընտրած մասնագիտության նկատմամբ, բ) ընդունակությունները, գ) նախաձեռնությունը, դ) բարոյական և կամային որակները, ե) ֆիզիկական տվյալները (1, 139):

Իհարկե, ըստ մասնագիտությունների՝ պիտանելիության հերթականության մեջ առանձին փոփոխություններ միշտ էլ հնարավոր են և նույնիսկ անհրաժեշտ (մանկավարժական բուհ ընդունվողի համար կարևորվում է սերը երեխայի, բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվողի համար հոգատարությունը մարդու նկատմամբ, ինչպես նաև հետաքրքրություններն ու բարոյականային որակները, տեխնիկական բուհերի համար՝ նեղ, առարկայական գիտելիքները, թատերականի համար՝ ընդունակությունները և այլն):

Ցավոք, բուհերի ընդունելության կենտրոնաց-

ված համակարգի պայմաններում մանկավարժական այդ սկզբունքները խախտվում են:

Հիմք ընդունելով այն, որ մասնագիտական կողմնորոշումը հզոր կամուրջ է դպրոցի և արտադրության, դպրոցի և կյանքի միջև՝ մանկավարժությունը պետք է ամեն ինչ անի իր բոլոր օղակների գծով (ուսումնական գործընթաց, արտադասարանական, դաստիարակչական աշխատանքներ, հասարակական կազմակերպություններ...), որպեսզի այս կարևոր փուլը անցնեն բոլոր աշակերտները դպրոցական մտարանից: Այս գործում ամենավճռական ու անփոխարինելի դերը պատկանում է դաստիարակությանը, իսկ դրա մեջ՝ աշակերտի անձնավորության ամենամանրակրկիտ ուսումնասիրությանը: Պետք է պարզել, թե՝

- ինչպիսի՞նչ նպատակաուղղվածություն ունի աշակերտը կենսական հարցերում և ինչպիսի միջոցներով է այն պատրաստվում իրականացնել:

- համապատասխանում է՞ն, արդյոք, նրա նպատակադրումը և անհատական հոգեբանական առանձնահատկությունները նախընտրած մասնագիտությանը:

Դրանք պարզելու կարճ ուղին «անկետա-բնութագրերի» կազմումն է յուրաքանչյուր տարվա վերջին, որի մեջ դասարանի ղեկավարը կամի հետևյալ գրանցումները՝ կապված աշակերտի ուսումնադաստիարակչական գործունեության հետ.

- աշակերտի առաջադիմությունը և ջանասիրությունը,

- նրա հանդես բերած ընդունակությունները, նախասիրությունները, հետաքրքրությունը ուսումնական առարկաների և հանրօգուտ-հասարակական աշխատանքի նկատմամբ,

- բնավորության հիմնական գծերը և վարքը, առողջությունը,

- մասնագիտական մտադրությունները,

- երաշխավորություններ մասնագիտական ընդունակությունների մասին ուսուցիչների, ծնողների և ընկերների կարծիքներով [1, 126]:

Բնութագրում հատուկ ձևով ձևավորում են այն ամեն մորը, որ հայտնվում է աշակերտի մոտ նախասիրությունների, հետաքրքրությունների, ընդունակությունների և ընդհանրապես՝ մասնագիտական պիտանելիության հետ կապված հարցերում:

Սեր կողմից կիրառվող դաստիարակության համակարգը օգնել է լուծել ավագ դպրոցականների մասնագիտական և սոցիալական կողմնորոշման հարցերը: Այդ ուղղությամբ կատարված մեր ուսումնասիրությունները դրա լավագույն հաստատումն են (աղյուսակ 1):

Բոլոր հարցերի պատասխանները ցանկալի է տալ բացատրություններով և պատճառաբանված: Անունը, ազգանունը, պաշտոնը, հասարակության


Աղյուսակ 1

Հարցվածների բաշխումը ըստ ընտանիքում նախընտրվող դաստիարակության ձևի

N	Դաստիարակության ձև	Ընդհանուր (n=300)		սեռ								
				արական (n=81)		իգական (n=219)						
		n	%	n	%	n	%					
Դեմոկրատական							-	-	-	-	-	-
1)	հաշվի են նստում զավակներիս կարծիքի հետ	219	73.0	63	77.8	162	73.97					
2)	Նրանց աչքերով ու հայացքներով են նայում շրջապատին, բնությանն ու հասարակությանը	156	52.0	42	51.9	114	52.1					
Ավտորիտար							-	-	-	-	-	-
1)	հսկում են նրանց բոլոր արարքները	129	43.0	33	40.7	96	43.8					
2)	թեմ թողնում, որ նրանք դուրս գան իմ կարծիքից	18	6.0	9	11.1	9	4.1					
Լիբերալ							-	-	-	-	-	-
1)	անտարբեր են նրանց արարքների նկատմամբ	15	5.0	6	7.4	9	4.1					
2)	ինչ ուզում են, թող անեն, միևնույն է նրանց չեն փոխի	15	5.0	3	3.7	12	5.5					


Դիագրամ 1

Հարցվածների բաշխումը ըստ ընտանիք-դպրոց համագործակցության ձևերի



Դիագրամ 2

Հարցվածների բաշխումը ըստ ընտանիքում նախընտրվող դաստիարակության ձևի



ՀԱՐՑԱՑՈՒՑԱԿ

1. Ո՞րն է Ձեր կարծիքով երեխայի գլխավոր օբյեկտը

1.1. Ընտանիքը	
1.2. Դպրոցը	
1.3. Հասարակությունը	
1.4. Ձեր տարբերակը	

2. Ձեր ընտանիքում աշխատում են (պետական, մասնավոր կամ ցանկացած այլ ձև)

2.1. Ամուսինը	
2.2. Կինը	
2.3. Երկուսն էլ	
2.4. Նաև այլ անդամներ	

3. Որո՞նք են ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական պայմանները

3.1. Ձերն և բարեկամական փոխհարաբերությունները ընտանիքում, ծնողների, ծնողների և երեխաների՝ իրենց երեխաների միջև	
3.2. Աշխատանքային առողջ ու անկաշկանդ մթնոլորտը	
3.3. Ծնողների անձնական դրական օրինակը	
3.4. Ծնողների բարձր ու օբյեկտիվ հեղինակությունը	
3.5. Ծնողների պատասխանատվությունը իրենց զավակների կրթվածության, դաստիարակվածության ու ապագայի համար	
3.6. Դպրոցի (բուհի) պահանջների և հանձնարարությունների ընդունումը, հարգումը և անվերապահ կատարումը ընտանիքի կողմից	
3.7. Դաստիարակության ընթացքում երեխաների տարիքի, հոգեբանության և անհատական առանձնահատկությունների ու սեռերի հաշվառումը	
3.8. Ընտանեկան կյանքի (ֆինանսական, տնտեսական, բարոյական, հոգեբանական, կազմակերպչական) անթերի կազմակերպումը	
3.9. Ընտանիքի ղեկավարների վարչական, աշխատանքային, գիտական, հասարակական, քաղաքական և ծնողական պարտականությունների ներդաշնակ զուգակցումը	
3.10. Ընտանիքի, դպրոցի և հասարակության դաստիարակչական մեթոդների, միջոցների ու ձևերի միասնությունը	

4. Ընտանիքի՝ դպրոցի հետ համագործակցության ո՞ր ձևին էք տալիս նախապատվությունը

4.1. Ծնողական ժողովներին	
4.2. Ծնողական կոմիտեի նիստերին	
4.3. Ծնողների դպրոց այցելություններին	
4.4. Ուսուցիչների՝ երեխայի ընտանիք այցելելուն	
4.5. Օրագրի գոյությանը	
4.6. Դպրոցի հետ կապեր չունենալուն	

5. Դաստիարակության ի՞նչ ձևեր էք նախընտրում ընտանիքում

5.1. Դեմոկրատական ա) հաշվի են նստում զավակներիս կարծիքների հետ բ) նրանց աչքերով ու հայացքներով են նայում շրջապատին, բնությանը և հասարակությանը	
5.2. Ավտորիտար ա) հսկում են նրանց բոլոր արարքները բ) չեն թողնում, որ նրանք դուրս գան իմ կարծիքից	
5.3. Լիբերալ ա) անտարբեր են նրանց արարքների նկատմամբ բ) ինչ ուզում են թող անեն, միևնույն է նրանց չեն փոխի	

մեջ ունեցած կարգավիճակը և հասցեն նշելը պարտադիր չէ:

Նախապես հայտնում ենք մեր երախտագիտությունը:

Սեռ \_\_\_\_\_ Տարիք \_\_\_\_\_

Ամուսնության տևողություն \_\_\_\_\_

Դաստիարակության համակարգում սովորողների սոցիալական և մասնագիտական կողմնորոշման նման դրվածքը, այդ հարցերի նկատմամբ նոր մոտեցումը և օպտիմալացումը կնպաստեն ավագ դպրոցականի մասնագիտական կողմնորոշմանը, սոցիալական ուղղվածության ձևավորմանը, սոցիալական դերի հաստատմանը, համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը: Իսկ դա իրագործելի է դառնում միայն այն ժամանակ, երբ ավագ դպրոցականի՝ այս կամ այն գծով ապագա մասնագետի բնավորությունը, լայն իմաստով, նախընտրած մասնագիտության «բնավորության» հետ (մասնագիտության գլխավոր բնորոշ և հիմնական գիծը) կազմում են ներդաշնակություն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Լալայան Ա. Ա.**, Դպրոցը և մասնագիտական կողմնորոշումը, Երևան, «Լույս», 1993, 139 էջ:
2. **Մանուկյան Մ. Մ.**, Արտադասարանական դաստիարակչական աշխատանքների հարցերը դպրոցի վերակառուցումների լույսի ներքո, Երևան, «Լույս», 1986, 156 էջ:
3. **Մանուկյան Մ. Մ.**, Արտադասարանական դաստիարակչական աշխատանքների առանձնահատկությունները, Երևան, «Լույս», 1980, 152 էջ:
4. **Арутюнян Э.**, Педагогический потенциал семьи и проблема социальной ориентации молодежи. Вильнюс, 1982, 263 стр.
5. **Власова А. Н.**, Социальное самочувствия (человек в изменяющем мире). С. Петербург, ГПУ, 1993, стр. 21-22.
6. **Выготский С. А.**, Детская психология, том 6. М., 1984, 432 стр.
7. **Валахинович С. А.**, Психолого-педагогические условия реализации воспитательных функций родителей в семье. Минск, 2003г., стр. 180.
8. **Гаспарян Ю. А.**, Институт семьи, С. Петербург, 1997, 162 стр.

MAIN PROBLEM OF SENIOR SCHOOL STUDENTS' SPECIALTY SELECTION IN THE  
CONTEXT OF ITS SOCIAL ORIENTATED FORMATION  
(SCIENTIFIC – THEORETIC CORROBORATION)

**NARINE ARAKELYAN**

Summary

This article examines the problems of professional orientation of seniors on the base of social orientation, the scientific bases and the preconditions of efficiency, the role of the family and the school, the mean and the methods of professional orientations.

ՍՈՎՈՐՈՂԻ ԵՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՂԻ ՄԻՋԵՎ  
ՀԱՂՈՐԳԱԿՑԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏ-  
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎԱՆԳԱԿԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՆՈՂ  
ՌԻՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ\*

Աննա ՀԱԿՈԲՅԱՆ

և. Արքվյանի անվան ընդհանուր մանկավարժության ամբիոնի դասախոս



Սովորողի և սովորեցնողի միջև հարաբերությունների բնույթի ուսումնասիրություններով են այսօր զբաղվում մանկավարժության և մանկավարժական հոգեբանության տեսաբաններն ու պրակտիկ մասնագետները:

Հատկապես այս խնդիրն ավելի արդիական է դարձել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների տարատեսակների ակտիվ զարգացման և փորձարարական ներդրման պայմաններում:

Պետք է նկատենք, որ մանկավարժական տեխնոլոգիաների շարքում լայն տարածում են գտել ավանդական և զարգացնող ուսուցման տեխնոլոգիաները, որոնք էականորեն տարբերվում են սովորեցնողի և սովորողի միջև հաղորդակցման բնույթով:

Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք բացահայտել սովորողի և սովորեցնողի միջև հաղորդակցման առանձնահատկությունները՝ ուսուցման ավանդական և զարգացնող տեխնոլոգիաների կազմակերպման գործընթացում:

Հայտնի է, որ ուսուցման ավանդական տեխնոլոգիան (ՈւՍՏ) կողմնորոշված է գիտելիքների, կարողությունների և հմտությունների փոխանցմանը: Այն ապահովում է սովորողների կողմից ուսուցման բովանդակության յուրացումը, դրա որակի ստուգումն ու գնահատումը՝ վերարտադրողական մակարդակի վրա: Այն սովորողին դիտում է օբյեկտի դերում, իսկ սովորեցնողին՝ սուբյեկտի:

Սա ամենահին և ամենատարածված տեխնո-

լոգիան է, որն ընթանում է խիստ պլանավորված ալգորիթմով. **նորի ուսումնասիրություն անրայնում ստուգում գնահատում:**

ՈւՍՏ հիմնական հայեցակետն է. *կարելի է որոշել սովորողի համար անհրաժեշտ գիտելիքների ծավալ և փոխանցել այն ուսուցման միջոցով [1]:*

Ուսուցման գործընթացում գերակշռում է բացատրացուցադրական մեթոդի կիրառությունը, որի ժամանակ սովորողի հիմնական գործունեության ձևերն են լսելն ու հիշելը, իսկ արդյունավետության չափանիշը՝ սովորածի անսխալ կրկնությունը:

Թեպետ, այս տեխնոլոգիան ունի որոշ առավելություններ (այն տնտեսող է, հեշտացնում է բարդ նյութի յուրացումը, ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարումը; դրանում հեշտ են ձուլվում գիտելիքների մատուցման նոր ձևերը), ամուսնանայնիվ, այն ունի որոշակի թերություններ, քանի որ շատ քիչ հնարավորություն է ընձեռում ուսուցման գործընթացի անհատականացման և դիֆերենցման համար, ինչպես նաև, սակավ են սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման խթանման միջոցները:

Պետք է նկատենք, որ այսօր տեղեկատվական միջոցների հազեցվածությունը առավելապես ազդում է ուսուցչի դերակատարման վրա՝ բուն ուսուցման գործընթացում: «Ուսուցիչը աստիճանաբար տեղեկություն հաղորդողից վերափոխվում է ուսուցման գործընթացի կազմակերպիչ: Ուստի, ուսուցչի և աշակերտի միջև հաղորդակցական դաշտը, պետք է կրի որոշակի փոփոխություններ: Բացի այդ ցանկացած հաղորդակցում ունի **հետադարձ կապ**, որը տեղեկատվություն ընդունողի արձագանքն է՝ հաղորդված տեղեկության նկատմամբ և ցույց է տալիս դրա ընկալման աստիճանը» [2]:

\* Ներկայացվել է 02.04.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

ԱՌՏ-ի մեջ ուսուցչի գործունեության հիմնական ձևը ուսումնական տեղեկատվության հաղորդումն է, ստուգումն ու գնահատումը: Աշակերտն ընկալվում է նրա կողմից, որպես ազդեցության օբյեկտ, որի խնդիրն է ուսուցչի կողմից հաղորդվող տեղեկատվության յուրացումն ու վերարտադրությունը: Հետադարձ կապն այս դեպքում պասիվ է: Ընդհանուր մանկավարժական հաղորդակցական կարողությունները դրսևորվում են դրական հուզական շփման ձևավորման, ինչպես նաև գործնական և հուզական հարաբերությունների ստեղծման և պահպանման կարողության միջոցով: Դրանց շարքում են անկաշկանդ շփումը, լսելու և հասկանալու ընդունակությունը, լսարանի տրամադրվածության համապատասխան ընկալումը, և նրանց ուշադրության կառավարումը: Սակայն, ԱՌՏ-ի ժամանակ ուսուցիչն ավելի սահմանափակ հնարավորություններ ունի սովորողների ստեղծագործական, ինքնուրույն մտածողության զարգացմանը խթանող, համագործակցային պայմանների ստեղծման համար: Մինչդեռ, այսօր լայն տարածում է ստացել այն գաղափարը, որ սովորողների ուսուցման դրդապատճառները ակտիվանում են ինքնուրույնության և համագործակցության պայմաններում, երբ նա ինքը ստանում է դժվարին խնդիրները ինքնուրույն լուծելու խթանիչներ, իր մտքերն ու գաղափարները կյանքի կոչելու հնարավորություններ:

Այս խնդրի լուծման ուղիներն են այսօր առաջարկվում Լ. Վ. Վիգոտսկու, Լ. Վ. Ջանկովի, Դ. Բ. Էլկոնինի և Վ. Դավիդովի կողմից մշակված **ուսուցման զարգացնող** տեխնոլոգիաներում:

Ըստ Լ. Վ. Վիգոտսկու՝ ուսուցման և զարգացման հարաբերությունը համդիսանում է «ամենակենտրոնական և հիմնարար հարցը, առանց որի մանկավարժական հոգեբանության խնդիրները ... չեն կարող ոչ միայն ճիշտ լուծվել, այլ նույնիսկ առաջադրվել» [3]:

20-րդ դարի 30-ական թվականների սկզբներին, ի հայտ եկան ուսուցման և զարգացման հարաբերակցության մասին երեք հիմնական տեսություններ: Դրանք էլ հենց նկարագրվել են Լ. Ս. Վիգոտսկու կողմից [4]:

Առաջինի հիմքում դրված է ուսուցումից զարգացման անկախ լինելու գաղափարը: Վերջինս դիտարկվում է որպես «զուտ արտաքին գործընթաց, որը պետք է այս կամ այն կերպ համաձայնեցված լինի մանկական զարգացման ընթացքի հետ, բայց ինքնին ակտիվ չի մասնակցում մանկան զարգացմանը, նրա մեջ չի փոխում ոչինչ և ավելի շատ օգտագործում է զարգացման նվաճումները, քան այն առաջ մղող ընթացքը և փոխում դրա ուղղությունը»: Շատերը գտնում են, որ

այդ տեսությամբ լիովին համապատասխանում է հայտնի մատչելիության դիդակտիկական սկզբունքին, համաձայն որի՝ երեխաներին կարելի է և պետք է սովորեցնել միայն այն, ինչը նրանք «կարող են հասկանալ», ինչի համար նրանց մոտ արդեն հասունացել են իմացական ընդունակություններ: Այս տեսությունը չի ընդունում, այսպես կոչված, զարգացնող ուսուցումը:

Համաձայն Լ. Ս. Վիգոտսկու՝ երկրորդ տեսությունը հենվում է այն տեսակետի վրա, որ ուսուցումը հենց զարգացումն է, որ ուսուցումն ամբողջովին միաձուլվում է նրա հետ, երբ ուսուցման մեջ ամեն մի քայլ համապատասխանում է զարգացման քայլին, որը հիմնականում հանգում է ամեն տեսակ սովորությունների կուտակմանը: Ըստ այս տեսության՝ ցանկացած ուսուցում դառնում է զարգացնող: Ուսուցիչները և մեթոդիստները հենվելով գերազանցապես պրակտիկ փորձի վրա, կարող են լինել կողմնակիցները այս տեսությանը, որը չի պահանջում ուսուցման և զարգացման տարբերակման բարդ ընթացակարգ:

Երրորդ տեսության մեջ փորձեր են արված հաղթահարել առաջին երկուսի ծայրահեղությունները՝ դրանց պարզ համատեղման միջոցով: Ջարգացումը դիտվում է որպես ուսուցումից անկախ գործընթաց, իսկ ուսուցումը՝ նույնացվում է զարգացման հետ: Ջարգացումը (հասունացում), նախապատրաստում և հնարավոր է դարձնում ուսուցումը, իսկ վերջինս, ասես, խթանում և առաջ է տանում զարգացումը: Համաձայն այս տեսության՝ զարգացումը միշտ ավելի լայն շրջան է կազմում, քան ուսուցումը ... Երեխան սովորեց կատարել ինչ-որ գործողություն, դրանով իսկ նա յուրացրեց ինչ-որ կառուցվածքային սկզբունք, որի կիրառման ոլորտն ավելի լայն է, քան այն տիպի գործողությունը, որի վրա այդ սկզբունքը յուրացված է եղել: Հետևաբար, ուսուցման մեջ մի քայլ կատարելով՝ երեխան զարգացման մեջ առաջ է գնում երկու քայլով, այսինքն՝ ուսուցումը և զարգացումը չեն համընկնում:

Այնուհետև, հաջորդում է կարևոր դատողությունը. «Կարծում ենք այդ օրենքը, մեր կողմից դիտվում է ամբողջովին կցելի երեխայի ուսուցման գործընթացին: Մենք չէինք վախենա այս ամեն նշվածից հետո պնդել, որ ուսուցման էական հատկանիշը այն է, որ նա ստեղծում է մերձակա զարգացման գոտիներ, այսինքն, երեխայի մոտ կյանքի է կոչում և ընթացքի մեջ դնում ներքին զարգացման մի շարք գործընթացներ: Այժմ երեխայի համար այդ գործընթացները հնարավոր են միայն շրջապատում փոխհարաբերությունների և ընկերների հետ համագործակցության ոլորտում, բայց երկարաձգելով զարգացման ներքին ընթացքը, դրանք դառնում են հենց երեխայի ներ-

քին ձեռքբերումները:

Այս տեսանկյունից ուսուցումը զարգացում չէ, բայց ճիշտ կազմակերպելու դեպքում այն իր հետևից տանում է երեխայի մտավոր զարգացումը, կյանքի է կոչում այնպիսի գործընթացների շարք, որոնք ուսուցումից դուրս, ընդհանրապես, կլինեն անկարելի: Այսպիսով, ուսուցումը ներքին անհրաժեշտ և համընդհանուր պայման է երեխայի ոչ բնական, այլ մարդու պատմական յուրահատկությունների զարգացման գործընթացում» [4]:

ՁՈՒՏ կազմակերպվում է հետևյալ փոխկապակցված սկզբունքների հիման վրա՝

1. ուսուցում բարձր մակարդակի դժվարությունների հիման վրա,
2. տեսական գիտելիքների առաջատար դեր,
3. նյութի ուսումնասիրման արագ տեմպ,
4. աշակերտների կողմից ուսուցման գործընթացի գիտակցում,
5. հետևողական աշխատանք բոլորի զարգացման ուղղությամբ:

Բացահայտված էր, որ ԱՈՒՏ-ը չի ապահովում զարգացման անհրաժեշտ մերձակա գոտիների ձևավորումը, այլ վարժեցնում և ամրապնդում է այն հոգեկան ֆունկցիաները, որոնք իրենց հիմքում առաջանում և սկսում են զարգանալ արդեն վաղ տարիքից (զգայական դիտում, էմպիրիկ մտածողություն, օգտապաշտական հիշողություն և այլն): Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է կազմակերպել ուսուցում, որն ընդունակ կլինի առաջացնել մոտակա զարգացման անհրաժեշտ գոտիները [5]:

Ուսումնական գործունեությունը ներառում է համապատասխան պահանջմունքներ, դրդապատճառներ, խնդիրներ, գործողություններ և գործառնություններ: Որպեսզի դպրոցականների մոտ ձևավորվի լիարժեք ուսումնական գործունեություն, նրանք պետք է մշտապես լուծեն ուսումնական խնդիրներ: Դրանց կարևոր յուրահատկությունն այն է, որ լուծման ընթացքում դպրոցականը փնտրում և գտնում է շատ մասնավոր խնդիրների ընդհանուր մոտեցման ձևը, որոնք հետագայում կարծես կատարվում են ընթացքի մեջ:

Ուսումնական խնդիրը լուծվում է գործողությունների համակարգի միջոցով, իսկ ուսումնական գործողությունների օգնությամբ դպրոցականները մոդելավորում և ուսումնասիրում են այդ ելակետային հարաբերությունները, առանձնացնում և մասնավորեցնում են դրանք, վերահսկում և գնահատում են լուծման գործընթացը:

Համապատասխան գործողությունների միջոցով տեսական գիտելիքների յուրացումը պահանջում է կողմնորոշում դեպի ուսումնասիրվող առարկաների էական հարաբերությունները: Դրա

իրականացումը ենթադրում է բովանդակային բնույթի վերլուծություն, պլանավորում և ինքնաանդրադարձ: Այդ իսկ պատճառով՝ տեսական գիտելիքների յուրացման ընթացքում առաջանում են զարգացման պայմաններ հենց այդ մտածական գործողությունների մեջ՝ որպես տեսական մտածողության կարևորագույն բաղադրիչներ [6]:

Ուսումնական գործունեության կրողի դերում դպրոցականը ի սկզբանե ուրիշների հետ և ուսուցչի օգնությամբ իրագործում է սեփական ուսումնական գործունեությունը: Դպրոցականն աստիճանաբար վերածվում է սովորողի, այսինքն՝ գործող սուբյեկտի, որը փոխում և կատարելագործում է ինքն իրեն: Դրա համար նա պետք է իմանա ինչ-որ մի բանում իր սահմանափակ հնարավորությունների մասին, ձգտի և կարողանա հաղթահարել սեփական սահմանափակությունը: Սա նշանակում է, որ երեխան պետք է վերանայի սեփական գործողությունների և գիտելիքների հիմքերը, կարողանա ինքնահայել:

Ակնհայտ է, որ ուսուցման գործընթացի կազմակերպումն ու կառավարումը նման առանձնահատկությունների պայմաններում ուսուցչից պահանջում է մանկավարժահոգեբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների այլ մակարդակ, քան ավանդականի դեպքում:

Ուսուցչի առաջատար մոտեցումները ԱՈՒՏ-ի և ՁՈՒՏ-ի շրջանակներում համեմատելու համար փորձենք տարբերակել ըստ հաղորդակցման գործառնությունների:

Նկատենք, որ առաջինի դեպքում գերակշռող է **տեղեկատվական (ինֆորմացիոն)** գործառնությոնը, որի միջոցով սովորողները տեղեկություններ են ստանում տարբեր գիտություններից, իսկ հաղորդակցման գործընթացում հիմնականում վերադարձվում են դրանք: «Տեղեկատվական հաղորդակցումը մանկավարժական հաղորդակցման գերակշիռ մասն է, որի էությունն այն է, որ հաղորդակցության մասնակիցները միմյանց ուղարկում են հաղորդումներ, փոխանակում տարբեր բնույթի տեղեկություններ, միմյանց միջև հաստատում կապեր ու հարաբերություններ, որոնք իրենց անմիջական կամ միջնորդավորված ազդեցությունն են թողնում նրանց մտածելակերպի ու գործելակերպի վրա»: Ընդ որում, հաղորդակցության ընթացքում ոչ միայն պարզապես փոխանակվում են որոշակի տեղեկություններ, այլև տեղի են ունենում հետևյալ երևույթները.

- հաղորդվող տեղեկությունները ձևավորվում, ճշտվում կամ ձևափոխվում են,
- մշակվում է նոր տեղեկություն,
- ձևավորվում է դրական կամ բացասական վերաբերմունք միմյանց հանդեպ,
- փոխազդում են միմյան վրա,

• ձևավորվում է հոգեբանական, մտերմիկ կապ հաղորդակցվողների միջև,

• հաղորդակցության ընթացքում ի հայտ են գալիս նպաստող և խոչընդոտող հանգամանքներ, որոնք կարող են լինել անձնային, սոցիալական ու հոգեբանական բնույթի [7]:

**ԱՌՏ-ում գերակայող է հաղորդակցման իմացական (կոգնիտիվ) գործառույթը**, որը ծառայում է գիտելիքների ձեռք բերմանն ու ընդլայնմանը, կուտակմանն ու փոխանցմանը:

ՁՈՏ-ի ներդրումն ու կազմակերպումը մեծացնում է ուսուցչի և աշակերտի միջև խոսքային հաղորդակցման հնարավորությունները, նվազեցնում ուսուցչի մենախոսության հնարավորությունները, որին նպաստում է հաղորդակցման զարգացման գործառույթը: Այն կարևոր դեր է խաղում նաև անձի սոցիալականացման գործում: Մարդը ներառվում է տարբեր խմբերի մեջ, որտեղ նա անմիջականորեն շփվում է ուրիշների հետ, փոխանակում մտքեր, կարծիքներ, պատկերացումներ, և այդ ընթացքում ձևավորվում և ձևափոխվում են նրա սոցիալ-հոգեբանական բնութագրերը:

Ուսուցիչը, ընդունելով ուսուցման գործընթացի կազմակերպչի ու կառավարչի դեր, սկսում է իրականացնել հաղորդակցման համակարգող (կոորդինացիոն) գործառույթ, որի դեպքում նա համաձայնեցնում է իր և աշակերտի համատեղ գործողությունները, մշակում համատեղ գործողությունների ծրագրեր:

Այս ընթացքում նա պետք է ակտիվորեն իրականացնի **հասկացման** հաղորդակցման գործառույթ, որ է հաղորդման իմաստի ճիշտ ընկալումն ու հասկացումը, հաղորդակցվողների մտադրությունների, դիրքորոշումների, ապրումների, վիճակների փոխադարձ հասկացումը:

Համագործակցային ուսումնական գործընթացը, ուսումնական նպատակին հասնելու արդյունավետ ուղիների որոնումը գործընթացի սուբյեկտներից պահանջում է **զգայական** (եմոտիվ) **հաղորդակցական գործառույթի** իրականացում ևս: Այն հաղորդակցվողների միջև անհրաժեշտ դրական հուզական ապրումների առաջացումն է, նրա հոգեվիճակի փոփոխությունը՝ սեփական ապրումների ու հոգեվիճակների ազդեցության միջոցով:

ՁՈՏ-ի դեպքում ձևավորվում է սովորողի և սովորեցնողի միջև սուբյեկտ-սուբյեկտ հաղորդակցություն, որն էականորեն փոխում է սովորողների վերաբերմունքը դպրոցի, ուսումնական պարամունքների, համադասարանցիների, ուսուցչի, ինքն իրեն, իր վարքագծի, ուսումնական աշխատանքի նկատմամբ ընդհանրապես, որպես արդյունք ստեղծվում է նաև դաստիարակության

և ուսուցման գործընթացների ինտեգրացման պայմաններ:

Ուսուցման հետազոտողները փաստում են, որ զարգացնող ուսուցման ռեժիմի դեպքում աշակերտների ուսումնական ցուցանիշները զգալիորեն (ավելի քան երկու անգամ) գերազանցում են ավանդական ուսուցման բացատրացուցադրական ռեժիմի արդյունքներին: Սա վկայում է գնահատականով սովորողների ուսումնական դրդապատճառների խթանման, հարկադրական հարաբերությունների ու մեթոդների անարդյունավետության մասին [8]:

Ուսուցման ու դաստիարակության որակը նկարագրվում են հետևյալ բնութագրիչներով.

- համագործակցման և տեղեկատվության գործոնների փոխազդեցություն՝ դաստիարակչական գործընթացի կազմակերպման ժամանակ,
- աշակերտների և ուսուցչի միջև հոգեբանական ընդհանրության զգացողության ամպլայություն,

- վերաբերմունք մարդու նկատմամբ՝ որպես հասուն ինքնագիտակցություն ու ինքնագնահատական ունեցողի,

- դաստիարակչական ազդեցությունների ավտորիտար ձևերի բացակայություն,

- սովորողների հետաքրքրությունները որպես ուսման ու դաստիարակության խթաններ դիտելու գործոն,

- սովորողներին նպատակադրված մանկավարժական հաղորդակցման համակարգ ներքաշելու կարողությամբ, այդ թվում գործունեության տարբեր ձևերի միջոցով. խմբակներ, համաժողովներ, բանավեճ-քննարկումներ և այլն [9]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսուցման ավանդական տեխնոլոգիաներն իրենց արդյունավետությամբ զիջում են զարգացնող ուսուցման տեխնոլոգիաներին, քանի որ վերջիններս առավել արդյունավետ են ժամանակակից ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման, սովորեցնողի և սովորողի միջև սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությունների կառուցման, ուսումնական դրդապատճառների ձևավորման առումով: Այդ ամենի հիմքում պետք է դիտել ուսուցման գործընթացի սուբյեկտների միջև հաղորդակցական գործառույթների ընդլայնման հնարավորությունները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Крившенко А. П., и коллектив авторов, Педагогика, Учебник, М., “Проспект”, 2004, с. 321.
2. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա., Մանկավարժական հաղորդակցում, ՀՀ, Եր., 2010, էջ 58:
3. Выготский А. С. Педагогическая психология. М.,

1991. с. 374.
4. **Выготский Л. С.** Избранные психологические исследования. Мышление и речь. Проблемы психологического развития ребенка. /Выготский Л.С., под ред. А.Н. Леонтьева и А.Р. Лурия. М.: Издательство АПН РСФСР, 1956. с. 388.
  5. **Давыдов В. В.**, Проблемы развивающего обучения. М., 1986.
  6. Развитие психики школьников в процессе учебной деятельности /Под ред. В.В. Давыдова/. М., 1983.
  7. **Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա.**, Մանկավարժական հաղորդակցում, ՀՀ, Եր., 2010, էջ 17-18, 27:
  8. **Ксензова Г. Ю.**, Иновационные технологии обучения и воспитания школьников, Пед. Общ. России, М., 2008, с. 115:
  9. **Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա.**, Մանկավարժական հաղորդակցում, ՀՀ, Եր., 2010, էջ 179:

---

COMMUNICATIVE PECULIARITIES BETWEEN LEARNER AND TEACHER IN TRADITIONAL AND DEVELOPING EDUCATIONAL TECHNOLOGIES

**ANNA HAKOBYAN**

Summary

In modern education the productivity of teaching and upbringing integration, greatly depends on the communication functions between the teacher and the learner(student), where subjective interrelations are established. Moreover, the collaboration between the students, giving them the possibility to reflect their educational knowledge, abilities and skills is also important. The article observes the TET and the DET communication peculiarities, it also revealed the productive conditions of the application of the developing technologies.

**Մարգարիկա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Խ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ*

Գիտական ղեկավար՝ Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ



**Հ**ողվածում հեղինակը ներկայացնում է մասնագիտական կրթության նկատմամբ նոր մոտեցումները, ինչպես նաև մասնագետի մրցունակության հիմնախնդիրը մասնագիտական ժամանակակից կրթության և աշխատաշուկայի պահանջների նոր մոտեցումների ենթատեքստում:

Ժամանակակից մասնագիտական կրթությունը գործատուի համար այլևս միայն աշխատատեղի նկարագրին համապատասխան մասնագետների պատրաստումը չէ [1]: Աշխատողը, ավելի կոնկրետ՝ մարդը, դարձել է գործատուի արտադրական հաջողության կարևորագույն գործոն, ով մտածում, մտորում, պլանավորում, կազմակերպում գործունեությունը, հետևում՝ սոցիալական միջավայրին ու մրցակիցներին, վերլուծում՝ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումները, արդյունքում՝ գործատուի համար հետևություններ կատարում: Նման գործունեություն մեքենան չի կարող ծավալել: Այս ենթատեքստում ճիշտ է նկատել Վոլֆգանգ Յեգերիխը, որ մարդն այլևս ոչ թե ծախսի գործոն է, այլ հաջողության [2]: Այս մոտեցումն է դրված եվրոպական զարգացած երկրներում մասնագիտական կրթության և աշխատաշուկային միտված միջոցառումների հիմքում: Այդ հիմքի վրա են ստեղծվում կրթական ծրագրերն ու չափորոշիչները, պլանավորվում, պատրաստվում, որակավորվում և վերապատրաստվում մասնագետները: Սակայն ի տարբերություն զարգացած երկրների, Հայաստանի Հանրապետությունում կրթական ծառայությունների արդյունքում մարդը դառնում է իր ընտանիքի համար ծախսի գործոն, որը հետագայում չի վերածվում հաջողության գործոնի: Համաձայն «Մարդկային զարգացման ազգային զեկուլցի» հետազոտությունների, Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների 24%-ը խնայում է իր դրամական միջոցները կրթության համար [3]: Այսինքն, ուսման նպատակով ծախսվող գումարի 24%-ը առաջանում է խնայողության հաշվին և համաձայն մարդկային կապիտալի ուսմունքի այդ ծախսերը կարող են արդարացվել միայն վերջնական արդյունքում՝ իրացման պարագայում: Մեր երկրում կրթությունը կարծես դարձել է ինքնանպատակ և կորցրել է իր էական գործառույթը: Ծնողները շատ հաճախ խնայած գումարը ծախսելով երեխայի կրթության վրա, թերահավատ են ծախսերը երբևիցե փոփախուցված լինելու հարցում: Իսկ «մասնագիտական խորհրդատվության կենտրոնների» մասին պատկերացումը, մեր պարագայում, լավագույն դեպքում սահմանափակվում է կթության ծառայություն տրամադրող կառույցների գովազդով, իսկ կրթական կառույցները մրցունակության ապահովման և որակյալ կրթության տեսանկյունից միջազգային մակարդակով պատշաճ մակարդակի վրա չեն: Վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես ուսուցման մեթոդաբանության առումով Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը դեռևս վերափոխելու շատ բան ունի [4]:

Այսպիսով, մասնագիտությունը որպես աշխատավարձի և եկամուտի, սոցիալական վստահության անենամահիրաժեշտ տարր կորցնում է իր նշանակությունը: Արդի հասարակությունը, արտադրությունը, շուկաները, սպասարկումը և աշխատանքը առանձնանում են բարձր դինամիզմով, փոփոխման մեծ տեմպերով: Նոր պայմաններում մարդը դառնում է իր ընտանիքի համար ծախսի գործոն, որը հետագայում չի վերածվում հաջողության գործոնի: Համաձայն «Մարդկային զարգացման ազգային զեկուլցի» հետազոտությունների, Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների 24%-ը խնայում է իր դրամական միջոցները կրթության համար [3]: Այսինքն, ուսման նպատակով ծախսվող գումարի 24%-ը առաջանում է խնայողության հաշվին և համաձայն մարդկային կապիտալի ուսմունքի այդ ծախսերը կարող են արդարացվել միայն վերջնական արդյունքում՝ իրացման պարագայում: Մեր երկրում կրթությունը կարծես դարձել է ինքնանպատակ և կորցրել է իր էական գործառույթը: Ծնողները շատ հաճախ խնայած գումարը ծախսելով երեխայի կրթության վրա, թերահավատ են ծախսերը երբևիցե փոփախուցված լինելու հարցում: Իսկ «մասնագիտական խորհրդատվության կենտրոնների» մասին պատկերացումը, մեր պարագայում, լավագույն դեպքում սահմանափակվում է կթության ծառայություն տրամադրող կառույցների գովազդով, իսկ կրթական կառույցները մրցունակության ապահովման և որակյալ կրթության տեսանկյունից միջազգային մակարդակով պատշաճ մակարդակի վրա չեն: Վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես ուսուցման մեթոդաբանության առումով Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը դեռևս վերափոխելու շատ բան ունի [4]:

\* Ներկայացվել է 23.05.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

րը մասնագիտական կրթության բոլոր մակարդակներին ներկայացնում են բոլորովին այլ պահանջներ: Կրթության որակի ապահովումն այսօր նշանակում է դրա համապատասխանեցումը միջազգային չափանիշներին՝ բավարարել անհատի պահանջները ու հասարակության, պետության, արտադրության պահանջները:

Ժամանակակից գործատուն հետաքրքրված է այնպիսի աշխատողով, ով ունի քննադատական և ստեղծագործական մտածողություն, կարող է աշխատել ինքնուրույն և լուծել բազմաբնույթ խնդիրներ: Բացի այդ, ժամանակակից մասնագետը պետք է ունենա որոշակի անհատական որակներ, մասնավորապես կարողանա՝

- գործել փոփոխվող իրավիճակներում, ինքնուրույն հարստացնել գիտելիքները, դրանք օգտագործել պրակտիկ խնդիրների լուծման ժամանակ,
- մտածել քննադատորեն և ստեղծագործաբար, տեսնել ծագող ռիսկները և որոնել հաղթահարման արդյունավետ ճանապարհներ,
- օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները, աշխատել տեղեկատվության հետ,
- աշխատել ինքնակատարելագործման ուղղությամբ և այլն:

Ակնհայտ է, որ լուր մասնագիտական գիտելիքների վրա հիմնված կրթության համակարգը չի կարող կատարել ժամանակակից հասարակության պատվերը: Մասնագիտական կրթության տարբեր մակարդակներում մասնագետների պատրաստման որակի զննհատման հարցում գործում են բոլորովին նոր չափանիշներ: Մինչ այժմ ենթադրվում էր, որ եթե շրջանավարտը ցուցաբերում է փայլուն գիտելիքներ, ապա նրա մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձր է: Դա ճշմարիտ է, սակայն՝ մասնակիորեն: Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ միայն մասնագիտական գիտելիքները բավարար չեն մասնագիտական առաջընթաց գործունեության և հաջողության համար: Հաջողությունը կախված է գործընկերների հետ շփվել կարողություններից, մարդկանց համակարծիք դարձնելուց, իր անձը և մտքերը ճիշտ գովազդելուց: Հաճախ սոցիալական և մասնագիտական հաջողությունների հասնում են ոչ թե փայլուն գիտելիքներ դրսևորած շրջանավարտները, այլ նրանք, ովքեր ցուցաբերում են ակտիվություն հասարակական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ ոլորտներում: Կրթական գործընթացը այդ ոլորտներից մեկն է միայն: Այս դատողությունները հանգում են կրթական ծառայությունների այնպիսի մոդելի անհրաժեշտության, որը հնարավորություն կընձեռնի աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստմանը: Գերմանացի մանկավարժներն ունեն մասնագիտական կրթության որակավորման Schlüsselqualifikationen (բանալու հմտություն) բաղադրիչը, որը մեր իրականության մեջ հանդիպում ենք առանցքային հմտություններ անվանումով [5]:

Խոսելով աշխատաշուկայի և աշխատատեղի մասին, ամեն անգամ բախվում ենք գործատուների այնպիսի մոտեցման, որ աշխատատեղի նկարագիրը պահանջում է ոչ միայն մասնագիտական որակավորում, այլ նաև այնպիսի հմտություններ, ինչպիսիք են ճկունությունը, աշխատանքը թիմում և շփվելու կարողունակությունը: Այդ որակները, որպես մասնագիտական որակավորման համար բաղադրիչ, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մասնագիտական մանկավարժության մեջ առաջին անգամ պաշտոնապես շրջանառվել են գերմանացի գիտնական, տնտեսագետ Դիթեր Մերթենս կողմից, որը 1972 թ. ներառել է իր զեկույցում և 1974 թ. պաշտոնական ձևակերպել առանցքային հմտությունները [6]: Նա գտնում էր, որ մասնագիտական կրթությունը պետք է միտված լինի աշխատաշուկայի պահանջներին, այլ ոչ թե միայն առարկայական գիտելիքներին և փաստերի իմացությանը: Առանցքային հմտությունը նա անվանում էր այն կարողունակությունը, որը թերևս ուղիղ կապ չունի մասնագիտական պրակտիկայի հետ և վերաբերում էր տարբեր, այդ թվում՝ նաև ոչ կամխատեսելի իրավիճակներում աշխատողի կողմից ճկունության դրսևորմանը: Տեխնիկական գիտելիքները հնանում են շատ արագ, արժեզրկվում են նաև մասնագիտական գիտելիքները, որի արդյունքում հնանում է նաև մասնագետի որակավորումը: Կարևորելով անհատի համար մասնագիտական որակավորումը, Մերթենսը, որպես ավանդական կրթական ծրագրի այլընտրանք, առաջարկեց մշակել այնպիսիք, որոնցում նվազագույնի կհասցվեն զուտ առարկայական և տեղեկատվական նյութերը և կավելացվեն աշխատանքային գործունեության սկզբնական փուլում շրջանավարտ-մասնագետին լրացուցիչ ճկունություն տվող առանցքային հմտությունների իմացությունը: Առանցքային հմտությունները պետք է ծառայեն արդեն ստացած մասնագիտության ոլորտում արագ վերապատրաստման և վերաորակավորման նպատակին, ինչպես նաև հասարակության մեջ և աշխատաշուկայում անհատի դեպրոֆեսիոնալիզմի երևույթի բացակայությանը: «Դեպրոֆեսիոնալիզմը ի հայտ է գալիս ոչ միայն բարձր որակավորման մասնագիտությունների պահանջի նվազման, այլ նաև ստացած մասնագիտու-

թյան և որակավորման կորստով պայմանավորված: Ինչքան շատ են պահանջարկ չունեցող մասնագիտությունների տեր մարդիկ, այնքան բարձր է դեպրոֆեսիոնալիզմի ցուցանիշը» [7]: Բայց ամբողջ վտանգը դեռ դա չէ, ավելի վատն այն է, որ այդ երևույթը բացատրվում է ոչ միայն մասնագիտության և հմտությունների անհամապատասխանությամբ, այլ նաև, Կոչետովի բնորոշմամբ, «յունայեն մասնագետներ» կոչվող հասարակության շերտի ծագմամբ: «Լյունայեն»՝ գերմաներենից թարգմանությամբ նշանակում է ցնցոտի: Այս բառով որակում են աղքատ, անտուն մարդուն, իսկ ըստ Էֆրեմովայի «Ռուսաց լեզվի նոր բառարանի»՝ հասարակության մեջ, սոցիալական միջավայրում աշխատունակության օգտակարությունը կորցրած մասնագետ [8]: Ըստ Կոչետովի՝ այդ երևույթի «յունայեն» լինելը բացատրվում է ոչ թե աղքատությամբ կամ որակավորման բացակայությամբ, այլ անհատի որևէ կրթական հաստատությունում ստացած կեղծ կամ կորցրած որակավորմամբ: Գերմաներենից բառացի թարգմանությամբ առանցքային հմտությունը (Schlüsselqualifikation) բաղկացած է երկու բառերից՝ «բանալի-Schlüssel» և «որակավորում-Qualifikation»: Բանալի բառը որակավորման հետ միասին գործածելով հասկանում ենք այն «բանալին», որն անհատին օգնում է փոփոխվող, տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական պայմաններում կարողանալու մշտապես համապատասխանել մասնագիտության պահանջներին: Այս ամենի պատճառը կարելի է համարել տնտեսության գլոբալիզացիան, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը, աշխատանքային գործընթացի ամբողջականությունը, գիտելիքի արագ հնամալը: Չենց նման իրավիճակներում է, որ առանցքային հմտությունները պետք է անհատին օժանդակեն արդեն ունեցած գիտելիքները անհրաժեշտ մակարդակով դրսևորելու և ձևափոխելու գործընթացում:

Իսկ ինչ են հասկանում որակավորում ասելով:

Որակավորում ասելով ընդունված էր հասկանալ արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պատրաստակաժության աստիճանը [9]: Սակայն այն ունի իր ժամանակակից մեկնաբանությունը և գործածվում է ավելի լայն իմաստով:

Դրեզդենի Տեխնիկական համալսարանի մասնագիտական կրթության դոկտոր պրոֆեսոր Յան Դորթի մեկնաբանությամբ՝ որակավորումը անձի որոշակի մասնագիտական գործունեությամբ ուղղորդված անհատական դրսևորումն է:

Որակավորումը չի կարող համարվել մասնագիտական, եթե այն կիրառելի չէ մասնագիտական հմտությունների դրսևորման դեպքում: «Մասնագիտական կարողունակության տիրապետելը և որակավորման գործառնական ներդրումն անվանում ենք մասնագիտական կարողունակության հմտություն» [10]: Մեկ այլ ձևակերպմամբ՝ «Որակավորումն աշխատողի հավաքական ունակություններն են, որոնք բնութագրում են նրա մասնագիտական գիտելիքների և աշխատանքային հմտությունների այն չափաբաժինը, որին նա պետք է տիրապետի աշխատանքային գործունեության համար, կոնկրետ աշխատատեղի նկարագրին համապատասխան» [11]: Ահա այս մոտեցմամբ են բնութագրում բարձր կամ ցածր որակավորմամբ մասնագետներին: Մասնագիտության որակավորման բնութագրում նկարագրում է, թե ինչպիսի մասնագիտական առաջադրանքներ պետք է կարողանա կատարել աշխատողը, ինչ պետք է իմանա, ինչպիսի անձնային հատկություններ պետք է ունենա: Որպես որակավորման առաջին առանձնահատկություն, գերմանացի գիտնական Ս. Կեռստենը տեսնում է, առաջին՝ անձի հատկությունների դրսևորման սուբյեկտիվության, երկրորդ՝ կյանքի կոնկրետ իրավիճակներում, առաջադրանքի և գործունեության տիրապետման կիրառման մեջ: Սակայն դա պետք չէ միանշանակ հասկանալ որպես անձի հատկությունների դրսևորում կոնկրետ գործունեության շրջանակներում: Որակավորումը պետք է մարդուն հետագայում օգնի ստեղծված իրավիճակներում դրսևորել վարպետություն [12]: Որակավորում ասելով հասկանում ենք նաև անհատական ձեռք բերված հմտությունները, որոնց կիրառումը պայմանավորված է տարբեր իրավիճակներում մասնագիտական, հասարակական և անձնական պահանջներով [13]: Որակավորման վերոնշյալ սահմանումները հնարավորություն են տալիս ձևակերպել առավել ընդհանրական տեսքով, որը առավել բնութագրական է առանցքային հմտությունների համար: *Որակավորումը իմացության, կարողունակության, վերաբերմունքի և արժևորման ամբողջություն է, որն անպայմանորեն պետք է դրսևորվի անհատի կողմից մասնագիտական գործունեության ընթացքում:*

Գերմանական մասնագիտական գրականության մեջ «Բանալու որակավորումը» (Schlüsselqualifikation) շատ հաճախ կարելի է համոզվել նաև «բանալու հմտություններ» (Schlüsselkompetenz) կամ «փափուկ հմտություններ» (Soft Skills) անվանմամբ: Դա բացատրվում է նրանով, որ անտրամաբանական է որակավորումը տարանջատել հմտությունից, նրանցից միայն մեկը աշխա-

տաշուկայում անհատի համար չի կարող ապահովել մասնագիտական զբաղվածության հաջողություն: Ակնհայտ է, որ առանցքային հմտությունները անհատի աշխատունակ լինելն է (Employability): Հմտությունների առկայությունը անհատին օգնում է ոչ միայն աշխատաշուկայում մասնագիտական ինքնիրացման հարցը լուծել, այլև նրան դարձնում աշխատաշուկայից անկախ առավելագույն չափով:

Այսպիսով, երիտասարդ մասնագետից ժամանակակից աշխատաշուկայում ակնկալում է ոչ միայն կրթության վկայական, այլ նաև մասնագիտական կարողունակություն և աշխատանքային հմտություն, իսկ կթական հատատություններից՝ որակավորված մասնագետներ: Այս մոտեցումը կրթական հաստատություններին պարտավորեցնում է ընդունել, որ մասնագիտական աշխատանքային կարողունակությունն ու հմտությունն ամբողջականություն է, որը ձեռք է բերվում ոչ թե աշխատանքային պրակտիկայում տարիների ընթացքում, այլ հիմնականում ուսումնառության տարիներին, որի բաղկացուցիչ մաս է նաև աշխատանքային պրակտիկան: Ըստ Դիթեր Մերթենսի՝ որակավորումն ունի օբյեկտիվ նշանակություն, իսկ հմտությունը բացառապես անհատի կողմից դրսևորվող առանձնահատկություն է: Որակավորման և հմտությունների նույնականացման վառ օրակարգը է նաև «բանալու որակավորման (Schlüsselqualifikation)՝ գերմաներենից՝ հայերեն, որպես առանցքային հմտություններ, թարգմանությունը: Այսպիսով, առանցքային հմտություններ ասելով հասկանում ենք ոչ թե մասնագիտական հմտություններ, այլ մասնագետի հարմարման ընդունակությունը և մասնագիտական հմտությունների դրսևորումը:

Ըստ Մերթենսի՝ առանցքային հմտությունները կազմված են չորս բաղադրիչներից՝

- **բազային որակավորում** – տրամաբանական, կառուցվածքային, իմաստային մտածողության ընդունակություն, երբ անհատն ի վիճակի է իր ունեցած հմտությունները գործածել տարբեր իրավիճակներում:

- **Չորիզոնական որակավորում** – տեղեկատվության տիրապետում և յուրացում՝ յուրացված տեղեկատվությունը արդյունավետ օգտագործելու, անհրաժեշտ տեղեկույթը ընտրելու, մշակելու, հասկանալու, օգտագործելու և նպատակին ծառայեցնելու կարողություն:

- **Լայնիմաստ տարր** – մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ և տարբեր իրավիճակներում կիրառելի ընդհանուր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

- **Վինտաժի (նորոգման) գործոն** – որի օգ-

նությամբ հնարավոր է դառնում տարբեր սերնդի մասնագետների գիտելիքների լրացումը: Օրինակ՝ եթե օտար լեզվի կամ համակարգչի իմացությունը այսօր ուսուցվում է դպրոցներում, ապա ավագ սերնդի համար այդ գիտելիքների ձեռք բերումը պետք է հնարավոր լինի վերապատրաստման միջոցով: Նման դասընթացը համարում են վինտաժի գործոն [14]:

Մերթենսի կողմից ներկայացված առանցքային հմտությունները շատ ընդհանրական են, և այս ձևաչափի մեջ մասնագետի անհատական հմտությունները հաշվառված չեն ու որևէ դեր չեն խաղում: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ աշխատանքային տեղի բնութագրում բացի մասնագիտական հմտություններից և հիմնարար գիտելիքներից առանձնահատուկ նշանակություն է տրվում նաև անհատական ընդունակություններին, քանի որ գործատուն կարիք ունի այնպիսի աշխատողի, որը մասնագիտական հմտություններից գատ կարող է նաև մրցակցության պարագայում զգալի առավելություն դրսևորել: Այդ նպատակով էլ մասնագիտական կրթությունը ապագա մասնագետի համար պետք է ապահովի մասնագիտական աշխատունակություն, անհատի ամբողջական ձևավորման և զարգացման հնարավորություն: Հետագայում Մերթենսի առաջարկած առանցքային հմտությունների բաղադրիչները առանձին հետազոտողների կողմից ստորադասվել և մանրամասնվել են, առանցքային հմտությունները՝ ձևակերպվել տարբեր իմաստային բնութագրիչներով: Մեր կողմից առավել հետաքրքիր է համարվել Մյունխենի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Անդրեա Շելթենի թվարկած առանցքային հմտությունների նկարագիրը [15], որը, ի տարբերություն Մերթենսի առանցքային հմտությունների ընդհանրացված ձևակերպման, ներկայացվում է մասնագետից պահանջվող այն բոլոր սպասելիքները, որոնք ակնկալում է ժամանակակից գործատուն (տե՛ս աղյուսակ):

Նկատի ունենալով, որ առանցքային հմտությունների տիրապետման նպատակը աշխատաշուկայում պահանջված մասնագետ դառնալն է և աշխատանքային կարիերայի հաջող զարգացումը, ներկայացնենք մասնագիտական կրթության արդյունքում ստացած գիտելիքների համալիրը, որի շնորհիվ ձեռք է բերվում աշխատանքային հմտությունը:

Աշխատանքային հմտության բաղադրիչներն են՝ առարկայական, մեթոդական, սոցիալական: Առարկայական բաղադրիչը աշխատանքային հմտության համար տեղեկատվության տիրա-

Աղյուսակ

N	Ընդունակությունների և կարողությունների խմբավորում	Առանցքային հմտություններ
1	Ընդհանուր գիտելիքներ, ընդունակություններ և հմտություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Խոսքի մշակույթ</li> <li>• Օտար լեզուների իմացություն</li> <li>• Ընդհանուր տեխնիկական և տնտեսագիտական կրթություն</li> </ul>
2	Ընդհանուր մասնագիտական աշխատանքային գիտելիքներ	<p>Պրակտիկ կարողություններ և հմտություններ աշխատանքային ոլորտի համար</p> <ul style="list-style-type: none"> <li>• տեխնիկական փաստաթղթեր կարդալու և հասկանալու կարողություն</li> <li>• տեխնիկայի և տեխնոլոգիայի դիագնոստիկա</li> <li>• աշխատանքային անվտանգության և առողջության պահպանում</li> </ul>
3	Իմացական ընդունակություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնագիտական կարողությունը և հմտությունը աշխատանքի մի ոլորտից մյուսը տեղափոխելու ընդունակություն</li> <li>• Ինքնուրույն մտածողություն</li> <li>• Քննադատական մոտեցում</li> <li>• Տեխնիկական մտածողություն</li> <li>• Ինքնազնադատման ընդունակություն</li> <li>• Ստեղծագործական մտածողություն</li> </ul>
4	Հոգեշարժական ընդունակություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Համակարգման ընդունակություններ</li> <li>• Ռեակցիայի արագություն</li> <li>• Ձեռքի հմտություն</li> <li>• Ուշադրության կենտրոնացման կարողություն</li> <li>• Դիմացկունություն</li> </ul>
5	Անհատական առանձնահատկություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Վստահելի</li> <li>• Ձգտում աշխատանքի որակի ապահովման</li> <li>• Պատասխանատվություն</li> <li>• Բարեխղճություն</li> <li>• Ինքնուրույնություն</li> <li>• Մոտիվացված ձեռքբերումով</li> </ul>
6	Սոցիալական ընդունակություններ (դրսևորվում են խմբում կամ խմբակային աշխատանքում)	<ul style="list-style-type: none"> <li>• Համագործակցելու պատրաստակամություն</li> <li>• Ծանոթություն ստեղծելու հմտություն</li> <li>• Անկեղծություն</li> <li>• Շփվելու ընդունակություն</li> </ul>

պետման պարտադիր պայման է, մեթոդական բաղադրիչը՝ աշխատանքային գործունեության սուբյեկտիվ հնարավորություն, որն իր մեջ ներառում է նաև «աշխատել կարողանալու» անհրաժեշտությունը: Սոցիալական բաղադրիչը աշխատանքային գործունեության ընթացքի համար սուբյեկտիվ անհրաժեշտություն է, որն օգնում է սոցիալական հարաբերությունների դրսևորմանը [16]:

Այսպիսով՝

1. քանի դեռ մասնագետների պատրաստման չափանիշը կրթական ծառայությունների և նրանց սպառողների համար համարվելու է միայն ուսման առաջադիմությունը, չենք կարող խոսել մասնագետների և նրանց պատրաստող կրթական ծառայությունների որակի ցուցանիշների մասին,
2. անհրաժեշտ է կրթական ծառայություններ

տրամադրողների և նրանց սպառողների ուշադրությունը հրավիրել առանցքային հմտություններ ապահովող կրթության որակի և մասնագիտական որակավորման վրա,

3. որպեսզի իրականում լուծվի մասնագիտական կրթության առջև դրված որակի ապահովման նոր չափանիշների խնդիրը, անհրաժեշտ է մասնագիտական կրթության համար գիտելիքի որակի չափանիշից բացի ներդնել նաև առանցքային հմտությունների որակի չափանիշ,

4. մասնագետի աշխատաշուկայում մրցունակ լինելու համար այլևս բավարար չեն միայն մասնագիտական գիտելիքները և հմտությունները. շուկայական տնտեսությունը յուրաքանչյուր աշխատողից պահանջում է առանցքային հմտություններ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Rolf A.** Betriebspädagogik. Berlin: Erich Schmidt 1990, Band 31 S. 84.
2. **Jezerich W.:** Top-aufgabe: Die Entwicklung von Organisationen und Menschlichen Ressourcen mit Literaturhinweisen. Münche, Wien: Hanser 1988, Band 8, S. 34.
3. Մարդկային զարգացման զեկույց, միգրացիա և մարդկային զարգացում, հնարավորություններ և մարտահրավերներ: 2009, էջ 132:
4. Կրթական վերափոխումները Հայաստանում, ՄՁԱԾ 2006, Երևան, էջ 21-22:
5. ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևաչափերը հաստատելու մասին»: 09.11.2011թ.:
6. [http://de.wikipedia.org/wiki/Dieter\\_Mertens\\_\(Volkswirt\)](http://de.wikipedia.org/wiki/Dieter_Mertens_(Volkswirt))
7. **Ա. Ն. Կոչետով,** Մասնագիտական կրթություն և աշխատաշուկա. փոխազդեցության խնդիրները, 2010, էջ 85:
8. <http://www.classes.ru/all-russian/russian-dictionary-Efremova.htm>
9. [http://ru.wikipedia.org/wiki/валификация\\_\(Образование\)](http://ru.wikipedia.org/wiki/валификация_(Образование)).
10. Hortsch Merkblätter, 2006, TU Dresden. S. 15.
11. **И. Шамалова.** “валификация” Социология труда. Теоретико-прикладной толковый словарь /Отв. Ред. В.А.Ядов, СПб., “Наука”, 2006, с. 107.
12. **St. Kersten.** “Berufsübergreifende Qualifikation für die Urteilsbildung und das Entscheidungsverhalten von Facharbeitern und Komsrquenyen für ihre Entwicklung in der berufsbildung” Frankfurt am Main 1995, s. 41.
13. **Deutscher Bildungsrat,** Empfehlungen der Bildungskommission für Neuordnung der Sekundarstufe II, 2005, s. 3.
14. Schlüsselqualifikationen. In Mitteilung aus Arbeitsmarkt und Berufsforschung, heft 7, 1974, s. 36 ff., 1974.
15. **H. Hortsch,** Didaktik der Berufsbildung, Merkblätter, 2006, Dresden, s. 15.
16. **Schelten A.** Einführung in die Berufspädagogik. Stuttgart, 1991, s. 145-159.

## NEW APPROACHES TO PROFESSIONAL EDUCATION

**MARGARITA MATEVOSYAN**

## Summary

New Approaches of professional education are presented briefly in the article, as well the issues of professional competitiveness in the context of modern educational specialty and labor market's new requirements.

## ВЛИЯНИЕ ПЕДАГОГИЧЕСКОЙ СИСТЕМЫ ФРИДРИХА ФРЕБЕЛЯ НА РАЗВИТИЕ ДОШКОЛЬНОГО ДЕЛА В АРМЕНИИ В XIX ВЕКЕ\*

**Тигрануи АКОПЯН**  
*ЕГУ, кафедра педагогики*



**Д**ошкольная педагогическая система немецкого педагога Фридриха Фребеля оказала огромное влияние на развитие дошкольного дела во многих странах мира в XIX веке. По образцу фребелевского

детского сада были организованы первые детские сады в Швейцарии, Финляндии, России, Америке, Англии, Израиле и даже в далекой Японии. По этому же образцу были созданы детские сады и в Закавказье, в частности – в Армении. В данной статье мы попытаемся показать, что армянская дошкольная педагогика – это та сфера, которая, как и дошкольная педагогика многих стран мира, подверглась влиянию педагогической системы Ф. Фребеля. В данной статье мы представим аргументы в пользу того, что детские сады европейского типа в Армении появились приблизительно в то же самое время, что и в России, а поэтому подвергнуться влиянию русской дошкольной педагогики они не могли, тем более, что сами детские сады в России во второй половине 19-ого века несли на себе печать глубокого влияния педагогической системы Ф. Фребеля.

Как мы знаем, в России первые детсады были открыты немками или русскими педагогами, обучавшимися в Германии. Подобное происходило и в Армении. Пионерами дошкольного дела в Восточной Армении, основателями первых армянских детских садов были педагоги Софья Бабаян и Гаянэ Оганнисян, также прошедшие курсы по подготовке садовниц (воспитательниц) в Германии и Швейцарии и изучившие там

в совершенстве педагогическую систему Ф. Фребеля. Вернувшись из-за границы Софья Бабаян вместе с мужем открыли семейный детский сад по системе Фребеля, а в 1880 году ими было основано «Фребелевское общество», благодаря которому в 1882 г. в Тифлисе открылся первый армянский народный детский сад, где руководство было поручено Гаянэ Оганнисян. В 1886 году в Тифлисе открывает фребелевский детский сад Софья Аргутян, которая училась на фребелевских курсах в Петербурге<sup>1</sup>.

Конечно, платные детские сады в Закавказье открывались и раньше. В частности, в 1868 году попечитель Кавказского учебного округа разрешил открытие платного детского сада в г. Тифлисе Э. Жабо и учителю Лавренко, а в 1870 году русский педагог А. С. Симонович открыла платный детский сад и элементарную школу, которые просуществовали до 1874 года<sup>2</sup>. Там воспитывалось и обучалось 60 детей в возрасте от 4 до 14 лет – грузин, армян, русских. Плату за обучение детей бедных родителей вносили благотворительные организации. В детском саду и элементарной школе в качестве помощников А. С. Симонович работали три педагога, которые хорошо знали местные языки и национальные особенности быта жителей Тбилиси. Разнообразные игры, занятия, начатки труда, проводившиеся в детском саду, давали детям общее развитие, подготовляли к обучению в школе. Детский сад и элементарная школа пользовались хорошей репутацией. Но нам бы хотелось обратить внимание на то, что А. Симонович являлась педагогом, также прошедшим курс обучения по подготовке садовниц в Европе и основавшим детский сад в Санкт-Петербурге в 1866 г. по системе Фребеля.

Армянские педагоги открывали детские

\* Ներկայացվել է 30.05.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

сады как в Армении, так и в армянонаселенных городах Закавказья и России. Доподлинно известно, что первый детский сад в Ереване основала Гаянэ Оганнисян-Матакян в 1883 г., а в Александрополе детский сад был открыт ученицей Софьи Бабаян – Натальей Оганнисян (по мужу Тер-Мартиросянц). В национальном архиве Армении хранится письмо священника Саака Тер-Погосянца об открытии армянского детского сада в Нухи (Азербайджан)<sup>3</sup>. Известным армянским писателем Р. Патканяном и его женой был основан армянский детский сад в Новом Нахичеване (Ростов на Дону) в 1879 г. Особо хотим отметить, что хотя наши педагоги и следовали основам фребелевской системы дошкольного воспитания, но, как истинные педагоги-патриоты, учитывали собственную культуру, традиции, веру, национальные особенности и условия, которые диктовала современная действительность. «...Мы окончили Фребелевские курсы и разъезжая по разным странам, изучая все системы Детских садов, выработали свою собственную систему, имея в виду наши условия жизни...», - писала Софья Аргутян в своей статье «Детские сады за границей»<sup>4</sup>. Говоря о невозможности слепого применения фребелевской системы к армянским детям, она продолжала: «...Все системы, как системы хороши, но каждая садовница, прекрасно изучив все системы известных педагогов как Фребеля, Монтессора и других должна на основании этих систем составить свою собственную систему, чтобы не быть слепой последовательницей одной какой либо системы, которая может повредить и детям и себе. Надо учесть, когда, в какое время, при каких условиях обрабатывались та или другая система.

Самая главная система – Ближе подойти к детям и хорошо наблюдая все их действия, изучить, знать своих детей»<sup>5</sup>.

Влияние немецкой дошкольной педагогики можно проследить и в сочинении известного армянского педагога Аракела Багатряна «Цветник или детский сад», написанном в 1882 г. в поддержку организации и распространения детских садов. Не забудем отметить, что А. Багатрян также получил высшее педагогическое образование в Германии<sup>6</sup>. В своей работе, как отмечает сам Аракел Багатрян, он пользовался исследованиями Б. Марнгольц, а баронесса Марнгольц, как пишет К. Д. Ушинский, - это «...самая пламенная последовательница Фребеля и его непосредственная ученица, посвятившая и всю свою жизнь и все свое имущество идее детских садов»<sup>7</sup>. Б.

Марнгольц, пишет дальше К. Д. Ушинский, руководила образцовым детским садом в Берлине, также читала лекции по дошкольной педагогике по методике Фребеля и вела курсы по подготовке воспитательниц (садовниц). Таким образом, мы можем смело утверждать, что Аракел Багатрян был знаком с педагогической системой Ф. Фребеля не только потому, что он учился в 1874-1876 гг. в Германии, но и через труды ученицы Фребеля Б. Марнгольц.

Другой известный армянский педагог Исаак Арутюнян, являющийся одним из основателей экспериментальной педагогики в Армении и автором многочисленных педагогических статей, методических пособий и обучающих программ, издавший в 1901 году в Тифлисе книгу «Цветник», где были затронуты важнейшие вопросы по дошкольному воспитанию и образованию, также высшее педагогическое и философское образование получил в Германии.

Из вышесказанного можно сделать вывод, что многие армянские педагоги, занимавшиеся организацией и основанием детских садов в самой Армении и армянонаселенных городах других государств (Грузия, Азербайджан, Турция, Россия, Иран, Египет), а также педагоги, которые своими теоретическими публикациями и практическими действиями помогали развитию дошкольного дела в Армении, непосредственно свое высшее педагогическое образование получили в Европе, в частности в Германии, были знакомы с педагогической системой Ф. Фребеля и понимали важнейшее значение детских садов европейского типа.

Также мы обязаны отметить, что несмотря на то, что культурным центром восточных армян в 19-ом веке был Тифлис и первые армянские детские сады европейского типа были открыты на грузинской земле, в Тифлисе, однако они были чисто армянскими с армянскими педагогами-основателями, воспитателями и методистами.

Что касается Западной Армении, то здесь ситуация сложнее. Мы знаем, что фребелевские идеи проникли в Западную Армению благодаря Гаяне Оганнисян, которая после основания детского сада в Ереване отправилась в Константинополь и основала там детский сад фребелевского типа для соотечественников и тем самым открыла новую страницу в истории развития дошкольного воспитания и образования в Западной Армении. Но мы особо хотим отметить, что детские сады, называемые «цветниками», существовали в Западной Армении гораздо раньше, чем детские сады европейского типа. Данные о «цветниках» нем-

ногочисленны и вполне объективные причины осложняют нашу задачу по изучению детских садов в Западной Армении: отсутствие архивных материалов, уничтоженных во время и после геноцида армян, невозможность пользоваться теми данными, что сохранились, но находятся в недружественном государстве. Для детских садов европейского типа в Армении уже была подготовлена почва. Наша убежденность основывается на статье Александра Ерицяна (1841-1902), известного армянского ученого, историка, филолога, археолога и общественного деятеля, служившего в 1877-78 гг. во время русско-турецкой войны порученцем по особым делам при М. Лорис-Меликове и Б. Шелковникове. Вместе с русскими войсками он отправился в Западную Армению, был в Карине, скурпулезно исследовал область Верхнего Айка. Вернувшись на Кавказ он опубликовал множество своих исследований. Но нас интересует его единственная статья о детских садах в Армении, опубликованная в 1891 г. в тифлисском еженедельнике «Ардзаганк», №39. В данной статье он описывает посещение им в 1878 г. одного из детских садов в Эрзеруме, основанного, по словам управляющего, аж в 1861 г. (Параллельно отметим, что первый русский детский сад открылся в Петербурге в 1863 г.). В этом детском саду было около 120 детей 4, 5 и 6 лет. А. Д. Ерицян в этой статье пишет о давней традиции армян собирать детей 5 - 6 лет в школах и заниматься с ними отдельно. Он отмечает, что практика дошкольных учреждений – «цветников» в Армении существовала гораздо раньше фребелевских детских садов. И назване «цветник» известный ученый считал более подходящим для этого явления, чем переведенное слово в слово с европейского «детский сад». Затем он пишет о том, как многое, что было известно и применяемо на Востоке с давних времен, затем приходило с Запада в виде нового открытия; так же и случилось с идеей дошкольного образования. Он пишет, что посещал этот детский сад несколько раз, описывает зал, где дети обучались пению, учили армянский алфавит, описывает свою беседу с управляющим детского сада и т.д. «Наконец я должен вспомнить ту прекрасную действительность, что «цветник» имел нанятого простого человека, мастера, который утром, как пастух, кружа из квартала в квартал, собирал и приводил детей в детский сад, а затем по очереди и безопасно отводил их по домам»<sup>8</sup>. Армянский историк также отмечает, что «цветники» были очень распрос-

транены у западных армян.

В «Национальной конституции» Западной Армении 1860 года в разделе о «всеобщем национальном воспитании» отдельными пунктами отмечено: «...элементарная (նիւթալրրիւթան) школа имеет «цветник» (ծաղկոց) (2 года) и начальную школу (շարժարան) (4 года)...» и дальше «Цветник посещают и девочки и мальчики шести лет. После этого ученик может поступить в начальную школу»<sup>9</sup>. В Западной Армении детские сады-«цветники» открывались в основном при школах, являясь предварительной ступенью начального школьного образования. Сведения о детских садах Западной Армении немногочисленны, но мы знаем о «цветниках» Эрзерума, Ерзнка, Константинополя, Вана, Салмаста, Измира и т. д. Например, школа св. Креста в Константинополе имела «цветник» для 4-7-летних мальчиков и девочек, которые к 8-ми годам поступали в начальную школу. И именно на основе этого цветника Гаяне Оганнисян организовала фребелевский детский сад с новой методикой воспитания и образования. Применяя фребелевскую систему в детских садах в Константинополе, Г. Оганнисян «разбудила» спящие цветники и вела там плодотворную, яркую и активную работу.

Фактически, детские сады фребелевского типа, основанные во второй половине 19-го века в Армении (как в Восточной, так и Западной), явились переходным звеном между старым и новым, между армянскими дошкольными учреждениями – «цветниками» и современными детскими садами. Они сыграли важнейшую положительную роль для последующего развития дошкольной педагогики в Армении.

#### ЛИТЕРАТУРЫ

1. **Հարությունյան Ա. Ա.**, Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարսկզբին, Եր., Հոգևոր Հայաստան, 2005:
2. **Հարությունյան Ն. Կ., Առաքել Բահաթրյան:** Կյանքը և գործը, Եր., Եր համալս. հրատ., 1992:
3. **Շավարշյան Ա. Մ.**, Հայ մանկավարժներ (XIX-XX դդ.), գիրք Բ, Եր., Հայպետտունամկհրատ, 1961:
4. **Միննյան Յ. Ռ.**, Հայ մանկավարժության պատմություն (19-20-րդ դարեր), Եր., Արմավիրի «Արարատ» համալսարան, 2000:
5. **Ушинский .Д.**, Педагогические сочинения в 6-ти томах, т. 2, М., Педагогика, 1988.
6. **Чувашев И.В.**, Очерки по истории дошкольного воспитания в России, М., Учпедгиз, 1955.
7. Հայաստանի ազգային արխիվ, Սահակ քահանա Տեր-Պողոսեանց, Մանկական պարտիզը Նուխիում, ձեռագիր, ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 130:

8. Национальный архив Армении, фонд 466, опись 1, дело 5, С.В. Аргутян, Детские сады за границей.
9. **Ալ. Երիցյանց**, Ծաղկոցները Հայաստանում, Թիֆլիս, «Արծազանք», 1891, N39:
- <sup>1</sup> Более подробно с педагогической деятельностью С. Бабаян, Г. Оганнисян, С. Аргутян можно познаться в след. трудах: **Շավարշյան Ա. Մ.**, Հայ մանկավարժներ (XIX-XX դդ.), գիրք Բ, Եր., Հայպետունամանկիրատ, 1961; **Սիմոնյան Յ. Ռ.**, Հայ մանկավարժության պատմություն (19-20-րդ դարեր), Եր., «Արարատ» համալսարան, 2000, էջ 159-166; **Կարապետյան Մ.**, Հայ նախադպրոցական մանկավարժության սկզբնավորումն ու զարգացումը 19-րդ դարի 2-րդ կեսին (թեկն. ատենախոս.), Եր., 2001; **Հարությունյան Ա. Ա.**, Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին, Եր., Հոգևոր Հայաստան, 2005:
- <sup>2</sup> **Цувашев И. В.**, Очерки по истории дошкольного воспитания в России, М., Учпедгиз, 1955, с. 164 (Источники - Центральный исторический архив Гр-зуси, дело 447, фонд 107, серия Б, лист 57. Список учебных заведений Кавказского учебного округа за 1872 г.).
- <sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ, Սահակ քահանա Տեր-Պողոսյանցի թղթավարությունից Նուխիում մանկապարտեզ բացելու մասին, ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 130, էջ 39-42:
- <sup>4</sup> Национальный архив Армении, фонд 466, опись 1, дело 5, С.В. Аргутян, «Детские сады за границей», с. 3.
- <sup>5</sup> Там же, с.7-8.
- <sup>6</sup> Более подробно с педагогическими взглядами А. Багратяна можно познакомиться в книге Н. К. Арутюнян «Аракед Багратян (Жизнь и дело)», Ер., ЕГУ, 1992.
- <sup>7</sup> **Սիմոնյան Յ. Ռ.**, Педагогические сочинения в шести томах, т. 2, М., «Педагогика», 1988, с. 309.
- <sup>8</sup> **Ալ. Երիցյան**, Մանկապարտեզները Հայաստանում, «Արծազանք» շաբաթաթերթ, 1891, N 39:
- <sup>9</sup> **Սիմոնյան Յ. Ռ.**, Հայ մանկավարժության պատմություն (19-20-րդ դարեր), Եր., Արմավիրի «Արարատ» համալս., 2000, էջ 66:

Ֆ. ՖՐԵՆԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

### ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է Ֆ. Ֆրեդելի մանկավարժական համակարգի ազդեցությունը Հայաստանում նախադպրոցական մանկավարժության զարգացման վրա 19-րդ դարում: Հայ մանկավարժները, ուսանելով Գերմանիայում և եվրոպական այլ երկրներում, սովորելով Ֆրեդելի նախադպրոցական դաստիարակության և կրթության համակարգը, վերադարձան հայրենիք և հիմնեցին եվրոպական տիպի մանկապարտեզներ: Ֆրեդելյան այդ մանկապարտեզները մեծ դեր ունեցան Հայաստանում նախադպրոցական մանկավարժության հետագա զարգացման գործում: Դրանք միջանկյալ օղակ հանդիսացան հին հայկական նախադպրոցական հաստատությունների՝ «ծաղկոցների» և ժամանակակից մանկապարտեզների միջև:

THE INFLUENCE OF FREBEL'S PEDAGOGICAL SYSTEM ON THE DEVELOPMENT OF THE PRE-SCHOOL EDUCATION IN ARMENIA IN XIX CENTURY

### TIGRANUHI HAKOBYAN

Summary

This paper presents the influence of Frebel's pedagogical system on the development of the pre-school education in Armenia in XIX century. The Armenian pedagogues studying in Germany and other European countries and learning the pre-school education system of Frebel came back to their homeland and established kindergartens in European model. These kindergartens played an important role in further development of pre-school pedagogics in Armenia. They were transitional links between the old Armenian pre-school institutions "flower gardens" and the modern kindergartens.

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\*

## ԱՆՆԱ ՆԱՍԻՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

**Ատենախոսության թեման՝** Սովորողների ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրները առողջ ապրելակերպի ձևավորման համատեքստում

**Գիտական ղեկավար՝** Վանդոս ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**Յ**ուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտի ազգային անվտանգության խնդիրներից է բնակչության առողջ ապրելակերպի ապահովումը: Այս հարցն առանձնապես արդիական է կրթական համակարգի համար, քանի որ վերջին տարիներին սովորողների առողջության հետազոտման վիճակագրական տվյալները վկայում են ոչ բարենպաստ իրավիճակի մասին:

Երիտասարդների ավելի մեծ մասն է վաղ տարիքում սկսում ծխել, օգտագործել ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ և առողջության համար վնասակար այլ նյութեր: Դպրոցում տրվող թերի գիտելիքները պատճառ են դառնում երիտասարդների ֆիզիկական և հոգևոր արատների, առողջության համար վնասակար սովորույթների տարածման, սեռական կյանքին անպատրաստվածության, չպաշտպանված սեռական հարաբերությունների, սեռավարակների (մասնավորապես՝ ՄԻՎ/ՉԻՎ-ի տարածման, ինչպես նաև անցանկալի հղիությունների)»: Երիտասարդության առողջ ապրելակերպի խնդիրը միշտ էլ եղել է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական մանկավարժների, հոգեբանների, սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Առանձնապես զգալի աշխատանքներ են կատարվել ֆիզիկական դաստիարակության մասնագետների կողմից: Ֆիզի-

կական կուլտուրայի միջոցով առողջ ապրելակերպի ձևավորման են անդրադարձել Լ. Ֆերրոին, Լ. Լուրյեն, Յ. Հայզինգան, Վ. Ռևոն, Բ. Լանդան, Յու. Իոակիմիժին, Է. Վայները, Ե. Ֆեդորենկոն, Ս. Ջարեցկայան, Ռ. Կուրաշևը, Ա. Վիրաբովան, Տ. Սիլանտևան, Մ. Վիլենսկին, Վ. Բարանովը:

Առողջ ապրելակերպի հիմնախնդիրներին են անդրադարձել նաև ֆիզիկական դաստիարակության մի շարք հայ մասնագետներ, մասնավորապես՝ Ֆ. Ղազարյանը, Ռ. Սելիքսեթյանը, Վ. Ղարաբոյաջյանը և ուրիշներ:

Յոդվածում ներկայացված է ֆիզիկական կուլտուրայի միջոցով առողջ ապրելակերպի ձևավորման և կառավարման համակարգ, որը նախատեսում է սովորողների ուսումնական ամբողջ ընթացքի (դպրոց, բուհ) ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության շարունակական գործընթաց, ինչը պետք է նպաստի առողջ ապրելակերպի ձևավորմանը և դրա պահպանմանը: Հաշվի առնելով այս գործընթացի շարունակականությունը՝ առաջ են մղվում անընդհատ վերահսկման և արդյունավետության գնահատման հիմնախնդիրներ, որոնց իրականացման համար ատենախոսության տեսական մասում առաջարկում ենք հաշվառման մի շարք փաստաթղթերի ձևեր՝ «Ֆիզիկական կուլտուրայի միջոցով սովորողների առողջության շարունակական գնահատման փաստաթղթերի փաթեթ»: Այս փաթեթը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1. Սովորողների առողջության ցուցանիշների գնահատման փաստաթղթերի փաթեթի տիտղոսային էջ:

\* Ներկայացվել է 11.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

2. Սովորողների առողջության անձնագիր:

3. Սովորողների ֆիզիկական զարգացման ցուցանիշների գնահատման քարտ:

4. Սովորողի առողջ ապրելակերպի վերաբերյալ եզրակացություններ:

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջարկում ենք սովորողների ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի կառավարման գործընթացին ներկայացվող հետևյալ պահանջները:

1. Յուրաքանչյուր կրթական հաստատությունում ղեկավարության կողմից առողջ ապրելակերպի հայեցակարգի մշակում և ընդունում՝ առանձին մշտնջենքի ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության անելիքները և պատասխանատու մանկավարժի պարտավորությունները (կարող է ձևակերպվի որպես տնօրենի հրահանգ):

2. Առաջարկված փաստաթղթերի փաթեթն ընդունել որպես այս գործընթացի հիմք՝ մշակելով մանկավարժական կուլտիվից որևէ մեկին որպես ամբողջ գործընթացի պատասխանատու անձ (դասուցի, ֆիզդաստիարակ և այլն):

3. Յուրաքանչյուր կրթական հաստատության առաջարկվում է ընտրել և հիմնավորել այս գործընթացի տարիքային սահմանները (որ դասարանից սկսել պաշտոնական գնահատումը): Առաջարկում ենք այն սկսել կրտսեր դասարաններից:

Բուհական համակարգում առաջարկում ենք ավարտել գնահատումը ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության առարկաների ավարտի հետ (բացի ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության մասնագիտություններից, որտեղ այն կարող է շարունակվել մինչև ուսուցման ավարտը):

4. Փաստաթղթերի փաթեթի տիտղոսային էջը լրացնում են համապատասխան անձինք:

5. Սովորողների առողջության վերաբերյալ համապատասխան եզրակացություններ կատարելու համար անհրաժեշտ է բացահայտել նրանց ֆիզիկական զարգացման ցուցանիշները և այդ ցուցանիշների դինամիկան (շարժը), որի համար առաջարկում ենք օգտագործել գնահատման քարտեր: Գնահատման քարտի դրական դինամիկան կարող է վկայել ֆիզիկական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի ձևավորման ճիշտ ընտրած մոդելի մասին, հակառակ դեպքում պետք է վերանայել քարտում նախատեսված և ֆիզիկական պատրաստվածության ու հոգեբանական վարժանքների ծրագիրը:

6. Որպես ֆիզիկական զարգացման ցուցանիշ՝ նախատեսված են ֆիզիկական պատրաստվածության և հոգեբանական իրավիճակների տվյալները, որոնք պետք է գնահատվեն և գրանցվեն համապատասխան փաստաթղթում:

Որպես ֆիզիկական պատրաստվածության ցուցանիշներ՝ առաջարկում ենք ցատկերը, ուժային վարժությունները, վազքը և խաղերը: Առաջին երեք ձևերը կարելի է գրանցել կոնկրետ ցուցանիշներով, իսկ խաղերի գրանցման համար խորհուրդ ենք տալիս մշտնջենքի և մրցույթի մեջ զբաղեցրած տեղը: Յուրաքանչյուր կրթական հաստատության ֆիզիկական դաստիարակության մասնագետը ամեն մի տարիքային խմբի համար պետք է մշակի ֆիզիկական դաստիարակության ձևերի անցկացման պայմանները և ցուցանիշների թույլատրելի սահմանները:

Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, իսկ գրանցումները քարտում կարելի է իրականացնել որոշակի հաճախականությամբ (օրինակ՝ 1- 2 անգամ ուսումնական տարում)՝ մշտնջենքի տվյալները:

Սովորողների առողջ ապրելակերպի ձևավորման համար, բացի ֆիզիկականից, անհրաժեշտ են նաև հոգեբանական մարզումները: Այդ պատճառով ֆիզիկական կուլտուրայի միջոցով առողջ ապրելակերպի ձևավորման և կառավարման՝ սովորողների ֆիզիկական զարգացման ցուցանիշների գնահատման քարտում ներառվում է նաև սովորողների խմբային հոգեբանական թրեյնինգի կազմակերպումը և արդյունքների գրանցումը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել խմբային հոգեբանական թրեյնինգի ազդեցությունը սովորողների ինքնագիտակցության զարգացման վրա և բացահայտել այն:

Հոգեբանական թրեյնինգի կատարած հետազոտությունների հիմնական վարկածը հետևյալն է:

1. Ենթադրվում է, որ սովորողների ինքնագիտակցության զարգացման վրա ազդում է խմբային փոխազդեցության հատուկ պայմանների ստեղծումը:

2. Խմբային աշխատանքների պայմաններում ինքնագիտակցության զարգացումը բարձրացնում է նաև ինքնաընդունումը, ինքնավերաբերումը, կյանքի իրավիճակներին հարմարվելու, սեփական զգացումներին և ապրումների մակարդակը:

Ելնելով մշակված վարկածից՝ լուծվում են հետևյալ խնդիրները.

- փորձարկվողները ենթարկվում են թեստավորման՝ խմբային հոգեբանական թրեյնինգից առաջ և հետո,

- որոշվում են համեմատության չափորոշիչները թրեյնինգից առաջ և ավարտելուց հետո,

- ստուգվում է սովորողների ինքնագիտակցության վրա հոգեբանական թրեյնինգի ազդելու վարկածը և իրականացվում է ստացված տվյալների քանակական և որակական վերլուծությունը:

Սոցիալական հոգեբանության մեջ առաջարկված են մի շարք խմբային հետազոտման մեթոդներ: Դրանք են.

- անհատական աճի հոգեբանական թրեյնինգ [1, էջ 87-94],
- ատեստավորում,
- անավարտ նախադասությունների մեթոդ [1, էջ 94-96],
- Մ. Կուլի «Ո՞վ եմ ես» 20 դիրքերի մեթոդ [2],
- տվյալների վիճակագրական մշակման մեթոդներ (Վ. Մոխրիկի T- թեստը) [3]:

Նշված մեթոդները միմյանցից տարբերվում են գործընթացի բարդության մակարդակով: Սովորողների առողջ ապրելակերպի ձևավորման սկզբնական փուլում առավել արդյունավետ են սովորողների ինքնագիտակցությունը զարգացնելու նպատակով խմբային, հոգեբանական, անհատական աճի թրեյնինգները: Անհատական աճի թրեյնինգի հիմնական նպատակը որևէ ընդունակության զարգացման նկատմամբ հակում չունեցող սովորողների մոտ ընդհանուր զարգացմող և կանխարգելման աշխատանքի անցկացումն է: Սովորողների համար պետք է ստեղծվեն պայմաններ, որոնք հնարավորություն կտան բավարարել հետևյալ պահանջները՝ խմբին պատկանելու միջոցով անվտանգության, ընտանիքից անկախության, կապվածության, հաջողության, սեփական հնարավորությունների ստուգման, ինքնաիրացման, սեփական **ԵՍ**-ի զարգացման:

Այս թրեյնինգի հիմնական խնդիրներից է ԵՍ-ի հայեցակարգի ինքնագիտակցության ձևավորումը, ինչը թույլ կտա սեփական հնարավորությունների և փորձի ամրապնդում:

Թրեյնինգի ուղղվածությունն է.

- շփման համար պայմանների ստեղծում,
- խմբերի ձևավորում և համախմբում,
- ռեֆլեքսային ունակությունների զարգացում,
- սեփական ապրումների և զգացումների, նաև այլ մարդկանց ապրումների հանդեպ կարեկցանքի զգացումը,
- հետադարձ կապ ապահովելու ունակության զարգացում,
- ինքնաարտահայտումը ստեղծագործման ընթացքում:

Առաջարկված թրեյնինգի բովանդակությունը պարունակում է հետևյալ պարամունքները.

Պարամունք 1	Ծանոթություն
Պարամունք 2-3	Խմբի միասնություն (համախմբում)
Պարամունք 4-5	Շփման հմտություններ
Պարամունք 6-7	Լսելու և տեղեկատվությունը ընկալելու ունակություն

Պարամունք 8-9	Զգացումների և ապրումների աշխարհ
Պարամունք 10-11	Ինքնաներկայացում (սեփական անձի շնորհանդես)
Պարամունք 12	Խմբի ավարտման նախապատրաստություն
Պարամունք 13	Ավարտում և արդյունքների ամփոփում

Հոգեբանական թրեյնինգի արդյունքները կարելի է վերածել բալերի և տեղադրել քարտի հոգեբանական գնահատման սյունակում. առավել արդյունավետ է համարվում 10-բալային գնահատման համակարգը: Առաջարկված մեթոդի առավելությունն այն է, որ, ելնելով առաջադրված նպատակներից, պարամունքների քանակը կարելի է ավելացնել, և յուրաքանչյուր պարամունք ուղղորդել տարբեր խաղերով, շարժողական վարժություններով, ստեղծագործական առաջադրանքներով:

Քարտի նույն սյունակում կարելի է նախատեսել նաև սովորողի անհատական հոգեբանական թեստավորում և գնահատում: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր տարիքային խումբ անհատական գնահատման համար պահանջում է նույնպես անհատական մոտեցում, այս հարցը կարելի է թողնել կոնկրետ հոգեբանների հայեցողությանը՝ հիմնվելով մանկավարժական հոգեբանության սկզբունքների վրա և ներգրավելով մանկավարժ-հոգեբաններին:

7. Սովորողների առողջության գնահատման վերջին փուլը եզրակացություններն են: Առաջարկում ենք կրթական հաստատություններում հաստատել դրա լրացման ձևը և հաճախակա մոնիթորինգ: Անհրաժեշտ է նշել, որ կրթական հաստատությունը փոխելու ժամանակ եզրակացությունը պարտադիր պետք է լինի:

8. Առաջարկում ենք մեկ հաստատությունից մյուսը տեղափոխվելու դեպքում սովորողից պահանջել նշված փաստաթղթերի լրացված փաթեթ: Եզրակացության դրական տվյալները վկայում են կատարած աշխատանքի արդյունավետության մասին: Բացի այդ ցուցանիշներից՝ կան նաև ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի ձևավորման և կառավարման արդյունքների արդյունավետության գնահատման կոնկրետ մոտեցումներ:

Սովորողների ֆիզիկական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի գործընթացի կառավարման արդյունավետությունը զգալիորեն կախված է գնահատման փաստաթղթերի փաթեթի լրացման գործընթացից, որն առաջարկում ենք անցկացնել ըստ հետևյալ փուլերի.

1. *Գործընթացի նախապատրաստում*

2. Գործավարության իրականացում (ժամանակը և տեղը)

3. Սովորողների ֆիզիկական զարգացման ցուցանիշների գնահատման քարտի լրացման կարգը

4. Գնահատման գործընթացի ավարտը

5. Լրացված փաստաթղթերի փաթեթի քարտերի ներկայացումն էլեկտրոնային ձևով

6. Սովորողների առողջության անձնագրի լրացումը

7. Առողջ ապրելակերպի ձևավորման գործընթացի կառավարման նյութատեխնիկական ապահովում:

Ներկայացված հետազոտությունների հիմնական նպատակը սովորողների ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի հայեցակարգի ձևավորումն է: Այս գործընթացի արդյունավետությունը պետք է գնա-

հատվի սովորողների առողջության դինամիկայի միջոցով, «Ֆիզիկական կուլտուրայի միջոցով սովորողների առողջության շարունակական գնահատման փաստաթղթերի փաթեթի» տվյալների հիման վրա, որտեղ պետք է գնահատվեն առողջական փոփոխությունները և դրանց դրական դինամիկան, ինչը կարող է վկայել առաջարկված համակարգի արդյունավետության մասին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Богомолова М. А., Лидерс А. Г.**, Практическое исследование влияния группового психологического тренинга на развитие самосознания подростков, Социальный психолог, 2008, №1, с. 87-112.
2. **Богомолова Н., Стефаненко Т. Г.**, Континент-анализ, М., 1992.
3. **Мохов В. А.**, Статистическая обработка результатов психологического исследования, Уч. пособие, М. ВГНА, 2004, с. 96.

#### PRACTICAL APPLICATION OF THE FORMATION PROCESS OF HEALTHY LIFESTYLE IN EDUCATIONAL SYSTEM THROUGH PHYSICAL EDUCATION

**ANNA NASILYAN**

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

#### Summary

The article presents the formation of a continuous process of healthy lifestyle of the learners which should be carried out through physical education. The process is documented in the proposed package.

## АНАЛИЗ ПРАКТИКИ ОРГАНИЗАЦИИ И ПРОВЕДЕНИЯ ЗАНЯТИЙ ПО ФИЗИЧЕСКОМУ ВОСПИТАНИЮ СО СТУДЕНТАМИ СПЕЦИАЛЬНОГО УЧЕБНОГО ОТДЕЛЕНИЯ, ИМЕЮЩИХ НАРУШЕНИЯ ЗРЕНИЯ\*

**Арман БАРСЕГЯН**

*Ванадзорский государственный педагогический институт им. О. Туманяна*



**И**звестно, что прежде чем преступить к разработке эффективных средств и методов физического воспитания студентов с нарушением зрения, следует изучить практику ее организации и проведе-

ния, выявить положительные и негативные стороны этого процесса и, опираясь на них строить эффективные пути ее совершенствования. Учитывая вышеизложенное, настоящим исследованием мы стремились определить:

- степень укомплектованности кафедр физического воспитания вузов республики квалифицированными преподавателями для работы со студентами специального учебного отделения;
  - особенности организации и проведения учебных и самостоятельных занятий по физическому воспитанию со студентами с нарушением зрения, сердечно-сосудистой, дыхательной и других систем организма;
  - характер проводимых мероприятий по учёту и контролю за состоянием здоровья студентов специального учебного отделения;
  - степень вовлечения студентов специального учебного отделения в физкультурно-спортивные мероприятия, проводимые в вузе;
  - как оценивают работу по организации и проведению занятий по физическому воспитанию со студентами специального учебного отделения сами преподаватели кафедр [1, 78].
- Изучение практики организации и прове-

дения занятий по физическому воспитанию со студентами с нарушением зрения специального учебного отделения проводилось в 10 основных государственных вузов республики. Это Ереванский государственный университет, Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Ереванский государственный медицинский университет, Армянский государственный инженерный университет, Армянский государственный аграрный университет и др.

Отдельные государственные институты (консерватория им. омитаса, театральный и др.) и частные вузы (Педагогический университет им. М. Маштоца, университет им. Аджаряна и др.) нами не рассматривались, поскольку в них не имелось кафедр физического воспитания. Не брался в учет и институт физической культуры, так как он является специальным вузом.

Прежде всего следует отметить, что во всех рассматриваемых вузах республики на кафедрах физического воспитания действуют три учебных отделения - основное, специальное и спортивного совершенствования. Согласно медицинского заключения в специальное учебное отделение зачисляются студенты, имеющие отклонения в состоянии здоровья: зрения, сердечно-сосудистой, дыхательной системы, нарушения опорно-двигательного аппарата, нервные расстройства и т. д. В эту учебную группу зачисляются и студенты после операционного периода, перенесшие инфекционные заболевания и др.

Учебные группы специального учебного отделения комплектуются, исходя из числа студентов на курсе или факультете, имеющих конкретное заболевание. А занятия по физическому воспитанию проводят с ними

\* Ներկայացվել է 14.05.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

преподаватели, специально прикрепленные кафедры.

Установлено, что из 141 преподавателей, работающих на кафедрах физического воспитания 10 рассматриваемых вузов республики, 45 (31,4%) занимаются со студентами специального учебного отделения. из них 31 (68,8%) мужчин и 14 (31,2%) женщин, средний возраст которых составляет 39 лет. Подавляющее большинство преподавателей этого учебного отделения имели стаж педагогической работы от 15-до 20 лет и свыше 20 лет.

Интересно отметить, что среди преподавателей специального учебного отделения кафедр физического воспитания рассматриваемых вузов республики 11,1% специалистов находятся в возрасте 60 и старше 60 лет, 28,9% преподавателей находятся в возрасте 51-60. Большая часть (35,3%) преподавателей составляют 41-50 летние, тогда как только 17,8% преподавателей имеют 31-40 летний возраст.

Интересные данные были получены при изучении вузовского стажа работы обследованных преподавателей. Из них 40,0% имели свыше 20 летний стаж педагогической работы, 28,9% - от 15 до 20 лет, а 17,8% и 13,3% преподавателей имели от 10 до 15 и от 5 до 10 лет педагогического срока работы со студентами.

Таким образом, вышеизложенное свидетельствует, что сегодня со студентами специального учебного отделения вузов республики работают в основном преподаватели в возрасте 41-60 лет, вузовский преподавательский стаж которых сравнительно не высок. А если к сказанному добавить, что преподаватели физического воспитания, занимающиеся со студентами специального учебного отделения часто меняются, переводятся с одного учебного отделения в другое, то становится очевидным, что такие занятия со студентами, имеющими отклонения в состоянии здоровья, естественно, будут мало эффективными.

На качество работы с этими студентами отражается и тот факт, что за последние 10-15 лет для преподавателей физического воспитания специального учебного отделения вузов республики не проводились специальные семинары, обзорные или тематические лекции, практические занятия, консультации, направленные на повышение теоретических знаний и уровня преподавания. Среди 45 преподавателей этого учебного отделения только один имеет научную степень кандидата педагогических наук.

Вышеизложенное позволяет констатировать, что подбор и комплектование кафедр физического воспитания квалифицированными преподавателями для работы со студентами специального учебного отделения требует значительного совершенствования.

Изучение практики организации и проведения учебных занятий физическим воспитанием со студентами специального учебного отделения выявило интересную и породоксальную особенность. С одной стороны все понимают важность и необходимость занятий физическими упражнениями, особенно для лиц, имеющих различные отклонения в состоянии здоровья, с другой - на практике они проводятся, в основном, 2 часа в неделю и только на 1-2 курсах обучения.

Лишь в отдельных вузах республики (Армянский государственный инженерный университет, Университет иностранных языков им. В Брюсова, Ванадзорский гос. педагогический институт им. О. Туманяна) занятия по физическому воспитанию проводятся два раза в неделю (4 часа). Тогда как, еще в советский период были указания и в большинстве вузов республики учебные занятия по физическому воспитанию, в том числе и со студентами специального учебного отделения, проводились 4 часа в неделю и на старших курсах тоже. О том, что предмет "Физическое воспитание" в вузе следует проходить на всех курсах обучения студентов отмечается и в принятом в нашей республике в 2001 году Законе о физической культуре и спорте. Однако на практике остаётся по-прежнему – учебные занятия по физическому воспитанию в большинстве случаев составляют 2 часа в неделю.

Становится очевидным, что занятия физическими упражнениями 2 часа в неделю и только на 1-2 курсах обучения для студентов, имеющие проблемы со здоровьем, будут малоэффективными и не интересными.

Исследования также показали, что на кафедрах физического воспитания почти не проводится работа со студентами специального учебного отделения по вовлечению их в самостоятельные занятия физическими упражнениями. Эта работа в основном, носит разовый и стихийный характер, а планомерная и последовательная работа в этом направлении со студентами с нарушением зрения, сердечно-сосудистой, дыхательной и других систем организма не ведется.

Такой подход отдельные преподаватели кафедр объясняют тем, что они опасаются не навредить здоровью студентов, поскольку нарушения зрения сердечно-сосудистые и другие

заболевания требуют строгого учёта характера и степени нарушений, индивидуального и дозированного подбора физической нагрузки, контроля за изменениями и т.д., что в условиях самостоятельных занятий сами студенты в большинстве случаев не могут осуществить.

Изучая содержательную сторону проводимых занятий по физическому воспитанию со студентами специального учебного отделения, было установлено, что на одних кафедрах (АГПУ им. Х. Абовяна, Арм. гос. аграрный университет, Ванадзорский гос. пед. институт им О. Туманяна и др.) эти занятия проводятся лишь с общей оздоровительной направленностью. Почти все учебное время студенты выполняют общеразвивающие упражнения с предметами или без них, стоя, сидя и лёжа. При этом не проводятся какие-либо разделения этих упражнений с учётом степени и характера заболевания студентов.

նակի  $\Delta t$  միջակայքում արագությունը փոփոխվում է: Որպեսզի գտնենք կետի արագությունը ժամանակի  $t$  պահին, պետք է վերցնել ժամանակի հնարավորինս փոքր մի շակայքեր և գտնել  $V_{միջին}$  արագության սահմանը: ժամանակի  $t$  պահին կետի ակնթաթային արագությունն են անվանում նրա միջին արագության սահմանը ժամանակի  $[t, t + \Delta t]$  միջակայքում, երբ  $\Delta t \rightarrow 0$ :

$$V_{ակնթաթային} = \lim_{\Delta t \rightarrow 0} V_{միջին} = \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta x}{\Delta t}, \text{ որն էլ}$$

նշանակում է, որ ակնթաթային արագությունը ժամանակի  $t$  պահին հավասար է այդ պահին  $x=f(t)$  ֆունկցիայի աճանցյալին.

$$V_{ակնթաթային} = X'(t) \text{ [7; 43, 51] [6; 17]:}$$

Հավասարաչափ շարժման դեպքում ևս կարելի է արագությունն արտահայտել այսպիսի բանաձևով (սահմանի նշանի տակ կլինի հաստատուն մեծություն): Այս պիսով, բոլոր դեպքերում շարժվող կետի արագությունը ժամանակի տվյալ  $t_0$  պահին (կամ ճանապարհի տվյալ  $M$  կետում) հավասար է  $\Delta s$  անցած ճանապարհի և  $\Delta t$  ժամանակամիջոցի հարաբերության սահմանին, երբ  $\Delta t$  ժամանակամիջոցը ձգտում է զրոյի:

Մեր դիտարկած երկու խնդիրներում միևնույն բանն էր պահանջվում իմա նալ, թե իրարից կախված երկու մեծություններից մեկի (անկախ փոփոխականի) փոփոխությունն ինչպիսի՞ փոփոխություն է առաջացնում մյուս մեծության համար: Այլ կերպ ասած, դա նշանակում է իմանալ մեծություններից մեկի փոփոխման արագությունը մյուսի փոփոխման համեմատությամբ: Մաթեմատիկայի լեզվով դա նշանակում է գտնել ֆունկցիայի ածի և արգումենտի ածի հարաբերության սահմանը, երբ արգումենտի աճը ձգտում է զրոյի: Յենց այս սահմանը կոչվում է *ածանցյալ* [3; 45]:

**Օրինակ.** Մարդը  $b$  մ/վ արագությամբ մոտենում է հմ բարձրությամբ աշտարակի ստորոտին: Ինչպիսի՞ն է նրա՝ աշտարակի գագաթին մոտենալու արագությունը, երբ նա գտնվում է աշտարակի հիմքից  $l$  մ հեռավորության վրա:

**Լուծում.** Նշանակենք մարդու հեռավորությունը աշտարակի ստորոտից ժամանակի  $t$  պահին  $X(t)$ : Այդ դեպքում մարդու  $y(t)$  հեռավորությունը աշտարակի գագաթից ժամանակի  $t$  պահին կլինի.

$$y(t) = \sqrt{h^2 + x^2(t)}; \quad y'(t) = \frac{x(t) \cdot x'(t)}{\sqrt{h^2 + x^2(t)}}; \quad \text{հաշվի}$$

անցնելով, որ  $x'(t) = b$ ; իսկ  $x(t) = l$ , կունենանք՝

$$V = \frac{bl}{\sqrt{h^2 + l^2}}:$$

Շարժումների մեծ մասի ընթացքում արագության վեկտորը փոփոխվում է ինչպես մեծությամբ, այնպես էլ ուղղությամբ: Ժամանակի ընթացքում շարժման արագության փոփոխվելու արագությունը բնութագրելու համար մտցվում է արագացման հասկացությունը: Ենթադրենք  $\Delta t$  ժամանակահատվածում արագությունը փոփոխվել է  $\Delta v$ -ով: Անհավասարաչափ շարժման միջին արագացում  $t$ -ից մինչև  $t + \Delta t$  ժամանակահատվածում անվանում են  $a_{\text{միջին}} = \frac{\Delta v}{\Delta t}$  հարաբերությունը:

Կետի արագացում ժամանակի  $t$  պահին անվանում են այն մեծությունը, որը հավասար է միջին արագության սահմանին, երբ ժամանակի  $\Delta t$  ժամանակամիջոցն անվերջ փոքրանում է.

$$a = \lim_{\Delta t \rightarrow 0} a_{\text{միջին}} = \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta v}{\Delta t} \quad [7; 46, 51]:$$

Այսպիսով, նյութական կետի արագացումը հավասար է արագության առաջին կարգի ածանցյալին.  $a(t) = v'(t)$ : Եթե մարմնի անցած ճանապարհը ժամանակի  $t$  պահին որոշվում է  $y=f(t)$  ֆունկցիայով, ապա շարժման  $V$  արագությունը հավասար է  $f(t)$  ֆունկցիայի ածանցյալին՝  $V = f'(t)$ , իսկ արագացումը՝ արագության

ածանցյալին.  $a = (f'(t))' = v'(t)$ :

**Քիմիական ռեակցիայի արագությունը** : Դիցուք՝ մի որոշ նյութ մասնակցում է քիմիական ռեակցիային: Նյութի այն  $x$  քանակը, որը ժամանակի  $t$  պահին արդեն մտել է ռեակցիայի մեջ, կլինի  $t$  ժամանակամիջոցի ֆունկցիա՝  $x=f(t)$ : Ժամանակի  $\Delta t$  աճին կհամապատասխանի նյութի քանակի  $\Delta x$  աճ:  $\frac{\Delta x}{\Delta t}$  հարաբերությունը կար-

տահայտի *քիմիական ռեակցիայի մի ջին արագությունը* ( $V_{\text{միջ.}}$ )  $t$ -ից մինչև  $t + \Delta t$  ժամանակամիջոցում, իսկ նրա սահմանը, երբ  $\Delta t$  ժամանակամիջոցն անվերջորեն փոքրանում է, կարտահայտի քիմիական ռեակցիայի արագությունը ժամանակի տվյալ  $t$  պահին: Այսպիսով, քիմիական ռեակցիայի արագությունը՝

$$V = V \lim_{\Delta t \rightarrow 0} V_{\text{միջ.}} = \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta x}{\Delta t} = \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{f(t + \Delta t) - f(t)}{\Delta t}$$

$$\text{կամ } V = \frac{dx}{dt} = f'(t) \quad (5):$$

**Ջերմունակություն** : Դիցուք մարմնի ջերմաստիճանը  $0^\circ$ -ից մինչև  $\theta^\circ$  հասցնելու համար պահանջվում է  $w$  ջերմաքանակ (կալորիաներով): Ակներևորեն,  $w$ -ն կլինի  $\theta$ -ի ֆունկցիա՝  $w=f(\theta)$ :  $\theta$ -ին տանք  $\Delta\theta$  աճ,  $w$ -ն կստանա  $\Delta w$  աճ: Այդ աճերի հարաբերությունը գաղափար է տալիս մարմնի միջին ջերմունակության մասին, երբ այն տաքացնում ենք  $\theta^\circ$ -ից մինչև  $(\theta + \Delta\theta)^\circ$

$$C_{\text{միջ.}} = \frac{\Delta w}{\Delta \theta} = \frac{f(\theta + \Delta\theta) - f(\theta)}{\Delta \theta}; \quad [5; 306]:$$

$\Delta\theta$ -ն փոփոխելիս, ընդհանրապես ասած,  $C_{\text{միջ.}}$ -ը փոփոխվում է: Որպես *մարմնի ջերմունակություն տվյալ  $\theta^\circ$  ջերմաստիճանի դեպքում*, բնական կլինի ընդունել այդ սահմանը՝

$$C = \lim_{\Delta\theta \rightarrow 0} \frac{\Delta w}{\Delta \theta} = \frac{dw}{d\theta} = f'(\theta) \quad (6):$$

**Պոտանցի ուժ:** Դիցուք՝ էլեկտրական շղթայի լայնական հատույթով  $t$  ժամանակամիջոցում (վայրկյաններով) հոսում է  $Q$  էլեկտրաքանակ (կուլոններով):  $Q$ -ն կլինի  $t$ -ի ֆունկցիա՝  $Q=f(t)$ : Նախորդ դատողությունները կրկնելով՝ կարող ենք ասել, որ  $\Delta t$  ժամանակամիջոցում *միջին հոսանքի ուժը* հավասար կլինի՝

$$I_{\text{միջ.}} = \frac{\Delta Q}{\Delta t} = \frac{f(t + \Delta t) - f(t)}{\Delta t}, \quad \text{իսկ այդ հա-}$$

րաբերության սահմանը, երբ ժամանակամիջոցն անվերջ փոքրանում է, կտա *հոսանքի ուժը ժամանակի տվյալ  $t$  պահին*՝

$$I = \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta Q}{\Delta t} = \frac{dQ}{dt} = f'(t) \quad (7) \quad [6; 204, 225, 305]:$$

Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել ամենաբազմազան բնագավառներից [7; 61-64, 81, 85, 140]: Նրանք բոլորը ցույց են տալիս, որ երկու մեծությունների անվերջ փոքր աճերի հարաբերության սահմանը, որ մենք ածանցյալ անվանեցինք, ամեն անգամ մեզ հանգեցնում է տվյալ գիտության մեջ կարևորագույն նշանակություն ունեցող մի նոր մեծության գաղափարի (չարժման արագություն, շոշափողի անկյունային գործակից, քիմիական ռեակցիայի արագություն, ջերմունակություն, հոսանքի ուժ և այլն): Այդ պատճառով էլ ֆունկցիայի ածանցյալը գտնելը, ինչպես նաև նրա հատկությունների ուսումնասիրությունը, մաթեմատիկական անալիզի հիմնական հարցերից մեկն է:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վ. Վ. Սաղաթեյան**, Բարձրագույն մաթեմատիկայի դասընթաց, մաս I, Երևան, 1967:
2. **Լ. Վ. Տարասով**, Մաթեմատիկական անալիզ, Երևան, 1986:
3. **Г. Н. Бөрман**, Сборник задач по курсу математического анализа, М., 1969:
4. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի հիմունքներ, 11-րդ դասարան:
5. Ֆիզիկայի դասագիրք, 11 դասարան, Երևան, 2010:
6. **Ն. Ա. Ղոխմազյան, Բ. Ա. Ղադասյան, Ժ. Զ. Հարությունյան**, Ֆիզիկա, ձեռնարկ դիմորդների համար, Երևան, 1989:
7. **Ն. Ն. Եվզրաֆովա, Վ. Լ. Կազան**, Ֆիզիկայի դասընթաց նախապատրաստական բաժինների համար, Երևան, 1983:

#### INCREASING THE EFFECTIVENESS OF THE CONNECTION BETWEEN SUBJECTS WHILE TEACHING THE SUBJECT "DERIVATIVE OF THE FUNCTION"

**SUSANNA MELKONYAN**

Teacher of Vanadzor Special school with in-depth learning of Mathematics and Natural Sciences

#### Summary

Some topics that are studied in the course of physics at the 10th grade of secondary school lead to the idea of the derivative of the function. However, students get acquainted with the derivative of the function only at the 11th grade. To resolve this disagreement, it is fair to give some basic idea about continuous functions, limit of a function as well as bring up some examples of continuous functional dependencies defining a derivative as the limit of the average velocity of the change of those continuous functional dependencies.

# ՄԱՐԳԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ\*

## Ղավոր քարտեզ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասպիրանտ

**Ատենախոսության թեման՝** Մարդկային հարաբերությունների կառավարման տեսությունների և մեթոդների դերը Մազանդարանի միջնակարգ դպրոցների զարգացման գործում

**Գիտական ղեկավար՝** Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**Յ**ուրաքանչյուր կառույց, ելնելով իր առջև դրած նպատակներից, ստրատեգիաներից և կառավարման տարրեր մեթոդներից, առանձին տեսանկյունից է նայում և յուրովի մոտենում մարդուն: Օրինակ, կառավարման դասական մոտեցումները մարդուն դիտարկում են իբրև մի մեքենա, որի սիրտը և շարժիչ ուժը հանդիսանում է կառավարիչը, ում կողմից գործողության մեջ են դրվում և շարժվում մյուս անդամներն ու մասնիկները: Նման կառույցում անդամները կատարում են նախանշված որոշակի պարտականությունները և առանց որևէ ինքնուրույն քայլի շարժվում դեպի կազմակերպչական նպատակները: Նրանք պարտավոր են խստորեն հետևել կազմակերպության կանոններին, աստիճանակարգին և պաշտոնական փոխհարաբերություններին: Իհարկե, չպետք է մոռանալ, որ կազմակերպություններն ունեն նաև իրենց դրական կողմերը և կատարում են բազմաթիվ գործառնություններ՝ աշխատանքի բաժանում, կարգավորում և համակարգում, նյութական ու մարդկային ներուժի կազմակերպված օգտագործում և այլն:

Ժամանակի ընթացքին տեխնոլոգիաների զարգացմամբ, կազմակերպությունների առավել բարդացմամբ և մարդկային կարիքների բազմազանությամբ առաջադրվեցին նեոկլասիկական մոտեցումներ, որոնցից մեկն էլ մարդկային փոխհարաբերությունների կառավարման տեսու-

թյունն է (Մեյո): Մեխանիկական կազմակերպությունները փոխարինվեցին օրգանիկ կառույցներով, որտեղ մարդը համարվում էր կառույցի կենտրոնական միջուկը, և կազմակերպչական նպատակների կողքին կարևորվում էին նաև մարդկային գործոնը և նպատակները:

Մեր հետազոտության և դիտարկումների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ իրանական դպրոցներում առկա խնդիրների մի զգալի մասը կապված է մարդկային փոխհարաբերությունների ճիշտ ու արդյունավետ կառավարման բացակայության, տնօրենների կողմից այս հարցի անտեսման, ուսուցիչների և այլ կադրերի պահանջմունքներին ու կարիքներին բավարար ուշադրություն չդարձնելու հետ:

Մեր կատարած սոցիալոգիաների արդյունքները մատնանշեցին, որ հետազոտված դպրոցների հիմնախնդիրներից են՝ ուսուցիչների աշխատանքային մոտիվացիաների պասիվացումը, տնօրեն-ուսուցիչ փոխադարձ կապերի որակը և կազմակերպության նպատակների իրականացման ուղղությամբ մարդկային գործոնի անտեսումը տնօրենի կողմից:

Մեր օրերում կրթական համակարգի նպատակների իրագործումը պայմանավորված է նյութատեխնիկական, ֆինանսական և մարդկային մեծածավալ աղբյուրներով ու հնարավորություններով, որոնց համակարգումն ու կազմակերպումը և տվյալ հանրության սոցիալ-քաղաքական, տնտեսական ու մշակութային պայմանների և նպատակների շրջանակում ուղղորդումը՝ պահանջում է ճկուն ու ճիշտ կառավարում (մենեջմենթ): Սակայն Իրանի կրթական համակարգի խիստ կենտրոնացված կառուցվածքը, ամբողջ

\* Ներկայացվել է 12.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

երկրի մասշտաբով շրջաբերականների, կանոնակարգերի և ծրագրերի միասնականությունը սահմանափակում են կառավարման միջին և ցածր օղակների լիազորություններն ու գործնական հնարավորությունները, խոչընդոտում են նրանց ստեղծագործ և անհատական մտեցումների դրսևորմանը, մինչդեռ մարդն իր էությանը ստեղծագործ և նորարար էակ է, ուստի կառույցները պետք է աշխատողներին ինքնադրսևորման և ինքնաարացման հնարավորություններ ընձեռեն<sup>1</sup>:

Կառավարման գիտության իրավիճակային տեսության համաձայն, տնօրենները իրենց ենթակայության տակ գտնվող կառույցի առանձնահատկություններին ու պայմաններին համապատասխան, պետք է որդեգրեն ինքնատիպ և ուրույն ուղեգիծ<sup>2</sup>: Իրանի Մազանդարան նահանգի միջնակարգ դպրոցների տնօրենները չունեն բավականաչափ լիազորություններ, լիարժեք չի իրականացվում «դպրոցակենտրոն» մոտեցումը, հետևաբար ավելի է ընդգծվում մարդկային ու կադրային ներուժի նշանակությունը դպրոցի կազմակերպչական ու անձնային նպատակների իրականացման գործում: Այս խնդրի գիտակցումը շատ կարևոր է տնօրենների համար՝ իրենց դպրոցների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կրթական հաստատություններում մարդկային հարաբերությունների տեսության դրույթները կարող են հետևյալ ձևակերպումները ստանալ.

1. Մարդը կարող է ինքնուրույն և իր ազատ կամքով որոշումներ կայացնել և ուղղորդել իր բնածին ընդունակություններն ու պոտենցիալ կարողությունները<sup>3</sup>: Տնօրենը պետք է կարողանա հնարավորին չափ ակտիվացնել իր ենթակաների ներուժը:

2. Տնօրենի և աշխատողների փոխադարձ աջակցությունը հաջողության կարևոր ազդակներից է:

3. Եթե աշխատանքը լինի գոհացուցիչ, աշխատողները չեն փոխի իրենց աշխատատեղը և ավելի քիչ կբացակայեն աշխատանքից, ուստի անհրաժեշտ է ըստ ընդունակությունների ու հմտությունների ավելի մեծ պատասխանատվություններ փոխանցել յուրաքանչյուր անձի:

4. Պետք է աշխատանքը վերածել հաճելի և գոհացուցիչ մի երևույթի:

Մարդկային հասարակության առաջխաղացմանը զուգընթաց կրթական համակարգը և նրա գործունեությունն անընդհատ փոփոխությունների են ենթարկվում: Կրթական բարեփոխումները հասարակական, գիտական և տեխնոլոգիական զարգացումների արդյունք են, հետևաբար անհնար է այլևս ուսուցման ավանդական մեթոդներով իրագործել գիտական ու տեխնոլոգիական նոր ձեռքբերումների փոխանցումը և բավարարել հասարակության արդի պահանջները:

Իրանը որպես անցման փուլում գտնվող երկիր, որտեղ նորագույն-ժամանակակից կրթությունը հարյուրամյա պատմություն ունի, եթե ձգտում է հաջողությամբ հաղթահարել անցման փուլի դժվարությունները, պետք է քանակական փոփոխությունների կողքին առավել մեծ ուշադրություն դարձնի որակական բարեփոխումներին:

Իրանի կրթական համակարգում լուրջ բացթողումներ կան մարդկային հարաբերությունների ծավալման, աշխատավայրում մարդկային գործունի կարևորման և կրթական բարեմպաստ միջավայրի ստեղծման հարցերում: Կարելի է ասել՝ կրթական հաստատությունների տնօրենները մեծ մասամբ զբաղված են վարչարարական մանր հարցերով և գերադասում են առաջնորդվել կանոններով, քան հարաբերություններով:

Իրանի կրթական համակարգում և դպրոցների կառավարման գործում փոխգործակցական կառավարման մեթոդները և միջանձնային հարաբերությունների կառավարման նոր մոտեցումները կարող են մեծապես ազդել նրա խորքային բարելավման և դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացման վրա:

Նկատի առնելով վերը շարադրված դրույթները՝ մենք գտնում ենք, որ կրթական համակարգում և դպրոցներում կառավարման գիտության մարդկային փոխհարաբերությունների տեսության կիրառումը խիստ արդիական ու հրատապ հիմնախնդիր է: Այն առավել կենսական է Իրանի՝ որպես զարգացող երկրի համար, որտեղ կրթական կառավարումն իրականացվում է խիստ կենտրոնացված և դասական մեթոդներով: Մարդկային հարաբերությունների կառավարման դրույթների ներդրումը իրանական դպրոցներում նոր ու այժմեական պահանջ է, ուստի անհրաժեշտ է այս բնագավառում կատարել համակողմանի ուսումնասիրություններ:

Մեր հետազոտությունները և Իրանի Մազանդարան նահանգի դպրոցներում կատարած դիտարկումներն ու սոցիոլոգիական հարցումները ևս հաստատում են այս տեսակետը: Բոլոր այն դպրոցներում, որտեղ տնօրենը առանձնակի ուշադրություն է դարձնում մարդկային գործունի և կիրառում մարդկային հարաբերությունների կառավարման մեթոդները, հետևյալ պատճառներով բարձրանում է կրթական գործի արդյունավետությունը.

- Ակտիվացնում և խթանում է ուսուցիչների և աշխատողների մոտիվացիաները:

- Նման դպրոցներում տիրում է բաց ու բափանցիկ մթնոլորտ, աշխատողներն իրենց ապահով են զգում, ոչ ոք աշխատավայրում անապահովություն ու ճնշվածություն չի զգում, կան դրանք հասնում են նվազագույնի: Ուսուցիչները առավել համագործակցություն են ցուցաբերում և առավել ուժ ու եռանդ ներդնում մանկավարժա-

կան գործունեության մեջ, որով և բարձրանում է դպրոցի կրթական կառավարման արդյունավետությունը<sup>4</sup>:

- Այդպիսի դպրոցները վկայում են «նարդակներտրոն» մոտեցման առավելությունների օգտին, քանի որ բավարարվում են աշխատողների կարիքները, աշխատողներին առիթ է տրվում ստեղծագործ մոտեցումներ կիրառել, աշխատանքին վերաբերվել որպես հաճելի գործ և ոչ թե ստիպողական աշխատանք<sup>5</sup>:

- Մարդկային փոխհարաբերությունների կառավարումը բարձրացնում է կազմակերպչական արդյունավետությունը՝ կայունացնելով աշխատողների տեղը ու դիրքը, կանխատեսելով և կասեցնելով կազմակերպչական լարվածությունները, բավարարելով աշխատողների ֆիզիկական ու հոգեկան պահանջմունքները և ամրապնդելով նրանց միասնականությունը, հոգեկան ուժը<sup>6</sup>:

- Գնահատվում և արժևորվում են ուսուցիչների ու աշխատողների ներդրած ջանքերը, արդարացիորեն պարգևատրվում ձեռքբերումները, որով ուսուցիչները շահագրգռվում են աշխատանքի արդյունքով և ուսման մակարդակի բարձրացմամբ:

- Ստեղծում է թիմային ու փոխգործակցական աշխատանքի միջավայր, համադրում բոլոր աշխատողների ուժերը և բոլորին ուղղորդում դեպի միասնական նպատակի կրթության որակի բարձրացմանը<sup>7</sup>:

- Ավելի մեծ տեղ է տրվում յուրաքանչյուր աշխատողի անհատական առանձնահատկություններին, անձնային հատկանիշներին, հետևաբար կատարվում է աշխատանքների և պատասխանատվությունների ճիշտ բաժանում:

- Դպրոցական մի շարք աշխատանքներում ներգրավվում են նաև աշակերտները և նրանց ընտանիքները, ծնող-կոմիտեները, օգտագործվում է հասարակության տարբեր հատվածների ներուժը:

- Մարդկային հարաբերությունների կառավարման սկզբունքները առավել համահունչ են

ժամանակակից հասարակության զարգացման արդի միտումներին՝ ժողովրդավարացման գործընթացներին, քաղաքացիական իրավունքների և քաղաքացիական հասարակության հասկացություններին ու պահանջներին, հետևաբար ավելի է ամրապնդվում կրթության և հասարակական պահանջների ներդաշնակությունը:

- 1 **Չերեսի, Փավել և Քենթ**, Բլանչերդ, Կազմակերպչական վարքի կառավարում, թարգմանիչ՝ Ղասեմ Քաբիրի, Ջահադ դանեշգահի հրատարակություն, Թեհրան, 1989, էջ 52:
- 2 **Ալադեբանդ, Ալի**, Կրթական կառավարման հիմունքներ, Թեհրան, Փայամ Նուր համալսարան, 2005, էջ 143:
- 3 **Հաթամի**, Մարդկային փոխհարաբերությունների կառավարումը դպրոցներում, Փայամ Նուր համալսարանի հրատարակություն, 2005, էջ 40:
- 4 **Ալադեբանդ, Ալի**, Կրթության կառավարման հիմունքները, Թեհրան, Փայամ Նուր համալսարան, 2005, էջ 77-75:
- 5 **Ղուլամ Ալի, Սարմադ**, Մարդկային հարաբերությունները կրթական հաստատություններում, Թեհրան, 1998, էջ 56:
- 6 **Ավանի, Սեյդ Մեհդի**, Ընդհանուր կառավարում, Թեհրան, «Նեյ», 4-րդ հրատարակություն, 1991, էջ 88:
- 7 **Փարհիզգար, Քամալ**, Կառավարման տեսությունները, «Ագահ», Թեհրան, 1990, էջ 61-62:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Ալադեբանդ, Ալի**, Կրթության կառավարման հիմունքները, Թեհրան, Փայամ Նուր համալսարան, 2005:
2. **Ղուլամ Ալի, Սարմադ**, Մարդկային հարաբերությունները կրթական հաստատություններում, Թեհրան, 1998:
3. **Ավանի, Սեյդ Մեհդի**, Ընդհանուր կառավարում, Թեհրան, «Նեյ», 4-րդ հրատարակություն, 1991:
4. **Հաթամի, Համիդ Ռեզա**, Մարդկային փոխհարաբերությունները կրթական կառույցներում, Թեհրան, Փայամ Նուր համալսարանի հրատարակություն, 2005:
5. **Չերեսի Փավել և Բելանջարդ Քենթ**, Կազմակերպչական վարքի կառավարումը, թարգմանիչ՝ Ղասեմ Քաբիրի, Թեհրան, «Ջահադ դանեշգահի», 1989:
6. **Փարհիզգար, Քամալ**, Կառավարման տեսությունները, «Ագահ», Թեհրան, 1990:

HUMAN RELATIONS EFFICIENT MANAGEMENT: A FACTOR TO IMPROVE THE SHCOOLS ACTIVITIES

**GHAFOOR KARIMI**

Summary

The essay talks about importance and role of human factor in organization and its management, especially in educational institutes. Human relations effective management can improve the motivations, spur the individual abilities and integrate the teachers, students and their families in education work. Human relations management principles and methods are harmony with the now day's necessities and democracy conception.

# ԻՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄՄԱՆ ԵՎ ԱՐԳԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ\*

## Ալի Ասղար ԲՈՋՈՐԳԻ ԲԱԻ

ԵՊԳ մանկավարժության ամբիոնի ասպիրանտ

Ատենախոսության թեման՝ Իրանի հանրակրթական դպրոցների կառավարման առանձնահատկությունները (ավագ դպրոց)

Գիտական ղեկավար՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Իրանի միջնակարգ դպրոցների կրթության կառավարման մասին ցարդ կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ և շարադրվել մեծաթիվ աշխատություններ, սակայն այդ հետազոտություններում հարկ

եղած չափով անդրադարձ չի կատարվել և անտեսվել են մի շարք կարևոր հասկացություններ, մոտեցումներ ու սկզբունքներ, որոնցից են՝ ժողովրդավարական և քաղաքացիական իրավունքների ուսուցման դերն ու նշանակությունը կրթության մեջ, գլոբալիզացիան և Իրանի կրթության համակարգը, կենսուրախության ներդրումը իրանական դպրոցներում, Իրանի միջնակարգ դպրոցների կառավարման համակարգի բարենորոգման անհրաժեշտությունը, կառավարման մասնակցային ու ոչ-կենտրոնացված մեթոդների ներդրման կարևորությունը, տնօրենների կողմից կառավարման տեսության, սկզբունքների իմացության և գործադրման կարևորությունը և այլն:

Իրանի միջնակարգ ավագ դպրոցների տնօրենների և ուսուցիչների շրջանում մեր կողմից վերջերս կատարված հետազոտության ընթացքին հարցվողների բացարձակ մեծամասնությունը դրական պատասխան է տվել Իրանի կրթության կառավարման համակարգի բարեփոխման ու արդիակացման անհրաժեշտության մասին առաջադրված հարցադրմանը: Սա ինքնին ընդգ

ծում է հարցի հրատապությունը ու նաև մեր կողմից առաջադրված գիտական նորությունների ռեալականությունն ու տեսական հիմնավորումը:

Մենք այն համոզմանն ենք, որ Իրանի կրթության համակարգի առաջընթացն ու զարգացումը սերտորեն առնչված են մի շարք հիմնահարցերով, որոնք են.

1. Իրանի կրթական համակարգը բովանդակային փոփոխությունների կարիք է զգում, որպեսզի կարողանա պատրաստել քսանմեկերորդ դարի քաղաքացիներ, և դա պահանջում է լուրջ նախաձեռնություններ, անցյալից տարբերվող միջոցներ:

«Դպրոցը աշակերտներին պետք է ծանոթացնի ոչ միայն սեփական մշակույթն ու ենթամշակույթներն, այլ նաև աշխարհի մյուս ժողովուրդների մշակույթը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր աշակերտ համաշխարհային հանրության անդամ է և նրան չպետք է անհրազեկ պահել այդ հանրության մշակույթից: Նրանք պետք է իմանան, թե աշխարհում և այլ հանրություններում ի՞նչ է տեղի ունենում, որո՞նք են այլ ժողովուրդների պահանջները, սովորույթները և ապրելակերպը: Այս իրազեկման միջոցով աշակերտները տեղեկանում են այլ երկրների խնդիրների ու դժվարությունների մասին, օգտվում նրանց փորձից և անհրաժեշտության դեպքում օգնում նրանց՝ մասնակցելով ուրիշների բարօրության կերտման գործին և նրանց էլ մասնակից դարձնելով իրենց բարօրության կերտման գործին»<sup>1</sup>:

2. Իրանի կրթական համակարգը զուրկ է ժողովրդավարական գործելակերպի հիմնադրույթները ուսուցանելու բարենպաստ նախադրյալնե

\* Ներկայացվել է 11.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

րից: Դպրոցի բազմաթիվ տնօրեններ վարում են մեծատիրական, վարչահրամայական մեթոդներ և որդեգրում վախի մթնոլորտի և ոչ-մանակավարժական գործելաճի վրա հիմնված մոտեցումներ: Եթե դպրոցն այսօրվա աշակերտին և վաղվա մեծահասակին սովորեցնի իր քաղաքացիական իրավունքները, վստահաբար, այդպիսի մարդիկ ապագայում կլինեն ավելի գիտակից և ավելի մեծ դեր կպահանջեն հասարակական կյանքում:

3. Ուրախությունն ու զվարթությունը մարդու բնական պահանջն է, որը հարստացնում է կյանքը, առողջ պահում մարդու մարմինն ու հոգին և բարձրացնում նրա կարողությունները: Այն կենսական պահանջ է, ինչպես սնվելու և շնչելու պահանջը: Այս կարևոր տարրը դպրոցում ներդնելու և զվարթ ու առույգ մթնոլորտ կազմակերպելու համար պետք է ծրագրեր մշակել: Պատանիներն ու երիտասարդները ավելի մեծ կարիք են զգում զվարթության, շարժունակության ու ակտիվության, գեղեցկության ու բարության: Սակայն այսօր Իրանում պատկերը հակառակն է. պատանիները, ովքեր պետք է լինեն հանրության մեծատիրախ և ակտիվ խավը, վերածվել են անտարբեր, պասիվ ու հիասթափված մարդկանց: Մասնագետների ու հոգեբանների կարծիքով՝ դրա հիմնական պատճառը ուրախ ու աշխույժ միջավայրի բացակայությունն է և հուսահատության ու տխրության տարածումը:

Մենք մեր սեփական դիտարկումների և կատարած ուսումնասիրությունների հիման վրա եկել ենք այն եզրակացության, որ իրանական միջնակարգ դպրոցներում ուրախ և աշխույժ միջավայրի ցուցանիշները շատ անմխիթար են, չունեն ակտիվ ու գործունյա աշխատանքներ կազմակերպելու մվազագույն պայմաններ: Ուրախ միջավայրը աշակերտներին ու աշխատող կադրերին դրական լիցքեր և բարձր տրամադրություն է հաղորդում, որի շնորհիվ ուսումնակրթական որակը դրական աճ է արձանագրում: Ուրախության պակասը, եթե նույնիսկ դպրոցի ներսում չդրսևորի իր բացասական հետևանքները, ապա դպրոցից դուրս, աճուլիտ, կարտահայտվի հակասոցիալական քայլերով ու վարքով: Այսօր մանկավարժական մոտեցումներն ու սկզբունքները մոռացության են մատնվել դպրոցներում: Շատ դպրոցներում չեք գտնի, նույնիսկ, մեկ ծառ կամ ծաղիկ կամ կանաչ բույս: Դպրոցները պատված են գորշ ու անուրախ գույներով: Անուրախ միջավայրը իջեցնում է կյանքի նկատմամբ հուսադրության ցուցանիշները և խթանում հակասոցիալական արարքներն ու երևույթները:

4. Համագործակցությունն ու մասնակցությունը սոցիալական կյանքի կարևոր հիմունքներից է:

Մասնակցային կառավարումը դպրոցում բոլորին ներգրավում է որոշումների կայացմանը, բաժանում պատասխանատվությունները և բոլորին խթանում դպրոցի նպատակների իրագործման ուղղությամբ: Տնօրենը իր աշխատակիցներին կարծիք հայտնելու, ուսումնակրթական հարցերը քննարկելու, նոր մտահղացումներ առաջադրելու և ստեղծագործելու առիթ է ընձեռում: Աշխատակիցները նման պայմաններում նախանձախնդիր ու շահագրգիռ են դպրոցի հաջողություններով և հուզազգացական պատկանելությունն ու կապվածությունն են զգում դպրոցի հանդեպ: Սոցիալական, զգացական, մտավոր, բարոյական ու ֆիզիկական զարգացումը կարող է լիարժեք իրականանալ միայն մարդկային փոխգործակցության ու համերաշխության պայմաններում: Դպրոցական միջավայրը շատ բան կարող է տալ պատանիներին համագործակցության առումով և նրանց սովորեցնել հավաքական աշխատանքներին մասնակցել<sup>2</sup>:

Կրթական աշխատանքներին մասնակցելը մեծացնում է նաև հասարակական այլ ոլորտներում մասնակցային ու փոխգործակցային աշխատանք տանելու կարողությունը: Այս հանգամանքը որոշիչ դեր ունի հասարակության ընդհանուր զարգացման ու բարգավաճման ուղղությամբ, այլ խոսքով՝ զարգացման ու ժողովրդավարության հիմքերը նախ դրվում են մշակութային ու կրթական բնագավառներում<sup>3</sup>:

Հետազոտությունները մատնանշում են, որ կրթական կառավարում մասնագիտության գծով կրթություն ստացած տնօրենները ավելի շատ են հակված մասնակցային մեթոդը կիրառելուն, այսինքն՝ խուսափում են պարտականությունների կուտակումից ու խիստ կենտրոնացումից և պատասխանատվությունները բաժանում են բոլոր աշխատողների միջև, որն էլ իր հերթին բարձրացնում է աշխատանքային աշխուժության ու կենսունակության գործակիցը և հետաձգում աշխատանքային անգործունակության ու լճացման շրջանը<sup>4</sup>:

Ներկայումս կրթական համակարգի չափազանց կենտրոնացված լինելու պատճառով՝ Իրանի դպրոցներում պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն մասնակցային կառավարում որդեգրելու համար: Դպրոցի տնօրենի աշխատաժամի մեծ մասը հատկացվում է հղվող շրջաբերականների պատասխանելու գործին: Իրականում, տնօրենը ամբողջովին վերադաս մարմինների կարգադրությունների կատարողի դերում է և ամեն կերպ պետք է փորձի շահել նրանց գոհունակությունը: Տնօրենին աշխատանքի ավելի մեծ ազատություն տալով և նրա լիազորությունները

մեծացնելով՝ կարելի է խթանել մասնակցային կառավարումը դպրոցներում:

5. Մեր համոզմամբ, Իրանի կրթության համակարգի կառավարման համակարգի բարեփոխման կարևոր հրամայականներից մեկը տնօրենների ընտրության ու նշանակման կանոնակարգի վերանայումն է: Տնօրենների նշանակումները կատարում են ոլորտին անտեղյակ մարդիկ, և հաճախ անտեսվում են ընտրվող անձի մասնագիտական ու տեխնիկական որակները: Մյուս հարցը կրթական համակարգի արտադրանքի, նաև նրա վերջնարդյունքի որակն է, որի հիման վրա պետք է գնահատել միջնակարգ դպրոցների տնօրենների գործունեության որակը, արդյունավետության մակարդակը<sup>5</sup>:

Իրանի կրթական համակարգի բարդ ու բազմաշերտ պայմանները և տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ձևավորվող խորքային փոփոխությունները էլ ավելի են ընդգծում տնօրենների, ուսուցիչների և աշակերտների անձնային, հոգեբանական ու բարոյական առանձնահատկությունների և մտավոր ու տեսական կարողությունների կարևորությունը: Ստեղծված նոր պայմաններում դպրոցի տնօրեններին առջև նոր պահանջներ են դրվում, և այն տնօրեններն են կարող լինա՞ծք ու արդյունարար աշխատել, ովքեր ժամանակի պահանջներին համաքայլ են շարժվում և կարողանում են տիրապետել արդի գործընթացներին:

Մեր օրերում կառավարումը համարվում է ժամանակակից գիտությունների կարևոր ճյուղերից մեկը և օրըստօրե ավելի է մեծանում նրա կարևորությունն ու նշանակությունը, քանի որ նրա վերջնարդյունքը մասնագետ, խելացի և արդյունարար անձերի պատրաստումն է հասարակության համար: Հարցն ավելի է կարևորվում, երբ խոսվում է կրթական հաստատությունների տնօրենման ու կառավարման մասին, որն անշուշտ ավելի բարդ, բազմաշերտ և հեռահար է: Բացի այդ, միջնակարգ դպրոցի ավարտին, երբ դպրոցականները մտնում են կյանք և ներգրավվում կանաչ խառնուրդի շուկա, կան բարձրագույն կրթության ոլորտ, այստեղ ևս կառավարման հատուկ ծրագրեր են պահանջվում, որպեսզի միջնակարգ դպրոցի շրջանավարտները կարողանան երջանիկ ու բարեկեցիկ կյանք ապահովել իրենց համար և մասնակցել հասարակության ընդհանուր բարօրության ու բարգավաճման գործին: Այս նպատակը կարող է լավագույնս իրագործվել, եթե դպրոցների տնօրեններն օժտված լինեն անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով:

Իրանը, բարեբախտաբար, հարուստ փորձ ու

նի կրթության կառավարման ոլորտում: Արդեն քանի տասնամյակ է, ինչ բուհերում ուսուցանվում է կառավարման ճյուղը, որի արդյունքում կառավարման գիտությունը փոխանցվել է ուսանողների և տնօրենների մի ստվար խմբի: Միջնակարգ դպրոցի տնօրեններն արդեն տարիներ շարունակ կրթական նպատակների իրագործման համար կիրառում ու գործադրում են կառավարման գիտության դրույթներն ու մեթոդները: Այժմ ժամանակն է բարեփոխումներ ու տեղաշարժեր ձեռնարկել այս ոլորտում և ավելի լուրջ վերաբերմունք ցուցաբերել կառավարման տեսություններին, հիմունքներին ու դրույթներին: Այս ճանապարհով միայն կարելի է Իրանի միջնակարգ դպրոցների կառավարման համակարգը ամուր հիմքերի վրա դնել և ընդառաջ գնալով ժամանակակից աշխարհի նոր մարտահրավերներին՝ ապահովել այս համակարգի վերջնարդյունքի բարձր մակարդակը՝ առաջնորդելու Իրանի ներկա փոփոխվող հասարակությունը և վաղվա արդիական ու առաջադեմ Իրանը դեպի զարգացում ու բարօրություն:

<sup>1</sup> **Միջբամալի, Սեյդ Մոհամմադ**, Կրթական ղեկավարում և կառավարում, «Յասթարուն» հրատարակչություն, 9-րդ հրատ., Թեհրան, 2000, էջ 48:

<sup>2</sup> **Շարիաբամադարի, Ալի**, Կրթական հաստատությունների դաստիարակչական առաքելությունը, «Սամթ» հրատարակչություն, Թեհրան, 1995, էջ 95:

<sup>3</sup> **Ամին Վարզալի, Նասերեդդին**, Փոխգործակցական մտածողության նախադրյալներն ու հրամայականները, «Կրթական կառավարում» պարբերական, 26-րդ համար, Թեհրան, 2000, էջ 101:

<sup>4</sup> **Բարուլի, Ազիզուլա**, Թեհրանի տղայոց ավագ դպրոցների տնօրենների աշխատանքային մաշունի (այրման) չափի գնահատում, «Կրթական կառավարում» պարբերական, 26-րդ համար, Թեհրան, 2000, էջ 56:

<sup>5</sup> **Սաֆի, Ահմադ**, Կառավարումը և նորարարությունը դպրոցներում, Ծնողկոմիտեների կազմակերպության հրատարակչություն, Երկրորդ հրատարակչություն, Թեհրան, 2009, էջ 201:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Շարիաբամադարի, Ալի**, Կրթական հաստատությունների դաստիարակչական առաքելությունը, Սամթ հրատարակչություն, Թեհրան, 1995:
- Սաֆի, Ահմադ**, Կառավարումը և նորարարությունը դպրոցներում, Ծնողկոմիտեների կազմակերպության հրատարակչություն, Երկրորդ հրատարակչություն, Թեհրան, 2009:
- Ալադեբանդ, Ալի**, Կրթության կառավարման հիմունքները, Փայան Նուր համալսարանի հրատարակչություն, 12-րդ հրատարակչություն, Թեհրան, 2003:
- Միջբամալի, Սեյդ Մոհամմադ**, Կրթական ղեկավարում և կառավարում, «Յասթարուն», 9-րդ հրատարակչություն, Թեհրան, 2000:

5. Ամին Վարզալի, Նասերեդդին, Փոխգործկցական մտածողության նախադրյալներն ու հրամայականները, Կրթական կառավարում պարբերական, 26-րդ համար, Թեհրան, 2000:
6. Բարոլի, Ազիզուլլա, Թեհրանի տղայոց ավագ դպրոցների տնօրենների աշխատանքային մաշունի (այրման) չափի գնահատում, Կրթական կառավարում պարբերական, 26-րդ համար, Թեհրան, 2000:

---

NECESSARY RENEWING AND REFORMING IN MANAGEMENT SYSTEM OF IRAN'S HIGH SCHOOLS

*ALI ASGHAR BOZORGI BAI*

Summary

It is a few decades that were passing from the management of Iran's high school units and unfortunately the management and the leading method in this field haven't matched with the great change of this age and the educational management hasn't come to an acceptable from until now. Considering the remarkable change happened in environment and organizations, due to presentation of new thought and development of technology from one hand and increasing development of educational system on the other hand, renewing and reforming of the education is something which in emphasize on. This article is an endeavor in this regard and has widely dealt with it.

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԳԱԿՑՄԱՆ ԳԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԳՈՂ-ՈՒՍԱՆՈՂ ՓՈԽԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ\*

### Լիանա ՕՅԱՆՅԱՆ

Խ. Արոյանի անվան ՀԳՄՀ Ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ



րին:

Մանկավարժական հաղորդակցումն այն միջոցների ու մեթոդների ամբողջությունն է, որոնք ապահովում են ուսումնադաստիարակչական խնդիրների լուծումն ու նպատակների իրականացումը, որոշում են դասավանդողների և սովորողների փոխազդեցության բնույթը:

Մանկավարժահոգեբանական մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ ուսումնադաստիարակչական գործընթացում առկա դժվարությունների նշանակալի մասը պայմանավորված է ոչ այնքան դասավանդողների գիտամեթոդական ոչ բավարար պատրաստությամբ, որքան մասնագիտամանկավարժական հաղորդակցման ոլորտի ոչ լիարժեք ձևավորվածությամբ (1):

Մանկավարժական հաղորդակցումը՝ որպես մանկավարժական փոխազդեցության բաղադրատարր, ենթադրում է մանկավարժական հաղորդակցման սուբյեկտների փոխադարձ կապ և ազդեցություն: Հաղորդակցումն արդյունավետ է, երբ կառուցվում է երկխոսության հիման վրա, որում տվյալ գործընթացի սուբյեկտները հավասար իրավունքներ ունեն:

Մանկավարժական հաղորդակցումը համադրում է հետևյալ բաղադրատարրերը՝ փոխադարձ ընկալումը, տեղեկատվության փոխանակումը, համատեղ գործունեության իրականացումը: Բարձրագույն դպրոցի ուսումնական գործընթացում նշված բաղադրատարրերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները. առա-

ջին բաղադրատարրը որոշվում է ուսումնական գործընթացի մասնակիցների դերերի յուրահատկությամբ, երկրորդը պայմանավորված է դասավանդողների և ուսանողների փոխհարաբերությունների բնույթով, երրորդը կախված է ուսանողների համատեղ գործունեության նպատակներից, ձևերից, բնույթից (4):

Պ. Ի. Պիդկասիստին առանձնացնում է այն հիմնական գործունեությունները, որոնք առկա են դասավանդող-ուսանող փոխազդեցության ընթացքում նպատակների, խնդիրների և արժեքների ընդհանրություն, տրամադրվածություն հաղորդակցմանը, գիտակցական վերաբերմունք, գործունեություն (5):

Գ. Մ. Անդրեևան գրում է, որ հաղորդակցման փոխներգործումն (ինտերակտիվ) կողմը ներառում է այն բաղադրատարրերը, որոնք կապված են մարդկանց փոխազդեցության բնույթի, գործունեության կազմակերպման հետ: Փոխազդեցությունը հնարավորություն է տալիս ոչ միայն տեղեկատվություն փոխանակել, այլև որոշակի նպատակի շուրջ համախմբվել և իրականացնել ընդհանուր գործունեություն (1):

Հաղորդակցման պահանջմունքը ոչ միայն մանկավարժական, այլև ցանկացած գործունեության արդյունավետության պայման է: Հաղորդակցման՝ որպես արժեքային ներուժ ունեցող փոխազդեցության կարևորությունը հատկապես ակնառու է կրթության համակարգում, ընդամին դասավանդողի համար հաղորդակցման պահանջմունքը ոչ միայն անձնային, այլև մասնագիտական նշանակալի որակ է:

Մանկավարժական հաղորդակցման մեջ կարևոր է հաշվի առնել դասավանդողների և ուսանողների անձնային հատկանիշները, որոնց շնորհիվ հնարավոր է ձևավորել հոգեբանական փոխշփումներ, հաղթահարել փոխըմբռնման դժվարությունները:

Անձի հատկանիշները կարելի է բաժանել երկու խմբի՝ անհատական և մասնագիտական:

Անհատական հատկանիշները լինում են բնա-

\* Ներկայացվել է 11.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

ծին (հոգեբանական առանձնահատկություններ) և ձեռքբերովի (իմացական, բարոյական, մշակութային), որոնք զարգանում են ամբողջ կյանքի ընթացքում: Անհատական հատկանիշները մեծապես կախված են մարդու շրջակա միջավայրից, դրանք ձևավորվում և դրսևորվում են՝ կախված սոցիալական ծագումից, բնակության վայրից, կենսական պայմաններից, իրադարձություններից: Հոգեբանական առանձնահատկությունները խառնվածքը, բնավորությունը, հակումները, ընդունակությունները, գրեթե չեն փոխվում, սակայն իմացական, բարոյական, մշակութային որակները կարող են փոխվել համապատասխան ներգործությամբ, քանի որ մարդը մշտապես ձգտում է կատարելագործման:

Ուսանողը և դասավանդողը սոցիալական հարաբերությունների և գիտակցական գործունեության սուբյեկտ են: Բուհի դասավանդողի նպատակը ապագա մասնագետի անձի ձևավորումն է, դրա համար նա պետք է ակտիվորեն ներգործի ուսանողների իմացական, բարոյական մային որակների վրա: Անտարակույս, բուհում ուսումնառության հիմնական նպատակը մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների տիրապետումն է, սակայն ներկայումս առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում ուսանողների սոցիալ-մշակութային և հաղորդակցային հմտությունների ձեռք բերումը, մտահորիզոնի ընդլայնումը, իրականությունը համարժեք ընկալելու և զննահատելու կարողությունների ձևավորումը:

Հաղորդակցման գործընթացը սոսկ մեկի կողմից մյուսին տեղեկատվության փոխանցում չէ. հաղորդակցման հիման վրա է կառուցվում մանկավարժական փոխներգործությունը: Փոխադարձ շփման պահանջմունքն այն միավորող օղակն է, որի վրա կառուցվում է ուսումնական գործունեությունը: Հաղորդակցման վրա հիմնված փոխազդեցությունը բուհում ուսանողների հարմարման և սոցիալականացման գործն է, ուսումնառության գործընթացից հոգեբանական բավարարվածության ցուցիչ: Հաղորդակցումը հնարավոր է, եթե դասավանդողը խորությամբ գիտի ուսանողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, հաշվի է առնում նրանց հետաքրքրություններն ու համոզմունքները, նրանց հետ քննարկում է կենսական հարցերը, դժվարություններն ու հեռանկարները:

Վ. Ա. Կան-Կալիկը համոզված է, որ բուհի դասավանդողի խնդիրն է ուսանողներին ներգրավել հաղորդակցման ոլորտ: Այս խնդրի լուծումը հնարավոր է ուսումնադաստիարակչական գործընթացում ավտորիտար դրսևորումների բացառմամբ, հուզականության շեշտադրմամբ, նրանց մեջ կայուն կողմնորոշումների և սեփական դիր-

քորոշման ձևավորմամբ (2):

Ներկայումս բարձրագույն կրթության համակարգում շեշտադրվում է ոչ թե միջդերային, այլ միջանձնային հաղորդակցումը, այսինքն՝ հաղորդակցման մասնակիցների միջև առաջնային են դառնում երկխոսությունը, փոխըմբռնումն ու բացախոսությունը: Միջանձնային հաղորդակցման շնորհիվ օպտիմալ պայմաններ են ստեղծվում յուրաքանչյուրի ճանաչողական, հուզական, վարքային ոլորտներում դրական փոփոխությունների համար:

Հաղորդակցումը դիտարկվում է իբրև՝

- ուսումնական խնդիրների լուծման միջոց,
- դաստիարակչական գործընթացի սոցիալ-հոգեբանական ապահովման համակարգ,
- դասավանդողների և ուսանողների փոխազդեցության կազմակերպման միջոց,
- անձի դաստիարակության և ստեղծագործական անհատականության ձևավորման գործընթաց:

Դասավանդողը հաղորդակցման գործընթացի նախաձեռնողն ու ղեկավարն է: Հաղորդակցման գործընթացի էությունը մանկավարժի և սովորողների կոլեկտիվի փոխազդեցության համակարգն է, միջոցների ու եղանակների ամբողջությունը:

Հաղորդակցման հիմնախնդիրն ցվիրված հետազոտություններում բնութագրվում է մանկավարժական հաղորդակցման կառուցվածքը, որն անմիջականորեն կապված է դասավանդողի անձնային և մասնագիտական որակների հետ: Հետազոտողներն առանձնացնում են նաև մանկավարժական հաղորդակցման հետևյալ փուլերը.

1. **Ախտորոշիչ** փուլ. դասավանդողի կողմից ուսանողական խմբի կամ առանձին ուսանողների հետ հաղորդակցման մոդելավորման գործընթացում իրականանում է գործունեության պլանավորումը ըստ

- ուսումնադաստիարակչական խնդիրների ու նպատակների,
- ուսումնական խմբում բարոյահոգեբանական մթնոլորտի և ձևավորվող իրավիճակների,
- մանկավարժի ստեղծագործական անհատականության,
- ուսումնադաստիարակչական գործընթացում կիրառվող մեթոդների:

2. **Հաղորդակցման նախնական** փուլ. լսարանի, խմբի, առանձին ուսանողների հետ անմիջական հաղորդակցման կազմակերպում: Այս փուլում կարևորվում են հետևյալ տարրերը՝

- հաղորդակցման պլանավորված մոդելի որոշակիացում,
- հաղորդակցման կառուցվածքի և պայմանների ճշգրտում:

3. **Հաղորդակցման** կառավարում (3). հաղորդակցման կազմակերպմանն ու իրականացմանն

առաջադրվում են սոցիալ-հոգեբանական հետևյալ պահանջները՝

- տեղեկատվության փոխանակման համար խմբի հետ հոգեբանական շփման և յուրաքանչյուրի անձնային ընկալման համար պայմանների ապահովում,

- կոլեկտիվ որոշումների և համատեղ քննարկումների մթնոլորտի ձևավորում,

- ուսումնաճանաչողական գործունեության կառավարում,

- գործնական և անձնային տեսանկյունների միասնություն,

- ուսանող-դասավանդող փոխազդեցության ամբողջական, մանկավարժորեն նպատակահարմար համակարգի բոլոր բաղադրատարրերի ապահովում:

Դպրոցը և բուհը տարբերվում են ուսուցման և դաստիարակության բովանդակությամբ, ուսումնական գործունեության կազմակերպման ձևերով: Բուհում մանկավարժական հաղորդակցման ձևերը էականորեն տարբերվում են ուսուցիչ-աշակերտ հաղորդակցման ձևերից, քանի որ բուհի հիմնական գործառույթը մասնագետի անձի ձևավորումն է: Բուհում ուսանող-դասավանդող հաղորդակցման մեջ ձևավորվում են երկու տիպի հարաբերություններ՝ համագործակցային և առաջնորդող-ենթարկվող:

Բարձրագույն դպրոցում դասավանդող-ուսանող հաղորդակցմանն առաջադրվում են մանկավարժական հետևյալ պահանջները՝

- ներխմբային կայուն, փոխըմբռնման վրա հիմնված հարաբերությունների ձևավորում,

- դասավանդողի ավտորիտար ներգործության հաղթահարում հիմնված հաղորդակցման յուրաքանչյուր մասնակցի անձի նկատմամբ հարգանքի վրա,

- ուսանողների ընդհանուր և մասնագիտական հետաքրքրությունների հաշվառում:

Մանկավարժական հաղորդակցման ընթացքում լուծվում են ուսումնամասնագիտական տարբերակներ՝

- ուսանողներին ուսումնահետազոտական տարբեր նախագծերում ներգրավում,

- ուսանողների սոցիալականացման և ինքնակառավարման որակների ձևավորման համար նախադրյալների ստեղծում,

- գիտահետազոտական համատեղ գործունեության իրականացում, մասնակցություն գիտագործնական կոնֆերանսներին, սեմինարներին, օլիմպիադաներին, մրցույթներին,

- ոչ պաշտոնական շփումներ ոչ միայն անմիջականորեն, այլև վիրտուալ, սոցիալական կայքերի միջոցով:

Մանկավարժական հաղորդակցումը պետք է լինի համակարգված և անընդհատ՝ աստիճանա-

բար անցնելով ուսումնաորոնողական համատեղ փոխներգործության: Պաշտոնական-կանոնակարգված հարաբերությունները աստիճանաբար պետք է տեղի տան ոչ պաշտոնական, վստահության վրա հիմնված հարաբերությունների: Ներկայումս առանձնահատուկ պահանջներ են առաջադրվում դասավանդողների և ուսանողների փոխազդեցության վրա հիմնված հաղորդակցման բարոյահոգեբանական հիմքերին: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն հաղորդակցման անհատական տիպաբանական բնութագրիչները կամ ոճը: Հաղորդակցման անհատական ոճի որոնումը յուրաքանչյուր դասավանդողի համար առաջնահերթ խնդիր է: Հաղորդակցման ոճի մեջ արտահայտվում են՝

- մանկավարժի հաղորդակցային հնարավորություններն ու առանձնահատկությունները,

- փոխհարաբերությունների բնույթը,

- մանկավարժի ստեղծագործական անհատականությունը,

- ուսանողի կամ ուսանողական կոլեկտիվի առանձնահատկությունները:

Հաղորդակցման ոճն արտացոլում է անձնային-մասնագիտական հուզական և հոգեբանական առանձնահատկությունները: Օպտիմալ է հաղորդակցման այն ոճը, որը հիմնվում է ուսանողների և դասավանդողների՝ համատեղ գործունեության ձգտման վրա և մարմնավորում է դասավանդողների սոցիալ-բարոյական կողմնորոշումներն ու մասնագիտական-մանկավարժական հաղորդակցման հմտությունները:

Վ. Ա. Կան-Կալիկը բնութագրում է մանկավարժական հաղորդակցման հետևյալ ոճերը.

1. Հաղորդակցում՝ մասնագիտական բարձր նպատակային ուղղվածության, մանկավարժական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի հիման վրա, ընդամին հաղորդակցման արդյունավետությունը կախված է ընդհանուր մասնագիտական հետաքրքրություններից:

2. Հաղորդակցում՝ բարեկամական հարաբերությունների հիման վրա, որն արտահայտվում է որևէ գործունեության, ընդհանուր գաղափարի շուրջ միավորմամբ: Դասավանդողը ստանձնում է ավագ ընկերոջ՝ դաստիարակի, խրատատուի, ուսումնական համատեղ գործունեության մասնակցի դեր և գործառույթներ: Այնուհանդերձ հարկ է խուսափել չափազանց մտերմական հարաբերություններից, դա հատկապես վերաբերում է երիտասարդ դասավանդողներին, որոնք չեն ցանկանում սովորողների հետ զուտ պաշտոնական հարաբերություններ ձևավորել և հայտնվել բախում-նային իրավիճակներում:

3. Որոշակի հեռավորության պահպանմամբ հաղորդակցումը մանկավարժական հաղորդակց-

ման ամենատարածված տեսակն է: Այսօրինակ փոխհարաբերություններում մշտապես առկա է հեռավորությունը, որը ուսուցման ընթացքում հիմնվում է դասավանդողի հեղինակության և պրոֆեսիոնալիզմի, դաստիարակության ընթացքում տարիքի և կենսափորձի վրա:

4. Հաղորդակցումը, որը հիմնված է բարյացակամ հարաբերությունները բացառելու վրա, բացասական, հակամարդասիրական բնույթ ունի և հաճախ սքոլում է դասավանդողի՝ մանկավարժական իրավիճակները կառավարելու անկարողությունը:

5. Հաղորդակցումը՝ հիմնված սովորողներին սիրաշահելու վրա, բնորոշ է հատկապես երիտասարդ դասավանդողներին, որոնք ձգտում են հարաբերություններում ժողովրդականության և պարզության. նմանօրինակ հաղորդակցումն ապահովում է սոսկ էժանագին հեղինակություն (2):

Մանկավարժական պրակտիկայում հաճախ հաղորդակցման ոճերը համադրվում են, հնուտ մանկավարժը վարպետորեն կիրառում է այս կամ այն ոճը՝ ըստ իրավիճակի և գործունեության բովանդակության:

Գրականության մեջ մշակվել են մանկավարժական հաղորդակցման մոդելներ, որոնցից մի քանիսն արժանի են դիտարկման.

- խմբային բանավեճերի ղեկավարը ուսումնադաստիարակչական գործընթացում կարևորում է համագործակցությունը, համաձայնությունն ու փոխազդեցությունը՝ իրեն վերապահելով հաղորդակցվող սուբյեկտների միջև միջնորդի դեր. նրա համար փոխհամաձայնությունը, վստահությունը, փոխըմբռնումը ավելի կարևոր են, քան բանավեճի արդյունքները:

- Դասավանդողը աչքի է ընկնում անհատականությամբ, պարապմունքների ընթացքում ձգտում է ստեղծել պրոբլեմային իրավիճակներ, կազմակերպում է բանավեճեր, էվրիստիկ զրույցներ: Նրան բնորոշ են ինքնաբերական դրսևորումները, գործունեության ոչ համակարգված, կանոնակարգված բնույթը. նա սովորողներին մղում է սեփական դիրքորոշումներ ձևավորելու և պաշտպանելու՝ հակադրելով միմյանց հետ և այդ գործընթացում ամրապնդելով սեփական տեսակետն ու համոզմունքները:

- Դասավանդողը ընդօրինակման օբյեկտ է, նրա գործողությունները, ոճը, շարժումները, մույնիսկ ձայնը ուսանողների կողմից ընդօրինակվում են ոչ միայն ուսումնական գործընթացում, այլև կենսական տարբեր իրավիճակներում, որն արտացոլվում է կյանքի նկատմամբ նրանց հայացքներում:

- Դասավանդողը պահանջում է, որ իրեն անվերապահորեն ենթարկվեն՝ համոզված լինելով, որ միշտ և բոլոր պարագաներում ճիշտ է, խուսա-

փում է փոխհամաձայնությունից, երկմաստություններից, կողմնակից է կոշտ մեթոդների, բացառում է համագործակցությունը, ազատ, ստեղծագործական, ինքնաբերական դրսևորումները: Նրա նկատմամբ արտաքուստ հարգանքը սքոլում է անվստահություն, անտարբերություն, հաղորդակցման դժկամություն:

- Դասավանդողը հակված է քննարկելու, վերահսկելու, զննահատելու սովորողների գործունեությունը, հիմնավորելու արդյունքները, խրախուսելու կամ քննադատելու, հանդիմանելու:

- Դասավանդողը ձևավորում է ներխմբային հաղորդակցական այնպիսի մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուրը չի առանձնացվում որպես անհատականություն, սակայն բոլորը՝ որպես մեկ թիմ, կարող են հաղթահարել ցանկացած դժվարություն և արդյունավետ գործունեություն իրականացնել: Դասավանդողին վերապահված է միավորել խմբի ջանքերը, ոգեշնչել՝ վերջնական արդյունքի հասնելու համար:

- Դասավանդողը տիրապետում է իմացական բարձր որակների, ճշգրիտ է, զուսպ, ամենագետ, սակայն հաղորդակցային որակները բավականաչափ զարգացած չեն, այդ պատճառով պարապմունքները հաճախ տաղտկալի և միօրինակ են, քանի որ հիմնված են դասավանդողի մենախոսության վրա:

Միջանձնային բախումները սոցիալական և հոգեբանական փոխազդեցության ընթացքում առանձին անհատների խմբերի միջև տարածայնությունների արդյունքն են: Բախումներն ունեն ինչպես սոցիալ-հոգեբանական, այնպես էլ անձնային-հոգեբանական պատճառներ՝ միջանձնային լարված հարաբերություն, ինքնահաստատման, լիդերության ձգտում, հոգեբանական անհամատեղելիություն և այլն: Վերջինս փոխազդեցության սուբյեկտների խառնվածքի և բնավորության ոչ նպատակահարմար համադրումն է, կենսական արժեքների, իդեալների, դրդապատճառների, գործունեության նպատակների, աշխարհայացքի միջև առկա հակասությունը: Բախումների հիմքում ընկած են անձնային պատճառներ՝ կապված որևէ գործընթացի մասնակիցների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների հետ՝ սոցիալ-հոգեբանական իրազեկության ցածր մակարդակ, հոգեբանական ոչ բավականաչափ կայունություն, ապրումակցման ցածր մակարդակ, խառնվածքի խուլերիկ տիպի գերակշռում և այլն:

Բուհի ուսումնական միջավայրում առաջին կուրսերի ուսանողների շրջանում ընթանում է ինքնահաստատման գործընթաց. այս փուլում նրանց վարքային դրդապատճառները պայմանավորված են խառնվածքով, բնավորության գծերով, դաստիարակության մակարդակով: Ուսումնառու-

թան առաջին շրջանում ուսանողներին բնորոշ են սեփական արժանապատվության սուր զգացումը, բարոյական չափանիշների, փաստերի, երևույթների, սեփական վարքի գնահատման վերաբերյալ բացարձակ և ոչ միանշանակ ըմբռնումը: Բնականաբար այս շրջանում անվստահություն է դրսևորվում դասավանդողների նկատմամբ: Բարձր կուրսերում ուսանողների միջանձնային փոխազդեցությունն առավել գիտակցված բնույթ ունի. ձևավորվում են միկրոխմբեր՝ ըստ միջանձնային համատեղելիության սկզբունքի, որում բախումները հազվադեպ են: Ոչ խոր բախումները հարթվում են հենց ուսանողների կողմից, սակայն կարող են ավարտվել նաև հարաբերությունների խզմամբ: Ըստ էության, մանկավարժական տարբեր իրավիճակներում ձևավորված բախումները կարող է ընկալել և անհրաժեշտ լուծում տալ այն մանկավարժը, ով ունի անձնային ու մասնագիտական բարձր որակներ: Ակնհայտ է, որ բախումնային իրավիճակներում առաջնային է դառնում երկխոսությունը. դասավանդողի խնդիրն է ուսանողներին մղել հաղորդակցման, սակայն այն պետք է իրականանա միայն անձնական շահագրգռվածության, վարքի նորմերի պահպանման, հաղորդակցային հմտությունների ու եղանակների տիրապետման դեպքում:

Մանկավարժական հաղորդակցման ընթացքում փոխազդեցության արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է մշակել ախտորոշման և կամխատեսման չափանիշներ: Ն.Ա. Լաբունսկայան առաջարկում է հաղորդակցման ընթացքում փոխազդեցությունը գնահատել ըստ հետևյալ չափանիշների՝

- դասավանդողների և ուսանողների միջև փոխադարձ շփման պահանջմունք,
- դասավանդողների մասնագիտական գործունեությամբ բավարարվածություն,
- ուսանողների ուսումնական հաջողությունները և կրթության որակի ճերկայացվող չափանիշներին համապատասխանություն:

Դասավանդողների մասնագիտական գործունեությամբ բավարարվածությունը հոգեբանական գործոն է. բավարարվածությունը մարդու հոգեկանի յուրահատուկ վիճակ է, հուզական, իմացական, ֆիզիկական պահանջմունքների որոշակի հաշվեկշռում: Դա հիմնականում կապված է դասավանդողի անձնային և մասնագիտական ինքնարդիականացման հետ: Ուսանողների ուսումնական հաջողությունը փոխադարձաբար կապված է դասավանդողի մասնագիտական գործունեությամբ բավարարվածության հետ. նրանց ուսումնական գործունեության արդյունավետությունը դասավանդողների մասնագիտական գործունեության որակի ցուցիչ է: Դասավանդողը, շահագրգռված լինելով իր ուսանողների հաջողության համար, փորձում է առավելագույն ջանքեր ներդնել՝ ուսումնական գործընթացը բազմաբնույթ և ստեղծագործական դարձնելու համար: Այստեղ առաջնային է դասավանդողի հաղորդակցային վարպետությունը. նա պետք է տիրապետի ոչ միայն ուսանողների սոցիալ-հոգեբանական տվյալներին, այլև ժամանակակից երիտասարդության գաղափարական և արժեքային կողմնորոշիչներին: Ուսանող-դասավանդող փոխազդեցության և մանկավարժական հաղորդակցման մեջ բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դասավանդողի անձնային հատկանիշները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Андреева Г. М.** Психология социального познания: учеб. Пособие для высш. Учеб. М., 1997.
2. **Кан-Калик В. А.** Основы профессионально-педагогического общения, Грозный, 2005, 531 с.
3. **Мудрик А. В.** Общение в процессе воспитания. М. "Знание", 2001, 320 с.
4. Педагогика и психология высшей школы. Учеб. Пособие /Под ред. Булановой-Топроковой М. В., Ростов на/Дону, "Феникс", 2002, 544 с.
5. **Пидкасистый П. И., Портнов М. А.** Искусств во преподавания. М., Пед. Общество России. 1999, 210 с.

THE ROLE OF PEDAGOGICAL COMMUNICATION IN THE PROCESS OF INTERACTION BETWEEN TEACHERS AND STUDENTS

LIANA OHANYAN

Summary

The social-psychological peculiarities of pedagogical communication in higher educational institutions and the phases of its organization and implementation have been considered in this article. The nature and forms of communication between teachers and students and the demands made to them have also been reviewed here.

# ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ\*

## Հասմիկ ՈՒՂՈՒՄՅԱՆ

*Խ. Արուսյանի անվան ՀԳՄՀ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայրող*

**Ատենախոսության թեման՝** Համատեղ գործունեությունը որպես նախադպրոցականի տնտեսագիտական դաստիարակության միջոց

**Գիտական ղեկավար՝** Ա. ԴԱԼԼԱՔՅԱՆ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



**Ե**րեխայի լիարժեք զարգացման, նրա անձի ձևավորման գործընթացների արդյունավետությունը պայմանավորված է սոցիալական բոլոր ինստիտուտների մանկավարժական ներդրության փոխազդեցությամբ:

Երեխայի դաստիարակությունն սկսվում է ընտանիքում: Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են երեխայի անձի հիմքերը, և կառուցվում է նրա սոցիալական կերպարը: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկությունները, ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկությունները, և դրվում են սոցիալական վարքագծի հիմքերը: Ընտանիքը մեծապես նպաստում է երեխայի ինքնահաստատմանը սոցիալական միջավայրում, նրա ստեղծագործական ներուժի և անհատականության բացահայտմանը: Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցում և առաջնորդում է երեխային ողջ կյանքում: Յ. Ա. Կոմենսկին նշում է, որ «մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ»: Ընտանիքն է ապահովում երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ: Հոգեբան Ա. Ն. Լեոնտևը

գրում է. «Նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայությանը»: Ընտանեկան դաստիարակությամբ է մեծ չափով պայմանավորված երեխայի հետագա գոյության և կենսագործունեության ներդաշնակությունը: Հայտնի մանկավարժագետ Յ. Պ. Ազարովն ընտանիքը բնութագրում է որպես «միկրոտիեզերք», ուր երեխայի սոցիալական զարգացման և ինքնահաստատման համար առկա են բոլոր պայմանները՝ մի քանի սերնդի համատեղ ապրելակերպ, սոցիալ-դերային և մասնագիտական բազմազանություն, տարբեր սոցիալական կարգավիճակների առկայություն, համատեղ կյանքին հարմարվելու անհրաժեշտություն:

Ընտանիքի կարևորագույն գործառույթներից է նախադպրոցականի տնտեսագիտական դաստիարակությունը: Նախադպրոցականների տնտեսագիտական դաստիարակությունն անհնար է առանց ծնողների մասնակցության, քանի որ ընտանիքը իսկական տնտեսագիտություն է, և այնտեղ երեխաները ոչ թե սովորում են ապրել, այլ ապրում են [1, 259]:

Երիտասարդ և փորձառու մանկավարժները կարող են շատ բան իմանալ ծնողներից ընտանիքի տնտեսագիտական գաղտնիքների մասին: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ ընտանիքում յուրացված օգտակար հմտություններն ու կարողությունները արտահայտվում են մանկապարտեզի առօրյա կյանքում: Այդպիսի

\* Ներկայացվել է 11.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

երեխաները տարբերվում են հասակակիցներից իրենց գործնական կարողությունների որակով և մակարդակով, դրանց իրագործման գիտակցմամբ: Դաստիարակները միշտ հենվում են նման երեխաների վրա խմբի կենցաղային գործունեության կազմակերպման ժամանակ, ներգրավում են նրանց աշխատանքային հանձնարարությունների կատարման մեջ, տալիս հերթապահի պարտականություններ, հատկապես երբ բացակայում է դաստիարակի օգնականը: Օրինակ՝ երբ հերթապահները բաժանում են պարապմունքի պարագաները, նրանց մեծ մասը գործում է հետևյալ կերպ. սեղաններին պարագաները դնում են հավասար քանակությամբ, չնայած երբեմն որոշ սեղանների մոտ մեկ երեխա է նստում: Սակայն որոշ հերթապահներ հաշվի են առնում այդ հանգամանքը և դաստիարակի թույլտվությամբ առաջարկում են նստել ընկերոջ կողքին:

Հենց ընտանիքում է երեխան յուրացնում տնտեսագիտական տարրական հասկացություններ և ձեռք բերում տնտեսական սոցիալականացման առաջին փորձը: Ընտանեկան տնտեսության մթնոլորտը, ծնողների արարքները, նրանց վերաբերմունքը փողի, առարկաների, արժեքների նկատմամբ յուրացվում է երեխայի կողմից: Երբ երեխան տեսնում է, թե ինչպես է մայրը մաքրում կարտոֆիլը կամ որոշակի չափով պատրաստում այս կամ այն ուտելիքը՝ ասելով. «Այսօր քիչ կպատրաստենք, որովհետև նախաճաշելու ենք երկուսով», այդ ամենը չի վրիպում նախադպրոցական տարիքի երեխայի ուշադրությունից: Նա, որպես կանոն, մայրիկի, հայրիկի, տատիկի կողքին է: Երեխան եթե ոչ մասնակիցը, ապա անպայման տեղի ունեցածի վկան է:

Ծնողների շրջանում կատարված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ նրանք տեսականորեն ընդունում են տնտեսագիտական դաստիարակության անհրաժեշտությունը և օգտակարությունը՝ համարելով այն որպես ժամանակի հրամայական, սակայն գործնականում շատ քիչ բան են անում տնտեսագիտության աշխարհ երեխաներին ներգրավելու համար: Դա թույլ է տալիս առանձնացնել ծնողների հետ համագործակցության հետևյալ ձևերը.

1. Զրույցներ, կոնսուլտացիաներ ծնողների հետ
2. Ծնողական ժողովներ, բաց դռների օրեր
3. Թեմատիկ գիտագործնական կոնֆերանսներ ծնողների հետ համատեղ
4. Ծնողական անկյան ստեղծում:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ծնողների ներկայու-

թյունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային, իսկ ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ:

Նախադպրոցականների տնտեսագիտական դաստիարակության շուրջ աշխատանքն սկսելիս մանկավարժը նախ և առաջ պետք է տեղեկացնի ծնողներին կատարվելիք աշխատանքի մասին: Շատ կարևոր է ցույց տալ տվյալ պրոբլեմի շուրջ աշխատանքի անհրաժեշտությունը: Հաճախ նշված է հիմնահարցը ծնողների մեջ խուսափողական վերաբերմունք է առաջացնում, քանի որ առաջին հայացքից տնտեսագիտությունը և երեխան անհամատեղելի են: Տնտեսագիտությանը բնորոշ են բարդ հասկացություններ, սակայն պետք չէ ծանրաբեռնել նախադպրոցականներից նման հասկացություններով:

Դաստիարակի համար կարևոր է ծանոթանալ իր սաների ծնողների մասնագիտություններին: Դա անհրաժեշտ է այնպիսի պարապմունքների անցկացման համար, որոնց նպատակը երեխաներին մարդկանց աշխատանքի, նրանց մասնագիտություններին ծանոթացնելն է: Դաստիարակը պետք է բացատրի ծնողներին, որ տարբեր մասնագիտությունների, աշխատանքի նշանակությունը մարդկանց կյանքում ցույց տալու համար նրան անհրաժեշտ է ծնողների անմիջական օգնությունն ու մասնակցությունը: Երեխաները պետք է իմանան իրենց ծնողների մասնագիտության անվանումը, նրանց գործունեության բովանդակությունը, որն է նրանց աշխատանքի արդյունքը և, վերջապես, ինչու են բոլոր մարդիկ աշխատում: Դաստիարակների և ծնողների համագործակցության կարևորագույն ուղղություններից է երեխաների մեջ ցանկացած մասնագիտության, ցանկացած աշխատանքի հանդեպ հարգալից վերաբերմունքի դաստիարակումը:

Ինչպես նշում է Ա. Դ. Շատովան. «Տնտեսագիտական դաստիարակության իմաստն այն է, որ երեխաների մեջ ձևավորվի ճիշտ վերաբերմունք այն ամենի հանդեպ, ինչ նրանց համար անում են մեծերը, հարգանք մարդկանց աշխատանքի հանդեպ, ինչի շնորհիվ ստեղծվել է առարկայական աշխարհը»:

Երեխաների աշխատանքային դաստիարակության լավագույն միջոց է նրանց մասնակցությունն ընտանիքի տնտեսական, կենցաղային գործերին: 5 տարեկան երեխան արդեն կարող է ունենալ որոշակի պարտականություններ ընտանիքում, և դրանցից առաջինը սեփական տնտեսության մեջ կարգուկանոնի հաստատումն է: Սակայն ծնողները դժգոհում են, որ երեխաները մեծ դժվարությամբ են դա կատարում: Երեխաներին ավելի հետաքրքիր է մասնակցել մեծահասակների գործերին, քան կարգի բերել իրենց խաղային

անկյունները: Այնուամենայնիվ, պետք է փնտրել տարբեր եղանակներ՝ տնային գործերում երեխաներին ներգրավելու համար (օր.՝ մեծահասակը սկսում է, իսկ երեխան միանում է նրան, կամ հակառակը): Երեխաների և մեծահասակների համատեղ աշխատանքը ամենագործուն եղանակն է ինչպես ընտանիքում, այնպես էլ մանկապարտեզում [2,142]:

Նախադպրոցականների տնտեսագիտական դաստիարակության ծրագրի փուլերից մեկը ծանոթացումն է մարդկանց կյանքի սոցիալ-տնտեսական երևույթին՝ փողին՝ որպես պատմամշակութային երևույթ:

Շատ կարևոր է երեխայի գիտակցությանը հասցնել «աշխատանք» և «փող» հասկացությունների կապը: Կարևոր է նաև «բյուջե» հասկացությանը ծանոթացումը: Անհրաժեշտ է երեխաներին բացատրել, թե ինչ է բյուջեն, ինչից է այն բաղկացած (ընտանիքի անդամների փողից, որի համար էլ կոչվում է «ընտանեկան»):

Նախադպրոցականներին ընտանեկան տնտեսության մեջ ներգրավելու ձև է ծնողների հետ խանութներ այցելելը: Երեխային տանը մենակ թողնելը վտանգավոր է, այդ իսկ պատճառով ավելի նպատակահարմար է երեխային նախապատրաստել խանութներ այցելելուն: Օրինակ՝ մայրն առաջարկում է երեխային միասին կազմել գնումների ցուցակը, խոսք է տալիս երեխային գումար տրամադրել որևէ բան գնելու համար, եթե նա համբերատար լինի: Այդուհանդերձ, մեզանից շատերը ակամատես են եղել մի երևույթի, երբ երեխան խանութում լաց է լինում՝ պահանջելով մայրիկից գնել այս կամ այն խաղալիքը: Նման անհարմար վիճակից խուսափելու համար ավելի նպատակահարմար է նախապես զրուցել երեխայի հետ և բացատրել, որ ամեն անգամ չի կարող կատարել նրա ցանկությունը: Ճիշտ է, ծնողի համար շատ դժվար է մերժել երեխային և ասել, որ գումար չունի նրա ցանկությունը կատարելու համար, սակայն եթե երեխան շատ վաղ ներգրավվի ընտանեկան տնտեսության վարման գործընթա-

ցի մեջ, ապա ծնողները հնարավորինս գերծ կմնան նման տհաճ վիճակներից:

Ժամանակակից սոցիալ-տնտեսական կյանքի վառ երևույթներից մեկը գովազդն է: Անհրաժեշտ է երեխաներին տեղեկացնել, որ գովազդը հասցեագրվում է մեծահասակներին, քանի որ նրանք աշխատում են և փող ունեն: Երեխաները կարող են դիտել գովազդը և իրենց տեսածի մասին տեղեկացնել ծնողներին: Պետք է բացատրել երեխաներին, թե ինչու, չնայած գովազդին, ծնողները չեն շտապում անմիջապես գնել ապրանքը. ոմանք մտածում են, որ միգուցե այն անորակ է և պետք է այն տեսնել, իսկ մյուսները պարզապես դեռ գումար չունեն: Երբեմն գովազդը խաբուսիկ է լինում:

Տնտեսագիտական դաստիարակության կարևոր և ամփոփիչ մասը օգտակար սովորությունների դաստիարակումն է, որը հեշտացնում է մարդկանց կյանքը: Վերջինիս էությունը հետևյալն է. մարդիկ շատ են աշխատել, ստեղծել անհրաժեշտ իրեր, ապրանքներ, վաստակել են գումար, որպեսզի գնեն դրանք, գովազդի միջոցով տեղեկացել են, թե որտեղից ձեռք բերեն այս կամ այն ապրանքը, և այն դարձել է ընտանեկան տնտեսության մի մասը, այժմ պետք է իմանալ, թե ինչպես այն օգտագործել, որ երկար ծառայի:

Նախադպրոցական տարիքի երեխայի ցանկացած մանկավարժական հիմնախնդիր կարող է ճիշտ լուծում ստանալ միայն մանկապարտեզի և ծնողների ակտիվ համագործակցության պայմաններում, մասնավորապես տնտեսագիտական դաստիարակությունը, որի հիմքում ընկած է մանկապարտեզի և ընտանիքի սերտ համագործակցությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան**, Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2005:
2. **А. Д. Шамова**, Экономическое воспитание дошкольников. Педагогическое общество. России, 2005.
3. [www.planetadetstva.net](http://www.planetadetstva.net)

THE COOPERATION OF PEDAGOGES AND PARENTS IN THE ECONOMICAL TEACHING PROCESS OF THE PRESCHOOL CHILDREN

HASMIK UDUMYAN

Summary

In the article are shown up the forms of cooperation of pedagoges and parents. The participation of the parents is very important in the economical education of the preschool children. It is offered to involve the parents in the process of economy of the family.

# ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

## Ադրինե ԳԱԼՈՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ԴՊՄԴ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ

Ատենախոսության թեման՝ Ինքնուրույնության դաստիարակության մանկավարժական պայմանները վաղ տարիքում

Գիտական ղեկավար՝ Ա. ՄԱՐՈՒՔՅԱՆ՝ մանկ. գիտությունների թեկնածու, պրոֆեսոր



Ժամանակակից հասարակությունը, որն օրեցօր մոտեցնում է գործունեոր տեղեկատվական ժամանակաշրջան, իր զարգացման ընթացքում ներկայացնում է հատուկ պահանջներ: Մարդու տեղեկատվական միջավայրը մշտապես աճում է, որը թելադրում է նպատակաուղղվածության անհրաժեշտություն, սկսած կյանքի առաջին տարիներից: Այս գործընթացի իրականացման որոնումներն ազդում են կրթության համակարգի բոլոր օղակների վրա, այդ թվում նախադպրոցական, որոնք կազմակերպում են նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակությունն ու կրթությունը:

Շատ հետազոտողներ (Տ. Գոնչարովա, Տ. Դորոնանովա, Վ. Կուրոյավցև, Դ. Ֆելդխտեյն) ընդգծելով մանկության յուրաքանչյուր ժամանակաշրջանի ինքնարժեքը՝ առաջ են քաշում երախայի զարգացման խնդիրները առավելագույն հնարավորությունների տեղակայման միջոցով, այս կամ այն տարիքին բնորոշ գործունեությամբ, մեթոդներով, շրջապատող աշխարհի ճանաչողությամբ: Քանի որ վաղ տարիքային փուլում իմացության բոլոր գործառնությունների ձևավորումը ըստ Վիգոտսկու տեղի է ունենում ընկալման շուրջ, ընկալման միջոցով և ընկալման օգնությամբ՝ ապա հատուկ սրվում է զգայական դաստիարակության կատարելագործման, զարգացնող առաջատար առարկայական գործունեության իրականացման խնդիրը:

Վաղ տարիքը մարդու զարգացման առավել արագ ժամանակաշրջանն է: Այս տարիքային փուլում ստեղծվում է այն հիմքը, որի վրա հետագայում կառուցվում է դաստիարակության և ուսուցման ողջ համակարգը, ձևավորվում մարդու անձնավորությունը: Դետազա զարգացման ոչ մի փուլում երեխան այնքան ձեռքբերումներ չի ունենում, որքան կյանքի առաջին տարիներին: Արագ զարգանում են բոլոր հոգեֆիզիոլոգիական գործընթացները: Ն. Մ. Սչեկանովը նշում է, որ եթե արտաքին ներգործությունը բացակայում է կամ բավարար չէ, գլխուղեղի կեղևի կազմավորումը սխալ է ընթանում կամ ուշանում է [1, 62]:

Լինելով գիտնական-մեթոդիկոլոգ՝ ամերիկյան զինվորական բժիշկ, Ֆիլադելֆիայի «Երեխայի արագընթաց զարգացման ինստիտուտի» հիմնադիր Գլեն Դոմանը հայտնաբերեց և ապացուցեց կարևորագույն օրենք՝ ուղեղը աճում և զարգանում է միայն այն դեպքում, եթե այն աշխատում է: Որքան ինտենսիվ լինի փոքրիկի ուղեղի ծանրաբեռնվածությունը կյանքի առաջին տարիներին, այնքան լավ կզարգանա նրա ինտելեկտը: Որքան շատ ենք խրախուսում երեխայի շարժումները ծնված օրվանից, այնքան արագ է ընթանում ուղեղի ձևավորման գործընթացը, որի արդյունքում ավելի հասուն, կատարյալ են դառնում ուղեղի բջիջները, բարձրանում է, Դոմանի տերմինով, «շարժողական ինտելեկտը»: Դա նշանակում է, որ փոքրիկը ընդհանրապես ընդունված ժամկետից առավել վաղ կսկսի ինքնուրույն սողալ, նստել, քայլել, որից հետո երեխան տիրապետում է այս կամ այն շարժողական հմտությանը, սկսում են զարգանալ ուղեղի բարձրագույն բաժինները: Որքան արագ ընթանա գլխուղեղի բարձրագույն բաժինների ձևավորումը, այնքան խելացի և

\* Ներկայացվել է 11.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

ըմբռնող կլինի երեխան: Ոչ քիչ կարևոր է մեզ համար Դոմանի մեկ այլ հայտնագործությունը՝ երեխայի ուղեղը ծնված օրվանից ծրագրավորված է ուսուցմանը, և քանի դեռ այն ակտիվացման շրջանում է (երեքից հետո այն դանդաղում է), երեխային ոչ մի լրացուցիչ շարժառիթ անհրաժեշտ չի լինի սովորելու համար: Եթե գրագետ կազմակերպի ուսուցման գործընթացը, յուրաքանչյուր երեխա հաճույքով կսովորի այն ամենը, ինչը մենք նրան կառաջարկենք, և դա կանի այնպիսի թեթևությամբ, որը չի կարող երազել անզամ դպրոցահասակ երեխան: Դոմանի կարծիքով՝ այս ամենը նպաստում է բարձր ինտելեկտի ձևավորմանը, և բացարձակապես յուրաքանչյուր երեխայից կարելի է դաստիարակել հանճարի:

Ճապոնացի Մասարու Իբուկան իր «Երեքից հետո ուշ է» գրքում ևս անդրադառնում է վաղ տարիքի երեխաների դաստիարակության և ուսուցման հարցերին: Նա գրում է, որ երբ Մոցարտը տվեց իր առաջին համերգը, ընդամենը երեք տարեկան էր: Իհարկե, չմոռանանք, որ նա հանճար էր: Աշխարհում այդպիսի բազմաթիվ օրինակներ կան, որոնք թույլ են տալիս հետազոտողներին ուսումնասիրել մարդու ժառանգականությունը, կրթությունը և դաստիարակությունը [4,16]:

Վաղ տարիքի երեխայի լիարժեք զարգացումը սկսած ծնված օրվանից կախված է ժամանակին և ճիշտ իրազորվող դաստիարակությունից, մեծերի անմիջական ներգործությունից: Սկսած նորածնային շրջանից և հետագա փուլերում ևս երեխաների հուզական վիճակի վրա խնամող, դաստիարակող և ուսուցանող մեծահասակի ներգործությունն անչափ մեծ է: Կյանքի երրորդ տարում շարունակվում է երեխայի արագընթաց զարգացումը, փոքր-ինչ դանդաղ, քան նախորդ երկու տարիների: Այս փուլում երեխայի զարգացման մակարդակը, վարքագիծը բնորոշվում են նախորդ տարիների ընթացքում ձեռք բերածով, դաստիարակության պայմաններով և խնդիրներով:

Կյանքի երրորդ տարվա զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Առանց մեծերի օգնության գործողություններ կատարելու կարողությունը
2. Ինքնուրույնության տարրական ձևերի դրսևորումը
3. Ակնառու-գործնական մտածողության զարգացումը
4. Շրջապատի վերաբերյալ պարզ խոսքային դատողությունների նոր ձևերի առաջացումը
5. Անցումը միայնակ խաղերից խմբային խաղային գործունեության:

Երեք տարեկան երեխայի ինքնուրույնությու-

նը արագ է զարգանում, որն արտահայտվում է «ես ինքս» ցանկությամբ: Երեխայի զարգացման գործում ձեռք բերված հաջողությունները որակապես փոխում են փոքրիկի ողջ վարքը: Թեև մեծի դերը նախկինի պես մնում է առաջատար, սակայն իր դեռևս սահմանափակ հնարավորությունների շրջանակներում երեխան ձգտում է գործել առանց մեծերի օգնության: Կյանքի այդ շրջանը ընդունված է համարել ճգնաժամային: Պատճառներից մեկն էլ այն է, որ մեծահասակի համար դժվար է դառնում նեգատիվիզմի և կամակորության դրսևորման պատճառով երեխայի հետ շփվելը: Եթե մեծահասակները խելամտորեն խրախուսեն երեխայի ինքնուրույնությունը, ապա նրանց փոխհարաբերություններում առաջացող դժվարությունները հաղթահարվում են: Երեք տարեկանի ճգնաժամը անցողիկ երևույթ է, բայց դրա հետ կապված հոգեբանական նոր երևույթները շատ կարևոր քայլ են երեխայի հոգեկանի զարգացման գործընթացում: Երեխան ինքնուրույն զբաղմունք է գտնում, եթե շրջապատում առկա են անհրաժեշտ խաղալիքներ, պիտույքներ, այն ամենը, որոնք ապահովում են երեխայի զարգացնող խաղային միջավայրը:

Շատ ազգերի մոտ «խաղալ» նշանակում է սովորել: Ջարգացնող խաղերը անհրաժեշտ են վաղ տարիքի երեխաներին: Առանց այդպիսի խաղերի նրանց զարգացումը կլինի թերի և անկատար: Ջարգացնող խաղեր կազմակերպելու համար մեծահասակները պետք է փորձարկեն և ճշգրիտ արձագանքեն երեխայի զարգացման ընթացքին: Երեխայի կյանքի այդ փուլում միայն նրանք կարող են որոշել՝ ինչն է հետաքրքիր երեխային և ինչը ոչ, ինչն է նա անում լավ և ինչն է, որ դեռ նրա մոտ չի ստացվում:

Յուրաքանչյուր խաղ պահանջում է խաղի կանոնների հարաբերակցություն երեխայի խաղային կարողությունների հետ, հետաքրքրասիրության, զբաղմունքի հուզական և խաղային գրավչության՝ զարգացնող ազդեցությամբ: Եթե խաղում երեխան չի զգում մեծահասակի օգնության կարիք, ուրեմն նրա հնարավորությունները շատ ավելի լայն են, սակայն առանց մեծահասակի՝ խաղային գործընթացը չի ունենա անհրաժեշտ զարգացնող ազդեցություն: Երեխայի արագընթաց զարգացման համար անհրաժեշտ են խաղեր, որոնք նրանց կծանոթացնեն առարկաների հատկանիշներին և որակներին, կպահանջեն մտավոր և կամային ջանքեր, երեխան կզգա բացահայտումների և ձեռքբերումների ուրախությունը: Այդ խաղերում մեծահասակի դերը և օգնությունը անզանահատելի է: Եթե խաղը չափազանց բարդ է երեխայի համար, ապա դրա նպատակը

անհասանելի կլինի: Երեխան չի ներգրավվի խաղային հաղորդակցմանը, կգնա առաջադրանքների փոփոխման ճանապարհով, կկատարի առարկաներով սովորական գործողություններ: Դրա համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր խաղում դրսևորվի նորի աստիճանական յուրացում և անցում ավելի բարդ տարբերակների, ինչպես նաև ձեռք բերածի ամրապնդմանը:

Խաղերը, որոնցում օգտագործվում են գործողություններ առարկաների հետ, զարգացնում են վաղ տարիքի երեխաների ընկալումը, ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը և խոսքը: «Խորանարդիկներով աշտարակի կառուցում» խաղի միջոցով երեխան ձեռք է բերում անհրաժեշտ պատկերացումներ առարկայի մեծության, ձևի, գույնի, տարածական հեռավորության, քանակի (շատ կամ քիչ) վերաբերյալ:

Զարգացնող խաղերի համար կարելի է օգտագործել տարբեր խաղալիքներ, որոնք դրվում են իրար մեջ, հատուկ կառուցողական նյութեր, խճանկարներ՝ կազմված տարբեր երկրաչափական պատկերներից և տարբեր գույներից: Նման խաղալիքներն ունեն հատուկ նշանակություն, և դրա համար էլ որոշ դեպքերում անհրաժեշտ է երկու նման առարկաներից մեկը օգտագործել որպես նմուշ, մյուսը դրա հետ ճիշտ գործողություններ կատարելու և համեմատելու համար [3, 87]:

Շատ կարևոր է, որ զարգացնող խաղերը հնարավորինս պատկերեն երեխայի կյանքի իրադարձությունները. ունենան սկիզբ, ընթացք և ավարտ: Իհարկե, մեծահասակներն են որոշում խաղի ընթացքն ու զարգացումը, դրա սկիզբն ու ավարտը, իրական արդյունքը և նշանակությունը փոքրիկի կյանքում [3,28]:

Բերենք օրինակներ

Խաղ «Ճանապարհի կառուցում»

Երեխային տրվում է առաջադրանք՝ օղակներից պատրաստել ճանապարհ: Սկզբում կարելի է ուշադրություն չդարձնել առարկաների մեծությանը: Այս խաղի համար անհրաժեշտ է վերցնել յոթ օղակներից կազմված զլխիկով բուրգ: Խնդրել երեխային կառուցել «աշտարակ»՝ մեծից փոքր տեղադրելով: Ցույց տալ նրան՝ ինչպես կարելի է կազմալուծել բուրգը, օղակները հաջորդաբար տեղադրել սեղանին, իսկ հետո ցուցադրել՝ որտեղ է մեծը, որտեղ՝ ավելի փոքրը, առաջարկել երեխային գտնել ամենափոքր օղակը (կամ հակառակը), ցույց տալ փոքր օղակները և խնդրել նշել ամենամեծը:

Բուրգը լրացնող երեխային պետք է սովորեցնել ինքնակառավարման հսկողության հմտությունը: Դրա համար փոքրիկը պետք է ձեռքը սահեցնելով բուրգի վրայով որոշի՝ այն հարթ է, թե

անհարթ, որոշի բուրգի օղակների չափերը, տարբերակի օղակների գույները: Մեծահասակի և երեխայի համատեղ խաղը պետք է ուղեկցվի ցուցադրմամբ, խոսքային բացատրմամբ, խրախուսանքով:

Այս խաղի մեկ այլ տարբերակ է հանդիսանում երկու նույնատիպ բուրգերի օգտագործումը՝ կազմված 3-4 տարբեր գույնի օղակներից: Երեխային, որն արդեն կարողանում է ցույց տալ օղակները, առաջարկվում է կազմաքանդել դասավորած բուրգը՝ զուգահեռ նույնը անելով իր բուրգի հետ: Հետո դաստիարակը ցույց է տալիս ամենամեծ օղակը և խնդրում երեխային գտնել նմանը: Եթե երեխան սխալվում է, ապա դաստիարակը ցուցադրում է անհրաժեշտ օղակը և առաջինն է հազցնում մակահին: Հետո երեխան ստանում է առաջադրանք՝ գտնել ավելի փոքր օղակը (դաստիարակը ցույց է տալիս նմուշը): Այս խաղի շրջանակներում երեխան սովորում է սեղանի վրա տեղադրել բուրգի օղակները մեծից փոքր՝ բացատրելով և ցուցադրելով առարկաների միջև եղած տարբերությունները:

Երեք տարեկան երեխայի համար բուրգը կարող է կազմված լինել 6-7 տարբեր գույնի օղակներից: Մեծահասակը հազցնում է բուրգի վրա զլխիկը և ցուցադրում այն փոքրիկին՝ «սա կափարիչ է»: Հետո խնդրում է հավաքել բուրգը՝ կամաց հեռացնելով կափարիչը մի կողմ: Հետագայում երեխայի գործողությունները դիտելիս, եթե նա մոռանում է կափարիչի մասին, մեծահասակը կրկնում է ցուցադրումը՝ երեխայի ուշադրությունը հրավիրելով բուրգի այդ մասի վրա:

Խաղի մյուս տարբերակը օղակների ընտրությունն է ըստ գույնի: Դաստիարակը ցույց է տալիս փոքրիկին կարմիր օղակը և խնդրում է գտնել նման կարմիր օղակ: Հիմնական գույները սովորեցնելու համար կարելի է անցկացնել «Գտիր բուրգը կարմիր, կանաչ, դեղին առարկաները» խաղը: Բուրգը կառուցելու ընթացքում կարևոր է սովորեցնել երեխային որոշել օղակների չափը շոշափելով և տեսողության միջոցով, ստուգել՝ ճիշտ է արդյոք այն դասավորված:

Փոքրիկները սիրում են ոչ միայն հավաքել, կազմել, այլև կազմաքանդել բուրգ խաղալիքները: Եթե այդ զբաղմունքի համար օգտագործվի քանակով շատ օղակներով բուրգ, ապա պետք է հետևել՝ կորցնում է արդյոք երեխան օղակների մի մասն իր տեսադաշտից, կազմում է բուրգն առարկաների անհրաժեշտ քանակով, և վերջապես նկատում է արդյոք նա իր սխալները: Շատ հաճախ երեխաները իրենք էլ գիտեն՝ որտեղ են սխալվել, բայց այնուհանդերձ չեն կարողանում ուղղել: Այդ պահին անհրաժեշտ է մեծահասակի

օգնությունը և երեխային հայացքով ուղղորդելը: Եթե երեխայի տեսողաշտուուն լինի ճիշտ կառուցված խաղալիքի նմուշը, ապա փոքրիկը կկարողանա համեմատել առարկաները: Ժամանակի հետ փոքրիկը սովորում է վերահսկել իր աշխատանքի արդյունքները: Եթե երեխան խաղի ավարտից հետո շարունակում է հրապուրված հավաքել և քանդել բուրգը (չնայած ոչ ճիշտ), անհրաժեշտ է թույլ տալ նրան խաղալ, սակայն երբ երեխան հետաքրքրություն չի դրսևորում, անհրաժեշտ է դադարեցնել խաղը: Երեք տարեկանի կարևոր ձեռքբերումներից է տարբեր մարդկանց, հեքիաթային կերպարներին, այդ թվում կենդանիներին և թռչուններին նմանակելու կարողությունը: Խաղի ընթացքում երեխան սովորում է հասկանալ ուրիշներին և ինքն իրեն: Երեք տարեկանում փոխվում է երեխայի առաջատար գործունեությունը, անցում է կատարվում առարկայական գործունեությունից դեպի սյուժետա-դերային խաղը: Օրինակ՝ փոքրիկը սկզբում հանում է տիկնիկի զգեստը, հետո լողացնում է. սա արդեն իրադարձությունների ամբողջ շղթա է, որոնք զգում է երեխան: Աստիճանաբար ներկայացվում են նոր կերպարներ և ստացվում են նոր խաղեր՝ «Գնում ենք հյուր» և այլն: Գործողությունների զարգացման համար անընդհատ պահանջվում է այն մեծահասակի մասնակցությունը, որը կարողանում է խաղալ, ունի վառ երևակայություն, հեշտ և հուզակաճորեն ներգրավվում է խաղի բովանդակությանը, գիտի շատ ոտանավորներ և մանկական երգեր, հմտորեն օգտագործում է իր գիտելիքները: Օրինակ՝ «Ծանոթանանք տիկնիկի հետ», «Տիկնիկը ուզում է քնել», «Տիկնիկը ուզում է ուտել» և այլ խաղեր: Մեծահասակի մասնակցությունը խաղին ուրախացնում է երեխային, բազմազան և հետաքրքիր է դարձնում նրա ինքնուրույն խաղը:

Այսպիսով, երեխան և մեծահասակը միասին, համատեղ ուսումնասիրում են շրջապատող աշխարհի առարկաները և դրանց հատկությունները: Երեխայի արդյունավետ դաստիարակության ամենամեծ գաղտնիքը՝ յուրաքանչյուր փոքրիկի մեջ յուրահատուկ աշխարհի տեսնելու ընդունակությունն է: Այդ աշխարհը կարող է ճանաչել միայն նա, ով ունակ է կիսել երեխայի հետ նրա ուրախություններն և տխրությունները, հաջողություններն ու անհաջողությունները: Առաջին երեք տարվա ընթացքում երեխան անցնում է ֆիզիկական և նյարդային զարգացման մեծ ուղի: Կյանքի առաջին ամիսներից մեծահասակների խելամիտ վերաբերմունքով և ճիշտ դաստիարակության ու կրթության պայմաններում կարելի է պահպանել երեխայի առողջությունը, հոգեկան գործընթացների ժամանակին զարգացումը և դրական վարքագծի ձևավորումը: Մինչև երեք տարեկան երեխային դժվար չէ սովորել այն, ինչը նրան հետաքրքրում է, և մեզ չպետք է անհանգստացնի նրա ուժերի, էներգիայի, ծախսը դրանում: Շատ ունակություններ և հմտություններ անհնար է ձեռք բերել, եթե դրանց նախադրյալները չեն ստեղծվել վաղ մանկության շրջանում: Անհրաժեշտ է անսահման սիրել երեխային, կրթել ու դաստիարակել վաղ տարիքում, այլապես երեքից հետո ուշ կլինի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան**, Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008:
2. **В. В. Ветрова**, Во что играть с ребенком до 3 лет. М., 2008.
3. **Է. Ա. Ալեքսանդրյան**, Մեր երեխան, նրա զարգացումն ու դաստիարակությունը, Երևան, 1990:
4. **Մասարու Իբուկա**, Երեքից հետո ուշ է, 1991:

#### THE FEATURES OF DEVELOPMENT OF THE EARLY AGE CHILD

ADRINE GALOYAN

#### Summary

In the article are presented methods how to play with the early-aged child, to love and to educate, to understand the child since his birthday and are suggested developing games. Attention is paid to the pedagogical description of the interrelation between child and adult.

## ПУТИ РАЗРАБОТКИ МАТЕМАТИЧЕСКОЙ МОДЕЛИ УГОЛОВНОГО ЗАКОНА РФ\*

**С. Г. АМБАРЦУМЯН**

*Кандидат технических наук, доцент, юрист*

*Докторант кафедры уголовного права и криминологии Московского Государственного университета им. М.В. Ломоносова*

**Гор ДЕРЦЯН** (на фото)

*Кандидат юридических наук*

*Проректор Армянско-Российского международного университета "Мхитар Гош"*



**В** статье обсуждаются пути разработки математической модели уголовного закона РФ.

В начале приводится обзор работ по искусственному интеллекту в юриспруденции.

Далее автор приводит введение в систему автоматического регулирования модели уголовного закона.

**Ключевые слова:** уголовный закон, математическая модель, адаптивное управление, искусственный интеллект.

Для начала рассмотрим каковы пути моделирования уголовного закона, приведем обзор уже проведенных исследований по разработке искусственного интеллекта в юриспруденции и введение в системы автоматического регулирования.

Проведенный обзор литературы по разработке искусственного интеллекта в юриспруденции показывает, что разработка искусственного интеллекта включает в себя моделирование компьютерных программ основывающихся на юридической практике с учетом специфических юридических задач, правовых теорий и программирования [1, с.13].

Двумя первоначальными подходами к проблеме являются понимание и моделирование подходов правового "мышления" и создание "ум-

ных" инструментов в помощь юристам.

Классическая система искусственного интеллекта юридических экспертов использует несколько методов мышления: основанное на правиле (законе), основанное на судебном случае с условиями, и смешанный метод двух предыдущих случаев, который считается наиболее приспособленным к открытой природе правовых принципов.

Система, основанная на законе, предполагает, что как минимум часть из них является результатом применения законов к опыту право-вых экспертов [1, с.14]. Они кодируют соответствующее мнение правовых экспертов как заданное, неизменное, последовательность условий "если то" утверждений, которые включают в себя определенные факты, приводящие к резонным ответам, не являющимся правильными, неправильными в компьютерном смысле или конечными ответами. Законы могут быть противоречивыми или неопределенными, они также могут войти в противоречие с открытым характером природы некоторых юридических принципов. Поэтому для того, чтобы дополнить формальную "если..., то" структуру систем искусственного интеллекта (ИИ) основанную на законе, исследователи ИИ пытались удовлетворять и мышлению и законам.

Системы, основанные на судебных случаях и условные экспертные системы, берут знание из истории случая, государственных решений, правовых текстов и кодексов [1, с.14]. Существует база данных, которая кодирова-

\* Ներկայացվել է 15.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

на экспертами для представления информации для исследований, ключевых слов или что наиболее важно для других судебных решений или правовых доктрин. Конструкторы (разработчики) систем предполагают, что правовое мышление является находкой для установленных правовых принципов методологий, как разработанных с помощью правовых случаев и государственных решений и применения новых случаев к ним.

Условности используются, когда правовед не может найти соответствующее событие в судебном случае Верховный Суд США больше структурирует словесные умозаключения. Судебные работники используют условия для проверки различных мнений правовых консультантов.

Традиционная экспертная система была основана на подходе к мозгу как к машине, преобразующей входные сигналы с помощью установленных процедур и интерпретации [1, с. 11]. Позитивизм экспертных систем претендует на знание абстрактно только соответствующее процедурным нормам и фактам.

Чувствительность к индивидуальным, социальным и культурным темам является центральной к другим неформальным правовым теориям (например, реально - поведенческое, право и общество, право и семиотика, право и экономика, новостественное право, критическая правовая теория, феминистическая юриспруденция). ИИ и теория права имеют общие подходы к природе знания, неопределенности и противоречивости языка и, связанные с культурой, конструкциями власти и прав.

Теории взаимоотношений мышления и действия находятся в социальном (культурном) положительном контексте. Мышление как и право не является неизменной абстракцией или независимым феноменом, а скорее является динамическим отношением между индивидом и средой [2, с. 51]. Исследователи [2, с. 53] ИИ продолжают совершенствовать уже существующие методы (как, например, основанные на законе и на судебном случае), потому, что аспекты правовой практики наилучшим образом конструируются и сравнительно свободны по содержанию. Однако, для того, чтобы моделировать большие и сложные правовые акты, требуется развития систем взаимоотношений, которые включают эти методы [2, с. 33].

Основными вопросами управления являются:

1. Выбор критериев эффективности управ-

ления;

2. Анализ внешних по отношению к системе управления условий;

3. Анализ внутренних условий (математическое описание объектов управления, моделирование систем управления и т.д.);

4. Разработка принципов управления и синтез алгоритмов управления.

Под системой автоматического регулирования будем понимать класс динамических систем, отличительной особенностью которых является наличие обратной связи.

Проблемами разработки САР являются: устойчивость; качество; переходные процессы; динамическая точность; автоколебания; оптимизация; синтез и отождествление (идентификация).

Методы используемые при разработке систем: методы синтеза САР, методы анализа САР, методы количественной характеристики статических и динамических характеристик объектов регулирования, метод разработки принципов построения и коррекции динамических свойств.

Этапы разработки САР: изучение объекта регулирования, требования к объекту регулирования, выбор первоначальной схемы регулирования, выбор элементов схемы регулирования, уточнение структурной схемы, экспериментальное исследование системы, наладка, опытная эксплуатация.

Возможные недостатки работы: ненадлежащая идеализация в математическом описании системы, приближенность результатов, необходимость использования средств математического моделирования.

Формулировка проблемы управления: определение и идеализация вектора управления, обеспечивающего максимум показателя эффективности управления [3, с. 15].

САР - это динамическая система сохраняющая в допустимых пределах ошибки между требуемыми и действительными изменениями регулируемых переменных при помощи их сравнения. Трудность заключается в том, что изменения регулируемых величин вызываются не только управляющими, но и возмущающими воздействиями. Это воздействие стремиться нарушить требуемую функциональную связь между управляющим воздействием и регулируемой величиной.

Обратная связь призвана обеспечивать высокую точность регулирования с помощью точного сравнивающего устройства, произво-

дящего сравнение входа и выхода.

Вектор состояния  $X$  (выход, регулируемая величина) есть одно составляющее. А сама САР линейна, если математическая модель представляется с помощью линейных уравнений.

В настоящей работе остановимся только на рассмотрении систем искусственного интеллекта (ИИ) основанных на законе (праве). Будем рассматривать вначале только Single Input - Single Output систему.

#### ЛИТЕРАТУРА

1. Narayanan, Ajit, and Marrayn Bannun, eds. Law, ComputerScience, and AI. // Norwood Ab lex. 1991. N 3.
2. Rissland, Edwina. "Artificial Intelligence and Law: Stepping Stones to a Model of "Legal Reasoning". // Yale Law Journal .1990. N 99.
3. Техническая кибернетика /Под ред. В. В. Солодовникова, т 1, М., Машиностроение, 1967.

---

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԵՐԸ

**ՍԱՄՎԵԼ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ**

**ԳՈՐ ԴԵՐԶՅԱՆ**

Ամփոփում

Ռուսաստանի Դաշնության քրեական իրավունքի մաթեմատիկական մոդելավորման զարգացումը ներկայացված է հոդվածում:

---

THE DEVELOPING WAYS OF THE MATHEMATICAL MODEL OF THE RUSSIAN  
FEDERATION'S CRIMINAL LAW

**SAMVEL HAMBARDZUMYAN**

**GOR DERDZYAN**

Summary

The development of the mathematical model of the Russian Federation's Criminal Law is introduced in the article

## К РАЗРАБОТКЕ МАТЕМАТИЧЕСКОЙ МОДЕЛИ УГОЛОВНОГО ЗАКОНА РФ\*

**С. Г. АМБАРЦУМЯН**

*Кандидат технических наук, доцент, юрист*

*Докторант кафедры уголовного права и криминологии Московского Государственного университета им. М.В. Ломоносова*

**В** статье обсуждаются пути разработки математической модели уголовного закона РФ.

Автор приводит введение в системы автоматического регулирования и предлагает блок-схему математической модели уголовного закона.

**Ключевые слова:** уголовный закон, математическая модель, адаптивное управление, искусственный интеллект.

Разработка математической модели уголовного закона РФ актуальна сегодня потому, что это первоочередная задача для любой демократической страны, каковым является Российская Федерация.

Данное исследование необходимо в силу следующих причин.

Во - первых из-за свершившегося факта образования правового государства, Российской Федерации.

Во - вторых ввиду актуальности изменений, происходящих в области юриспруденции на разных этапах развития государства.

В - третьих из-за необходимости применения достижений Адаптивных Систем Управления в юридической науке и практике.

Применим информационный и алгоритмический подходы к юриспруденции, вследствие чего будем говорить о юридической кибернетике [1, с.10].

В первой части настоящей работы мы разрабатываем только математическую модель уголовного закона, поэтому имеем дело с пассивной кибернетикой. Коль скоро начинаем заниматься вопросами адаптации уголовных законов [2, с. 5], [3, с.16] переходим к активной части кибернетики, поскольку активно вмешиваемся в существующие уже процессы.

Объектом управления на первом пассивном этапе является личность правонарушителя, его поведение, психологический портрет и т.д. Т.е. объект один - личность правонарушителя.

А далее, на более высоком уровне объект сам уголовный закон, в самом его общем виде (в каждом конкретном случае приобретая форму уголовного закона в виде конкретной статьи УК). А что же является регулятором или управляющей системой? В пассиве это уголовный кодекс плюс новые уголовные законы.

Необходимость применения следящих систем (адаптивных систем) диктуется тем фактом, что все или несколько задающих воздействий заранее неизвестные функции времени.

Обратная связь призвана обеспечивать высокую точность регулирования с помощью точного сравнивающего устройства, производящего сравнение входа и выхода.

В настоящей работе остановимся только на рассмотрении систем искусственного интеллекта (ИИ) основанных на законе (правиле). Будем рассматривать вначале только Single Input - Single Output систему.

Кроме этого будем различать математическую модель уголовного закона как систему законов об единенных в виде Кодекса и математическую модель отдельно взятого уголовного закона как подсистему внутри общей системы.

В работе предлагается следующая модель общей системы (см. Рис. 1.).

Рассмотрим составляющие элементы системы или математической модели. Элементы модели.

COMMAND INPUT - Ввод исходных данных.

\* Արկայացվել է 15.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:




Рис. 1. Математическая модель адаптивного управления уголовного закона

Объект регулирования - человек, индивид, правонарушитель, требуемое поведение которого должно поддерживаться регуляторами при помощи регулирующих органов.

Регулирующий орган - устройство, с помощью которого в системе осуществляется изменение режима объекта (Уголовный Кодекс). Корректирующие устройства включаются в систему регулирования для повышения устойчивости и улучшения динамических свойств системы регулирования (смягчающие и отягчающие обстоятельства).

Усиливающие устройства - предназначены для усиления мощности сигналов в регуляторах.

Установившиеся режимы описываются уравнениями статики (отбывание наказания).

Переходные процессы в свою очередь

описываются уравнениями динамики (от момента совершения преступления до исполнения наказания).

**ЛИТЕРАТУРА**

1. Техническая кибернетика /Под ред. В. В. Солодовникова, т 1, М., "Машиностроение", 1967.
2. **Амбарцумян С. Г.** Теория адаптации уголовного закона РФ//Уголовное право: истоки, реалии, переход к устойчивому развитию: Материалы Шестого Российского Конгресса уголовного права, 28-27 мая, 2011. М., 2011.
3. **Амбарцумян С. Г.** Адаптивные законы и проблема устойчивости уголовного закона // Актуальные проблемы уголовного права, процесса и криминалистики: Сб. материалов 3-й Международной Научно-практической конференция: Одесса: Международный гуманитарный университет, 2011.

---

ՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ

**ՍԱՄՎԵԼ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ**

Ամփոփում

Ուսաստանի Դաշնության քրեական իրավունքի մաթեմատիկական մոդելավորման զարգացումը ներկայացված է հոդվածում:

---

THE DEVELOPMENT OF THE MATHEMATICAL MODEL OF THE RUSSIAN FEDERATION'S CRIMINAL LAW

**SAMVEL HAMBARDZUMYAN**

Summary

The development of the methematical model of the Russian Federation's Criminal Law is introduced at the article.

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՄԵՋ\*

### Նազելի ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ՀԴՏՀ տնտեսական պատմության և իրավագիտության ամբիոնի ասիստենտ



Մարդկային հասարակությունը զարգանում է օրինաչափորեն, օբյեկտիվ օրենքների և օրինաչափությունների գործողության հիման վրա: Օրենքների և օրինաչափությունների մեջ գլխավոր տեղը զբաղում են տնտեսական օրենքները և օրինաչափությունները,

քանի որ հասարակության գոյության ու զարգացման հիմքը նյութական արտադրությունն է: Ինչպես բնության օրենքներն են գործում օբյեկտիվորեն, այնպես էլ տնտեսական օրենքները ունեն օբյեկտիվ բնույթ, այսինքն՝ նրանք առաջանում, գործում և անհետանում են մարդկանց կամքից և գիտակցությունից անկախ: Տնտեսական այս կամ այն օրենքի առաջացումը, գործողությունը և անհետացումը կապված է որևէ տիպի արտադրանքի համար, նրա արտադրական հարաբերությունների առաջացման, գոյության և վերացման հետ: Այսպես, ցանկացած արտադրանքի համար բնորոշ են հատկապես հավելյալ արժեքի և այլ տնտեսական օրենքները: Տնտեսական օրենքները իրենց հերթին կարող են պայմանավորվել փոփոխություններով՝ դադարեցնելով գործող տնտեսական օրենքները կամ առաջ բերել նոր տնտեսական օրենքներ:

Տնտեսական օրենքները կարելի է դասակարգել երեք խմբի.

1) տնտեսական օրենքներ, որոնք գործում են մարդկային հասարակության զարգացման բոլոր աստիճաններում, հասարակական-տնտեսական բոլոր ֆորմացիաներում, ինչպիսիք են արտադրական հարաբերությունների արտադրողական

ուժերին համապատասխանության, աշխատանքի արտադրողականության բարձրացման և այլ օրենքները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ համընդհանուր տնտեսական օրենքները ամեն մի հասարակական-տնտեսական ֆորմացիայում, ամեն մի արտադրանքի պայմաններում յուրահատուկ կերպով են դրսևորվում.

2) տնտեսական օրենքներ, որոնք գոյություն ունեն և գործում են ոչ բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում, այլ մի քանիսում: Այդպիսիք են արժեքի օրենքը, դրամական շրջանառության օրենքը, մրցակցության օրենքը և այլն.

3) տնտեսական օրենքներ, որոնք գործում են միայն այս կամ այն հասարակական-տնտեսական ֆորմացիայում: Այդ օրենքները առանձնահատուկ բնույթ ունեն: Օրինակ, հավելյալ արժեքի օրենքը գործում է բոլոր արտադրանքների պայմաններում: Պետք է նկատել, որ ամեն մի հասարակական-տնտեսական ֆորմացիայում գործում է տնտեսական օրենքների մի ամբողջ համակարգ, ըստ որում այդ օրենքները գտնվում են փոխադարձ կապի մեջ և գործում են միասնաբար՝ արտահայտելով տվյալ արտադրանքի որևէ կողմը, նրա այս կամ այն արտադրահարաբերությունը: Սակայն տվյալ հասարակարգի տնտեսական օրենքների այդ համակարգում նրանցից մեկը հանդես է գալիս որպես գլխավոր, հիմնական տնտեսական օրենք: Քանի որ տվյալ հասարակարգում գոյություն ունի արտադրական հարաբերությունների մի ամբողջ համակարգ, որի մեջ գոյություն ունի հիմնական արտադրահարաբերությունը, այդ պատճառով էլ տնտեսական օրենքները, որոնք անմիջականորեն արտահայտում են այդ արտադրահարաբերությունների ողջ համակարգը, իրենց մեջ ունեն հիմնական տնտեսական օրենք, որը արտահայտում է տվյալ ար-

\* Ներկայացվել է 15.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

տադրանեղանակի հիմնական արտադրական հարաբերությունը, արտադրության նպատակը և դրան հասնելու միջոցները<sup>1</sup>:

Մի կողմ թողնելով տնտեսական օրենքների, նրանց գործողության զնահատման տարբեր ժամանակներում ձևավորված ուսմունքները, նկատենք, որ դրանց գոյության օբյեկտիվ բնույթը անառարկելի է, սակայն զարգացած և քաղաքակիրթ բոլոր պետություններում այն օգտագործվում է հասարակության, անհատների շահերին համապատասխան, այն բարձր գիտակցման, որ հնարավորություն է ընձեռնում տվյալ պետության գիտատեխնիկական առաջընթացը:

Տնտեսական օրենքներից բացի, մարդկային հասարակությունում գոյություն ունեն նաև տնտեսական կատեգորիաներ, տնտեսական ընդհանուր հասկացություններ, որոնք նույնպես օբյեկտիվ բնույթ ունեն: Տնտեսական կատեգորիաները ևս լինում են տարբեր տիպի. դրանք գոյություն ունեն կամ բոլոր հասարակական ֆորմացիաներում (աշխատանք, առաջարկ, պահանջարկ, սպառողական արժեք), կամ գործում են առանձին հասարակական ֆորմացիաներում: Ապրանքը և փողը այնպիսի տնտեսական կատեգորիաներ են, որոնք գոյություն են ունեցել մի շարք արտադրանեղանակների պայմաններում, որտեղ գոյություն ունի ապրանքային արտադրություն: Ընդ որում, այդպիսի տնտեսական կատեգորիաներն ամեն մի արտադրանեղանակի պայմաններում պայմանականորեն յուրահատուկ բնույթ ունեն և յուրահատուկ ձևով են արտահայտում իրենց դերն ու նշանակությունը: Կան նաև այնպիսի տնտեսական կատեգորիաներ, որոնք առանձնահատուկ բնույթ ունեն և հանդես են գալիս միայն տվյալ արտադրանեղանակի պայմաններում, ինչպես, օրինակ, հավելյալ արժեք տնտեսական կատեգորիան, հասարակական ներքին արդյունքը, ազգային եկամուտը և այլն: Տնտեսական կատեգորիաները իրենց իրային ձևով հանդես են գալիս որպես ապրանք, փող և այլն, հասարակության այս կամ այն ֆորմացիայում արտահայտում են տարբեր տիպի արտադրահարաբերություններ:

4. Մարքսը, անդրադառնալով տնտեսական կատեգորիաներին, նշում էր, որ տնտեսական կատեգորիաները լոկ այդ իրական հարաբերությունների արտարկցիաներն են, որ նրանք միայն այնքան են ճշմարիտ, որքան իրենք այդ հարաբերությունները շարունակում են գոյություն ունենալ<sup>2</sup>: Մարքսը ընդգծում էր տնտեսական կատեգորիաների պատմական բնույթը, քանի որ նրանք արտահայտում են զարգացող և փոփոխվող արտադրահարաբերություններ մարդկային հասարակության տարբեր ֆորմացիաների և արտադր-

րանեղանակների պայմաններում, որոնք հաջողությամբ զարգացող պետությունները օգտագործում են այսօր իրենց տնտեսական հզորության ամրապնդման նպատակով:

Հասարակական տնտեսությունն ունի իր տարբեր կողմերը, այն է՝ արտադրությունը, բաշխումը, փոխանակությունը և սպառումը, որոնք շաղկապված և փոխազդման մեջ են<sup>3</sup>: Սակայն հասարակական տնտեսության այս չորս կողմերից հիմնականը, որոշիչը հենց արտադրությունն է, քանի որ արտադրության բնույթով և մակարդակով են որոշվում ինչպես բաշխման եղանակը և նրա չափերը, այնպես էլ փոխանակության անհրաժեշտությունն ու բնույթը, ինչպես նաև սպառման չափերը և բնույթը: Սակայն բաշխումը, փոխանակումը, սպառումը պայմանավորվելով արտադրությամբ, իրենց հերթին, դիալեկտիկորեն ազդում են արտադրության վրա դրականապես: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ հասարակական տնտեսության այս չորս կողմերից երեքը (արտադրություն, բաշխում, սպառում) գոյություն ունեն բոլոր հասարակական ֆորմացիաներում, իսկ փոխանակությունը՝ միայն ապրանքային տնտեսության պայմաններում:

Կարևորելով հատկապես տնտեսության մեջ արտադրատնտեսական հարաբերությունների և աշխատուժի վերարտադրության գործընթացների խիստ անհրաժեշտությունը՝ ժամանակակից տնտեսապես հզոր պետություններում մակրոէկոնոմիկայի պետական կարգավորման համակարգում առանձնահատուկ նշանակություն է տրվում ֆինանսական կարգավորմանը, որը պայմանավորված է վերարտադրության գործընթացում ֆինանսների կարևորությամբ:

Վերարտադրության գործընթացում նյութական և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը ուղեկցվում է փողի միջոցների շարժով, որը իրականացվում է պետական և սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունների, ինչպես նաև բնակչության դրամական, եկամուտների և ծախսերի կազմավորման, բաշխման և օգտագործման վրա:

Փողի միջոցների ձևավորման, բաշխման և օգտագործման հարաբերությունների համակարգում ֆինանսական հարաբերությունները առաջանում են տնտեսության մեջ ստացված **եկամուտների բաշխման** և օգտագործման հարաբերությունների ձևավորման ընթացքում:

Ֆինանսական հարաբերությունների օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է ապրանքափողային հարաբերությունների առկայությամբ և պետության գործառույթների իրականացման անհրաժեշտությամբ:

Հետևաբար, պետության ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսների էությունը, դրանց ունեցած դերն ու նշանակությունը որոշվում է ֆինանսական հարաբերությունների բնույթով և դրան համապատասխան պետության գործառույթների (ֆունկցիաների) իրականացման անհրաժեշտությամբ:

Ֆինանսները որպես դրամական հարաբերություններ բխում են տնտեսության բոլոր ճյուղերում համախառն ներքին արդյունքի շրջապատուտից: Առանց ֆինանսների ապրանքադրամական հարաբերությունների համակարգում անհնար է պատկերացնել ազգային եկամտի ձևավորումը, նրա բաշխումը և օգտագործումը:

Ֆինանսները պատկանում են ապրանքային արտադրության տնտեսական կատեգորիաների թվին և կպահպանվեն այնքան ժամանակ, որքան գոյություն կունենան ապրանքադրամական հարաբերությունները և պետությունը:

Ֆինանսական հարաբերությունները տնտեսական հարաբերություններ են, որոնք երևան են գալիս պետության և նրա վարչաքաղաքական տարածքների դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի ստեղծման, բաշխման և օգտագործման ընթացքում, ապահովում են համախառն ներքին արդյունքի, այդ թվում նաև ազգային եկամտի ֆինանսաիրավական նորմերով սահմանված ծրագրված բաշխումը և վերաբաշխումը՝ երկրի ընդլայնված վերարտադրության կարիքները և հասարակության աճող պահանջմունքները բավարարելու համար:

Պետության ֆինանսներ հասկացության պարզաբանումից երևում է, որ ֆինանսները առաջին հերթին դրամական հարաբերություններ են, չնայած ոչ բոլոր դրամական հարաբերություններն են ներառվում ֆինանսների մեջ:

ՀՀ ներկա տնտեսական հարաբերություններում ֆինանսները արտահայտում են ֆինանսաիրավական տարբերակներով ամրագրված այնպիսի դրամական հարաբերություններ, որոնք ձևավորվում են.

1. պետության ու պետական սեփականություն հանդիսացող կազմավորումների ու միավորումների միջև,
2. պետական ու կոլեկտիվ սեփականության վրա հիմնված ընկերությունների ու ընկերակցությունների միջև,
3. արտադրական, արդյունաբերական և այլ բնույթի կազմակերպությունների և նրանց վերադաս մարմինների միջև,
4. պետության և գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, կոոպերատիվ

կազմակերպությունների ու գործարարների միջև, 5. պետության և բնակչության միջև:

Հիշատակված դրամական հարաբերություններն արտահայտում են համախառն ներքին արդյունքի հատկապես զուտ եկամտի բաշխման և վերաբաշխման գործընթացը, որի համամասնությունները սահմանված են ֆինանսաիրավական այնպիսի ակտերով, ինչպիսիք են ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», ՀՀ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքները և այլ իրավական ակտեր:

Ֆինանսները պետության արտադրական հարաբերությունների համակարգի տարրերից են, որը դրսևորվում է ոչ թե հասարակության նյութական և աշխատանքային, այլ, այսպես կոչված, ֆինանսական ռեսուրսներում, որոնք արտահայտվում են դրամի միջոցով: **Ֆինանսները չի կարելի շփոթել դրամ հասկացության հետ: Ֆինանսները դրամ չեն, բայց արտահայտվում են դրամի միջոցով: Դրանք բաշխում և վերաբաշխում արտահայտող հարաբերություններ են, որոնք դրսևորվում են դրամական ձևով որպես դրամական հարաբերությունների համակարգի բաղկացուցիչ՝ իրեն յուրահատուկ հատկանիշներով:**

Ֆինանսների անհրաժեշտությունն ու էությունը բնորոշվում են երկու փոխադարձաբար միահյուսված նախադրյալներով՝ ապրանքադրամական հարաբերություններով և պետության խնդիրներով ու գործառույթներով: Ֆինանսների էությունը երևան է գալիս կատարած կոնկրետ գործառույթների միջոցով այն ոլորտում, որտեղ նրանք գործում են այն իրավական մեթոդներով ու ձևերով, որոնցով իրագործվում են այդ գործառույթները:

Պետության և նրա լիազոր մարմինների ֆինանսական գործունեության հիմնական բովանդակությունը հանգում է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի նյութական ու հոգևոր պահանջների առավել լրիվ բավարարմանը, որը պայմանավորում է քաղաքացիների սոցիալական, կուլտուր-կենցաղային այնպիսի պահանջների ապահովումը, ինչպիսիք են լուսավորության, առողջապահության, գիտության և մշակույթի ոլորտների ծառայությունները:

Հասարակական կարիքների բավարարման աղբյուրը համախառն ներքին արդյունքն է, որ ստեղծվում է նյութական արտադրության ոլորտում: Անընդմեջ արտադրության ապահովման համար հասարակական արդյունքի ողջ հանրագումարից առաջին հերթին որոշակի մաս առանձնացվում է արտադրության գործընթացում սպառ-

վող արտադրության միջոցների փոխհատուցման, պահուստային, տնտեսական և հասարակական ֆոնդերի ստեղծման համար:

Հասարակության համար անհրաժեշտ դրամական ֆոնդերի ձևավորման անմիջական աղբյուրը ազգային եկամուտն է: ՀՀ տնտեսական և սոցիալական քաղաքականության ոգուն համապատասխան՝ ազգային եկամուտը ֆինանսական-իրավական նորմերի ակտիվ ներգործության միջոցով բաշխվում է ըստ հասարակական սպառման և կուտակման ֆոնդերի, որոնց տոկոսային հարաբերությունը այսօր վկայում է հասարակական սպառման ֆոնդերի տեսակարար կշռի աճի բարձր տեմպերի մասին: Այն գերազանցում է հասարակական կուտակման ֆոնդերին:

Ներկայումս ազգային եկամտի բաշխումը հանրապետությունում կատարվում է ոչ թե բնածնության, այլ դրամական ձևով: Հետևաբար, պետական շինարարության ընթացքում պետության ֆինանսական գործունեությունը ուղղված է շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանին բնորոշ ապրանքադրամական հարաբերությունների իրականացմանը: Ընդ որում, էկոնոմիկայի ղեկավարումը իրականացվում է տնտեսական և սոցիալական զարգացման պետական ծրագրերի հիման վրա՝ ակտիվորեն օգտագործելով առևտրային շահույթը, ինքնարժեքը, տնտեսական մյուս լծակներն ու խթանները:

Պետության ֆինանսական գործունեության իրականացման ձևերի շարքում պետք է առանձնացնել պետական և սեփականության մյուս ձևերի վրա հիմնված կազմակերպություններից, ընկերություններից, գյուղական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից, կոոպերատիվ, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններից, ինչպես նաև քաղաքացիներից պարտադիր լծարների և հարկերի գանձումը, կյանքի և մյուս ապահովագրությունը, մաքսավճարների և տուրքերի սահմանումը և գանձումը, դրամական միջոցների ներգրավումը շրջանառության մեջ (փոխառությունների, պարտատոմսերի, ավանդների և այլ տեսքով), ինչպես նաև բանկային վարկավորումը:

Ֆինանսների էության, դրանց նշանակության լուսաբանումը վկայում են, որ ֆինանսները կոչված են իրականացնելու պետական կարգավորման որոշակի խնդիրներ: Այդ խնդիրների լուծումը շուկայական տնտեսության անցման փուլում առավել կարևոր են՝ կապված տնտեսության կայունացման անհրաժեշտության, ճգնաժամային երևույթների հաղթահարման, բյուջեի պակասուրդի կրճատման և բնակչության կենսապայմանների բարելավման հետ:

Պետության ֆինանսական գործունեությունը որպես իրավական տարբեր հնարքների ամբողջություն գործնականում ուղղված է ֆինանսների ոլորտում մի շարք հիմնական խնդիրների պետական կարգավորմանը: Պետության ֆինանսական գործունեությունը նպատակ ունի իրավական կարգավորման ճանապարհով՝

- բացահայտել պետության ֆինանսական ռեսուրսները ու դրանց ավելացման հնարավորությունները, կազմակերպել պետական բյուջեի եկամուտների հավաքագրման գործընթացը,
- արդյունավետ կազմակերպել պետական բյուջեի եկամուտների բաշխումը, ապահովել այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը,

- մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման խնդիրներին համապատասխան՝ ապահովել ֆինանսական ռեսուրսների և ծախսերի միջև հաշվեկշռվածությունը ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին հատվածների ու համայնքների առումով:

Ֆինանսների իրավական կարգավորման խնդիրները իրականացվում են պետական բյուջեի բաշխման, վերաբաշխման և հսկողության միջոցով:

Ֆինանսների էությունը դրսևորվում է նրա գործառնությունների մեջ: Ֆինանսներին բնորոշ են երկու գործառնություն՝

1. բաշխման և վերաբաշխման,
2. վերահսկողության, որոնք ըստ էության գործունեության են վերածվում ֆինանսիրավական նորմերի ակտիվ գործադրման շնորհիվ՝ գործընթացին հաղորդելով իրավական բնույթ

Ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավաբանական գրականության մեջ ֆինանսներին վերագրվում են նաև այլ գործառնություններ: Այսպես Վ. Վ. Իվանովը ֆինանսներին վերագրում է նաև կարգավորիչ գործառնություն<sup>4</sup>: Գիտնականներից Վ. Գ. Բելլիպեցկին, ավելի հեռու է գնում: Նա ֆինանսների գործառնությունները ստորաբաժանում է երկու մասերի՝

1. օբյեկտիվ ֆինանսական գործառնություն,
2. սուբյեկտիվ ֆինանսական գործառնություն:

Դրանցից յուրաքանչյուրը, ըստ հեղինակի, բաղկացած է մի քանի գործառնություններից: Այսպես, ազատ շուկայի պայմաններում, Վ. Գ. Բելլիպեցկու կարծիքով, տնտեսության իրական հատվածում՝ կազմակերպությունների օբյեկտիվ ֆինանսական գործառնություններն են վերագրվում.

- կազմակերպությունների կենսագործունեության ապահովումը անհրաժեշտ դրամական միջոցներով,

- կազմակերպության կենսագործունեության

սպասարկումը դրամական միջոցներով,

- կազմակերպության համամասնությունների ապահովումը,

- ֆինանսական պլանավորումը:

Սուբյեկտիվ ֆինանսական գործառույթներին վերագրվում են կազմակերպությունների կապիտալի նախատեսված կառուցվածքի աճը, կազմը, դրամական միջոցների ռացիոնալ օգտագործումը և այլն:

Մի կողմ թողնելով այն իրողությունը, որ նշված գործառույթները մեծամասամբ մեկը մյուսի կրկնությունն են, նշենք, որ թվարկված գործառույթները առավելապես վերաբերում են ֆինանսների կառավարման բնագավառին, և այդ պատճառով չի կարելի ներկայացնել որպես գործառույթ:

Կարծում ենք՝ ֆինանսների առաջին և զլխավոր գործառույթը բաշխումը և վերաբաշխումն է, որոնք ունեն իրավական բնույթ, իրականացվում են միայն ֆինանսաիրավական նորմերի միջոցով: Ֆինանսաիրավական նորմերի միջոցով նախ՝ բաշխվում և ապա՝ վերաբաշխվում է հասարակական ներքին արդյունքը (ՀՆԱ) և ազգային եկամուտը: Ընդ որում, բաշխման գործընթացը հիմնականում տեղի է ունենում տնտեսության իրական հատվածում՝ արտադրության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների, կազմակերպությունների

րի միջոցով, ինչի արդյունքում կազմավորվում են կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերը, որոնք ունեն նպատակային ուղղվածություն: **Կենտրոնացված են կոչվում այն դրամական ֆոնդերը**, որոնք ստեղծվում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով: **Ապակենտրոնացված են կոչվում այն դրամական ֆոնդերը**, որոնք ձևավորվում են տնտեսավարող սուբյեկտների մակարդակով: Արևմտյան երկրներում ապակենտրոնացված են կոչվում նաև այն դրամական ֆոնդերը, որոնք ստեղծվում են տնային տնտեսություններում: Ինչպես կենտրոնացված, այնպես էլ ապակենտրոնացված դրամական ֆոնդերի կազմավորման գործընթացը սկսվում է տնտեսության իրական հատվածից, երբ տնտեսավարող սուբյեկտները ձեռնամուխ են լինում դրամական հասույթի բաշխմանը:

1 Մանրամասն տե՛ս, **И. Я. Дюргин**, Право и управление, "Юридическая литература", М., 1981, с.19, 25.

2 **Կ. Մարքս**, «Փիլիսոփայության աղբատոթյունը», Հայպետհրատ., Երևան, 1948, էջ 200:

3 Մանրամասն տե՛ս, **А. С. Емельянов, Н. Н. Черногор**, Финансово-правовая ответственность. М., "Финансы и статистика", 2004, 5.

4 **В. В. Иванов**, Финансы, учебник, М., 2001, с. 13.

## MANIFESTATION OF ECONOMICAL LAWS IN STATE FINANCIAL ACTIVITY WITHIN LEGAL FORMS

**NAZELI GARNIK SUQIASYAN**

Summary

The article covers the necessity of legal regulations for all known main economical laws in the sphere of financial activity and substantiates the contents of legal economical laws reflecting them in legal acts, which acting as economical policy, are changed into obligatory behaviour by means of legal acts and then forced into social life by state power.

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ\*

### Հայկ ԽԱԶԱՏՐՅԱՆ

*Հայ-Ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի Սահմանադրական և մուսիկոլոգիալ իրավունքի ամբիոնի հայցորդ*

**Յ**ուրաքանչյուր պետության համար տարածքային կառուցվածքն ինքնին բովանդակում է տարածքային կազմակերպման այնպիսի կենսական տարրեր, որոնք գործումն ազդեցություն են ունենում տվյալ պետության գործունեության կառավարման համակարգի արդյունավետության ապահովման հարցում: Այդ առումով, անհրաժեշտ է կարևորել, որ Չինաստանի ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգը նույնպես բնութագրվում է պետության, կենտրոնական իշխանության, տարածքային բաղկացուցիչ մասերի և այդ տարածքի բնակչության միջև փոխահարաբերությունների ամբողջությամբ:

Հարկ է նշել, որ դեռևս 2003-ի կազմավորման ժամանակաշրջանում տարածքային բաժանման խնդիրը փոխկապակցվում էր ազգային քաղաքականության հետ: Սակայն, այն պահից սկսած, երբ Չինաստանի կոնունիստական կուսակցությունը հրաժարվեց այդ քաղաքականության հիմքում ընկած ազգերի ու ազգությունների ինքնորոշման իրավունքից (ընդհուպ մինչև նրանց անջատվելը) և պետության դաշնային ձևից, տարածքային բաժանումը կրեց մեխանիկական բնույթ [1]: Ադյունքում, Չինաստանի բոլոր ազգերն ու ազգությունները՝ անկախ նրանց թվաքանակից կամ սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակից, ճանաչվեցին չին ժողովուրդ: Նույնիսկ, «ազգեր» և «ազգություններ» հասկացությունները դուրս մղվեցին պաշտոնական շրջանառությունից, ինչը ենթադրում էր, որ դա պետք է նպաստեր երկրում ազգերի ու ազգությունների իրավահավասարության կարգավիճակի հաստատմանը:

Հիշատակված խնդիրների իրագործման համար 2003 Պետական խորհուրդը 1952 թվականին ընդունեց «Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում շրջանային ազգային ինքնավարության իրականացման հիմնական սկզբունքներ-

րի մասին» որոշումը, ըստ որի՝ սահմանվեցին ազգային ինքնավար շրջանների քաղաքականության հիմնական հայեցակարգերը, ինքնավար շրջանների հիմնման սկզբունքներն ու լիազորությունները, ազգային ինքնավար շրջաններում ազգերի ու ազգությունների միջև հարաբերությունների կարգավորման սկզբունքները, ինչպես նաև վերադաս վարչական մարմինների հետ այդ ինքնավար շրջանների փոխահարաբերությունների շրջանակները:

Հիշյալ որոշման համաձայն՝ ազգային ինքնավար շրջանները հանդիսանում էին 2003-ի անբակտելի մասը, այդ շրջանների ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում էին միասնական կենտրոնական ղեկավարման ներքո, իսկ տեղերում ենթարկվում էին վերադաս ժողովրդական կառավարության ցուցումներին [2]:

Այդ ժամանակաշրջանում, Չինաստանում բնակչության ազգային կազմի հատկանիշով պայմանավորված՝ առանձնացվում էին տարածքային երեք տեսակի ինքնավար միավորներ՝ 1) որևէ ազգության կողմից մշտապես բնակեցված շրջաններ, 2) շրջաններ, որտեղ, թվով գերակշռող մի ազգությունից բացի, բնակվում են նաև փոքրաթիվ այլ ազգությունների խմբեր, 3) շրջաններ, որտեղ բնակվում են երկու կամ ավելի ազգություններ: Ընդ որում, թույլատրվում էր ինքնավար շրջանների կազմում ընդգրկել երկրի բնակչության մեծամասնությունը կազմող հաներ, ինչը պայմանավորված էր «տվյալ բնակավայրի տնտեսական, քաղաքական և այլ պահանջմունքներով», ինչպես նաև «դրանց պատմական անցյալը հաշվի առնելու հանգամանքով» [3]:

Անհրաժեշտ է նշել, որ վարչական ինքնավար շրջան կարող է հաղիսանալ Չինաստանի վարչատարածքային բաժանման ցանկացած միավոր, դրանք են՝ գավառակ, շրջան, գավառ, մարզ և

\* Ներկայացվել է 15.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

այլն: Ինչ վերաբերում է այդ ինքնավար միավորների անվանման խնդրին, ապա անհրաժեշտ է կարևորել, որ դրանք պարտադիր պետք է ունենան և աշխարհագրական անվանում, և ինքնավարություն իրականացնող ազգի (ազգության) անվանում:

Հիշատակված փաստաթղթի վերլուծությունից հետևում է, որ Չինաստանում փաստորեն ձևավորվել է ազգային քաղաքականության իրականացման այն ռազմավարությունը, ըստ որի՝ այդ քաղաքականության հիմքում ընկած պետք է լինեն՝ պետության ամրապնդման ու ազգային համախմբվածության ապահովումը, ազգային ինքնության պահպանումը, ազգերի «դիմազրկման» արգելումը և ազգերի «միաձուլմանը» նպաստումը:

Միաժամանակ, այդ ռազմավարության հիմնական դրույթներն իրենց ամրագրում են ստացել նաև ԶԺՀ Սահմանադրության նախաբանում և 4-րդ հոդվածում: Մասնավորապես, Սահմանադրության նախաբանով Չինաստանը հռչակվում է որպես «միասնական բազմազգ պետություն» [4], իսկ 4-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «պետությունը երաշխավորում է բոլոր ազգային փոքրամասնությունների օրինական իրավունքներն ու շահերը, պաշտպանում և զարգացնում է բոլոր ազգությունների հավասարության, համախմբվածության ու փոխօգնության հարաբերությունները»:

ԶԺՀ վարչատարածքային և ազգային-պետական կառուցվածքը սերտորեն փոխկապված են: Չինաստանի ժողովրդական Հանրապետության կազմավորման պահից անփոփոխ է մնում պետության վարչատարածքային բաժանման եռաստիճան համակարգը, որը ներառում է նահանգներ (ինքնավար շրջաններ, կենտրոնական ենթակայության քաղաքներ), գավառներ, գավառակներ (ավաններ) [5]: Հետագայում այդ կառուցվածքում իրականացվող փոփոխություններն առնչվեցին հիմնականում վարչատարածքային այս կամ այն միավորների սահմանների սահմանման, դրանց թվի ավելացման կամ պակասեցման, ինչպես նաև՝ այդ միավորների ու աշխարհագրական այլ օբյեկտների անվանումների ճշգրտման հետ: Միաժամանակ, գոյություն ունեցող վարչատարածքային կառուցվածքի շրջանակում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն պայմանավորված էր հիմնականում սոցիալ-տնտեսական գործոններով, այդ թվում՝ գյուղի կոոպերացման ու արդյունաբերականացման, քաղաքատիպ բնակավայրերի թվի ավելացման և առկա քաղաքների զարգացման հանգամանքներով [6]:

Ներկայում պետության վարչատարածքային և ազգային-պետական կառուցվածքում կարևոր նշանակություն է ձեռք բերել այսպես կոչված

«շրջանայնացման» (ռեգիոնալացման) գործընթացը, որի իրականացման պարագայում փոփոխությունների հիմնական շեշտադրումը կատարվում է ոչ այնքան ազգային կամ պատմական առանձնահատկությունների, որքան տնտեսական նպատակահարմարության ապահովման վրա:

ԶԺՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ Չինաստանի ժողովրդական Հանրապետությունն ունի հետևյալ վարչատարածքային բաժանումը.

1) երկրի ողջ տարածքը բաժանվում է նահանգների, ինքնավար շրջանների և կենտրոնական ենթակայության քաղաքների,

2) նահանգները և ինքնավար շրջանները բաժանվում են ինքնավար մարզերի, շրջանների, ինքնավար շրջանների և քաղաքների,

3) շրջանները, ինքնավար շրջանները բաժանվում են գավառակների, ազգային գավառակների և ավանների:

Կենտրոնական ենթակայության քաղաքները և համեմատաբար խոշոր քաղաքներն իրենց հերթին բաժանվում են շրջանների և փոքր գավառների, իսկ ինքնավար մարզերը բաժանվում են շրջանների, ինքնավար շրջանների և քաղաքների:

Հարկ է նկատել, որ ԶԺՀ Սահմանադրության մեջ թվարկված են միայն այն վարչատարածքային միավորները, որտեղ ձևավորվում են ժողովրդական ներկայացուցիչների ժողովներ և կազմավորվում ժողովրդական կառավարություններ: Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է, որ՝ պետությունն անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծել հատուկ վարչական շրջաններ, ինչն ենթադրում է, որ Չինաստանում վարչատարածքային միավորների սահմանադրական ցանկն սպառիչ չէ: Հատուկ վարչական շրջանների ռեժիմը սահմանվում է օրենքներով՝ հաշվի առնելով կոնկրետ իրադրությունը:

2011 թվականի հունվարի 1-ի տվյալներով Չինաստանում գոյություն ունեն վարչատարածքային հետևյալ միավորները՝ 23 նահանգ, 5 ինքնավար շրջան, 4 կենտրոնական ենթակայության քաղաք, 3 հատուկ վարչական շրջան (Թայվանի, Սյանգանի և Լոմենի) [7]:

Այնուհետև, ԶԺՀ-ի Սահմանադրության 62-րդ հոդվածի 12-րդ կետը սահմանում է, որ նահանգները, ինքնավար շրջանները և կենտրոնական ենթակայության քաղաքները կազմավորվում են ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի կողմից: Ինչ վերաբերում է նահանգների, ինքնավար շրջանների, կենտրոնական ենթակայության քաղաքների վարչատարածքային բաժանմանը, ինչպես նաև ինքնավար մարզերի, քաղաքների, գավառակների տարածքային բաժան-

մանը, ապա այդ բաժանունը հաստատելու լիազորությունը պատկանում է ԶԺՀ Պետական խորհրդին (Սահմանադրության 89-րդ հոդված, կետ 15):

Սահմանադրության հիշատակված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Զինաստանի տարածքային կազմակերպման իրավասությունը վերապահված է բացառապես պետական իշխանության և պետական կառավարման բարձրագույն մարմինների:

Միաժամանակ, ԶԺՀ-ի Սահմանադրության իմաստով՝ ինքնավար շրջանները, ինքնավար մարզերը և ինքնավար գավառակները հանդիսանում են ազգային ինքնավարության տարածքներ: Ընդ որում, ազգային ինքնավարության այդ շրջանների վարչական կարգավիճակի հաստատումը պայմանավորված է տվյալ շրջանի տարածքային մեծությամբ և այնտեղ բնակվող ազգաբնակչության թվով:

1980-ական թվականներից սկսած Զինաստանում ընդունվեց ազգային (էթնիկական) օրենսդրության բազմաստիճան համակարգ: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել 1984 թվականին ընդունված «Ազգային շրջանային ինքնավարության մասին» օրենքը [8]: Ընդ որում, «շրջանային ազգային ինքնավարություն» հասկացությունը, ըստ հիշատակված օրենքի տրամաբանության, սահմանվում է որպես «պետության քաղաքական համակարգի կարևորագույն բաղադրիչ» և, միաժամանակ, ազգային հարցի լուծման «հիմնական քաղաքականություն»:

Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ազգային ինքնավարության շրջաններն իրավասու են մշակել և ընդունել ինքնավարության ինքնուրույն իրացման արդյունավետ միջոցներ՝ հաշվի առնելով ազգությունների քաղաքական, տնտեսական և մշակութային առանձնահատկությունները: Անհրաժեշտ է նշել, որ ինքնավարությանը վերաբերող ցանկացած դրույթ ուժի մեջ է մտնում միայն ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի Մշտական կոմիտեի հաստատումից հետո, իսկ ինքնավար մարզերի ու գավառակների ինքնավարության վերաբերյալ դրույթները հաստատվում են ժողովրդական ներկայացուցիչների նահանգային ժողովների կողմից՝ պարտադիր կարգով իրազեկելով նաև ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի Մշտական կոմիտեին:

Ազգային ինքնավարության մարմինների առանցքային լիազորություններից է փոփոխել կամ կասեցնել վերադաս մարմինների որոշումների, կարգադրությունների, հրամանների և հրահանգների գործողությունը իրենց տարածքում՝ նախապես համաձայնեցնելով վերադաս պետա-

կան մարմնի հետ:

Ազգային ինքնավարության շրջանների ինքնակառավարման մարմինները համեմատաբար մեծ ինքնուրույնությամբ են օժտված հատկապես ֆինանսատնտեսական գործունեության բնագավառում: Ընդ որում, բոլոր ֆինանսական եկամուտները, որոնք պատկանում են ազգային ինքնավարության այդ շրջաններին՝ օգտագործվում են բացառապես ինքնուրույնաբար: Իհարկե, ԶԺՀ Պետական խորհուրդը նախապես սահմանում է ազգային ինքնավարության շրջանների ֆինանսական եկամուտների և ծախսերի կազմը, այդ թվում՝ արտոնությունների համակարգը, սակայն ծախսային հոդվածների մասով այդ մարմինները կարող են ազատորեն դրանք տնօրինել և, նույնիսկ, հիմնադրել շրջանառու միջոցների հիմնադրամներ:

Ազգային ինքնավարության շրջաններում ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորություններն իրացնելիս կարող են օգտագործել մեկ կամ այլ լեզուներ ու փաստաթղթաշրջանառության կանոններ, որոնք առավել գործածական են այդ շրջանում: Հատկանշական է նաև հանգամանքը, որ նշված մարմինները՝ Պետական խորհրդի համաձայնությամբ և պետական ռազմական համակարգի ու իրական վտանգի առկայության դեպքում, կարող են ձևավորել սեփական անվտանգության ուժեր՝ տվյալ շրջանում հասարակական կարգը պահպանելու համար:

Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում պետությունը կարող է ստեղծել հատուկ վարչական շրջաններ, որոնց գործունեության շրջանակները և լիազորությունները սահմանվում են բացառապես օրենքներով:

Հարկ է նշել, որ «հատուկ վարչական շրջաններ» ստեղծելու գաղափարն առաջ է քաշվել դեռ 1981 թվականից, երբ անհրաժեշտություն առաջացավ Թայվանի վերամիավորման ժամանակ իրականացնել այսպես կոչված՝ «մեկ պետություն՝ երկու հասարակարգ» քաղաքականությունը: Այդ քաղաքականության հիմքում ընկած էր այն պահանջը, ըստ որի, մի կողմից, հատուկ վարչական շրջանը պետք պահպաներ՝ մինչև Զինաստանի հետ վերամիավորումը, գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական (կապիտալիստական) համակարգը, կենսակերպը, արտաքին տնտեսական ու մշակութային կապերը այլ պետությունների հետ, ինչպես նաև ունենար սեփական զինված ուժեր՝ հասարակական անվտանգությունն ապահովելու համար, իսկ, մյուս կողմից, պետությունը ստանձնում էր պարտավորություն՝ թույլ չտալու որևէ ոտնձգություն Թայվանի ազգաբնակչության մասնավոր սեփականության

նկատմամբ:

Սակայն, հետագայում, կանխորոշելով Թայվանի անկախության հռչակման հնարավոր վտանգը, ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը 2005 թվականի մարտի 14-ին ընդունեց «Ընդդեմ ցեսիայի» օրենքը [9]: Այդ օրենքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ թվով 10 հոդվածներում շարադրվում է թայվանական հարցի ելությունը, խաղաղ ճանապարհով «Չինաստանի սրբազան տարածքի» հետ վերամիավորման նպատակներն ու անհրաժեշտությունը, Չինաստանից հնարավոր անջատման անթույլատրելիությունը:

Սակայն, պետական այս հայեցակարգը և Սահմանադրության 31-րդ հոդվածի դրույթները հետագայում առավել պահանջարկված համարվեցին բրիտանական «Սյանգան» և պորտուգալական «Սոնեն» գաղութների նկատմամբ Չինաստանի բացառիկ իշխանության իրականացման համար [10]: Ընդ որում, Սյանգանի և Սոնենի վերադարձման գործընթացները իրականացվեցին բացառապես պայմանագրաիրավական հենքի վրա՝ դրանց տնտեսական համակարգի և քաղաքական իշխանության ռեժիմը չփոփոխելու պայմանով [11]:

Հետագայում, Սյանգանի և Սոնենի վարչական շրջաններում պետական իշխանության մարմինների կազմավորման ու գործունեության ռեժիմը կանոնակարգելու նպատակով, ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը 1990 թվականի ապրիլի 4-ին ընդունեց Սյանգանյան հատուկ վարչական շրջանի հիմնական օրենքը, իսկ 1993 թվականի մարտի 31-ին՝ Սոնենյան հատուկ վարչական շրջանի հիմնական օրենքը, որոնք իրենց ելությամբ հանդիսանում էին ինքնավարության այդ շրջանների սահմանադրությունները:

Հարկ է նկատել, որ նշված հատուկ վարչական շրջանների հիմնական օրենքները գրեթե նույնաբովանդակ են, որոնք ներառում են հետևյալ առանցքային հարցերը.

ա) դրանք հանդիսանում են Չինաստանի տարածքային վարչական շրջաններ,

բ) այդ շրջանների օրենսդիր մարմինների ընդունած օրենքները պետք է անցնեն իրենց հաստատման յուրահատուկ ընթացակարգ ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովում և ուժի մեջ մտնեն միայն վերջինիս դրական համաձայնության առկայության դեպքում,

գ) շրջանների վարչակազմի ղեկավարները ընտրվում են ընտրությունների անցկացման միջոցով կամ տվյալ շրջանում խորհրդակցության արդյունքում և, այնուհետև, իրենց նշանակումը պետք ստանան ՉԺՀ կենտրոնական ժողովրդական կառավարության կողմից,

դ) շրջանների վարչակազմերը չեն կարող իրականացնել պետության ինքնիշխանության իրացման, երկրի պաշտպանության, արտաքին քաղաքականության և արտաքին տնտեսական գործերի բնագավառի լիազորություններ,

ե) վարչական շրջաններին չվերապահված ՉԺՀ ցանկացած օրենք կիրառելի չէ տվյալ շրջանի տարածքում,

զ) վարչական շրջանների դատարանի որոշումները վերջնական են և պարտադիր կատարման ենթակա,

է) Չինաստանի կենտրոնական կառավարությունը վարչական շրջաններից հարկեր չեն գանձում, հետևաբար, այդ շրջաններից որևէ ֆինանսական հատկացում վերադաս բյուջե չի կատարվում,

ը) վարչական շրջանների օրենսդիր և գործադիր մարմիններում ընդգրկվում են այն անձինք, ովքեր բնակվում են տվյալ շրջանում և այլն:

Այսպիսով, ընդհանրացնելով տարածքային կազմակերպման վերաբերյալ առկա առանձնահատկությունները, կարելի է կատարել մի շարք եզրակացություններ.

1) Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը հանդիսանում է ունիտար պետություն, որտեղ տարածքային կազմակերպումը փոխկապակցվում է ազգային քաղաքականության հետ, ընդ որում, այն իրականացվում է տարածքի բաժանման (ռեզիդնալացման) հիման վրա՝ այդ տարածքում առկա ազգային հարցի լուծման առանձնահատկությունները պարտադիր կարգով հաշվի առնելու պայմանով:

2) ՉԺՀ-ում առկա է վարչատարածքային բաժանման եռաստիճան համակարգ: Սակայն, բնակչության ազգային կազմի հատկանիշով պայմանավորված, տարածքային բաժանման հատուկ ձև է հանդիսանում նաև վարչական շրջանային ազգային ինքնավարությունը, որը, ինքնակառավարման տարրից բացի, բովանդակում է նաև ազգային փոքրամասնությունների շահի ապահովման առաքելությունը:

3) Չինաստանում տարածքային կազմակերպման կարևոր առանձնահատկություններից է հատուկ վարչական շրջանների ստեղծումը, ինչը միաժամանակ ընկալվում է՝ որպես պետության խնամակալության ներքո գտնվող տարածքը պետության կազմի մեջ աստիճանաբար անցնելու միջազգային իրավական յուրահատուկ հիմնախնդրի լուծման սահմանադրական եղանակ: Խոսքը վերաբերում է Չինաստանի ժողովրդական Հանրապետության հատուկ վարչական շրջաններին, որոնք դեռևս պահպանում են ՉԺՀ խնամակալության ներքո գտնվող ժամանակավոր տարածքի կարգավիճակ:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Այդ մասին մանրամասն տես՝ **Москалев А. А., Лазарева Т. В.** Национальная политика // КНР 55 лет: Политика, экономика, культура. М., НДВ РАН, 2004. с. 302.
2. **Москалев А. А., Лазарева Т. В.** նույն աշխ. մեջ, էջ 302.
3. Основные нормативные акты о местных органах власти и государственном управлению Китайской Народной Республики. - М., 1959, с. 64-65.
4. Конституция Китайской Народной Республики / Конституции государств Азии. В 3 томах. Том 3. Дальний Восток / Под ред. Т. Я. Хабриевой., М., 2010, 1040 էջ: Բացի այդ, առանձին հեղինակներ պնդում են պետության վարչատարածքային բաժանման քառաստիճան համակարգի մասին, նշելով վարչատարածքային կառուցվածքի չորրորդ՝ նահանգների ու գավառների միջև միջանկյալ մարզային միավորի մասին, որը ներառում է նահանգներ (ինքնավար շրջաններ, կենտրոնական ենթակայության քաղաքներ), գավառներ, գավառակներ (ավաններ): Միջանկյալ մարզային միավորի մեջ են մտնում շրջանները, ինքնավար շրջանները, այմակները (վարչատարածքային այն միավորն է, որտեղ բնակվում են մոնղոլ և թուրք ցեղերի ներկայացուցիչներ) և գավառային ենթակայության քաղաքները: Այդպիսի տեսակետ է արտահայտել նաև Չինաստանի տնտեսական աշխարհագրության հայտնի մասնագետ Կ.Չերնոժուկովը: Տես՝ **Глуних В. И.** Третья гражданская революционная война в Китае. М., 1958, с 29-33. Տես նաև **Ян Цзюпоэнь**. Критика местного национализма. Выступая против местного национализма, бороться за создание большой социалистической семьи родины. Пекин, 1958. էջ 94:
5. Համառոտ Չինաստանի մասին, Եր., 2009, էջ 15:
6. Մանրամասն տես՝ **Гудошников А. М.** Эволюция государственного строя КНР // Государственный строй и важнейшие социально-экономические проблемы КНР (Тезисы международной научной конференции 5-7 апреля 1982 г.). М., Институт Дальнего Востока АН СССР, 1982:
7. Տես նաև Համառոտ Չինաստանի մասին, Եր., 2009, էջ 4, 16:
8. Закон КНР о национальной районной автономии (в редакции 2001 г.) / Народный ежедневник. 15.03.2001:
9. Միջազգային իրավունքում «ցեսիան» ընկալվում է որպես տարածքի նկատմամբ իրավունքի զիջում: Տես նաև Закон КНР против цессии // Народный ежедневник. 15.03.2005:
10. «Սյանգան» բառացի նշանակում է «բույրի նավահանգիստ», միաժամանակ, այն Չինաստանի գուանչժունյան բարբառով մեզ հայտնի է «Հոնկոնգ» անվանումով: Ինչ վերաբերում է «Աոմեն» հասկացությանը, ապա այն բառացի ընկալվում է որպես «ծովածոցի դարպաս»: Մանրամասն տես նաև **Чупанов А. С.**, Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), М., 2006, Современные государственные политические системы. Китайские регионы Сянган, Аомэнь, Тайвань. Издательство Ланьчжоуского Университета. 1998, с. 32-45, Народный ежедневник, 27.09.1984:
11. Չինաստանի և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության կողմից 1984 թվականի դեկտեմբերի 19-ին «Սյանգանի հարցի վերաբերյալ» ընդունվել է համատեղ հայտարարություն, որն ուժի մեջ է մտել 1985 թվականի մայիսի 27-ին: Ըստ այդ հայտարարության՝ Սյանգանի նկատմամբ Չինաստանի ինքնիշխանության վերականգնումը հանդիսանում է Մեծ Բրիտանիայի նոր տարածքների վարձավճարների ժամկետի ավարտի հետ: Արդյունքում, Սյանգանյան հատուկ վարչական շրջանը ստեղծվեց 1997 թվականի հուլիսի 1-ին: Չինաստանի և Պորտուգալիայի կողմից 1987 թվականի ապրիլի 13-ին ստորագրվել է «Աոմենի հարցի շուրջ» համատեղ հայտարարությունը, որի համաձայն 1999 թվականի դեկտեմբերի 20-ին ՉժՖ-ի կառավարությունը վերականգնել է իր ինքնիշխանությունը Աոմենի նկատմամբ: Արդյունքում, Աոմենի հատուկ վարչական շրջանը հիմնադրվեց 1999 թվականի դեկտեմբերի 20-ին: Մանրամասն տես նաև **Шкутмина Д. А.**, Особенности конституционно-правового регулирования экономической системы Китайской Народной Республики. Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 2011, **Игнатенко Г. В.**, Система представительных учреждений Китайской Народной Республики. Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 1956, **Чупанов А. С.**, Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), дисс. канд. юрид. наук. М., 2006:

THE CONSTITUTIONAL BASIS OF THE TERRITORIAL ORGANIZATION PEOPLE'S REPUBLIC OF CHINA

**H. KHACHATRYAN**

Competitor of the Department of Constitutional and Municipal Law Russian-Armenian (Slavic) state University

Summary

In the present study examined the constitutional basis of territorial organization in the context of the Constitution of the People's Republic of China in 1982. As a result, the author concluded that in modern China - as a unitary state, territorial division shall form a special administrative district of national autonomy.

**Keywords:** Constitution of the People's Republic of China, the constitutional basis of territorial organization, the administrative areas of national autonomy, special administrative regions.

# ԱՄՆ-Ի ՄԵՆԱՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԻ ՄԵՐԺՄԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ\*

## Աննա Վալերի ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սպիտակի թիվ 2 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի



Առաջին աշխարհամարտից հետո հայկական հարցը թևակոխեց ուրակական նոր փուլ: Ստեղծվել էին նոր ռազմաքաղաքական նպաստավոր պայմաններ Արևմտյան Հայաստանի ազատագրության և Հայկական

դապետ Հաուզին մի քանի անգամ առաջարկվեց աֆրիկյան գաղութների մանդատը, բայց ԱՄՆ-ի նախագահը կտրականապես դեմ արտահայտվեց: Սակայն, երբ բարձրացվեց Հայաստանի և նեղուցների նկատմամբ մանդատի հարցը, նախագահը այդ նախագծին ավելի բայրացական վերաբերվեց<sup>2</sup>:

Մինչև Հայաստանի մանդատի խնդիրը կիստակեցվեր և վերջնականորեն պարզ կդառնար, թե որ դաշնակից պետությունը պիտի ստանձններ այն, 1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պատվիրակությունները (ղեկավարներ՝ Ա. Ահարոնյան և Պողոս Նուբար Փաշա) հրապարակեցին հայ ժողովրդի բաղձանքներն արտահայտող մի հուշագիր, որում պահանջվում էր արևելահայ, արևմտահայ և Կիլիկիայի տարածքներից ստեղծել մի լայնատարած պետություն՝ Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստան<sup>3</sup>:

1919 թ. մարտի 28-ին Ա. Ահարոնյանն իր քաղաքական օրագրում նշում էր. «Ամբողջ Հայաստանը՝ Կիլիկիայից մինչև Կովկաս, դրվելու էր ԱՄՆ-ի մանդատի տակ»<sup>4</sup>:

1919 թ. ապրիլի 17-ին Փարիզում ԱՄՆ-ի նախագահ՝ Վ. Վիլսոնը, ընդունելով հայ պատվիրակներին, հավաստիացնում էր, որ «եթե երբևէ ԱՄՆ-ը որևէ երկրի մանդատ ընդունելու լինի, ապա դա կլինի անպայման Հայաստանը»<sup>5</sup>: Ապրիլի 24-ին մի գեկուցագրի մեջ Ա. Ահարոնյանը հայտնում էր, որ «ԱՄՆ-ի թե՛ հասարակական կարծիքը և թե՛ նախագահ Վ. Վիլսոնը Հայաստանի մանդատի ջերմ պաշտպաններից է: Արգելքը շարունակում է մնալ Սոնրոյի սկզբունքը»<sup>6</sup>:

1919 թ. մայիսի 14-ին Չորսի խորհուրդը որոշեց Հայաստանի մանդատը տալ ԱՄՆ-ին: Ազգերի լիգան ևս որոշում է Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին: Ծրագրվում էր, որ մանդատի տևողությունը պետք է լիներ 10 տարի, որը, սակայն, երկկողմ համաձայնությամբ կարող էր երկարաձգվել:

Փարիզի խորհրդաժողովի Հինգի խորհրդի ո-

հարցի լուծման համար:

Նման պայմաններում Հայաստանի համար ցանկալի էր հզոր ու հարուստ ԱՄՆ-ի հովանավորությունը: Այս իմաստով Անգլիայի վարչապետ Լ. Ջորջը գտնում էր, որ «ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի վերցնելը չէր կարող առարկության տեղիք տալ մյուս տերությունների և երկրների կողմից այն իմաստով, որ ԱՄՆ-ը զավթողական նպատակներ չէր հետապնդում»<sup>7</sup>:

Իրոք, Հայաստանի մանդատը ստանձնելու ամենահավանական թեկնածուն համարվում էր ԱՄՆ-ը, մասնավորապես ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, որը Հայաստանի մանդատի ջերմ պաշտպաններից էր: Նա նպատակ ուներ կյանքի կոչել 1918 թ. իր իսկ հռչակած հետպատերազմական կարգավորման հայտնի 14 կետերը կամ խաղաղության ծրագիրը, որոնցից մեկն էլ վերաբերում էր փոքր ու ճնշված ժողովուրդների ազգային իրավունքներին ու ազատագրության խնդրին: Օսմանյան կայսրության ճիրաններում տապալվող այդպիսի երկրներից մեկն էլ Հայաստանն էր, որի կայացմանն էլ փորձեց իր նպաստը բերել ԱՄՆ-ի նախագահ, դեմոկրատ Վուդրո Վիլսոնը (1856-1924 թթ.):

1919 թ. սկզբից ԱՄՆ-ը հավակնում էր ստանձնել ոչ միայն Հայաստանի, այլև Կ. Պոլսի և նեղուցների մանդատը: Լ. Ջորջը իր հուշերում պատմում է, որ Փարիզի խորհրդաժողովը նախագահ Վիլսոնին և նրա մերձավոր խորհրդական գն-

\* Ներկայացվել է 08.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

րոշմամբ հունիսի կեսերին Հայաստանի Գերագույն կոմիտեի նշանակվեց ամերիկացի գնդապետ Բ. Հասկելը: Նրան հանձնարարված էր ապահովել հայ ժողովրդի ներքին և արտաքին անվտանգությունը, պարենավորումը, ներգաղթը, մինչև Հայաստանի մանդատի վերջնական լուծումը:

1919 թ. հուլիսին ԱՄՆ-ի նախագահի համաձայնությամբ Հայաստան գործուղվեց ԱՄՆ-ի գլխավոր շտաբի պետ զեներալ Ջ. Հարբորդի գլխավորած պատվիրակությունը, որի նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի պայմաններն ու հնարավորությունները մանդատը ստանձնելու ուղղությամբ: Ջ. Հարբորդի առաքելությունը պետք է որոշեր, թե որքան զորք և ֆինանսական միջոցներ կպահանջվեր Հայաստանի անվտանգության և խնամակալության համար: Նախնական տվյալներով հաշվվում էր, որ տարածաշրջան պետք է ուղարկվեր 50 հազար ամերիկյան զինվոր՝ երկիրը պաշտպանելու, և 757 միլիոն դոլար՝ ընդհանուր ծախսերը հոգալու համար: Հարբորդի ուսումնասիրությունների զննհատակահից և եզրակացությունից շատ բան էր կախված, մասնավորապես, որ Անգլիան իր երկու զորամասերը դուրս էր բերել Կովկասից:

Արդեն 1919 թ. աշնանից սկսած կարծիքներ էին լսվում այն մասին, որ հազիվ թե ԱՄՆ-ը ընդունի Հայաստանի մանդատը: «Արդեն 1919 թ. սեպտեմբերին,- գրում էր Ա. Ահարոնյանը իր օրագրում,- ծայրեր էին լսում ԱՄՆ-ի կողմից հայկական մանդատը ստանձնելու կասկածելիության մասին»<sup>7</sup>:

Հայաստանի մանդատի մերժման քաղաքական հիմքը ԱՄՆ-ի մեկուսացման քաղաքականության տիպիկ արտահայտություն հանդիսացավ, այն, որ 1919 թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ-ի Սենատը, անկախ նախագահ Վ. Վիլսոնի ցանկությունից, 51 դեմ և 41 կողմ ձայներով չվավերացրեց Վերսալի հաշտության պայմանագիրը՝ ներառյալ Ազգերի Լիգայի մտնելը, կսահմանափակելը՝ «բաց դռների» և «ձեռքերի ազատության» ամերիկյան ավանդական քաղաքականությունը:

Համաշխարհային ակտիվ քաղաքականության վիլսոնյան ձգտումների դեմ հանդես եկան ընդդիմադիր հանրապետական մեծամասնությունը, Սենատի հանրապետական մեծամասնությունը և մասնավորապես արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Դ. Լոջը: Վ. Վիլսոնի արտաքին քաղաքականության գծի դեմ արտահայտվեց անգամ պետքարտուղար Լանսինգը:

Սենատում մեծամասնություն կազմող հանրապետական խմբակցության գլխավոր առարկությունը ԱՄՆ-ի Ազգերի Լիգա չմտնելու, նրա կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն չլի-

նելն էր: Իսկ այդ հոդվածը նախատեսում էր, որ Լիգայի անդամ բոլոր երկրները պարտավոր են ընդհուպ մինչև զենքով պաշտպանելու իրենց անդամ երկրների անկախությունը արտաքին ներխուժումից: Հենց այս իրավաքաղաքական հիմքի վրա էլ Սենատի մեծամասնությունը գտավ, որ ԱՄՆ-ը չպետք է իր վրա նման պարտականություն վերցնի (խոսքը Հայաստանի մանդատին է վերաբերում), քանի որ դա կլինի Մոնրոյի սկզբունքի խախտում:

Անգլիայի վարչապետ Լ. Ջորջը նախագահ Վ. Վիլսոնի հետ ունեցած զրույցներից հանգել է այն հետևության, որ ԱՄՆ-ում գոյություն ունի մի որոշ քաղաքական հոսանք, որը դեմ էր ԱՄՆ-ի ներքաշմանը միջազգային բարոյությունների մեջ՝ հատկապես Եվրոպայում: Այդպիսի բարոյությունների թվին պետք է դասել Հայաստանի մանդատի խնդիրը: Լ. Ջորջի կարծիքով Կոնգրեսում մեծամասնություն չունեցող դեմոկրատ Վ. Վիլսոնը հազիվ թե կարողանար համոզել ու պաշտպանել տալ Հայաստանի մանդատի և ընդհանրապես միջազգային իրավական քաղաքականության գործընթացներին համարձակ մասնակցելու կուրսը:

Այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի Սենատը չվավերացրեց Վերսալի պայմանագիրը, նաև Լիգայի կանոնադրությունը, դա միաժամանակ ահագանգ էր այն մասին, որ ԱՄՆ-ը ըստ էության, չի ստանձնի Հայաստանի մանդատը և այդտեղ զորք չի ուղարկի:

1920 թ. սկզբներին Գերագույն Խորհուրդը նախագաղաղով, որ վերջին հաշվով ԱՄՆ-ը չի ստանձնի Հայաստանի մանդատը. առաջարկեց այն հանձնել Ազգերի Լիգայի հովանավորությանը<sup>8</sup>: Սակայն Ազգերի Լիգան հրաժարվեց այդ առաջարկից, քանի որ վերջինս չուներ սեփական բանակ, անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այլն: Այդ իսկ պատճառով նա չէր կարող Հայաստանի խնամակալությունը իր վրա վերցնել:

ԱՄՆ-ի ինքնամեկուսացման մի նոր արտահայտություն եղավ այն, որ Կոնգրեսի որոշմամբ ԱՄՆ-ը 1920 թ. մարտին պաշտոնապես դուրս եկավ Գերագույն Խորհրդից և հայտարարեց, որ նա մասնակցություն չի ունենա և չի ստորագրի ոչ մի պայմանագիր: Իսկ ապրիլի սկզբին զեներալ Ջ. Հարբորդը Հայկական հարցի վերաբերյալ Սենատում տվել է զեկուցում, որը, սակայն, վախեցրել է իր օրենսդիրներին: Բայց և այնպես, երբ բոլոր մեծ ու փոքր պետությունները հրաժարվեցին ընդունել Հայաստանի մանդատը, կրկին ընտրությունը կանգ առավ ԱՄՆ-ի վրա: Ապրիլի 25-ին դաշնակիցների Սան-Ռեմոյի խորհրդաժողովը կրկին պաշտոնապես դիմեց նախագահ Վ. Վիլսոնին՝ ընդունել Հայաստանի մանդատը և միաժամանակ իրավարար որոշել (գծել) հայ-թուրքական

ապագա սահմանը<sup>9</sup>:

Հայաստանի սահմանը Վիլսոնը պետք է գծեր այն հաշվարկով, որպեսզի բավարարվեին հայերի օրինական պահանջները և ապահովվեր նրա ազատ և հարմար ելքը դեպի ծով<sup>10</sup>: Մայիսի 24-ին Վիլսոնը դիմեց Կոնգրեսին՝ առաջարկելով համապատասխան լիազորություններ տալ իրեն մանդատն ընդունելու և այնտեղ զորք ուղարկելու համար<sup>11</sup>: Մայիսի վերջին ընթացքում կոնգրեսականների քննարկումները, որոնց ընթացքում Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ներկայացրեց Ջ. Հարբորդի զեկուցագիրը, որում ասվում էր, որ հինգ տարվա ընթացքում ԱՄՆ-ը կծախսեր 757 միլիոն դոլար, իսկ տեղում կարգ ու կանոն հաստատելու համար անհրաժեշտություն կլիներ ունենալ 59 հազար զինվոր: Այս զեկուցագրի հեղինակները փաստորեն ձեռնպահ էին մնում մանդատը ընդունելու կամ չընդունելու խնդրում: Սենատի ընդդիմության ղեկավար Յ. Լոջը, հենվելով Ջ. Հարբորդի զեկուցագրի վրա, մերժում է Հայաստանի մանդատի ընդունումը: Իր հերթին մեկ այլ հանրապետական՝ սենատոր Սմիթը, պաշտպանելով Յ. Լոջիին, գտնում էր, որ Հայաստանում ամերիկյան զորք պահելու համար տարեկան պետությունից կպահանջվի 17.6 մլն ֆունտ ստերլինգ, իսկ 5 տարում՝ 151.2 մլն ֆունտ ստերլինգ:

Կոնգրեսական քննարկումների ժամանակ նախագահ Վ. Վիլսոնը հարցում արեց ռազմական ղեկարարամենտիին, թե Հայաստանի մանդատի գործառնությունը իրականացնելու համար որքան զորք կպահանջվի: Վերջինս էլ պատասխանել էր՝ 27 հազար: Այս ցուցանիշը թեև ավելի քան կրկնակի անգամ պակաս էր Հարբորդի զեկուցագրի ներկայացրած զորքի թվաքանակից, սակայն այս նոր փաստարկը ևս չօգնեց խնդրի հայանապաստ վճռահատումին:

Մայիսի 29-ին արտաքին հարաբերությունների գծով սենատական հանձնաժողովը 11 դեմ և 4 կողմ ձայնով մերժեց նախագահ Վ. Վիլսոնի առաջարկը Հայաստանի մանդատի վերաբերյալ, իսկ հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատը 52 դեմ և 23 կողմ ձայներով մերժեց ընդունել Հայաստանի մանդատը:

Այժմ փորձենք պարզաբանել, թե ինչու ամերիկյան Կոնգրեսը ձայների մեծամասնությամբ չընդունեց Հայաստանի մանդատը: Նախ՝

- Վիլսոնի առաջարկը բավարար ձայներ չհավաքեց, որովհետև դեմոկրատները Սենատում մեծամասնություն չէին կազմում: Ի դեպ, դեմոկրատները բողոքեցին Հայաստանի մանդատը չընդունելու կապակցությամբ:

- Մեր կարծիքով, Հայաստանի մանդատը չընդունելու գլխավոր պատճառը ոչ այնքան ԱՄՆ-ի

վրա նստող ֆինանսական ծախսերն էին, որի մասին նշվում էր գեներալ Ջ. Հարբորդի զեկուցագրում, այլ Մոնրոյի ուսմունքից բխող ԱՄՆ-ի մեկուսացվածության պահպանման այն ավանդական քաղաքականության վարքագիծը, որն իներցիայով պահպանվում էր:

Հայաստանի մանդատը չընդունելու գործում որևէ դիտավորություն չպետք է տեսնել, որովհետև ԱՄՆ-ը չի ընդունել որևէ մեկ այլ երկրի մանդատ:

Հայաստանի մանդատի չընդունման ոչ եական պատճառներից մեկը Վ. Վիլսոնի հիվանդանալն էր: Նա ստացել էր գլխուղեղի կաթված և գտնվում էր կիսաանկողնային վիճակում: «Ցավոք,- նշում է Լ. Ջորջը,- նախագահը ոչ մի փորձ չարեց ներգործել Հանրապետական կուսակցության առաջնորդների վրա՝ պաշտպանելու համար ենթադրվող մանդատը»<sup>12</sup>:

Հայաստանի մանդատը չընդունելու խնդրում պետք է հաշվի առնել մեկ այլ իրավաքաղաքական գործոն: Կոնգրեսական քննարկումների ժամանակ Կարմիր բանակի զորամասերը արդեն հայտնվել էին Հայաստանի սահմանների մոտ, իսկ մեծ մասամբ պայմաններում ընդունել Հայաստանի մանդատը ըստ էության կնշանակեր պատերազմի մարտահրավեր նետել Խորհրդային Ռուսաստանին: Կարելի է ասել, որ ԱՄՆ-ի իրաժարվելը Հայաստանի մանդատից գործնականում կանխորոշեց Սևրի պայմանագրի ձախողումը:

Հայտնի է, որ պատմականության գիտական սկզբունքը պահանջում է յուրաքանչյուր երևույթ քննել և գնահատել իր ժամանակշրջանի որոշակի իրավաքաղաքական պայմանների մեջ: Ելնելով այս հիմնադրույթից՝ չի կարելի ԱՄՆ-ի ներկայիս ալտիմատիվ արտաքին ծավալապաշտական քաղաքականության օրինակով գնահատել նրա անցյալի քաղաքականությունը:

<sup>1</sup> **Джордж А.**, Истина о договорах, примирения, М., 1957, с. 393:  
<sup>2</sup> Նշվ. աշխ. էջ 388:  
<sup>3</sup> **Ա. Սհարոնյան**, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Բ., 1943 էջ 10:  
<sup>4</sup> Նշվ. աշխ. էջ 19:  
<sup>5</sup> Նշվ. աշխ. էջ 30:  
<sup>6</sup> Նշվ. աշխ. էջ 35:  
<sup>7</sup> Նշվ. աշխ. էջ 29:  
<sup>8</sup> Նշվ. աշխ. էջ 51: **Գ. Մախմուրյան**, Ազգերի Լիգան և Հայաստանի Հանրապետությունը, Ե., 1999 էջ 42:  
<sup>9</sup> Հայաստանը... փաստաթղթերում, էջ 669-671: **Ս. Արզումանյան**, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, էջ 258:  
<sup>10</sup> **Джордж А.**, Истина о договорах, примирения, М., 1957, с. 421:  
<sup>11</sup> **Գ. Գալոյան** նշվ. աշխ. էջ 224:  
<sup>12</sup> **Джордж А.**, Истина о договорах, примирения, М., 1957, с. 395:

THE LEGAL-POLITICAL GROUNDS FOR DECLINATION OF THE  
ARMENIAN MANDATE IN THE USA SENATEN

**ANNA TOVMASYAN**

History Teacher Comprehensive school N 2 in Spitak

Summary

After the World War I the Armenian Issue entered a new qualitative phase which gave an opportunity to touch upon the Eastern Armenia and the solution of the Armenian Issue again in the created favorable military-political conditions.

In such conditions the USA was considered to be the most appropriate candidate for the Armenian mandate and the President of the USA Woodrow Wilson was its severe supporter.

On May 14, 1919 the Council of four decided to give the Armenian Mandate to the USA. On July, 1919 with the consent of the President of the USA a delegation headed by the chief of the Main Headquarters General Harbord was sent on mission to Armenia to investigate the conditions and the possibilities for taking the mandate.

On May 24 W. Wilson requested the Congress to grant the executive power to accept a mandate for Armenia and to send an army there. On June 1 the USA Senate declined the Armenian mandate with the voting results of 23 for and 52 against which had its legal and political grounds.

Wilson's suggestion did not receive enough votes because the democrats didn't form the majority in the Senate.

In our opinion the main reason for not accepting the Armenian mandate was not so much the expected financial expenses for the USA but was the political behavior of the preservation of isolation of the USA coming out of Monroe's discipline which was preserved automatically.

The appearance of the Red army near the borders of Armenia was also a legal-political factor for not accepting the Armenian mandate and in such conditions its acceptance would mean a war-call to USSR.

## ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ НИЖЕГОРОДСКОЙ ОБЛАСТИ\*

**Е. Л. МАРГАРЯН**

*Аспирант кафедры международных отношений ФМО ННГУ им. Н. Н. Лобачевского*



**А**рмянская диаспора, Спюрк (арм. Հայկա-Վանի սփյուռք) – община армян, живущих вне Армении и Нагорного Карабаха, общая численность которых составляет около 8-10 млн. человек<sup>1</sup>. Между тем, население

самой Армении и непризнанного Нагорного Карабаха составляют соответственно около 3,3 млн. и 137,380 жителей (2005). Необходимо отметить, что в армянском диаспоре много известных врачей, ученых, народных артистов России, а также политиков. Рассмотрение этого процесса на примере Нижнего Новгорода показывает, что армянская диаспора является важным фактором в ходе реализации политики межнациональных отношений в России.

В последнее десятилетие на Нижегородской земле из-за усиления миграционных процессов, увеличился и продолжает расти приток представителей различных диаспор, что, собственно, характерно для всего Поволжья. В ряды традиционно проживающих на Нижегородской земле диаспор вливается приток так называемых мигрантов последней волны. Следует отметить особо значительный приток армян и азербайджанцев. Миграционные процессы изменили картину национального состава Нижегородской области, о чем свидетельствуют данные переписи населения 2002 года. Для нас представляет интерес изучение регионального измерения проблемы диаспоральных сообществ и, соответственно, роли диаспоры в диалоге с государственными структурами как на уровне региона, так и на уровне федерального центра. Эта тема является чрезвычайно актуальной, т.к. ее изуче-

ние будет способствовать более четкому пониманию механизмов развития этнополитических и этнокультурных процессов в современной России в условиях фактического отсутствия взвешенной, четко разработанной и общественно признанной национальной политики, а также в условиях децентрализации этнополитической системы Российской Федерации<sup>2</sup>.

Исследование диаспоры, функционирующей в приволжском регионе, в частности в Нижегородской области, наталкивается на серьезные трудности, связанные с недостатком репрезентативных источников информации. Далеко не все диаспоральные общины имеют свои печатные издания или же получают доступ к официальным изданиям государственных или муниципальных органов власти, а сообщения о каких-либо событиях из жизни приволжских диаспор, а тем более об их структуре, в электронных СМИ более чем фрагментарны. В данной работе в качестве источников информации используются издания альманах «Наири», издаваемый нижегородской армянской общиной, газеты и журналы, издаваемые в Нижнем Новгороде и Нижегородской области, а также целый ряд других изданий и оригинальных документов. Помимо этого автор использовал материалы интервью с представителями диаспоры, ценность которых заключается в том, что они позволяют некоторым образом приподнять завесу над теми аспектами жизни общин, которые, как правило, не находят отражения в печатных изданиях. Кроме того, материалы интервью позволяют уточнить некоторые сведения, содержащиеся в открытых источниках.

В Нижнем Новгороде проживает большое количество диаспор, которые играют заметную роль в определении направлений развития экономических, политических и социокультурных процессов в городе.

\* Ներկայացվել է 01.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

Одной из таких является армянская община в Нижнем Новгороде - одна из самых активных среди национально-культурных общественных организаций области. Её численность на начало 2009 года превышала 40000 человек. Она достаточно организована и отличается сплочённостью, стремлением к сохранению своих культурных корней и взаимопомощи.

Необходимо отметить, что так или иначе, выходы из Армении уступают, например, азербайджанцам, как по численности, так и по уровню сплоченности, и, соответственно по уровню материальной обеспеченности процесса построения и развития общинных институтов. Такая ситуация заставляет представителей армянской диаспоры искать альтернативные возможности интеграции в принимающее общество, связанные с меньшими финансовыми затратами, но тем не менее, способные обеспечить конструктивное сотрудничество армян с региональными органами власти, бизнес-сообществом и интеллигенцией при сохранении своей этнокультурной специфики в условиях иного этнического окружения<sup>3</sup>.

Сегодня в РФ действуют две крупные организации, объединяющие российских армян. Это Союз Армян России, лидером которой является Ара Абрамян, а также образовавшаяся недавно Ассоциация делового российско-армянского сотрудничества<sup>4</sup>. Если САР в основном занимается вопросами культуры, науки, образования, сохранения армянской идентичности и укрепления дружественных отношений между русскими и армянами, то основной задачей АРАДЕС является углубление связей между деловыми кругами Армении и России (причем не только российскими, но и армянскими бизнесменами России), а также создание наиболее благоприятной атмосферы для развития экономических взаимоотношений между двумя странами. Тем не менее, вторую организацию можно назвать институтом, объединяющим проживающих в России армян лишь с натяжкой. Однако у истоков организации стоят армяне диаспоры, более того, именно АРАДЕС способна в той или иной мере способствовать экономическому развитию Армении. Наиболее пассивной в вопросе инвестиций и экономической помощи является армянская диаспора России. Однако это положение вполне объяснимо уровнем экономического развития самой России и недостаточностью финансовых возможностей. Некоторые надежды вселяет АРАДЕС, которая, по словам учреди-

телей, способна привлечь инвестиции в армянскую экономику, содействовать становлению малого и среднего бизнеса в Армении, расширению контактов между регионами и областями Армении и России.

В свою очередь, лидеры нижегородской армянской общины совершенно оправданно сделали ставку на армянскую студенческую молодежь, ставшую в столице ПФО фактически самым активным носителем идей сохранения элементов традиционной армянской культуры. Для развития организационного потенциала армянской молодежи в рамках общины создан специальный молодежный совет<sup>5</sup>. Необходимо отметить, что для нижегородских представителей армянской диаспоры вообще характерно стремление к значительному повышению интеллектуального и образовательного уровня своих членов, к количественному увеличению в своих рядах представителей интеллигенции, показателем чего является, например, тот факт, что армяне (по сравнению с другими общинами) составляют довольно значительный сегмент нижегородского студенчества, особенно на факультетах гуманитарного и экономического профиля<sup>6</sup>.

Армяне в Нижнем Новгороде традиционно занимаются бизнесом в нескольких направлениях. Прежде всего, это, конечно же, дорожное строительство, строительство и ремонт зданий и сооружений. В начале 90-х был опыт торговли, когда открывались разного рода городские ярмарки. В дальнейшем в большинстве своем армяне стараются от этого отходить. Сегодня можно говорить о таком виде бизнеса, как производство продуктов питания (это и хлеб, и мясные изделия, и изделия из рыбы), предоставление таких услуг, как общепит (множество маленьких ресторанчиков и кафе). Кроме того, есть несколько крупных предприятий, которые занимаются производством табачных изделий.

Помимо этого всего, есть и потенциал людей, работающих в науке (оставшийся еще со времен Советского Союза). Они попали в этот город по распределению на предприятия оборонной промышленности, во всевозможные научно-исследовательские институты. Хотя пока ситуация в этой сфере продолжает оставаться сложной для всех, не только для армян. Сейчас пытаются поднять эту отрасль на ноги, но это идет очень тяжело. Анализируя историю России, можно отметить, что армяне традиционно занимались строительным делом. Их часто приглашали стро-

ить православные храмы еще во времена Киевской Руси (отдавая дань мастерству каменного зодчества, которым издревле славилась Армения). Примеров участия в нижегородских проектах армян из-за рубежа пока немного. Чкаловскую лестницу восстанавливают специалисты из Армении. А предприятие по производству табачных изделий – совместное канадско-российско-армянское СП.

Заметным, едва ли не преобладающим фактором жизни местных диаспор, являются активные международные связи Нижнего Новгорода и области. В то же время основное, ведущее влияние оказывают страны ближнего зарубежья, российские регионы Кавказа и, что немаловажно, родственные в этническом плане диаспоры других российских регионов, например, город Москва. Приведем конкретный пример. В 2002 г. факультет международных отношений ННГУ им. Н. И. Лобачевского проводил семинар по проблемам армянской истории. Вслед за этим научным событием факультет посетил с рабочим визитом вице-президент Союза армян России С. Е. Костанян, в ходе которого состоялись творческие встречи с преподавателями, аспирантами и студентами и в результате чего, началась серия взаимных мероприятий, в числе которых – обмен информацией и литературой в рамках отношений трех учреждений: ННГУ – САР – Нижегородская областная армянская община. Открылась армянская воскресная школа, на ФМО ННГУ стал преподаваться армянский язык. Там же, в университете, читаются специальные курсы по проблемам истории армянского народа, современного положения, внутренней и внешней политики Республики Армения. С лета 2004 г. выходит альманах «Наури». Он является итогом совместной работы кафедры регионоведения и ФМО ННГУ и армянской общины и представляет собой сборник статей об Армении и армянской диаспоре. Таким образом, совместные усилия нижегородской армянской общины, ученых ННГУ и приезд вице-президента САР в Н. Новгород дали эффективный результат и содействовали дальнейшему развитию армянского сектора нижегородского диаспорального пространства<sup>7</sup>.

Исходя из всего сказанного выше, можно сделать обоснованное предположение о том, что нижегородская армянская община и большинство региональных приволжских общин в отличие, скажем, от общин азербайджанских, «замкнуто» на Москву и рассматривает свое будущее почти исключительно сквозь призму

сотрудничества с Союзом армян России и Всемирной армянской организацией<sup>8</sup>, а аспект налаживания сетевого взаимодействия между отдельными городскими (региональными) общинами и органами региональной власти пока, к сожалению, прослеживается не четко.

Рассмотрев отдельные диаспоры, функционирующие в Нижнем Новгороде, попробуем определить взаимоотношение данных диаспор между собой и с органами местной власти. Нижегородская область привлекательна, прежде всего, стабильностью. Интерес к проблемам развития национальных культур способствовал созданию в последнее время в Нижегородском регионе новой формы межэтнической коммуникации, а именно был образован общественный совет по национально – культурным вопросам при Законодательном собрании Нижегородской области. Из общих положений следует, что Общественный совет по национально-культурным вопросам при Законодательном Собрании Нижегородской области (совет) является совещательным органом<sup>9</sup>. Совет в своей деятельности руководствуется Конституцией РФ, федеральными законами, иными нормативно-правовыми актами РФ, законами Нижегородской области и Положением.

Приведенные выше положения свидетельствуют о том, что работа Совета будет носить неформальный характер и при этом же способствовать процессу активизации межнационального и межконфессионального единения в Нижегородском регионе. Однако же, собираясь не реже одного раза в квартал и принимая решения, которые носят рекомендательный характер, проблемы нижегородского диаспорального пространства не будут решаться в должной мере. Тому есть ряд причин, одна из которых увеличение миграционных «потоков», которые вызывают небывалое напряжение усилий органов власти на федеральном и региональном уровнях, поскольку мигранты являются не только источником подлинной культуры, носителями литературного языка, но и порой становятся объектом вербовки наркодельцов и контрабандистов оружием.

վունքին: Այս ժամանակահատվածում դարձյալ պահպանվել էր տեր կամ հայրենատեր հասկացությունը նաև հոգևորականի համար, բայց տարբերությունը նրանում էր, որ հողը հանդիսանում էր վանքի ժառանգական սեփականությունը և ոչ թե հոգևորական անձի, քանի որ հոգևորականներն այս կամ այն պաշտոնում ընտրվում և ոչ թե դրանք ժառանգում էին<sup>6</sup>: Այստեղից ակնհայտ է, որ՝ **հոգևորականների ժառանգական սեփականություն հանդիսացավ «հայրենիք» կոչված կալվածքները այսուհետև դառնում են եկեղեցապատկան կալվածքներ, որոնք նախորդի նման նույնպես օտարելի չէին:**

Եկեղեցապատկան կալվածքների գոյության իրավական հիմքը դրել է Սմբատ Գունդատաբլը, որը հետևյալն է գրում. «Ձի ամենևին սուրբ եկեղեցին ի յեպիսկոպոսի հայրենտուրութեան գրած է և ոչ կարէ եպիսկոպոսն իւր իւր եպիսկոպոսութեան ժառանգ դնել՝ բայց զայն, որ ընտրութեամբն Աստուծոյ և հայրապետին և ամենայն ժողովրդեանն արժանի այնեն»<sup>7</sup>: Անշուշտ, եկեղեցական կալվածքները համարժեք էին «հայրենիքին», բայց Ս. Բռնագայանը ճշտորեն գրում է՝ «Սակայն, եկեղեցական-վանքապատկան «հայրենիքի» և աշխարհիկ ֆեոդալական «հայրենիքի» միջև կար էական մի տարբերություն, ընդ որում եթե վերջինս բաժանելի էր, օտարելի և ժառանգական, ապա առաջինը անբաժանելի էր, որովհետև անձնական ժառանգական էր և ոչ-օտարելի»<sup>8</sup>:

Այսպիսով, եկեղեցապատկան կալվածքներում կաթողիկոսի, արքեպիսկոպոսի և եպիսկոպոսի տնտեսական գործառույթները չեն սահմանափակվում պետական իշխանության օրենքներով. դրանք եկեղեցու լիակատար սեփականությունն էին հանդիսանում և տնօրինվում էին հոգևորական պաշտոնյաներով: Փաստորեն եկեղեցին պետության մեջ ինքնուրույն տնտեսական կառույց էր, որի եկամուտներից պետության օգտին չէր հարկվում: Նույն Գունդատաբլ օրենսդրությամբ՝ եկեղեցականը կարող էր օտարել միայն իր անձնական օգուտը կամ ստացվածքը, իսկ նրա անշարժ գույքը կարող էր գնել միայն եկեղեցին կամ եպիսկոպոսը<sup>9</sup>:

Կիլիկիայի հայկական թագավորության 13-14-րդ դարերն ընդգրկող ժամանակահատվածում եկեղեցին արդեն բավական ընդարձակ տնտեսական կառույց էր, ընդ որում՝ ավելի արտոնյալ, քան իշխանական տնտեսությունները: Այն ուներ հսկայական կալվածքներ, գյուղեր և ավաններ՝ *dominium directum* – լիակատար սեփականության իրավունքով: Եկեղեցական տնտեսության կառավարման բարձրագույն մարմինը կաթողիկոսն էր, որից վասալական կախման մեջ էին գտնվում արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, քահանաները և երեցները:

Կարևոր է ճշտել այն հարցը, թե վանքապատ-

կան հողերի վրա գտնվող աշխարհիկ անձնավորություններն այնուամենայնիվ պետության նկատմամբ ինչ-որ պարտականություններ կատարել են, թե՞ ոչ: Որոշ փաստեր վկայում են, որ շատ հոգևորականներ թագավորին տրամադրել են զինված ուժեր՝ դրա փոխարեն ստանալով ռոճիկ:

Ս. Բռնազյանը ոչ այնքան հստակ մի ձևակերպում է ներկայացնում. «Վանքերի և եկեղեցիների թեմերի առաջնորդ եպիսկոպոսները թագավորից ստացել են ռոճիկ՝ դառնալով թագավորի լիճ ճորտեր՝ վերջինիս տրամադրելով զինված ուժեր: Հոգևորների ստացած ռոճիկը եղել է արքունի կալվածքից ստացված որևէ եկամուտ, ասենք քաղաքներից և գավառներից արքայական հարկերի մի մասը կամ թե արքունի կալվածքների գյուղացիներից ստացած ռենտաները՝ հարկերն ու տուրքերը»<sup>10</sup>:

Հայտնի է, որ Կիլիկիայում «լիճ» կոչվում էին այն կալվածքները, որոնք թագավորը տալիս էր զինվորական ծառայության դիմաց՝ ցմահ օգտագործման իրավունքով: Իրատեսական է արդյոք ճորտեր կոչել, որովհետև ճորտ հասկացողությունը բնութագրում է տնտեսապես լրիվ կախյալ անձնավորություն, որին բնականաբար հազիվ թե ռոճիկ տրվեր: Ուրեմն, ավելի ճիշտ է ենթադրել, որ ինչպես մանր ազնվականների, այնպես էլ շատ հոգևորականների թագավորը հատկացրել է պայմանագրորեն տրված հողեր, որից զորակոչվածներն ստացել են ռոճիկ: Այդ հողերը կարելի է զատել եկեղեցական կալվածքներից, և դրանց պայմանական հողատեր հոգևորականները հանդիսացել են ոչ թե թագավորի ճորտերը, այլ՝ վասալները: Եվ այդ կալվածքների եկամուտներից ռոճիկ է տրվել նաև դրանց պայմանագրային տերերին, տվյալ դեպքում՝ հոգևորականներին:

Ավելացնենք նաև, որ բուն եկեղեցապատկան հողերից հարկերն ու տուրքերը անցնում էին մայր եկեղեցուն, ինչը սահմանված էր Սսի եկեղեցական ժողովի կանոններով և Սմբատի Դատաստանագրքով: Բացի տասանորդից՝ վանքերը, հոգևորականները և եկեղեցիները ստանում էին պարտադիր նվերներ և ընծաներ: Կային նաև այլ պար-

տադիր հարկեր և տուրքեր, որոնք արտացոլվում էին «հաս և ի իրավունք» արտահայտության մեջ: Դրանցից էին կնքադրամը, թաղման համար գանձված դրամը, ուխտագնացության և տոների առթիվ պարտադիր նվիրատվությունները<sup>11</sup>:

Եվ վերջապես այն հանգամանքը, որ եկեղեցին ուներ ինքնուրույն դատական համակարգը, որը կազմավորված էր աշխարհիկ դատարանական սկզբունքով և որը ուներ երկու գործառույթ՝ դատել հոգևորականներին, ինչպես նաև աշխարհիկ մարդկանց հավատի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների համար, իսկ սեփական գյուղացիներին՝ տնտեսական հանցագործությունների համար, դարձյալ վկայում է, որ այն հանդիսացել է գրեթե ինքնուրույն տնտեսական ինստիտուտ Կիլիկիայի հայկական թագավորությունում՝ պետության մեջ հիշեցնելով պետություն՝ սեփական տնտեսական գործառույթներով: Իսկ ավելի ուշ արդեն քաղաքական հավակնություններ ունենալու եկեղեցու ձգտումը պակաս բացասական հետևանքներ չունեցավ Կիլիկիայի հայկական ինքնատիպ պետության կործանման համար:

- 1 **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի, Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 5:
- 2 Տես **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 468-478:
- 3 Պատմութիւն Արիստակէայ Լաստիվերտցոյ, Երևան, 1963, էջ 42-43:
- 4 Նույն տեղում:
- 5 Մատթեոսի Ուռնայեցոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 259:
- 6 **Հ. Ութնազյան**, Սյունիքը 9-10-րդ դարերում, Երևան, 1958, էջ 152-154:
- 7 **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, էջ 24:
- 8 **Ս. Վ. Բռնազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 213:
- 9 Դատաստանագիրք, էջ 57:
- 10 **Ս. Վ. Բռնազյան**, նշվ. աշխ., էջ 215:
- 11 Տես Դատաստանագիրք, էջ 43-47:

## ECONOMICAL ROLE AND FUNCTIONS OF CHURCH OF THE ARMENIAN KINGDOM OF CILICIA

GRIGOR ARAKELYAN

### Summary

The Article is analyzing economical functions of the Armenian Church in the Armenian Kingdom of Cilicia and is attempting to clarify its position in the economical system of that Country. The view is settled that the Church represented itself as an absolute independent economical institution. In general the Church did not promote the strengthening of the country, but on the contrary promoted its weakening.

**ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՇԻՎՆԵՐԻ (ԱԱՀ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ:  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ\***

#### **Գ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հայցորդ*

**Ատենախոսության թեման՝** Առողջապահության ազգային հաշիվների (ԱԱՀ) համակարգի մշակման մեթոդական նոր մոտեցում. ԱՀՀ մշակման և վերլուծությունների իրականացման ընթացակարգերի ու ծրագրերի համակարգը

**Գիտական ղեկավար՝** Ա. ՍԱՐԳՍՅԱՆ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Առողջապահության ազգային հաշիվների (ԱԱՀ) համակարգի ինստիտուցիոնալ կայացման կարևորագույն բաղադրիչներն են ԱԱՀ մշակման գործընթացի, ինչպես նաև այդ գործընթացի ձևավորման առանձին հատվածների, փուլերի, մասնավորապես, տեղեկությունների (տվյալների) հավաքման, դասակարգման, մշակման, գրանցման, պահպանման, ինչպես նաև՝ ԱԱՀ միջազգայնորեն ստանդարտացված աղյուսակների (FSxHF, HFxHP, HFxHC, HPxHC) ձևավորման և գնահատման (վերլուծությունների իրականացման) արդյունավետ գործիքակազմի՝ մեթոդների, ընթացակարգերի և ծրագրերի ստեղծումը և ներդրումը, ինչն իր հերթին ԱԱՀ մշակման համակարգի ինստիտուցիոնալ կայացման համար էական նշանակություն կունենա:

Առողջապահության ազգային հաշիվների մշակման գործընթացներում օգտագործելու նպատակով ստեղծված «Ուղեցույց...»<sup>1</sup>-ում բերված երաշխավորություններն ու առաջարկությունները, ինչպես նաև ամբողջ աշխարհում ձևավորված և «Ուղեցույց...»-ում ներկայացված փորձը ամենևին էլ չի նշանակում, որ այս ուղղությամբ ամեն ինչ մշակված է և այլևս անելիք չկա:

Ընդհակառակը, ինչպես նշվում է «Ուղեցույց...»-ում, այն անցնելիք ճանապարհի ընդամենը առաջին քայլն է, այլ ոչ թե վերջնակետը<sup>2</sup>:

«Ուղեցույց...»-ը տարբեր երկրներում ստեղծագործաբար է օգտագործվում, առաջարկվող գործիքակազմից ընտրվում և օգտագործվում են տվյալ երկրի համար առավել արդյունավետ առաջարկություններն ու մեթոդները:

Այս առումով «Ուղեցույցում...» ԱԱՀ մշակման գործընթացի կազմակերպման և իրականացման ուղղությամբ ներկայացված գործիքակազմը,

չնայած ներառում է մեծ թվով կարևոր նշանակություն ունեցող առաջարկություններ և երաշխավորություններ, այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվեց, այն ԱԱՀ մշակման նոր, ավելի արդյունավետ գործիքների, մեթոդական մոտեցումների և համակարգերի ստեղծման համար կարող է և հանդիսանում է հիմք և մեկնակետ:


Այս աշխատանքը վերաբերում է ԱԱՀ մշակման մի նոր մեթոդական մոտեցման՝ տեղեկությունների հավաքման, դասակարգման, գրանցման, մշակման, պահպանման, հաշվառման, ԱԱՀ ստանդարտ աղյուսակների ձևավորման և գնահատման (վերլուծությունների իրականացման) ընթացակարգերի և ծրագրերի նոր համակարգի համառոտ նկարագրությանը:

ԱԱՀ մշակման առաջարկվող համակարգի մաս կազմող որոշ ընթացակարգեր որոշակի աղբյուրներ ունեն հաշվապահական/ֆինանսական հաշվառման մեջ կիրառվող մի քանի ընթացակարգերի հետ:

Ֆինանսական հաշվառման մեջ գործառնությունների գրանցման և հաշվապահական հաշվառման ժամանակագրական կարգով իրականացվող հիմնական ընթացակարգերը ներկայացված են գծապատկեր 1-ում:

Հաշվապահական գրանցումների իրականացման առաջին փուլում վերլուծվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերում տնտեսական գործունեության որոշակի գործարքին կամ տնտեսական կյանքի դեպքին վերաբերող տեղեկությունները, և կատարվում է դրանք արտացոլող համապատասխան գործառնության գրանցումը «Գլխավոր մատյանում» (General Journal) կամ այդ մատյանի մասը կազմող, գործառնությունների որոշակի տեսակների գրանցման համար նա-

\* Ներկայացվել է 07.05.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:



Գծապատկեր 1. Ֆինանսական հաշվառման ընթացակարգերի հիմնական փուլերը

խատեսված այսպես կոչված «մասնագիտացված» ենթամատյանում: «Գլխավոր մատյանում» (ենթամատյանում) գրանցվում է գործառնության հիմնական բովանդակությունը, և կատարվում է գործառնության համապատասխան մատյանային գրանցումը՝ նշելով գործառնության հետևանքով համապատասխան հաշիվներում տեղի ունենալիք (գրանցման ենթակա) փոփոխությունները՝ համապատասխան հաշիվների դեբետագրումները և կրեդիտագրումները:

Այսինքն՝ 1 ⇒ 2 ընթացակարգը ապահովում է տեղեկությունների ստացման սկզբնաղբյուրներում՝ սկզբնական փաստաթղթերում առկա տեղեկությունների վերլուծության հիման վրա տնտեսական կյանքում տեղի ունեցած որոշակի դեպքի կամ տնտեսական գործունեության որոշակի գործարքի ճանաչման և փաստաթղթային հիմնավորումով «Գլխավոր մատյանում» դրա գրանցման գործընթացի իրականացումը:

Ապահովվում է նաև նշված ընթացակարգի կրկնելիության հնարավորությունը, որովհետև սկզբնական փաստաթղթերում առկա տեղեկությունների և կատարված մատյանային գրանցումների միջև առկա է միարժեք համապատասխանություն:

Հետևաբար այս փուլում, փաստորեն, ապահովվում է 1 ⇒ 2 կապը բնութագրող (նկարագրող) ընթացակարգի ինստիտուցիոնալացման գործընթացը:

Հարկավոր է նշել, որ այն ունի նաև էական ուսուցողական նշանակություն, քանի որ «Գլխավոր մատյանի» (ենթամատյանների) վարման այսպիսի ընթացակարգը ապահովում է համակարգի գործունեության ինստիտուցիոնալ կայացումը նաև այն առումով, որ ապահովվում է այս ընթացակարգի իրականացման անընդհատությունը:

Մասնավորապես, այն իրականացնող անձի (հաշվապահի, հաշվետարի) փոփոխման դեպքում, նոր հաշվապահը/հաշվետարը, եթե նույնիսկ անհրաժեշտ փորձառություն չունենա, «Գլխավոր մատյանում» տրված գրանցումներն ուսումնասիրելով՝ շատ արագ և հեշտությամբ կշա-

րունակի վարել այն՝ ապահովելով հաշվապահական հաշվառման այս փուլի իրականացման անընդհատությունը:

«Ուղեցույց...»-ը ԱԱՀ մշակողներին առաջարկում է առողջապահության ազգային հաշիվների մշակման համար տարբեր սուբյեկտներից ստացված փաստաթղթերի ուսումնասիրման, մշակման, գնահատման տարբեր եղանակներ, սակայն, այնուամենայնիվ չի ստանդարտացնում այս ընթացակարգը, չի սահմանում ստեղծել հավաքագրված և մշակման ենթարկված տվյալների (տեղեկությունների)՝ որոշակի «չտեմարանում» կամ «չտեմարանների» համակարգում գրանցելու ընթացակարգեր, որոնք միանշանակ ձևով կապահովեն սկզբնական փաստաթղթերում առկա տեղեկությունների կամ դրանց՝ որոշակի ալգորիթմով, սցենարով և/կամ մեթոդով վերամշակման արդյունքում ստացված տեղեկությունների և հիմնավորող սկզբնական փաստաթղթերի գրանցումն ու արտացոլումը:

Պարզ է, որ դա ըստ էության կապահովեր ԱԱՀ համապատասխան կատեգորիաներում (ենթակատեգորիաներում) և ԱԱՀ ստանդարտ աղյուսակներում այդ տեղեկությունների համապատասխան համակարգված գրանցումն ու արտացոլումը:

Այսինքն՝ առանց սկզբնական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների՝ այսպիսի մի միջանկյալ գրանցամատյանում գրանցման, երբ դրանք, կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված տեղեկություններն անմիջապես գրանցվում են ԱԱՀ-ների FSxHF, HFxHP, HFxHC և HPxHC Excel ստանդարտ աղյուսակներում, չի կարող ապահովվել այդ գործունեության (որքան էլ ճշգրիտ ձևով ու որակով այն իրականացվի) ինստիտուցիոնալացումը: Դա էապես կախված է այն իրականացնող անձի կամ մարդկանց խմբի (ԱԱՀ մշակող աշխատանքային խմբի) կողմից այդ պահին կայացրած որոշումից, և Excel աղյուսակի համապատասխան բջջում որպես զումարելի այդ տվյալի (տեղեկության) գրանցումից հետո (գծա-

պատկեր 2), փաստորեն, խթանվում է կարևոր նշանակություն ունեցող այդ գրանցման հիմնավորման հիմքերի ու «հետքերի» պահպանումը: Չեն ապահովվում որոշման կայացման մասին տեղեկության գրանցման և համակարգված պահպանման, հետևաբար նաև վերահսկողություն իրականացնելու հնարավորությունները: Էապես դժվարանում, երբեմն էլ անհնար են դառնում սխալ գրանցումները հայտնաբերելու ու ուղղելու գործընթացները, ինչպես նաև գործունեության անընդհատությունը (սովորելու առումով) ապահովելու համար գրանցված գործառնությունների «հետքերի» ստեղծման ու պահպանման արդյունավետ մեխանիզմներ մշակելու և կիրառելու հնարավորությունները:

Այս պատճառով, ճիշտ է «Ուղեցույց...»-ում և ԱԱՀ-ի մշակմանը վերաբերող այլ նյութերում կրկնվող այն միտքը, որ ԱԱՀ մշակման գործընթացը և՛ արվեստ է, և՛ գիտություն («Ուղեցույց...», էջ 157, Box 11.1):

Ինչ-որ առումով համաձայն լինելով այս մտքի հետ՝ կարծում են, որ իր զարգացման հետագա փուլերն անցնելով, ԱԱՀ մշակման գործընթացում աստիճանաբար «արվեստի»՝ անկրկնելի լինելու բաղադրիչը կնվազի (պետք է նվազի)՝ այդ համակարգի մշակման գործընթացը (այն կազմող ընթացակարգերը) ստանդարտացնելու և կրկնելի դարձնելու, հմտության վերածելու, հետևաբար նաև՝ ինստիտուցիոնալ առումով կայացնելու միջոցով:

Կարևոր է նշել, որ գծապատկեր 2-ում ցուցադրված եղանակով  $\dots + a_i + \dots$  գումարելին FSxHF, HFxHP, HFxHC, HPxHC Excel ստանդարտացված աղյուսակներից ցանկացածի (որևէ մեկի) (i,j) բջիջում (որտեղ i-ն համապատասխան աղյուսակի i-րդ տողն է, իսկ j-ն՝ այդ աղյուսակի j-րդ սյունը, որոնք ԱԱՀ-ների միջազգային դասակարգման համապատասխան կոդեր՝ կատեգորիաներ/ենթակատեգորիաներն են) գրանցելուց հետո, հետագայում կարող ենք զգալի դժվարությունների առաջ կանգնել՝ կատարված մեխանի-

կական կամ այլ բնույթի սխալ գրանցումները/մուտքագրումները հայտնաբերելու և ուղղելու առումով, ինչպես նաև նշված մուտքման կիրառումը էականորեն նվազեցնում է վերլուծություններ իրականացնելու հնարավորությունները, քանի որ Excel աղյուսակներում տվյալները այս եղանակով մուտքագրելու դեպքում զգալիորեն խթանվում է մուտքագրվող տեղեկությունների կառուցվածքը:

ԱԱՀ մշակման առաջարկվող մեթոդաբանության մասնակի՝ ոչ ամբողջական տարբերակի կիրառման ժամանակահատվածում 2004, 2005, 2006 թվականների ՀՀ ԱԱՀ մշակելու գործընթացում «Մնացած աշխարհի» մասով Excel ստանդարտ աղյուսակների բջիջներում մուտքագրվող յուրաքանչյուր տվյալ (գումարելի) կողավորվել է (տես գծապատկեր 3), ինչը որոշակի առումով մուտքագրվող տեղեկությունների կառուցվածքը պահպանելու (չխաթարելու), հետևաբար նաև վերլուծություններ կատարելու հնարավորություններ է ստեղծել: Մինչույն ժամանակ զգալիորեն հեշտացել է կատարված տարաբնույթ սխալ մուտքագրումների հայտնաբերման և ուղղման գործընթացը: ԱԱՀ մշակման ընթացակարգերի և ծրագրերի համակարգի մասնակի (ոչ լրիվ) տարբերակի բլոկ սխեման բերված է գծապատկեր 4-ում:


A՝ թվաբանական արտահայտությունը կազմվում է այնպես, որ կարողանա նույնականացնել սկզբնական փաստաթղթերի և դրանցում առկա գրանցումների համարները, ինչպես նաև այդ սկզբնական փաստաթղթերի աղբյուրները (դրանց համար սահմանված կոդերը):

Սակայն հարկ է նշել, որ մշակված «Ընթացակարգերի համակարգի» առաջին (ոչ լրիվ) տարբերակի պահանջներին համապատասխան մուտքագրվող տեղեկությունների կառուցվածքը պահպանելու, չխաթարելու այս հնարավորությունները, այնուամենայնիվ, ստացվում են, նշված Excel աղյուսակներն զգալիորեն «ծանրացնելու/ծանրաբեռնելու» հաշվին:

ԱԱՀ ստանդարտ աղյուսակներ

FS/HF/HP կատեգորիաներ

*j*



Գծապատկեր 2. Տվյալների մուտքագրումը ԱԱՀ -ների Excel ստանդարտ աղյուսակների համապատասխան բջիջներում ըստ «Ուղեցույց...»-ի պահանջների



ԱԱՀ-ների FSxHF, HFxHP, HFxHC և HPxHC Excel ստանդարտ աղյուսակների (i,j) բջիջում  $a_i^j$  տվյալը, որպես գումարելի՝  $= \dots + a_i^j + \dots$  մուտքագրվել է  $A_i^j$  թվաբանական արտահայտության (կողի) հետ միասին՝

$$= \dots + a_i^j \times A_i^j + \dots \quad (1)$$

$A_i^j$  արտահայտությունը նույնականացնում է  $a_i^j$ -ի ստացման սկզբնաղբյուրը (փաստաթուղթը) և այդ փաստաթղթում նշված տեղեկության (տվյալի) գրանցման հերթական համարը: Հարկ է նշել, որ այն չի փոխում  $a_i^j$ -ի արժեքը, քանի որ թվաբանական այդ արտահայտության արժեքը հավասար է 1-ի՝

$$A_i^j = 1 \quad (2)$$


i-ի և j-ի ընդունած հնարավոր բոլոր արժեքների (ԱԱՀ կատեգորիաների (ենթակատեգորիաների) բոլոր հնարավոր (թույլատրելի) կոմբինացիաների) համար:

«ԱԱՀ-ների մշակման ընթացակարգերի և ծրագրերի համակարգ»-ի (առաջին և երկրորդ)

տարբերակների բլոկ-սխեմաները ներկայացված են գծապատկեր 4-ում և գծապատկեր 5-ում:

ԱԱՀ-երի համակարգի մշակման համար տեղեկություններ (տվյալներ) են հավաքագրվում տարբեր աղբյուրներից:

Մասնավորապես, այդպիսի տեղեկություններ են պարունակում և/կամ հանդիսանում ՀՀ առողջապահության, ֆինանսների և այլ նախարարություններից ստացված բյուջեային փաստաթղթերը, «ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումը, առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության վերաբերյալ կատարված հետազոտությունների միջոցով ստացված տեղեկությունները, «Մնացած աշխարհը» ներկայացնող ֆինանսական գործակալներից, մասնավորապես՝ ՀՀ առողջապահության համակարգում գործունեություն իրականացնող միջազգային հիմնական դոնոր կազմակերպություններից (ըստ մշակված հարցաթերթի) ստացված տեղեկությունները: ՀՀ առողջապահության համակարգում գործունեություն իրականացնող (ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում)



Գծապատկեր 5. «ԱԱՀ մշակման ընթացակարգերի և ծրագրերի համակարգի» սխեման

սուբյեկտներից իրենց գործունեության արդյունքների մասին ստացված տեղեկությունները՝ ֆինանսական հաշվետվությունները, պարբերաբար անցկացվող ֆոկուս հետազոտությունների արդյունքները (տվյալների շտեմարանները), տնային տնտեսությունների կողմից կատարած առողջապահական ծախսերի վերաբերյալ իրականացված հետազոտությունների արդյունքները (տվյալների շտեմարանները), ինչպես նաև տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական տարեկան հետազոտությունների արդյունքում ստացված տեղեկատվությունը (տվյալների շտեմարանները):

Տեղեկությունների այս ամբողջությունը, որ ստացվում է որոշակի փաստաթղթերի կամ այլ մասնավորապես, տվյալների պահոցների տեսքով, ԱԱՀ մշակման գործընթացի համար հանդիսանում են ՀՀ առողջապահության համակարգում կատարված ծախսումների վերաբերյալ տեղեկություններ պարունակող սկզբնական փաստաթղթեր (տե՛ս գծապատկեր 4-ում և գծապատկեր 5-ում թիվ (1) մոդուլը), որոնցում պարունակվող տեղեկություններն անմիջապես կամ մշակման տարբեր փուլեր անցնելուց հետո պետք է իրենց արտացոլումը ստանան (մուտքագրվեն) ԱԱՀ ստանդարտ աղյուսակներում:

Առաջարկվող համակարգում ԱԱՀ մշակման սկզբնական աղբյուրներում (փաստաթղթեր, տվյալների պահոցներ, կատարված հետազոտությունների արդյունքներ, հաշվետվություններ և այլն) պարունակվող տեղեկությունները տարբեր ալգորիթմներով անցնում են մշակման տարբեր փուլեր, որից հետո որոշվում է, թե մշակումից հետո ստացված արդյունքները ԱԱՀ ստանդարտ աղյուսակի(ների) որ բջիջներում պետք է արտացոլվեն (մուտքագրվեն):

Այնուհետև իրականացվում է ֆինանսական հաշվառման մեջ կիրառվող «Մատյանային գրանցման» հետ որոշակի աղբյուրներ ունեցող ԱԱՀ համակարգի համար հատուկ մշակված «ԱԱՀ հիմնական մատյանում - MAIN/GENERAL JOURNAL»-ում կամ առանձին ենթամատյանում «ԱԱՀ-ի միջազգային դասակարգումների հիման վրա մշակված «ԱԱՀ հաշվային պլանի» համապատասխան հաշիվների (դասակարգումների) հա-

մար «ԱԱՀ գործառնությունների ժամանակագրական գրանցումը համապատասխան ենթամատյանում (2):

Որից հետո ԱԱՀ միջազգային դասակարգումների հիման վրա տվյալ երկրի ԱԱՀ համակարգի կամ ԱԱՀ որոշակի ենթավերլուծության համար ձևավորված և հաշվապահական ցանկացած համակարգչային համակարգ («ՀԾ-Հաշվապահ», «1C-Հաշվապահություն», QuickBooks և այլն) ներմուծված «ԱԱՀ-ի կամ ԱԱՀ ենթավերլուծության հաշվային պլանի» համապատասխան հաշիվներ են տեղափոխվում (posting) «ԱԱՀ հիմնական մատյանում (ենթամատյանում) գործառնությունների համար տրված մատյանային գրանցումները (3):

Բոլոր գործառնությունները հաշվապահական համակարգչային ծրագրային համակարգ մուտքագրելուց հետո, գործառնությունների մատյանը արտահանվում է MS Excel համակարգ (4), որի հիման վրա MS Excel Pivot Tables ենթահամակարգի օգնությամբ ձևավորվում են ԱԱՀ-ների FSxHF, HFxHP, HFxHC և HPxHC Excel ստանդարտ աղյուսակները (5):

ԱԱՀ ձևավորման առաջարկվող համակարգը հնարավորություն է ընձեռում օգտվել նաև MS Excel Pivot Tables ենթահամակարգի վերլուծական հզոր հնարավորություններից (7), ինչպես նաև ընթացակարգերի համակարգում օգտագործվող հաշվապահական համակարգչային ծրագրի ընձեռած վերլուծական հնարավորություններից (6):

<sup>1</sup> Guide to producing National health account: with special applications for low – income and middle – income countries. WHO, Word Bank and USAID, 2005. 330 p.

<sup>2</sup> Նույն տեղում, p.xiii.

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Guide to producing national health accounts with special applications for low-income and middle-income countries. WHO, Word Bank and USAID, 2005, 330 p.
2. A System of Health Accounts, 2011 Edition. OECD, Eurostat, WHO (2011), OECD Publishing. 524 p.
3. Guide to producing reproductive health subaccounts within the national health accounts framework. World Health Organization 2009, 219 p.

THE SYSTEM OF PROCEDURES-NEW METHODOLOGICAL APPROACH TOWARDS THE DEVELOPMENT OF NATIONAL HEALTH ACCOUNTS (NHA)

**G. K. HARUTYUNYAN**

Summary

The article briefly presents the system of procedures as a new methodological approach towards the development of national health accounts (NHA). The Procedures System was worked out in a modular principle, has all the abilities of the programs, specially designed for the development of NHA systems, but is incomparably cost-effective. It can be used in any country in the process of NHA development and analysis.

## ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ\*

### Մարգարիտ ԱՌՈՒՍԱՍՅԱՆ

«Այուևիք» ինստիտուտի պրոռեկտոր, ԳՊՀ տնտեսագիտության ամբիոնի դասախոս  
«Ախիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

Ատենախոսության թեման՝ Բուհերի կառավարման հիմնախնդիրները (Գորիսի պետական համալսարանի նյութերով)

Գիտական ղեկավար՝ Ռոմիկ ԱՎԱՆԵՍՅԱՆ՝ տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ներկա պայմաններում բուհերի կառավարման գործում կարևոր նշանակություն ունի բուհերի գործունեության ստրատեգիական պլանավորումը: Ստրատեգիական պլանավորումը իրենից ներկայացնում է գործընթաց, որը ապահովում է կառավարչական որոշումների ընդունման արդյունավետություն, նորարարության անհրաժեշտ մակարդակ, առաջադրում է բուհերում այնպիսի հիմնախնդիրների լուծման տարբերակներ, ինչպիսիք են ռեսուրսների բաշխումը, արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունը, աշխատանքների ներքին կոորդինացումը: Ստրատեգիական պլանավորումը՝ հանդիսանում է բուհերի ծրագրային, նպատակային կառավարման հիմքը, հնարավորություն է տալիս բուհերի գործունեությունը հարմարեցնել հասարակության կրթական և գիտական արդի պահանջներին, հասնել բարձր արդյունավետության: Ստրատեգիան, նախ, սահմանում է բուհերի զարգացման առաջնահերթ ուղղությունները, որով ապահովվում է ուսումնական հաստատության տարբեր օղակների գործողությունների համագործակցությունը: Երկրորդ, ստրատեգիան բուհերի պրոֆեսորադասախոսական կազմին տալիս է համոզվածություն նրանց կարգավիճակի և ապագայում առաջընթաց ապահովելու վերաբերյալ: Երրորդ, շնորհիվ ստրատեգիայի՝ ձևավորվում է բուհերի յուրօրինակությունը, որը հնարավորություն է տալիս հեշտությամբ գրավել իր դիրքը կրթական ծառայությունների շուկայում

և սահմանել իր առաջընթացի պայմանները: Բազմաթիվ երկրներում բուհերի զարգացման գործում անհրաժեշտություն է ստրատեգիական պլանների կազմումը, որտեղ ներառվում են նպատակները, խնդիրները, ինչպես նաև բուհերի նպատակներին հասնելու մեթոդները, միջոցները, ցուցանիշները: Փաստորեն, ստրատեգիական պլանները արտահայտում են բուհերի գործունեության երկարաժամկետ ստրատեգիան նրանց կողմից առաջարկվող ծառայությունների հարաբերություններում: Այսինքն՝ բուհերի ստրատեգիական պլանավորման գլխավոր ուղղությունը հանդիսանում է կրթության և գիտական հետազոտությունների ոլորտում ստրատեգիական նպատակների և խնդիրների սահմանումը:

Կրթության ոլորտում զարգացման հիմնական ուղղությունները ներառում են ուսուցման նոր մոդելների ու տեխնոլոգիաների օգտագործումը, ուսուցման որակի ապահովումը, նոր մասնագիտությունների, ծրագրերի առաջադրումը:

Գիտական հետազոտությունների ոլորտում բուհերը առաջադրում են հետազոտությունների որակի բարձրացման, հետազոտությունների թեմատիկայի ընդլայնման, հետազոտությունների նոր ուղղությունների բացահայտման հետ առնչվող խնդիրներ: Այստեղ կարևոր նշանակություն ունի խնդիրների ուսումնասիրությունը կոմերցիոն տեսանկյունից, այն առումով, որ դրանք որոշակիորեն կապված են ֆինանսավորման աղբյուրների հետ:

Ստրատեգիական պլանավորման մեջ ներառվում են միջազգային համագործակցության տարբեր ձևեր՝ արտասահմանյան ուսանողների թվաքանակի ավելացումը, ուսանողների մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, համատեղ գիտահետազոտական նախագծերի

\* Ներկայացվել է 08.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

իրականացումը:

Ստրատեգիական նպատակների<sup>2</sup> և խնդիրների սահմանման ընթացքում դրանք կոնկրետացվում են քանակական նպատակային ցուցանիշներում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տարբեր բուհերում ստրատեգիական պլանները կարող են ունենալ տարբեր նշանակություն: Մի կողմից՝ դրանք կարող են բովանդակել միայն զարգացման ընդհանուր գերակայությունները, մյուս կողմից՝ հանդիսանում են գործողությունների կառավարման միջոց:

Ներկա պայմաններում բուհերի կրթական և գիտահետազոտական գործունեության հաջողությունները մեծապես կախված են նրանից, թե որքանով են ուսումնական հաստատությունները բավարարում պահանջարկը կրթական ծառայությունների նկատմամբ, շուկայում կրթական ու գիտահետազոտական ինչպիսի ծառայություններ են առաջարկում, ինչպես են գնահատում դրանց դինամիկան առաջիկայում:

Ստրատեգիական պլաններում ներառվում են միջոցառումների ցանկը՝ նշելով դրանց անցկացման ժամկետները, պատասխանատու անձանց, ստրատեգիական նպատակները, նպատակներին հասնելու միջոցները, մեթոդները: Ֆինանսական փաստաթղթերն իրենցից ներկայացնում են հաշվապահական հաշվետվությունները, բուհերի բյուջեները, նրանց ինվեստիցիոն պլանները: Գործունեության արդյունքների հաշվետվությունները իրենցից ներկայացնում են հաշվետու ժամանակաշրջանում ստրատեգիական նպատակներին հասնելու ցուցանիշներ և ապագայում պլանավորվող գործողությունների արդյունքների կանխատեսումներ, տրվում է դրանց կատարման մակարդակի գնահատականը:

Սովորաբար տարբեր բուհերում ֆինանսական ցուցանիշները կարող են ներկայացվել առանձին մանրամասնության աստիճանով: Նշվում են բուհերի ֆինանսական միջոցների ստացման աղբյուրները՝ բյուջետային հատկացումները, մասնավոր հատվածից ստացված միջոցները, հաշվարկվում է մեկ ուսանողի ուսուցման արժեքը:

Օպերատիվ կան ծրագրային փաստաթղթերում առանձնացնում ենք բուհերի գործունեության անմիջական և վերջնական արդյունքները: Անմիջական արդյունքներ են հանդիսանում մատուցվող կրթական և այլ ծառայությունների մատուցման ծավալը և որակը: Այդպիսիք են, օրինակ, տարբեր կրթական ծրագրերում սովորող ուսանողների թիվը, շրջանավարտների թիվը: Վերջնական արդյունքներ են հանդիսանում բուհերի կողմից մատուցվող ծառայությունների սոցիալ-տնտեսական արդյունավետության ցուցանիշները:

Օրինակ որևէ մասնագիտության գծով շրջանավարտների կարիերայի բարձրացումը, շրջանավարտների եկամուտները, գործատուների բավարարվածությունը մասնագետների պատրաստման որակից:

Բուհերի կողմից օգտագործվող ցուցանիշները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. վիճակագրական ցուցանիշներ, որոնք բնութագրում են կրթության ոլորտում նպատակը և իրավիճակը՝ ուսանողների թիվը, ընդամենը և առանձին մասնագիտությունների գծով, սահմանված ժամկետում բուհը ավարտողների թիվը,

2. ցուցանիշներ, որոնք բնութագրում են կրթական գործունեությունը՝ շրջանավարտների թիվը, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում կրթությունը շարունակողների թիվը, բուհը ավարտելուց հետո աշխատանքի ընդունվողների տոկոսը,

3. մատուցվող կրթական ծառայությունների մակարդակից ուսանողների և շրջանավարտների բավարարվածությունը արտահայտող ցուցանիշներ,

4. գիտական գործունեության որակը բնութագրող ցուցանիշներ:

5. բուհերի գիտական գործունեությանը դասախոսների և ուսանողների մասնակցության աստիճանը:

6. հասարակության հետ կապերը բնութագրող ցուցանիշներ:

7. ինտերնացիոնալիզմը արտահայտող ցուցանիշներ՝ օտարերկրյա ուսանողների թվաքանակը, օտարերկրյա դասախոսների թվաքանակը, միջազգային հետազոտական նախագծերի թիվը, միջազգային ֆինանսավորման թիվը,

8. ազգային և միջազգային ասպարեզում բուհի վարկանիշը,

9. շրջանավարտների հետ կապերը արտահայտող ցուցանիշներ՝ շրջանավարտների միություն, շրջանավարտների կողմից բարեգործական հատկացումներ,

10. ռեսուրսներով ապահովվածության ցուցանիշներ՝ համակարգիչներով, ինտերնետ կապով, լաբորատոր սարքավորումներով ապահովվածություն, գրադարանային ֆոնդի, էլեկտրոնային գրադարանի առկայություն,

11. տնտեսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ՝ առանձին տեսակի, ծախսերի կրճատում, ֆինանսական կայունության ապահովում, եկամուտների աղբյուրների բազմազանացում,

12. սոցիալական ցուցանիշներ,

13. որոշակի օբյեկտների գործողության ձեռնարկում՝ նոր գիտահետազոտական կենտրոնների ստեղծում,

14. ընթացակարգային ցուցանիշներ՝ կրթության որակի գնահատման կառավարման համակարգ<sup>3</sup>, բուհերի գործունեությունը արտահայտող կանոնակարգեր:

Բուհերի ստրատեգիական կառավարումը կարելի է իրականացնել երեք հիմնական փուլով.

1. հետազոտական վերլուծություն: Այս փուլում հինգից տաս տարիների համար իրականացվում է բուհերի կրթական գիտահետազոտական գործունեության, սոցիալ-տնտեսական դրության համակարգային վերլուծություն.

ա) կառավարման նպատակների վերլուծություն,

բ) կառավարման խնդիրների կանոնակարգում,

գ) ներքին և արտաքին միջավայրերի վերլուծություն<sup>4</sup>,

դ) բուհերի մրցակցային առավելությունների բացահայտում,

ե) զարգացման ստրատեգիական գերակայությունների ընտրություն:

2. բուհերի ստրատեգիական պլանավորում: Այս փուլում որոշվում է ստրատեգիական պլանավորման ժամանակաշրջանը: Նպատակահարմար է սահմանել հինգ տարի: Այնուհետև փորձագիտական գնահատման մեթոդների, համակարգային վերլուծությունների և կանխատեսումների միջոցով իրականացվում է.

ա) զարգացման ստրատեգիական նպատակների սահմանում

բ) բուհերի ենթահամակարգերի զարգացման ստրատեգիական խնդիրների մշակում

գ) բուհերի զարգացման մոդելավորում

դ) հինգ տարիների համար բուհերի զարգացման ցուցանիշների կանխատեսում

ե) բյուջեի ծախսերի և եկամուտների օպտիմալացում<sup>5</sup>

զ) զարգացման նպատակային համալիր ծրագրերի մշակում:

3. բուհերի ստրատեգիաների իրականացման կառավարում: Որոշվում են՝

ա) ստրատեգիայի իրականացման խնդիրները, պայմանները, փուլերը

բ) իրականացվում է բուհի նպատակային ծրագրերի ներդրումը

գ) տարեկան պլանավորման շրջանակներում կատարվում է ստրատեգիայի կանոնակարգում

դ) իրականացվում է ստրատեգիական պլանի իրագործման մոնիթորինգ

ե) բուհի գործունեության վերջնական արդյունքների նկատմամբ տրվում է ստրատեգիայի արդյունավետության գնահատականը:

Բուհերի զարգացման ուղղությունների բովանդակային համալրման համար հինք են հան-

դիսանում տարբեր վերլուծությունները: Նախ, նպատակահարմար է կատարել բուհի արտաքին միջավայրի վերլուծություն, ուսումնասիրել բաղաբաղական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական գործոնների ազդեցությունը բուհերի ստրատեգիայի վրա: Այս վերլուծությունները կարևոր են նրանով, որ նրանց միջոցով բացահայտվում է բուհի տեղը ու դերը կրթական ծառայությունների շուկայում, տարբեր մասնագետների պատրաստման գործում:

Քաղաքական գործոններ են հանդիսանում կրթության նկատմամբ պետության ուշադրության մեծացումը, ինտեգրումը Բոլոնյան հռչակագրին<sup>6</sup>, հասարակության սոցիալական շերտավորումը:

Տնտեսական գործոններ են հանդիսանում ֆինանսավորման կառուցվածքի փոփոխությունը, բնակչության վճարունակության ցածր մակարդակը, կրթության համակարգում վարկերի տրամադրման պրակտիկայի կիրառումը, կրթական ծառայությունների բարձր վճարները, պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի չափերը:

Սոցիալական գործոններ են հանդիսանում բնակչության հետաքրքրությունների մեծացումը բարձրագույն կրթության նկատմամբ, երկրում դեմոգրաֆիական իրավիճակը, տարբեր մասնագիտություններ ունեցող ուսումնական հաստատությունների կարգավիճակների փոփոխությունները, օրինակ՝ ի հաշիվ առաջատար բուհերի հետ միավորման:

Տեխնոլոգիական գործոններ են հանդիսանում զարգացած տեղեկատվական բազայի առկայությունը, հեռավար ուսուցման համակարգի ներդրումը, գնահատման նոր համակարգերի կիրառումը, ինովացիոն գործունեությունը:

Գոյություն ունի նաև իրավիճակային վերլուծություն, որի ընթացքում բացահայտվում են ուժեղ, թույլ կողմերը, հնարավորությունները, սպառնալիքները:

Ուժեղ կողմեր են հանդիսանում բուհերում կրթական գործընթացի կառավարման փորձը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման անհրաժեշտ մակարդակը, բուհի զարգացման սկզբունքների առկայությունը, կրթական գործընթացի և գիտահետազոտական գործունեության համար նյութատեխնիկական բազայի առկայությունը, ուսանողական ինքնակառավարման մարմինների ունեցած ավանդույթները, ուսանողների ինքնահաստատման սոցիալ-մշակութային մասնագիտական համակարգի ձևավորումը, սեփական միջոցների առկայությունը:

Թույլ կողմեր են հանդիսանում ժամանակակից շուկայական մրցակցային միջավայրի պայմաններում կառավարչական գործունեության

անհրաժեշտ փորձի բացակայությունը, հիմնական դասընթացների ուսուցման փաստացի ժամանակի կրճատումը:

Հնարավորություններ են հանդիսանում՝

1. հայրենական և միջազգային փորձի ներդրումը,

2. բուհերում ինովացիոն գործընթացների հիմնավորումը

3. սոցիալ-մշակութային գերակայությունների օգտագործումը ուսանողների անձնային մասնագիտական որակների բարձրացման նպատակով

4. միջբուհական կապերի ընդլայնումը

5. գործատուների հետ կապերի ընդլայնումը

6. տարբեր ծրագրերում, ֆոնդերում ուսանողների ներգրավվածության մեծացումը

7. բուհերում փոքր ինովացիոն ձեռնարկությունների հիմնման վերաբերյալ օրենսդրական հիմքերի ստեղծումը

8. գիտահետազոտական ծառայությունների ընդլայնումը

9. կազմակերպությունների, ֆիրմաների, ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը:

Ապառնալիքներ են՝

1. բարձրագույն կրթության ոլորտում կայացվելիք հիմնական որոշումների կենտրոնացումը

2. կրթական գերակայությունների գլոբալացումը

3. տարածաշրջանում և երկրում աշխատանքի շուկայի զարգացման հիմնավորված կանխատեսումների բացակայությունը

4. ֆինանսավորման կրճատումը

5. դեմոգրաֆիական իրադրությունը

6. բնակչության վճարունակության իջեցումը

7. այլ բուհերի կողմից մրցակցության ուժեղացումը

8. առանձին մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի իջեցումը

9. ապագայի առաջընթացի անորոշությունը:

<sup>1</sup> Տե՛ս **Սուվարյան Յու.**, «Մենջմենթ», Երևան, 2002:

<sup>2</sup> **Маркова В. Д., Кузнецова В. Д.**, Стратегический менеджмент. 1999.

<sup>3</sup> **Edward Sallis**, Total Quality Management in Education, London, UK: Kogan Page, 2002.

<sup>4</sup> **Мескон М., Альберт М., Хедоури Ф.**, Основы менеджмента. 1992.

<sup>5</sup> **Беляев Д. А.**, Особенности управления экономическими процессами в вузе. 2003.

<sup>6</sup> Բոլոնյան հռչակագիր 1999 թ. հունիսի 19:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Развитие стратегического подхода к управлению в российских университетах / Под ред. Е. А. Князева. 2001.

2. Стратегическое управление и институциональные исследования в высшем образовании. Материалы Первой международной конференции. Е. А. Князева. 2003.

3. Стратегическое планирование в университетах. Воронежский государственный университет. 2003.

4. **Титова Н. А.**, Стратегическое развитие ВУЗ-ов. 2008.

5. **Локшинов А. Н.**, Стратегический менеджмент, 2001.

6. **Ансофф И.** Стратегическое управление. 1989.

7. **Балабанов А. Е.**, Стратегическое планирование развитие университета. 2002.

8. Стратегическое планирование и развитие ВГУ. Запругаев С. А. 2003.

9. **Соловьев В. П.**, Стратегия управления вузом. 2002.

10. **Клюев А. К.** Стратегии вузовского развития, 2003.

11. **Васильев Ю. С.** Экономика и организация управление ВУЗ-ом. 2004.

#### STRATEGIC MANAGEMENT ISSUES IN HIGHER EDUCATION INSTITUTIONS

MARGARIT ARUSTAMYAN

#### Summary

In this article are studied strategic management issues in higher education institutions. It is presented the role of strategic plans in the management of higher education institutions. Are separated strategic management stages and development directions of higher education institutions.

**Անի ԿԱՏԻՆՅԱՆ**

*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հայցորդ  
ՀՀ ֆինանսների նախարարություն, հաշվապահության և աուդիտի մեթոդաբանության վարչության,  
աուդիտի մեթոդաբանության և կարգավորման բաժնի պետի տեղակալ*

**Ատենախոսության թեման՝** Ինովացիոն գործընթացների ձևավորման և կառավարման հիմնախնդիրները ՀՀ սոցիալական ոլորտում

**Գիտական ղեկավար՝** Ծովինար ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ տնտեսական գիտությունների թեկն., դոցենտ



**Ձ**արգացած երկրների տնտեսական և սոցիալական ոլորտում ձևավորված նորամուծությունների ուսումնասիրությունը և կիրառման հնարավորությունների բացահայտումն այսօր դարձել է անհրաժեշտություն:

Այն բխում է ՀՀ-ում ինովացիոն գործընթացների ձևավորման, սոցիալական ոլորտի զարգացման, կառավարման ու կարգավորման նոր ուղիների ներդրման խնդիրների կարևորությունից: Վերջին տարիների ընթացքում սոցիալապես կայուն տնտեսություն ստեղծելու վերաբերյալ հարցերը հաճախ քննարկման առարկա են դարձել և ուսումնասիրվել տարբեր հեղինակների կողմից: Թերևս սրանով է պայմանավորված սոցիալական համագործակցության ուսումնասիրման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ սոցիալական ոլորտում:

Սոցիալական գործընկերությունը հասարակական հարաբերությունների առանձնահատուկ ձև է և սերտորեն փոխկապակցված է կառավարության գործառույթների հետ<sup>1</sup>: Սոցիալական գործընկերությունը սոցիալական քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերությունն է բնակչության և նրա առանձին բաղկացուցիչ մասերի սոցիալական վիճակի պահպանման, փոփոխման, սոցիալական ոլորտում բնակչության, ինչպես նաև նրա առանձին խմբերի սոցիալական վիճակի վրա ազդող հիմնախնդիրները լուծելիս:

Սոցիալական գործընկերությունը անհրաժեշտ է դիտել ոչ միայն տնտեսական և քաղաքական կայունության միջոցի, այլ նաև հասարակության մեջ էվոլյուցիոն փոփոխությունների մեխանիզմի տեսանկյունից, քանի որ այն լուծում է մշտապես փոփոխվող սոցիալական հիմնախնդիրները, նպաստում գործընկերների կողմնորոշմանը դեպի դրական և կառուցողական սոցիալ-տնտեսական դիրքորոշումներ<sup>2</sup>: Պետության ներգործությունը սոցիալական գործընթացների համակարգի կառուցման վրա խիստ անհրաժեշտ է, քանի որ պետության ամբիջական գործողությունների արդյունքում է ընդունվում համապատասխան օրենսդրություն, որն ամրագրում և կարգավորում է սոցիալական գործընկերության հարաբերությունները, թույլ է տալիս խթանել նոր արտադրությունների ստեղծման և ներդրման գործընթացները, որոնք երաշխավորում են ձեռնարկության շահույթի ավելացման, պետական կրթական համակարգի և կադրերի պատրաստման, ինչպես նաև սոցիալական ոլորտի զարգացումը:

Ձարգացած երկրներում սոցիալական գործընկերությունը հիմնվում է միասնական սկզբունքների վրա: Վերջին 12 տարիների ընթացքում Հայաստանը նույնպես որդեգրել է այլ երկրների միասնական սկզբունքը, որոնք ընդգրկում են Աշխատանքի միջազգային կազմակերպությանը (ԱՄԿ) Եվրախորհրդի փաստաթղթերում, միջազգային ընկերակցության երկրների օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերում: 2000 թ. փետրվարին Հայաստանը դարձավ Եվրախորհրդի 39-րդ անդամը: Այդ կապակցությամբ ընդունվել են օրենքներ և որոշումներ, որոնք վերաբե-

\* Ներկայացվել է 06.06.2012 թ., ընդունվել է տպագրության 20.06.2012 թ.:

րում են ՀՀ-ում սոցիալական գործընկերության տարբեր ուղղություններին: Ջարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ սոցիալական բնագավառում սոցիալական գործընկերությունը, պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքների մշակումը և օրենքների ընդունումը նպաստում են պետական ու մասնավոր հատվածի համագործակցությանը: Արևմուտքի զարգացած երկրներում «երրորդ հատվածի» շնորհիվ պետությանը հաջողվում է լուծել սոցիալական շատ հիմնախնդիրներ՝ հենվելով ոչ թե բյուրոկրատական ապարատի և բյուջեի միջոցների, այլ՝ հավասարության, բարեգործության և ինքնագործունեության վրա: Ըստ ԱՄՆ փոխնախագահ Ալբերտ Գորի՝ 1995 թ. երկրում օգնությունների ավելի քան 40%-ը բաշխվել է ոչ թե կազմակերպությունների, այլ պետական ինքնակառավարման մարմինների միջոցով, որոնց դերն ու ազդեցությունը հասարակության մեջ մշտապես ուժեղանում է: «Երրորդ հատվածի» շնորհիվ ԱՄՆ-ում սոցիալական հիմնախնդիրների լուծման համար պետությունը հատկացնում է անհրաժեշտ ծախսերի ծավալի մոտ 25%-ը միայն<sup>3</sup>:

Հայաստանը գտնվում է զարգացող երկրների սանդղակում և ունի բոլոր այն խնդիրները, որոնք առկա են մյուս զարգացող երկրների համար: Ուստի սոցիալական ոլորտում սոցիալական գործընկերության զարգացման համար անհրաժեշտ է հետևել միջազգային փորձին: Մեզանում դրա կիրառումը շատ կարևոր է: ՀՀ սոցիալական համակարգում սոցիալական գործընկերությունը և դրա արդյունքում ինովացիոն ծրագրերի իրականացման բարձր մակարդակը կարող են շատ լավ արդյունքների հանգեցնել զբաղվածության ոլորտում, մասնավորապես, սոցիալապես անապահով խավի, ինչն էլ կարևոր նախադրյալ է հանդիսանում սոցիալապես կայուն տնտեսություն ստեղծելու համար:

Վերջին տարիներին կառավարության քաղաքականությունն ուղղված է պետության կողմից բնակչության սոցիալապես խոցելի խմբերի սոցիալական ծառայությունների համալիր տրամադրմանը, դրանց ծավալների մեծացմանը, հասցեականությանը, մատչելիությանը, արդյունավետության և որակի հետևողական բարելավմանը, զբաղվածության ապահովմանը՝ այդ գործընթացներին մասնակից դարձնելով նաև մասնավոր հատվածին:

Սակայն, մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անկախ վերոգրյալից ՀՀ-ում աշխատանքի վարձատրությունը գործնականում կախված է ոչ թե ձեռնարկությունների վարչակազմից, այսինքն՝ անմիջական

գործատուներից, այլ պետական իշխանության տարբեր մակարդակի մարմիններից: Ներկայումս սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման բնագավառի պետական քաղաքականությունը և զբաղվածության բնագավառում ինովացիոն ծրագրերի իրականացումը ենթադրում են ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն ինքնուրույն ակտիվությանը և վարձու աշխատողների անկախ կազմակերպությունների, ձեռնարկատերերի, բնակչության տարբեր սոցիալական խմբերի բազմակողմանի համագործակցությանը և սոցիալական գործընկերության մեխանիզմների ստեղծմանը՝ հաշվի առնելով պետական և հասարակական միջամտությունները, այդ թվում՝ աշխատանքային, օրենսդրական բազայի կատարելագործմանը: Երբ երկրում ընդհանուր առմամբ բարեկեցիկ պայմաններ ստեղծվեն գործարարների և աշխատողների համար, կմեծանա նաև արտասահմանյան ներդրողների թվաքանակը:

Այսպիսով, սոցիալական գործընկերության կայացման և զարգացման համար ոչ միայն անհրաժեշտ է եռակողմ՝ պետական կառույցի, միության և կազմակերպության քննարկումներ իրականացնել, ինչը հաճախ տեղի է ունենում ՀՀ-ում տարբեր կոնֆերանսների և քննարկումների անցկացման արդյունքում, այլ անհրաժեշտ է նախ՝ ճիշտ գնահատելով գործընկերողը, աջակցել նրան ինովացիոն ծրագրի զարգացման և տնտեսապես հզորացման գործում: ՀՀ-ում նմանատիպ փորձերը սկզբնական փուլում են գտնվում, որոնք էլ հաճախ հաջողության չեն հասնում: Նմանատիպ գործընթացների ձախողման հիմնական պատճառներից է վերանշակված օրենսդրություն բացակայությունը, որը կխթաներ և կաջակցեր սոցիալական ոլորտի ինովացիոն ծրագրերը սոցիալական գործընկերության արդյունքում: Այսինքն՝ սոցիալական գործընկերություն հասկացությունը չսահմանափակվի միայն կոնֆերանսների և հանդիպումների կազմակերպումով, այլ օրենսդրական դաշտի ճկունությունը խթանի միջազգային կառույցներին և ներդրողներին, որ այդ հանդիպումները նպատակաուղղված լինեն կոնկրետ ինովացիոն ծրագրերի ներդրումով, վերլուծություններով և նոր առաջարկություններով: Ուստի, նախ և առաջ անհրաժեշտ է համապատասխան օրենսդրության և աջակցող հանգամանքների առկայության դեպքում ակտիվ համագործակցություն իրականացնել պետական, մասնավոր հատվածի և միջազգային կառույցների շրջանակներում, զարգացնել սոցիալական պատասխանատվությունը, ինչպես նաև ինովացիոն ծրագրերը խթանող հստակ մեխանիզմներ մշա-

կել, որոնք ՀՀ-ում գտնվում է սկզբնական զարգացման փուլում:

Այսպես, ՀՀ կառավարությունը պետական, մասնավոր հատվածի, հասարակական և միջազգային կազմակերպությունների նախաձեռնությունների աջակցությամբ և միջամտությամբ, պետք է նպատակաուղղված լինի սոցիալական գործընկերությանը նպաստող այնպիսի նշանակալի խնդիրների լուծմանը, ինչպիսիք առկա են ՀՀ սոցիալական գործընկերությունը և համագործակցությունն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Այսպես.

- պետական սոցիալական հովանավորությունը,

- ձևավորված օրենսդրական բազան, որը կապահովի սոցիալական գործընկերության հիման վրա սոցիալական ոլորտում որոշումներ նախապատրաստելուն, ընդունելուն և իրականացնելուն, ինչպես նաև պետական կառույցների և ոչ պետական կազմակերպությունների փոխհարաբերությունների մորմատիվ-իրավական կարգավորմանը,

- սոցիալական ակտիվության խթանումը ուղիղ ֆինանսավորմամբ,

- պետական կառույցների և ոչ պետական կազմակերպությունների փոխազդեցության իրականացման գործուն մեխանիզմներ, մեթոդներ և գործիքներ,

- այնպիսի կառույցների առկայություն, որոնք ապահովում և անմիջականորեն իրականացնում են պետական իշխանության մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների փոխազդեցությունը սոցիալական գործընկերության սկզբունքներով,

- տեղեկատվական դաշտի առկայություն, որը լուսաբանում է սոցիալական գործընկերության գործընթացները, որոշակի սոցիալական հիմնախնդիրների լուծման գործուն ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև ապահովում է բնակչության տեղեկացվածությանը սոցիալական գործընկերության տարբեր մեխանիզմների և եղանակների, տարբեր սոցիալական սուբյեկտների ջանքերի միավորման հիման վրա սոցիալական ոլորտում հիմնախնդիրների լուծման հնարավորությունների և առավելությունների մասին,

- փոխազդեցության իրականացում պետական կառույցների և ոչ պետական կազմակերպությունների միջև մշտապես գործող երկխոսության ու համագործակցության, զարգացող գործընթացի հիման վրա, որը սոցիալական քաղաքականության անբաժանելի բաղկացուցիչ մասն է:

Պետական քաղաքականության բնագավառում, հատկապես պետական կառույցների, հասարակական և միջազգային կազմակերպությունների սոցիալական գործընկերության փոխազդեցությունը պետք է նպաստի իշխանության մարմինների գործունեության և տարածաշրջանի, քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կատարման ակտիվացմանը, վստահության և համաձայնության մթնոլորտի ստեղծմանը և տնտեսական ներուժի ավելացմանը: Միաժամանակ, սոցիալական գործընկերության և հասարակական նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, պետական և մասնավոր հատվածի մասնակցության ու պատրաստակամության շնորհիվ, անհրաժեշտ է փորձել մասնակցել կոնկրետ աշխատանքներին կամ նպաստել ինովացիոն ծրագրերի աջակցմանը, հաճախ՝ անվարձաբաժան, կամավոր հիմունքներով կամ սկզբնական շրջանում ցածր վարձատրությամբ: ՀՀ-ում նման մոտեցումը սոցիալական գործընկերության և ինովացիոն ծրագրերի զարգացման համար կարևոր նախադրյալ կարող է հանդիսանալ, քանի որ պրակտիկորեն պետական, մասնավոր հատվածի և միջազգային կառույցների անմիջական ներգրավումը իր դրական ազդեցությունն է ունեցել ՀՀ սոցիալական ոլորտի ներքին հատվածի և ցածր ֆինանսավորմամբ ինովացիոն ծրագրերում: Համապատասխան օրենսդրության բացակայությունը չի նպաստում սոցիալական գործընկերությունը և ինովացիոն ծրագրերը շարունակական դարձնելու կամ այն ընդլայնելու գործին: Հիմնական պատճառը բարձր ռիսկայնությունն ու անհուսալիությունն է: Թերևս սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ սոցիալական բնագավառում միջազգային կառույցների և ներդրողների ֆինանսավորումը հիմնականում ուղղված է այնպիսի ծրագրերում, որտեղ նրանք հանդես են գալիս որպես աջակցողներ կամ հովանավորներ, իսկ նմանատիպ ծրագրերի շարունակական դարձնելը ընդամենը ներդրողների բարի ցանկությունից է կախված:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ամեն մի պետություն և ոլորտ յուրովի մոտեցում է պահանջում: Սեփական տնտեսության զարգացման համար օրենսդրության կատարելագործումը, սոցիալական համագործակցությունը և սոցիալական ոլորտի ինովացիոն ծրագրերի ներդրումը բնականոն երևույթներ են և այն անհրաժեշտ է դիտել որպես առավելություն հասարակական շահերի ձևավորման, տնտեսության և սոցիալական ոլորտի զարգացման համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- <sup>1</sup> **Зинченко Г. П., Рогов И.И.** Социальное партнерство, 2009, с. 35.
  - <sup>2</sup> Социальное партнерство. Практическое пособие по созданию корпоративного ресурса знаний юридического лица, стр 50.
  - <sup>3</sup> <http://mediaforum.am/armtoday.php?year=2000&month=05&day=30&LangID=4>
  - <sup>4</sup> [sociologydl.am/resources/glossary/P.doc](http://sociologydl.am/resources/glossary/P.doc)
1. **Зинченко Г. П., Рогов И. И.** Социальное партнерство, 2009.
  2. Социальное партнерство. Практическое пособие по созданию корпоративного ресурса знаний юридического лица.
  3. <http://mediaforum.am/armtoday.php?year=2000&month=05&day=30&LangID=4>
  4. [sociologydl.am/resources/glossary/P.doc](http://sociologydl.am/resources/glossary/P.doc)

## SOCIAL PARTNERSHIP IN SOCIAL FIELD OF RA

**ANI KATINYAN**

## Summary

The innovation programmer of social fields of RA, implemented within the frameworks of social partnership has been summed up. Realistic mechanisms for partnership continual development have been differed. The necessary of provision of legislations availability, as well as cooperation with state, non-state sector and with international organizations have been attached importance.

**Ռուզաննա Միքայելի ԲՈՅԱԶՅԱՆ**

*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հայցորդ, հաշվապահ*

**Ատենախոսության թեման`** ՀՀ նորամուծական զարգացման սոցիալական ուղղվածության կարգավորման հիմնախնդիրները

**Գիտական ղեկավար`** Ծովինար ԿԱՐԱՊԵՏՅԱՆ` տնտեսական գիտությունների թեկն., դոցենտ



**Ա**մփոփվել են երկրի տնտեսական աճի ապահովման և մրցունակության բարձրացման գործում նորամուծական գործընթացների խթանման և աջակցման միջոցների ստեղծման հիմնահարցերը: Պարզաբանվել և ներկայացվել է, որ ՀՀ ներկայիս կառավարությունը գործում ակտիվություն է ցուցաբերում նորամուծական գործունեության համար բարենպաստ միջավայր ստեղծելու ուղղությամբ: Կատարված վերլուծությունների շնորհիվ հիմնավորվել է, որ անհրաժեշտ է ստեղծել նորամուծական գործունեության կառավարման ու կարգավորման համապատասխան լծակների ամբողջություն, որը կապահովի ազգային նորամուծական համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը:

Որակական տնտեսական աճի, գիտատեխնիկական և հասարակական առաջընթացի, երկրի տնտեսության մրցունակության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանության, բնակչության կենսամակարդակի, երկրի պաշտպանունակության ամրապնդման տեսանկյունից արդիական խնդիր է մարդկային ռեսուրսների, հետազոտությունների և մշակումների, նորամուծական գործունեության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական հասարակության շարունակական զարգացմանն ուղղված քաղաքականության իրականացումը, որը ենթադրում է անցում գիտախնդակցիոն տնտեսության մոդելին:

ՀՀ-ում վերջին տարիներին նկատվում է պետական հոգածության ակտիվացում նորամուծական տնտեսության ձևավորման հիմնախնդիրներին:

ՀՀ-ում վերջին տարիներին նկատվում է պետական հոգածության ակտիվացում նորամուծական տնտեսության ձևավորման հիմնախնդիրներին:

րի լուծման ուղղությամբ: Այս իմաստով, կարևորվում են մի շարք որոշումներ, հայեցակարգեր և նախագծեր, որոնք կարող են նպաստել ազգային նորամուծական համակարգի ստեղծմանը, նկատի ունենալով, որ ժամանակակից աշխարհում գիտական և տեխնոլոգիական զարգացման մակարդակը այն կարևորագույն գործոններից մեկն է, որը որոշում է պետության սոցիալ-տնտեսական զարգացման, նրա տնտեսական և քաղաքական անկախության աստիճանը: ՀՀ-ում ձևակերպվել են նորամուծական տնտեսության ձևավորման մարտահրավերները, որոնցից այս ուսումնասիրության շրջանակներում կարևորում ենք<sup>1</sup>.

- տնտեսության կարիքներին ուղղված հետազոտությունների ու մշակումների (ՀՈՄ) արդյունավետության բարձրացում,
- գիտելիքների ընդլայնված վերարտադրության ապահովում. տնտեսության կարիքները բավարարող կրթական համակարգի առաջընթացի զարգացում, հիմնարար գիտության պահպանում, անցում գիտելիքներից դեպի այդ գիտելիքների իրացումը,
- նորամուծական գործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորում,
- գիտելիքահենք տնտեսության զարգացման գերակա ուղղությունների ընտրություն, պետական լծակների մոբիլիզացում` այդ ուղղությունների զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

